

Ա. Խ. ԵԱԿՐՆՅԱՆ

ՈՒՐՎԱԳԾԵՐ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐԻ
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ
ՎԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
Պ ԱՏ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն

37C

2-18 Ա. Խ. ՇԱԿԻՆՅԱՆ

ՈՒՐՎԱԳԾԵՐ
ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ
ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
ՆԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն

2124



Վ Ա Յ Պ Ե Տ Վ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ • 1963



АНДРАНИК ХАЧАТУРОВИЧ ШАГИНЯН
ОЧЕРКИ ИСТОРИИ КУЛЬТУРНОГО СОДРУЖЕСТВА
НАРОДОВ ЗАКАВКАЗЬЯ

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айнепрат), Ереван, 1963

ԵՐԿՈՒ ԽՈՍԸ

Մեր 1957 թվականի հունիսի տվարովեց Անգրիակիայան բառերակոմ զարեան վերիև ներկայացուր. վաջի ընկերներից մեկը խանգավառարյանը բայակառնեց. ընկ. լավ է. որ մենկ է՝ հարեաններ ենկ. է՝ իսկական բարեկամներ: Այդ ողբանեց բայականորյանը առիթ հանգրիայակ վաջ է աղբրեանցի ընկերների համար խոսելու անգրիակիայան ժողովուրդների՝ վաջիների, աղբրեանցիների է հայերի անկալառ բառերիամարյան է փոխհամարածարյան ժառիհ, հառաբերարյաններ, որտեկ իրենց վառ առաջացումն են զանկ այդ ժողովուրդների հազար կալուարայի՝ զականարյան, ազնասի է այլ բնագավառներում:

Անգրիակիայան երկ կարայական ժողովուրդների դասմական է կալուարական կապերի բայակառնարյանն առամհառարյանը է լառարանուց բանասիրարյան կարեւորայն ինդիաներից է: Արեկն հապարակի վառ կան բայակառնիկ հողվածնէ է մի շառէ մեհազարյաններ՝ եկիրված հայ-ժողովուրդան, հայ-աղբրեանական զական-կալուարական կապերին, այլ ժողովուրդների անցայի փոխհարեարյաններին, սակայն շիա մի աշխատարյան, որտեկ հայ-վաջ-աղբրեանական կալուարական կապերը նեհակվին միամիտանակ: Մեր եղալուակն է կրկի ժառար լրացնելու այդ լրացը, ինտրիկ, բարբառիկ հովակարյան շունեկով ուղանկ այն հակա էյարը, որ զայսցիկ է զարերի բերացում: Մենկ, օգտագործելով Հայկական ՄՍՍ ցիտարյանների ակադեմիայի զականարյան է ազնասի բանարանում, Մ. Երեզլանի անվան զականարյան ինտիմալում կամ էյարերը, հայ, վաջի է աղբրեանցի բանասերների կողմից հապարակված առամհառարյանները, ինչպես նաև մեր աշխատանային՝ զականիայի բերացում կառակված էյարերը, համառոտակարեն կանգ ենկ անկ անգրիակիայան երկ ժողովուրդների կալուարական կապերի է համագործակարյան վառ. էրկ այն բնարարը, որ զայարյան է ունեցիկ երկ զրկից ժողովուրդների փոխհարեարյանների բնագավառում:

Պարտ էմ համարում խորի շնորհակալություն հայտել ընկ. ընկ. Մ. Զավարյանին, Ա. Նուսուրյան, Ա. Մխիթարյանին, Տ. Կարապետյանին, որոնք իրենց արժեքավոր խորհուրդներով և դիտողություններով օգնել են ինձ մշակելու ներկա աշխատությունը:

ՀԵՂԻՆԱԿ

25. I. 1962 թ.

ԴԱՐԱՎՈՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունները պատմական շատ երկար ժամանակաշրջան են քննարկում: Այն սկիզբ է առել խոր անցյալում և սերտ համագործակցության հողի վրա կոփվել ու ամրացել է դարերի ընթացքում: Անդրկովկասի հարևան, բախտակից և իրար հարազատ ժողովուրդները՝ հայերը, վրացիները և ազրբեջանցիները, անցյալում դռնվերով միևնույն քաղաքական և ամտեսական պայմաններում, հնազույն ժամանակներից սկսած միահամուռ պայքարել են ազատության և անկախության համար, միշտ օգնել են միմյանց և ազդրված են եղել բարեկամության և սիրտ չեքոմ զգացմունքներով: Նրանց եղբայրական անկաշառ փոխհարաբերությունները թրմվել ու կոփվել են ասորերկրյա զավթիչների դեմ մղած համատեղ պայքարում:

Պատմական շատ փաստեր սերունդներին հազորակից են անում անդրկովկասյան երեք ժողովուրդների տառապանքներով լի, բայց հերոսաբար անցած ուղու հետ: Բազմալեզու ու բազմադավան զավթիչների՝ ասորա-բարեղունական հորդանների, հռոմեական լիզիտների, արաբական բռնակալների, սելջուկ-մամլուկական, թուրք-պարսկական հարստահարիչների, անգլո-ամերիկյան իմպերիալիստների տիրակալական արշավանքները և զավթողական քաղաքականությունը անդրկովկասյան երեք ժողովուրդներին ստիճ է հանել օտարերկրյա ամեն տեսակ ոտնձգության դեմ և նրանք, անթիվ զոհերի ու

անկնարագրելի տառապանքների զեղով, հերոսաբար պահել ու պահպանել են իրենց գոյությունը, իրենց ազգային զմեռը և կուլտուրան:

Օտարազգի նվաճողների դարեր շարունակ վարած քաղաքականությունը՝ հայերի, վրացիների և աղբյուրեանցիների միջև թշնամություն և փոխադարձ ասելություն սերմանելու բոլոր փորձերը անհաջողության են մատնվել:

Գարեր տեսած անդրդուլիստան ժողովուրդների հոգեհարզատությունը, նրանց միասեղ վարած ազատագրական պայքարի զրվագները իրենց պրոտոցլուսմ են գտել այդ ժողովուրդների արվեստի և գրականության մեջ, սկսած հին ժամանակներից մինչև մեր օրերը: Հայ, վրաց, աղբյուրեանցի, ինչպես նաև օտարազգի պատմիչների մոտ, պատմական այլ հուշարձաններում հաճախակի ենք հանդիպում հիշատակությունների և նկարագրությունների անդրդուլիստան եղբայրակից ժողովուրդների բարեկամության մասին:

Այդ ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունները և մարտական բարեկամությունը գոյություն են ունեցել զեռևս VI—IV դարերում (մեր թվարկությունից առաջ), հրք այդ ժողովուրդները միահամուռ ուժերով պայքարել են Դարեհ I և այնուհետև Ալեքսանդր Մակեդոնացու հրոսակախուրդների դեմ՝ օտարերկրյա ծանր ու անսանելի լծից ազատագրվելու համար:

Ավելի սուուղ տեղեկություններ են տա՛ն պահպանվել անդրդուլիստան ժողովուրդների հետագա դարերի ուղղմական համագործակցության մասին: Պատմական աղբյուրները մեզ հազորակից են անու՛մ, թե՛ հրք I դարում (մ. թ. ա) Տիգրան II պատերազմ է վարել Պարթևական թագավորության զեմ (88—85), նրա զաշնակիցներն են եղել Իբերիան և Աղվանքը, որոնք օշնական զորք են ավել հայոց թագավորին¹:

Հայ, վրաց և աղբյուրեանական ժողովուրդների եղբայրական փոխադարձ օջնությունը հաստի ուժով հանդես է եկել հոռմանցիների արշավանքների ժամանակաշրջանում: Միհրք-

զատ Պոնապու զեմ տարած հաղթանակից հետո հոռմեական րոնագրավիչները զորավար Լուկուլլուսը զխավորությունը արշավել են զեպի Հաշատան և ԵՅ թվականի (մ. թ. ա.) գարնանը պաշարել են Տիրանակերտ քաղաքը: Պաշարվածներին օջնելու համար Տիգրան II սեակ է զորք հավաքել նրան օջնեթյան են եկել մի շարք այլ երկրների հետ միասին, ինչպես Պլուտարքոսն է հաղորդում, նաև զորամասեր Վրաստանից և Աղվանքից ու միահամուռ ուժերով ճակատամարտել են հոռմանցիների զեմ², Տիգրանակերտի մոտ պարտություն կրելուց հետո հայ ժողովուրդը, ինչպես և նրա զաշնակիցները շեն ընկնվել և շատ զկերպով նոր պատերազմի պատրաստություններ են տեսել: Նոր կազմակերպված զորաբանակի մեջ, բացի հայերից և մյուս զաշնակիցներից, հիշատակվում են նաև իբերները³:

88 թվականի գարնանը Լուկուլլուսը՝ կողոպտելով Տիգրանակերտը, շարժվում է զեպի հյուսիս՝ Արտաշատը զրավելու համար: Դաշնակցած զորաբանակները ժոխում են պատերազմ վարելու եզանակը, նրանք սկսում են մանր շոկատային կրիվներով և տեսնկկու հարձակումներով զլատել թշնամու ուժերը, իսկ հրք հոռմանցիները փորձում են անցնել Արածանի սկունքները՝ զեպի Արտաշատ շարժվելու համար, Տիգրան II վնասկան ճակատամարտ է առխար Արածանի ճակատամարտում հայոց թագավորի ամենհուսատու ուժերից են եղել վրացական նիզակակիրները: Պլուտարքոսը նկարագրելով Արածանի զեմափին կանդեմ թշնամի բանակների զավորությունը, հայտնում է, որ ողմ առ զեմ օրանց (այսօրներ՝ հոռմանցիների—Ա. Ե.) կանդեմ էին բազմաթիվ ճխավորներ ու բնաիր զորքեր, իսկ նրանց առն զտեղում էին ճխավոշ նետամիջ մարզերը և նիզակակիր իբերները, որոնց բոլոր օտարականներից ավելի էր Տիգրանը վտառում և համարում էր առանձնապես մարտունակ⁴:

1 Հ. Մանուկյան, Տիգրան Թ և Հոռմը, Երևան, 1940, էջ 113:
2 Նույն աղբյուր, էջ 143:
3 Նույն աղբյուր, էջ 152:

¹ ԵՀայ ժողովրդի պատմություն, մաս I, Երևան, 1951, էջ 474

Հյուժված և բարոյալիցված հոռմեական զորքը չի գիտացել զաշխակցած ժողովուրդների բանակի ընդհանուր հարվածներին և Արածանէի Ըսկառամարտում ժանր պարտութուն՝ կրիցով նահանջել է դեպի Միջագոծաք: Լեռագոյում Անգրկովկասի երեք բախտակից ժողովուրդները համատեղ պայքարի են ինչ հոռմեական զորավար Պոմպոսի հրոսակախմբերի զեմ և ամեն կերպ աշխատել են պահպանել իրենց ազատութունը:

Հոռմեական կայսրութեան թուլացումից հետո անգրկովկասյան եզրայրակից ժողովուրդներին բախտ է վիճակվում, իրենց անկախութունը պաշտպանելու համար, պայքարել մի ուրիշ ազբեսորի՝ Սասանյան Պարսկաստանի զեմ: Մեր թվարկութեան III և IV դարերում հայերը՝ զաշխակցած վրացիներին և աղվաններին հետ, մի շարք պատերազմներ են մղել Պարսկաստանի զեմ: Գրանցից հիշենք նաև Շապուհ II 371 թվականի արշավանքը դեպի Հայաստան և Վրաստան, որի ժամանակ երկու հարևան ժողովուրդները միասին ճակատամարտ են առելու պարսկիների՝ մերձիկ ուղառում և ստիպում են Պարսկաստանին՝ ճանաչել այդ երկրներին որպէս անկախ պետութուններ:

V դարում Հաղկիրտ II փորձում է ոչնչացնել Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի ինքնուրույնութունը, սակայն այդ երկրների ժողովուրդները պայքար են մղում ընդդէմ հազկերտյան բազաբակիստութեան: Այդ պայքարի ամենավառ զբաւորումներից է Վարդան Մամիկոնյանի գլխավորութեամբ հաս ժողովուրդի մզած պայքարը ընդդէմ պարսկական հրոսակախմբերի, պայքար, որի հիմնական գործունեւորից է եղել հայերի, վրացիների և աղվանների զինակցութունը:

Ուղհանբապետ պետք է նշել, որ V դարն իրենից ներկայացնում է պարսկական զավթիչների զեմ մզած անգրկովկասյան երեք ժողովուրդներին հերոսամարտերի մի ամբողջ շրջան: Այդ ժամանակների մասին աղվանական տարեգիրքն էլ է, որ «Հայաստան և Աղվանք երկրները մնում էին միասնական եզրայրութեան և անբաժանելի համամայնութեան մեջ», իսկ հայ պատմիչ Նդիշեն վկայում է, որ սասանյանների զեմ

պայքարելու համար Հայաստանում, Աղվանքում և Երեքիսյում ստեղծվել են հատուկ ջոկատներ:

481—484 թվականներին Պարսկաստանը ծանր պարտութեան է կրում հոռմեակի հետ ունեցած կռիվներում: Պարսկաստանի զիրքերը Անգրկովկասում թուլացնելու համար Վասթանդ Գորգասալ թագավորը օգտագործում է այդ հանցամանքը և վրաց ժողովուրդի ոտքի է հանում ընդդէմ օտարազգի տիրապետութեան: Այդ ապստամբութեան միակուն է նաև հայ ժողովուրդը՝ Վահան Մամիկոնյանի գլխավորութեամբ: Հայ և վրաց ժողովուրդներին համատեղ պայքարի հետևանքը լինում է այն, որ պարսկական զորքերը 484 թվականին ստիպված հեռանում են այդ երկրներից:

Երեք եզրայրակից ժողովուրդները միասնական պայքարի են ինչ և այն ժամանակ, երբ 639 թվականին պարսկական հրոսակախմբերը ներխուժել են Աղվանք: Աղվան ժողովուրդը՝ Քիվանշիրի ղեկավարութեամբ, և նրան միացած վրաց զորատակիները՝ իշխան Ասրնբեսէի և հայկական զորքերը՝ Աբմրատ Բագրատունու գլխավորութեամբ շախաշախիչ հարվածներ են հասցրել թշնամուն և երկիրը մաքրել օտարազգի բռնագրավիչներից:

Անգրկովկասյան ժողովուրդների միացյալ ուժերը պայքարել են նաև արաբական տիրապետութեանից ազատագրվելու համար: Հայտնի են Վրաստանում, Աղբրեջանում և Հայաստանում 748—750 թվականներին արաբական խալիֆաթի զեմ բռնկված ժողովուրդական ապստամբութունները, ինչպէս նաև արաբական արշավանքների զեմ ոտքի էլած հայերի, վրացիների և աղվանների 850—855 թվականներին կազմակերպված համառ զինադրութունը: Երեք զրկից ժողովուրդների թշնամու գերազանցող ուժերի զեմ վրարած կռիվները հաճախ պսակվել են հաջողութեամբ. այս առնչութեամբ հիշատակենք Բաբելի գլխավորած աղբրեջանական ժողովուրդի ազատագրական պայքարը (IX դարի 20—30-ական թվականներին), որի փալունն արտահայտութուններից մեկը լինում է հայ ապստամբներից ուց տված օգնութունը և Սյունիքի ազատագրումը արաբական տիրապետութունից:

Կանգ չառնելով բյուզանդական արշավանքների վրա, հիշատակներ թուրքական բռնաարավիչների ներխուժումը Անդրբլավկաս, որից ամենից ավելի տուժում է Հայաստանը: Այդ ժամը ժամանակաշրջանում հայ ժողովրդին օգնության ձեռք է մեկնում վրաց ժողովուրդը: Հայ-վրացական միացյալ ուժերը Գավիթ Երևարարի դիտարկումովսյամբ մի շարք վճռական հարվածներ են հասցնում թուրքական բանակին և պարտության մատնելով նրանց, նա են դրսևում Հյուսիսային Հայաստանի մայրաքաղաք Անին: Պատմական այս իրադարձությունը սիմվոլիզովել է մեզ հասած հետևյալ ավանդության մեջ. երբ վրացական զորքը մտել է Հյուսիսային Հայաստան և ազատագրել է Անին, Գավիթ Երևարարը հրամայել է հին հայկական տաճարների վրայից հանել մուսուլմանական տիրապետության սիմվոլը՝ մուսուլմանական լուսնը և նրա փոխարեն դրել խաչը: Ինքը՝ Գավիթ Երևարարը մտնում է Անիի տաճարը, որն թաղված է լինում հայոց թագուհին, և բարձրաձայն ասելուով է հայրենի երկրի ազատագրումը: Հայոց թագուհու զինվորներից լավում են շնորհակալության և ուրախության ձայներ: Այս լեզնեղում, որտեղ արտացոլվել է Անիի ազատագրման պատմությունը, իր մարմնացումն է գտել հայ և վրաց ժողովուրդների անկաշառ բարեկամությունը:

Անդրկովկասյան ժողովուրդներին բախտ է վիճակվում ազգային բնաշնչումից ազատվելու համար, համընդհանուր ուժերով կոփի ենել մեկը մյուսի հետևից Անդրկովկաս արշավող թաղմաթիվ զավթիչների դեմ: Այդ արշավանքների ամենասեղմ և ոչ լրիվ թվարկումը անգամ բավական է, որպեսզի գաղափար կազմենք, թե ինչպիսի տառապանքների և զոհուղությունների դեմ է երեք ժողովուրդների հաղթվել պահպանել իրենց ազգային ինքնուրույնությունը: Այսպես, 1225 թվականին հայ-վրացական միացյալ ուժերը կոփվ են մղում Զալալ-էդ-դինի հրոսակախմբերի դեմ: Հայերը, աղբրեջանցիները և վրացիները համատեղ պայքարել են նաև մոնղոլներին և Անկ Թեմուրի ավերիչ արշավանքների դեմ: XVI դարից

սկսած Աղբրեջանը, Վրաստանը և Հայաստանը պայքարել են սուլթանական թուրքիայի ներխուժումների դեմ: Հայ-աղբրեջանական ժողովուրդների ազգական համագործակցության կապակցությամբ ուշագրավ է Գյանչայի աղբրեջանցիների և Վարաթազի հայերի միջև 1724 թվականին կնքված պայմանագիրը, որտեղ ասվում է, որ նրանք սուլթանական թուրքիան կամ Գրագատանի թալանիչները ներխուժեն Գյանչա, հայերը պետք է անմիջապես օգնության գան գյանչեցիներին:

Ներաշրական անկաշառ օգնություն է ցույց տվել վրաց ժողովուրդը հայությանը, երբ 1743 թվականին Մահմուդ-խան-Ղաչարը մեծաթիվ զորքերով հարձակվել է Երևանի վրա՝ այն գրավելու, թալանելու ու ավերածության ենթարկելու նպատակով: Երևանցիք օգնության համար դիմել են վրաց Քեյմուրազ I թագավորին: Վերջինս իր զորքով օգնության է հասել երկվանցիներին, պարտության է մատնել Մահմուդ-խանին և Երևանը փրկել է անխուսափելի ավերումից¹:

Անուհեան ուշագրավ է XVII դարում Վախթանգ VI օրոք կերած հայ-վրացական դաշինքը՝ պարսկական տիրապետության դեմ ապստամբվելու համար: Այդ ազատագրական պայքարին միանում է նաև Գանձակի խանության աղբրեջանական քանակությունը: Պակաս հետաքրքրություն չի ներկայացնում նաև 1768—1774 թվականների օսու-թուրքական պատերազմի ժամանակ Ռուսաստանի հետ վրաց էրեկի II թագավորի կողմից կնքված պայմանագիրը, որտեղ նախատեսվել է նաև հայկական հողամասերը թուրքական տիրապետությունից ազատագրելու հարցը:

¹ Տե՛ս «История Азербайджана», Баку, 1958, էջ 89, 105, 107, 113, 120.

² Տե՛ս Մ. Անսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 15:

³ Այս կապակցությամբ արժև հիշատակել, որ հայ անանափոր պատմաբան Անն խոսելով հայ-վրացական միության, հայերի և վրացիների մոտիկության մասին գրել է.

«Վերթական ընդդեմ քրիստոնեական քաղաքականությունը մի կողմից ասում էր նրան ուսաց ցարի դուրս ազատություն հայելու՝ նույնիսկ

¹ Տե՛ս «История Грузии», Тбилиси, 1960:

Վերջապես, հայտնի է, թե ինչպես 1828 թվականին վրաց բանաստեղծ գեներալ-մայոր Ա. Ճավճավաձեն իր զորաբանակով և հայ-աղբրեանական հեծյալների օգնությամբ ապստամբում է Բայազետը, որանցի հայ ընկալիվորներ ցեծությամբ է դժմավորում իրենց ազատարարին: Այդ իրադարձության առթիվ Ա. Գրիբոեդովը գրել է. «Անհնարին է նկարագրել այստեղ (Բայազետ) — Ա. Ե.» ընկալիչների, մեծ մասամբ հայերի հրճվածքը, որոնք զուրա էին եկել զիմավորելու հազ-թղջների, մուսուլմանների երկարատև տանջալի լծից իրենց ազատողներին»¹: Հետագա տարիներին ևս շարունակվել է վրաց, հայ և աղբրեանական ժողովուրդների համատեղ պայքարը իրենց ճնշողների և հարստահարողների դեմ:

Անհրաժեշտ է նշել, որ թեև անզրկովկասյան երեք կղերայ-րակից ժողովուրդներին հաջողվել է պահպանել իրենց գոյությունը, սակայն այնուհանդերձ, արտաքին նվաճողների անընդմեջ արշավանքները ծանր վնաս են հասցրել Հայաստանի, Վրաստանի և Աղբրեանի տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքին, արգելք են հանդիսացել այդ երկրների պատմական զարգացման համար: Այս առումով բավական է նկատի ունենանք այն կոտորածները, որ կաղմակերպել են օտարազգի նվաճողները, և պարզ կպատկերացնենք մեր նախնիների կրած առաւայանքները ու այն անձնուրաց հերոսությունը, որ նրանց փրկել է իսպառ բնաջնջումից: Ծտարերից-

Ռուսաստանի հպատակելու պահանջով, իսկ մյուս կողմից մտեցնում էր նրան զարավոր դարձի հայ ժողովրդին, որը երբևէ իր քրիստոնեական քաղաքականությունը չէր զոհել մի այլ քաղաքականության և այժմյան էլ զինակազմ պատրաստություններ էր տեսնում իր ազատության էլ իրականացնելու՝ զարնյու ասուց քրիստոսասեր պատերազմական ուժի միջոցով: Հասարակ բանականությունը թեկուրսում էր Վախթանգին օգտագործել և հայկական շարժումը նա մտեցնում այդ շարժման զլաժուրների, խոսքերու ներշնչել նրանց և, ինչպես տեսնք, անդամահատի մատարություններ արած հայկական զինվորականություն կազմելու մասնաճակ, տարով հայերին ու միայն զինվորական հրահանգիչներ, այն զորավորներ անգամ Հուսիսային է, որ հայերը շատ շնորհակալ էին քրիստոսյու, բարի և ետեղուն Վախթանգից» (Տե՛ս Ան, Հայոց պատմություն, հատ. 3, էջ 615):

¹ «Հայ ժողովրդի պատմություն», մաս 7, էջ 33:

յու բռնազրավիչների քաղաքականության հիմնական գործունեներից մեկը եղել են կոտորածները: Կ. Մարքոսը գրել է. «Թիմուրի քաղաքականությունն այն էր, որ հաղաբնեցով խոշտանգի, կոտորի, ոչնչացնի կանանց, երեխաների, տղամարդկանց, պատանիների և այսպիսով սարսափ տարածի ամենուրեք»¹: Այսպես են վարվել բոլոր նվաճողները: Օրինակ, 1554 թվականին օսմանյան ճորգանները ամալացնելով Արևելյան Հասարակածը, ներխուժել են Աղբրեան: Նույնիսկ Քուրբանյան պատմարանները չեն կարողացել հերքել սուլթանի զորքերի կատարած վայրենի ավերումներն ու կոտորածները: Քուրբանյան պատմարաններից Փեյզևի գրել է.

«...25-րդ օրը զորքերը մտան մի երկիր, որը կոչվում է Ղարաբաղ... որը լեռներով ու փարթամ ալյուրներով մեծ համբավ է ձեռք բերել... Պայծառ օրը զարձալ մուր գիշեր: 37-րդ օրը հասան նախելանի հարթավայրը... Բանակը բոլոր բազաններն ու գյուղերը, տներն ու տնակները դարձրեց բոլի ասպատակ բնակավայր և այն աստիճան ամայի, որ զրանք տեսնելիս մարդ սարսափում էր: Ավարի, ծառավի ասպիկները իրենց ճամփին այնպիսի ետանդով կողոպտեցին, ամալացրին բոլոր գյուղերը, ավաններն ու բնակարանները, որ նրանցից հետք էլ չմնաց»²:

3. Լեզգիսի այն միտքը, թե բամեն անգամ, երբ հաջողոր պակաս կուլտուրական ժողովուրդ է հանդիսանում, խախտում է, ինչպես իրերին հասկանալի է, տեսնական զարգացման ընթացքը և ոչնչացման են ենթարկվում շատ արտադրական ուժեր»³, լիովին վերաբերվում է նաև արևելյան բնականությունը, այդ թվում նաև օսմանյան Քուրբանյան և պարսկական ասիմիլյատորներին, որոնք դարձր շարունակ իրենց ծանր լծի տակ պահելով անզրկովկասյան ժողովուրդներին, ձգակ են բարյալել նրանց տնտեսությունը, բնաջնջել նրանց ոչ միայն ֆիզիկապես, այլև ոչնչացնել այդ ժողովուրդ-

¹ «Архив Марке-Энгельса». т. VI, стр. 185.

² «История Азербайджана», стр. 236.

³ Լեզգիս, Անտի-Գյուրեգ, էջ 172:

ների դարերի ընթացքում սակզմի մեծ կուլտուրայի հուշարձանները: Մինչդեռ թուրք պատմաբանները, մեղանշելով պատմական փաստերի առաջ, հայտարարում են, «երենց հպատակ ժողովուրդների նկատմամբ թուրքերի վարած քաղաքականությունը ոչ մի ժամանակ մանացու չի եղել... թուրքական քաղաքականությունը այդպեսով քաղաքականություն է եղել: Թուրքերը ոչ մի ժամանակ որևէ ազդի նկատմամբ բռնություն չեն գործել... Պատմական նշանադրություններ նաևապես աշխարհի բոլոր մարդիկ պարտավոր են զլուխ խանգրել թուրքի նշանակալի փաստված պատմական դերի առաջ»:

Ինչպես տեսնում ենք, այստեղ զուլիբղում է օսման ժամանակ թուրքերի քաղաքականությունը, մի քաղաքականություն, որի հիմնական գործոններն են եղել նվաճված երկրների բնակչությանը ավերումը, այդ երկրների ժողովուրդների բնաջնջումը:

Թուրք պատմաբանի վերոհիշյալ տեսակետները հերքելու համար բավական է դիմենք անցյալի պատմական դաս իրադարձություններին: Հիշատակենք Սուլթան Համիդին, որն ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի նկատմամբ վարել է բռնություն, բնաջնջման քաղաքականություն: «Բռնակալները զենքի ուժով խլում էին աչքի կենդանի սուլթանների և փաշաների հարմները, և ազաններին՝ սուլթանական երկիրական բռնակի համար: Երանը ձգտում էին առիթվալից անհատներին հայ ժողովրդին: XVIII դարի 70-ական թվականներին հայ ազատագրական շարժման գործիչներից մեկը՝ Մովսես Բաղրամյանը, հայտնում էր, թե «Հայաստանը վաճերվել ու տնայապա էր դարձել, ժողովուրդն անասելի ճեղքումներից ու կոտորածներից խոյտ առլու համար փախել և պատսպարվել է լեռներում»¹:

Թուրքական քաղաքականություն իսկական էությունը բացահայտող ավելի խոստում փաստեր կարելի է բերել ոչ այնքան

էլ վաղ անցյալից: Հիշատակենք թեկուզ հայությունը ոչնչացնելու թուրքական կառավարության 1894—1896 թվականների ծրագիրը, կամ 1915—1916 թվականների եղեռնը, որոնց վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ վավերագրեր, պատմական աշխատություններ, վեպեր, հիշողություններ և այլն: Այս առումով բովանդակալից է 1896 թվականին Մոսկվայում հրատարակված «Положение армии в Турнии до вмешательства держав в 1895 году» ժողովածուն, ուր բնագրով են նաև մի շարք այլազգի աշխատավոր գործիչների գրվածքները՝ նվիրված սուլթանական թուրքերի կողմից կազմակերպված հայական կոտորածներին: Այսպես, այդ ժողովածուում կարգում ենք, Մասուտում ոչնչացվել են 27 գյուղ, 6000 տղամարդիկ, կանայք և երեխաներ սպանվել են պիկետների հողմից: Տարվորիկում ոչնչացվել են մոտ 20 գյուղ, բնակչությունը կոտորել են և անհեր հորեհեղ: 60-ից մինչև 160 կանանց փակել են եկեղեցում և նրանց մտն ներխուժեցրել զինվորների: Այդ կանանցից շատերը ստաղծված են եղել, իսկ մյուսներին սպանել են սերտով և ավիաներով... Երեխաներին իրար հետևից շարք են կանգնեցրել և սկսել են կրակել՝ իմանալու համար, թե մեկ զնդակով քանի մարդ կարելի է սպանել: Փոքրահասակներին և կրծքի երեխաներին՝ մեկը մյուսի վրա զնդակով կարել են նրանց զլուխները: Զինվորները շրջապատել են անհերը, այրել և ավիաներով ստրպել են մարդկանց վերադառնալ բողբերի մեջ, կեր նրանք փորձել են դուրս փախչել: ...

Հայությունը բնաջնջելու քաղաքականություն թուրքական բռնակալները վարել են XX դարի երկրորդ տասնամյակում: Հիշենք, թե ինչ էլ գրել «Իթթիհատ վե Թիրքբեթի» պարտիայի ղեկավարներից Սելվան-Ջադե Ռիֆաթը՝ 1915 թվականի սկզբներին կաշաքած գազանի խորհրդակցությունների մասին, որտեղ նախագծվում է թուրքիայում արտոգ հայության բնաջնջումը: «Այդ որոշման գործադրումը, — գրել է Սելվան-Ջա-

¹ «Երեկոցադարական ժողովածու», հ. 1, Երևան, 1960, էջ 353:

² Մ. Գ. Նեոֆույսե, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ, 1955, էջ 11, 12:

¹ Այս մասին տե՛ս «Положение армий в Турнии до вмешательства держав в 1895 году», 1896, էջ 232, 233:

ղեն,— հանձնարարվեց ոճրագործներից և բանդիտներից կազմված հասուկ խմբի, իսկ զեկավարությունը՝ «Գործող նշանի», որի մեջ մտնում էին զոկտոր Նազիմը, զոկտոր Բևհարդրին-Շարիրը և Լուսավորության մինիստր Շյուքրինս¹։

Մարդկային կիրպարանք ստացած զազան Քալեաթ փաշան նշել է, որ «Հայերի ոչնչացումը մինչև վերջին մարզը՝ մեկ ազգային քաղաքականության համար այն աստիճան կարևոր է, ինչ աստիճան որ կարևոր է քուրդերի անասական գերիշխանության սանդղումը»։

Քեկ կրիտասարդ քուրդերի կառավարությունը Արևմտյան Հայաստանի ամբողջ հայությանը բնաջնջելու մասին հրաման արձակել էր 1915 թվականի ապրիլի 15-ին (բառ որի որոշվում է ութ ասրենկանից բարձր նրեխաներին և աղամարդկանց սպանել, իսկ կանանց, ծերերին և ալիլի մանր երեխաներին վտռել), սակայն քուրդական կառավարությունը հայկական կոտորածները սկսել է 1914 թվականի վերջերին, «...Քանդակոսկան ուժ հազարելու պատրվակով քանակ կանչվեցին 16—52 տարեկան հասակ ունեցող հայ աղամարդկանց և ապա նրանց դիտաթափ անելով՝ առանձին-առանձին խմբերով, զազապազդի կոտորածի ենթարկեցին... Հայկական կոտորածները շարունակվեցին ամբողջ 1915 և 1916 թթ. ընթացքում. կոտորածները տեղի ունեցան Արևմտյան Հայաստանի բոլոր մասերում, բոլոր քաղաքներում ու դյուզբերում... 1915—1916 թթ. հայկական շարդերի ժամանակ սպանված հայերի թիվը կազմում է մոտ մեկ միլիոն. Այդ նույն տարիներին քուրդական կառավարությանը հաջողվեց բռնի կերպով քուրդացնել մի քանի հարյուր հազար հայերի»²։

Քերևը հայկական կոտորածների գլխավոր կազմակերպիչների՝ քուրդական կառավարության ռազմական մինիստր էնվեր փաշայի, ներքին գործերի մինիստր Քալեաթ փաշայի և զարհահամանատար Ջեմալ փաշայի ոճիրներն ապացուցող այլ փաստաթղթեր ևս Ալապեհ, Քալեաթ փաշան բոլոր նահանգ-

ների կառավարիչներին ուղարկած իր հրամաններում գրել է. «Տարագրության նպատակն ուշնչացումն է», և որ «աշունք գալուն բոլոր մարդկանց անկազմորեն պիտի պատասխանեն»՝ «հայկական խեղդի գոյություն չունի»³։

1921 թվականի հունիսին Բեռլինի նահանգային Գերագույն դատարանում տեղի է ունեցել Քալեաթ փաշային սպանողի գառավարությունը Դատավարության ընթացքում բերվել են այսպիսի հրեշավոր փաստեր։

«Մերձավորացյալ 1.400.000 հայ տեղահան եղած են Ի՛նչ կերտակն այս արտքը»։

Քալեաթը ստորագրած հրամանագրի մը մեջ սա խոսքը կը գտնուի՝ «Արտարվայրն է ոչնչություն»։ Համաձայն այս հրամանագրին հող տարուեցավ Արևելյան Անատոլիայի նահանգներին դեպի հարավ տեղահան եղող ամբողջ բնակչութիւնն միայն 10 տակա արտարվայր հասան. մնացած 90 տակա նամական արդեն տպանվեցան, բացի ոստիկաններն վաճառված և քուրդներն առևանդված կիներեն ու աղբիկներեն, մնացածն անտիտիկեն ու ուժադատութիւնն մեռան»⁴։

Յրեստիացի Ռեն Բինոն իր «Հայերու բնաջնջումը գերմանական մեթոդ—քուրդական զործեակերբը» աշխատության մեջ ապացուցելով, որ, այսպես կոչված, կրիտասարդ քուրդերը սրգիզելով Արզուկ Համիդի սկզբունքը՝ «Հայկական հարցը պիտի լուծեն հայերի չեղելով», նշել է. «Հայերու տարագրումը, կին, տղա և ծերերն, սրբի բան չէր, բայց և վե գաղտնի և կեզմավոր մահալճիտ մը... Նախ և առաջ կզարդիկին անզին հայ զինվորները իրենց զինված թուրք ընկերներուն կողմն. Այս զերախտները հարյուրներով, հազարներով կառաջերդիկին ամայի տեղ մը և հրացանի կը բռնվին Ծերտիկները կամ կողանվին և կամ կը մեռնին անտիտիկենն ու հոգնութիւնն, կրիտասարդ կիները ու աղբիկները բռնի կը քաշկտան

1 Յրանց Վեհիկ, Հայկական հերոսագետում, Մուսա լեռան քառասուն բերք, Մոֆիա, 1955, էջ 161։

2 «Դատավարության Քալեաթ փաշայի» (աղաղված զեկուցում), Վիեննա, 1921, էջ 60։

1 «Արևելագիտական ժողովածու», էջ 294։

2 Մ. Գ. Արսիսյան, Հայ ժողովրդի գառավություն, 294 «Տեղեկագիր», 1955, № 5։



Յրբական հարեմներու մեջ, ուր կը ծառայեն զինվորներու թմահաճույցներուն, մանկահասակ տղարեւրք կը խլվին մոր-մե և կը արվին իսլամներու. հայկական կարավաններուն վեր-ջին մնացորդները կը հաստին մահանալով շիրմեն և խեղ-ճուփենե... Երբոր Մարզվան, Ամասիայի, Քոթայի բնակչու-թյունը հասավ Սվազի և Կիսարիայի մեջտեղը, կառավարու-թյան շնորհի առաջ իսկ խլեցին երկու սեռի տղայքը իրենց մորմեն, արցունքալիցի սրահներու մեջ և ստիպեցին կա-րավանը շարունակել իր ճամփան, Հետո շրջակա գյուղերուն մեջ հայաարարեցին, թե ամեն ոք կրնա առնել իր ուզածը... կիններու և տղայոց կարավանները ցուցադրվեցին չուարան-լուր գյուղի կառավարական շնորհի առաջ, ուր իսլամները կրեարեին իրենց ուզածը... մեկնող կարավանը այսպիսով եվազեցավ և մնացած կիններն ու տղայքը Երզնկայի առջև նվիրատու թափվեցան...

Այս բարբարոսությունները զործադրվեցան ամեն կողմ, և ճամփորդները գավառներու բոլոր ճամփաներուն վրա կը հան-գրեպէին հայերու ճակարագը գրեական... Կը կապին զո-հերուն ձեռքերը և կը զահալիժեն այստամներու զազաթին զեաներու մեջ: Այս միջոցը զործադրեցին, երբ սպանվելիքնե-րուն զանգվածները շատ մեծ էին... »:

Նման բարբարոսական քաղաքականություն վարելուց հե-տա կարելի է՝ արդյոք պնդել, թե սթորիերը ոչ մի ժամանակ որևէ ազգի նկատմամբ բռնություն չեն գործել, ինչպես այդ անուամ են թուրք պատմարանները: Սա զեռ բոլորը չէ, նրանք ավելի հեռուն են գնում: Նրանք ճգնում են սպառնացել, որ հայերի ծագման և զարգացման մասին եղած տեղեկություն-ները սոսկ առասպելներ են, որ հայերի կուլտուրան (զրահա-նությունը, պատմագրությունը, ինչուն, արվեստը և այլն) զուրկ է ինքնուրույնությունից և դիտական արժեքից, թե այդ կուլտուրան դրացի ժողովուրդների, մասնավորապես, թուրք

1 Որևն Սիեռ, Հայերու բնակչույնը գերմանական մեթոդ—թուրքական գործակալերու, էջ 24—27, 29, 34:

ժողովրդի կուլտուրաների քննադրեակումն ու կրկնությունն է: Այսպիսի հերյուրանքներ են արվում մի ժողովրդի նկատ-մամբ, որի կուլտուրայի պատմությունը զայն է դարերի խոր-քից, որի թատրոնը ունի երկու հազար տարվա պատմություն և որի մասին հենց թուրք գործիչ Ռ. Անճեզն իր «Հայոց դեր-թուրք մշակույթի մեջ» հողվածում գրել է. «Մուկղեբյան սպա-րանքին մեջ երկկայացումներ կազմակերպված են նվիրույս սեսսած հայ երեսասարդներու կողմէ: Իսկ Կ. Պոլսում հրա-տարակից «Նովոստի» աստական թերթը «Կ. Պոլսի թատ-րոններու» հողվածում նշել է.

«Առաջին թուրք թատրոնը հիմնեցին հայերը և նրա սկզբը-նական խումբը կազմված է եղել քաղաքային հայերից: Առ-տարակ հայերը Քուրբանում ներկայացնում են մի շատ բազմաբնույթ տարր, նրանք այդ երկրի տվել են բազմաթիվ բանաստեղծներ, նկարիչներ, ճարտարապետներ և գերասան-ները »:

Ծրանց վերջինի իր «Հայկական հերոսապատմ», Մուսա լեռան քառասուն օրերը աշխատության մեջ բերում է ծոհանե-նեա Աբիսուսի և հայերի շարդարաններից մեկի՝ Էնվերի փա-շայի միջև եղած խոսակցությունը հայերի մասին, որտեղ է. Աբիսուսը վիճելով Էնվերի փաշայի հետ, նշում է.

«Առունց հայ ցեղին, թուրք պետությունը անտեսապես, մշա-կութապես և ստոր հետեանքով նաև զինվորապես կը կոր-ստի... Հայ ազգը, օսմանյան բնակչության ամենեն քաղա-քակիրթ ու զործունյա խավը, տասնյակ տարիներ ի վեր հրա-կայական շնք կ'ընեն պետությունը զուրա բերելու հիմունքն բնական տեսեսությունեն և ժամանակակից երկրագործության և զեռածին ճարտարունակացումի նորընկյուղ աշխարհի մը մեջ առաջնորդելու համար: Եվ ճիշտ ու ճիշտ այս ուղեցու-ցական օրհնյալ աշխատանքին համար ան հիմա կը հալածվի ու կը բնաջնջուի ուժին տեր եղող մուսլիմներն և զատարակապորտ-

1 Տե՛ս Ե. Սարխյան, Ա. Սահրատյան, Պատմության հակադեմոստի մի բանի փաստերի մասին, «Երևանի պետական ժողովածու», 1960, էջ 353, 385—387.

2 Ս. Զատիկյան, Միտանուշ, Երևան, 1961, էջ 4:

ներեն... Ո՞վ պիտի բուն բազում հայ բժիշկներուն տեղը, որոնք նվիրույալի ամենալավ համալսարաններուն մեջ ուսած են և օսմանցի հիվանդները կը դարձանին իբրև իրենց ցեղակիցները հավասար հոգածությունը: Ո՞վ պիտի բուն բազմաթիվ ճարտարագիտներուն, փաստաբաններուն, մասնագետ ուսուցիչներուն տեղը, որոնց աշխատությունը երկիրը առաջ կը տանի անսպասու կորսվովո՞ւ:

Հայության օգտակար գործունեության մասին Քուրբխայում վկայում են նույնիսկ թուրք ժողովրդի այն ներկայացուցիչները, որոնք օրենքախիվ ակնոցներով են նայում պատմությունը (1962 թ. հոկտեմբերի 25) սպաղովել է թուրք դատարանի օգնական կյունյալ էրնայի Քուրբխայի գանազան շերտաններում կատարած ճամփորդության արագությունները, որտեղ նա վկայում է, որ հայ ստեղծագործ ժողովրդի կոտորածներին և հալածանքներից հետո Քուրբխայում ամեն ինչ կրտսի վրա է թողնված, և ամենուրեք հեռագրիմությունն ու խաղաղն է տիրում: և նա գրում է. «Այնտեղ (խոսքը Հաճընի մասին է — Ա. Ե.) հայոց շրջանին ավելի մարդիկ կապրեին, խաղողն ու զինին շատ ծանոթ էին: Այդ ժամանակ քուժ մքն ալ կար: Հայոց հետ միասին բուժեմ ալ զինք: Մենք այդինները քանդեցինք՝ դեին պատրաստելը մեզք համարելով: Ժամանակին հետ պարսպուցավ Հաճընը: Գինիի կարասները տակավին կմնան հայոց հին ասեմբլում մեջ...»:

Խոսելով ջրի պահպանության պատճառով թուրքական դուրսերում պատահած զեպրերի մասին, էրնայը գրում է. «Այն ժամանակ ևս զլուտացիներից լսեցի, որ հայերի այտուղ եղած ժամանակ Հունու գետին վրա կար փորրիկ ամբարտակ և զրա շնորհիվ ջրի նեղություն չէր զգացվում: Հիմա նա քանդված է»: Հետո. «Վանի կյուրթիքները շրջանի մեջ ալ կար: Այդ ափից երկու գետակ կրտսեր: Մենք էտրիմիթի մտոխց կհոսեր գետի վանա լիճը, մյուսն էլ հակառակ ուղղությամբ կզնար գետի»:

1 Թեանց Վերջի, Հայկական հերոսագրություն, Մուսա լեռան քառասուն-թերթ, 1935, Մոֆթա, էջ 151—152.

պի դաշտային հոտերը... սրանք էլ են հայերն արել: Հիմա երկուսն էլ զցվել են երեսի վրա...»¹:

Տեղին է այտուղի հիշատակի անդիպական նշանավոր գրող Քայրանի հայերի մասին սոված խոսքերը, որոնք իրենց մեջ արտահայտում են նույն տեսակետը, ինչ տարիներ հետո ասել է Ֆրանց Վերֆելը. «Բուցն դժվար լինի գտնել,— գրել է Բայրոնը,— ոճերնեղով սակավ արտավորված տարեգրություններ, քան հայոց, որոնց ստաբիլությունները խաղաղասիրտության արգասիք են, իսկ թերությունները՝ ճշման հեռանակ: Մակայն, ինչպես էլ լինի նրանց ճակատագիրը, իսկ կրա անցյալում դուռն է եղել, և ինչպես էլ լինի սպագայում, կրանց քնաշխարհը մշտապես կմնա երկրագնդի ամենահեռաքրքիր երկրներից մեկը...»:

Քուրք պատմաբանները կեղծում են նաև վրաց ժողովրդի պատմությունը և կուլտուրան: Նրանք պնդում են, թե 1578 թվականի թուրք-բրտանական պատերազմի ժամանակ, թուրքական բանակը Վրաստանը զբաղեցուց անմիջապես հետո երկրում վարչություն է կազմակերպել և ստեղծել լրիվ կարգ ու կանոն և բացարձակ անդրրոյություն, որ թուրքական բանակը Վրաստանի փրկել է անարխիայից և շինարարական աշխատանքների օկնել ոչ միայն Վրաստանի մայրաքաղաքում, այլև ամբողջ երկրում և, վերջապես, որ սթալերական իշխանությունը շրջանը վրաց ժողովրդի կյանքում ամենակերպակի շրջանը եղավ»²:

Պատմության թուրք կեղծարարները փորձում են թաքցնել այն, որ թուրքական բարբարոսները իրենց անվերջ արշավանքներով ոչնչացրել են ոչ միայն հայկական գյուղերն ու քաղաքները, սպանել բնակչությանը, այլև նրանց լծի տակ տառապել են նաև վրաց և կովկասյան մյուս ժողովուրդները, որոնք նույնպես թալանվել, կոտորվել են թուրքական եկեղերների կողմից:

1 Մանրամատուցյուն տե՛ս «Մեր նշանաբան է Ցառաջ» թերթի 1962 թ. դեկտեմբերի 9-ի համարում:

2 «Արևելագիտական ժողովածու», էջ 355—356.

Մինչև սովետական կարգերի հաստատումը անդրկովկասյան ժողովուրդների պատմությունը եղել է կոտորածների և զազմի, թշնամիների կողմից ավաղակալին կողպուրանների և ամեն տեսակ բռնությունների և հալածանքների մի շրջան: Չնայած դրան, ժողովուրդները չլու հնազանդ չեն եղել ներքին և արտաքին ճնշող բռնակալների հանդեպ: Ի պայցույց այդ բանի հիշատակները թևեղույ այն պատմությունները, որ հայ ժողովուրդը վարել է սկսած անցյալ դարի երկրորդ կեսից: Այսպես, բռնակալության և հարստահարչների դեմ 1862 թվականին ապստամբել է Ջեյթունը, 1863 թվականին՝ Մուշը, 1875—1884 թվականներին՝ նորից Ջեյթունը, Այնուճանը, արևմտահայությունը ակախվ մասնակցել է 1853—1856 և 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմներին և իր կույրներով օժանդակել ռուսական զորքին, Հիշենք նաև 1915 թվականի եղեռնը, երբ Արևմտյան Հայաստանի տարրեր շրջաններում, ինչպես, օրինակ՝ վանում, հայությունը հերոսական պաշտպանական մարտեր է մղել իսպառ բնաջնջումից ազատագրվելու համար: Մինչդեռ գերմանական հայտնի պատմաբաններից մեկը՝ Ե. Մոմզիկեն անիրավացի կերպով նշել է, որ ասիացիները անսահման հակում ունեն անգործության և բնզուսակ չեն ինքնաբերաբար ուսքի ելնելու շահագործող իշխանությունների դեմ¹:

Իսկ մի՞թե Ե. Մոմզիկենի վերահիշյալ կարծիքը ժխտող ակնառու փաստ չէ անդրկովկասյան ժողովուրդների համառ պայքարը արևելյան բռնապետության՝ Թուրքիայի և Պարսկաստանի ճիրաններից ազատագրվելու պատմական իրողությունը:

Վրացիները, ադրբեջանցիները և հայերը վաղուց ի վեր երազել են ազատագրվել պարսկական և թուրքական զաժան անիրավատություններից և իրենց բախար կապել Ռուսաստանի հետ: Այդ ժողովուրդների ազատագրական պայքարի և Ռուսաստանին միանալու ձգտումների դեմ ծառայել են թուրք, պարսիկ և Արևմտյան երկրների զաղութարարները: Սակայն

¹ Տե՛ս 2. Մանևկյան, Ֆենական տեսության հայ ժողովուրդ պատմության, էջ 207:

գարավոր պայքարը հաջբանակել է և 1801 թվականին Արևելյան Վրաստանը միացել է Ռուսաստանին, վերջինիս տիրապետության տակ են անցնում նաև ինչպես Վրաստանում, այնպես էլ Հոռու, Ղազարի և Ծամշաղինի շրջաններում բնակվող հայությունը: Այդ ակախ՝ Ռուսաստանին միանալու տեսակետից, քարինպատ պայմաններ է ստեղծում նաև ադրբեջանական և հայ ժողովուրդների համար:

1805 թվականին Ռուսաստանին է միանում Հյուսիսային Ադրբեջանը, այնուճան, երկարատև և համառ պայքարից հետո, 1828 թվականին Ռուսաստանին է միանում նաև Արևելյան Հայաստանը: Այսպիսով մեկընդմիջտ վերջ է դրվում արևելյան բռնապետության զաժան ունիմին, օրի տակ զարեք շարունակ հեծում էին Անդրկովկասի ժողովուրդները:

Անդրկովկասի միացումը Ռուսաստանին պատմականորեն կոխապատրաստված էր: Անդրկովկասյան ժողովուրդների նկատմամբ տարվող արևելյան տիրակալների, մասնավորապես, պարսկական բռնակալների քաղաքականությունը ավելի քան բավական էր օտարազգի անտանելի լուծը թոթափելու ձգտում ստաբացնելու համար:

Հիշենք նաև պարսկական խաների կողմից իրենց հյուսակների նկատմամբ կազմակերպվող այն զանակոծումները, խոշտանգումները, որոնք եղել են արևելյան հարթատահարչների քաղաքականության անբակասելի մասը: Այս առումով բնորոշ է նուս պաշտոնյաններից մեկի՝ Ի. Շոպինի հետևյալ վկայությունը. «...Նրբեմն կատաղած Սարգսրը հրամայում էր թշվառների լուսամուտից նետել Ջանգուն, կրբմն էլ կարում էին զատապարտյալի ձեռքը, ոտքը, մեկ կամ երկու ականջը, լնդուն, հանում էին մեկ կամ երկու աչքը և այդ ամենը կատարվում էր կալմակի արագությունը: Առաջ մեղադրյալի աչքերը կուրացնում էին շիկացած երկաթով, իսկ հետագայում այդ նույնը անում էին սուր գործիքով»²: Այդ զաղանություններից ազատագրվելու համար վրաց, հայ և ադրբեջանական ժողովուրդները պայքարի էին

² «Հայ ժողովուրդի պատմություն», մաս II, էջ 81

ելնում և անկախութիւն, ազատ կյանք ստեղծելու համար մղվող անհավասար կռիվներում իրենց հայացքը ուղղում էին զեպի որս մեծ ժողովուրդը, համոզված լինելով, որ նրա հետ միանալը միայն հնարավորութիւններ կստեղծի անտեսական և կուլտուրական կյանքի զարգացման և առաջխաղացման համար:

Հայ, վրաց և աղբրեջանական գործիչները, առաջադեմ մտածողները Ռուսաստանի հետ միանալու զազափարը ամենաճիշտն են համարել: Վրաց էրեկից թագավորը, օրինակ, Վրաստանի պահպանման, նրա զարգացման միակ ճիշտ ուղին համարել է մեծ Ռուսաստանի հետ դաշնակցելը: Այսպես է մտածել նաև հայ հասարակական գործիչ Բարայիւ Օրբին: Ենթան անտեսակետ վրա է կանգնած եղել և պետական գործիչ ու բանաստեղծ Վազիֆը և այլք: Ուշադրավ է այն հանգամանքը, որ Ռուսաստանին միտնալու համար հայ ժողովուրդի մղած պայքարին օժանդակել և մասնակից են դարձել վրացիները և աղբրեջանցիները: Ե՛վ ընդհակառակը՝ երբ վրաց ժողովուրդն է պայքարել պարսից բանակիւնների դեմ, նրան օգնություն են եկել հայ ժողովուրդի արժանավոր զավակները, ինչպիսին էր, օրինակ, Գավիթ-Բեկը:

Ձ. Էնգելսը գրել է. «Ռուսաստանը արեւելքի վերարեմումք իրոք առաջադեմական է եղել Ռուսական իշխանութիւնն իր ամբողջ ապականութեամբ... քաղաքարկթող զեր է կասարել Սև ու Կասպյան ծովերի նկատմամբ, Կենտրոնական Ասիայի, քաշկիրների և բուլղարների նկատմամբ»¹:

Վրաստանի, Աղբրեջանի և Արևաստանի Հայաստանի միացումը Ռուսաստանին համապատասխանում էր անդրկովկասյան ժողովուրդների շահերին և ձգտումներին: Այդ պատմական շատ կարևոր իրադարձութիւնը խոշոր նշանակութիւն ունեցավ մեր ժողովուրդների կյանքում: Գա մի պայծառ էջ էր, մի խոշոր հայթանակ էր անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարի պատմութիւն մեջ:

Արտահայտելով հայ ժողովուրդի երախտագիտութիւնը որս

¹ Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Հարաբեր իմասկներ, հատ. 1, Երևան, 1936, էջ 651:

ժողովրդի նկատմամբ, Խ. Արշալույսը գրել է. «... Հայք ե՞րբ կարեն որսաց արածք մոտանալ, քանի՞ որ շուշն ունեն... Աշխատենք ըստ մեր կարողութիւն և հնարավորութիւն Անոթ բերել օգտավետ դիտութիւններ, կրթել մեր միտք ու սիրտը, ձեռք բերել որս լուրջի դիտութիւնն և բարի քաղաքացիներ լինել: Մրանով, հենց միակ սրանով, քան մեկ ուրիշ բանով, մենք կարող կլինենք միանալ որս մեծ ազգի հետ, որի միայն անանք ենքընդմէջ է ամենքին, միեւն իսկ օտարին, սեր և անձովիրութիւն»²:

Ռուսաստանին միանալուց հետո Անդրկովկասի ժողովուրդների անտեսական և կուլտուրական կյանքում սկսվում է մի նոր շրջան: Հենց միայն այն հանգամանքը, որ հայ, վրաց և աղբրեջանական ժողովուրդներն ընդմիջա ազատվում են իրենց ֆիրիկական գրչութիւն համար արեւելյան բանագրավիւնների զեմ մղվող աներդմէջ կռիվներից, արդեն մեծ նախադրաւներ է ստեղծում հասարակական-անտեսական, մասնավորապես կուլտուրայի զարգացման համար:

Այդ մեծ իրադարձութիւնը շնորհիվ սկսվում է պատմական մի այնպիսի շրջան, որի բնթացքում որսական առաջավոր կուլտուրան իր բարեբար աղղեցութիւն տակ է աւելում անդրկովկասյան երկր ժողովուրդների հասարակական-կուլտուրական կյանքը:

Անդրկովկասի մտավորականութիւնը ձգտումը զեպի որսական առաջավոր կուլտուրան, սերտ կապը նրա առաջադեմական ներկայացուցիչների հետ խոշոր նախադրաւներ են ստեղծում վրաց, աղբրեջանական և հայ դրականութիւն, թատրոնի, կերպարվեստի, երաժշտագիտութիւն և ընդհանրապես հասարակական մտքի բոլոր բնագավառների առաջխաղացման, աշխուժացման, զարգացման համար: Վրաստանի, Աղբրեջանի և Հայաստանի միացումը Ռուսաստանին հնարավորութիւն տվեց ավելի մոտիկից շփվել որսական առաջավոր կուլտուրային, որսամասերի որսաց լեզուն Ռուսաց լեզուն խոշոր հնարավորութիւն ստեղծեց ժանիթնալու որսական,

² Խ. Արշալույս, Վերջ Հայաստանի, էջ 209:

համաշխարհային կուլտուրայի գանձերի հետ, ինչպես նաև հզոր միջոց հանդիսացավ ուսական կայսրության բոլոր ժողովուրդների, այդ թվում վրացիների, հայերի և ադրբեջանցիների կուլտուրական կապերը ամրապնդելու գործում: Ենթահիվ ուսական առաջավոր կուլտուրայի հետ մշտական շփման, Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրայի և գրականության աշխատողները XIX դարում ստեղծեցին բազմաթիվ վարժեր գործելու նրանց կուլտուրաների խոշոր ժառանգությունը ապացույցն է այն ստեղծագործական շիման, որ եղել է մի ավել ժողովուրդների և ուսն առաջավոր կուլտուրայի միջև եմ վնասած այն բանին, որ ցարիզմը խոչընդոտում էր ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ անդրկովկասյան ժողովուրդների ազգային կուլտուրաների զարգացմանը, այնուհանդերձ, առաջնապայման սեղի էր ունենում շնորհիվ այն սերտ ու մեծ բարեկամական կապերի, որ ստեղծվում էր անզրկովկասյան առաջադեմ մտավորականության և ուսական կուլտուրայի խոշորագույն ներկայացուցիչների միջև Հարսահայտ փաստ է, որ սուսական կուլտուրայի առաջադեմ գործիչները՝ Պուշկինը, Լերմոնտովը, Տուրգենևը, Տոլստոյը, Նեկրասովը, Գոգոլը, Սալտիկով-Շչեդրինը, Գերցենը, Չերնիշևսկին, Զեխովը, Մաքսիմ Գորկին հակառակ ցարիզմի բռնապետական քաղաքականության, միշտ էլ ամենախոր հարցանքով են վերաբերվել Ռուսաստանում բնակվող փոքր ազգությունների կուլտուրային, գրականությանը և արվեստին:

Վրաց, ադրբեջանական և հայ առաջավոր գրողներն ու մտավորականները լայնորեն ծանոթանում և ուսումնասիրում են ուսն առաջադեմ գրողների ստեղծագործությունները, սերտորեն կապվում են ուսական միջավայրի հետ և ընկալում առաջավոր մտածողների գաղափարները: Ռուս ժողովրդի առաջադեմ գրողները՝ Բեկմանկին, Գոգոլը, Գերցենը, Չերնիշևսկին, Օդարտովը, Պուշկինը, Լերմոնտովը, Նեկրասովը, Զեխովը, Գորկին և ուրիշներ մուտք են գործում Անդրկովկաս նրանց լավագույն գործերով դասարարակվում են անդրկովկասյան առաջադեմ գրողների և հասարակական գործիչների մի ամբողջ պլեադա: Հայ, վրաց և ադրբեջանական կուլտու-

րայի գործիչներին և ուսն առաջադեմ գրողներին շփումը միմյանց հետ ավելի ու ավելի են հարստացնում ու աշխուժացնում Անդրկովկասի ժողովուրդների հասարակական միտքը, գրականությունը, կուլտուրայի բոլոր բնագավառները: Ռուս առաջադեմ գրողները գովիբղում են հայերի, վրացիների և ադրբեջանցիների բարեկամությունը, նրանց քաղաքական ու կուլտուրական համագործակցությունը:

Անդրկովկասի առաջավոր մտածողների մոտ ժողովուրդների ազատության դառափարը միահյուսվում է բարեկամության, եղբայրության համագործակցության գաղափարի հետ: Նրանք իրավացիորեն համոզված էին, որ յուրաքանչյուր ժողովրդի ազատությունը, բարխոր սերտորեն կապված է մյուս ժողովրդի ազատության հետ: Մի ընդհանուր նպատակի համար մղվող պայքարում անդրկովկասյան առաջադեմ մտավորականությունը սերտորեն կապվում է Ռուսաստանում սեղի ունեցող հասարակական քաղաքական կյանքին: Իրենց հերթին ուսն մեծ գրողներն ու գործիչները վստահություն, բարեկամության ձևեր են մեկնում վրաց, ադրբեջանական և հայ ժողովրդի առաջավոր զավակներին:

Ռուս ակնախօր գրողներն ու մտածողները սիրելի են զանում վրացուն, հային և ադրբեջանցուն: Վաղուց, շատ վաղուց է իրականացել մեծ Պուշկինի երազանքն այն մասին թե՛

Համբավն իմ Ռուսիայում անձայտծիր կտարածվի,
Իմ հեշիշի յուրբանելուր լեզուս այստեղ սարբոզ...

Պուշկինը իրավացի էր, որ նրա համբավը կտարածվի բոլոր երկրներում, Միբղա ձաթալի Ախուևզովը հետևյալ ջերմ խոսքերն է նվիրել նրան.

Ու բովսեղի նիբոգայում,
Չիեստանեց+ Թաթարստան
Համբավն երդի մեծ արբալի,
Որտասուլսի որդես մրբիկ,

Հայ գրող Ամրատ Եանզադը գրել է՝

Իմ սրտի սիրած պոետս զու անգին,
Որ դյուքն էս ինձ գրվանքով,—
Տանկ ես հոբոս սակի բնաբով—
Կեցցե՛ս հավայան, կեցցե՛ս զու, Պուշկին:

Նդիշն Չարենցի օրագրում կարգում ենք՝ սերը ես տխուր ու հոգեմած եմ լինում և ուզում եմ վարձատրել ինձ մեծագույն հաճույքով, ես փակում եմ իմ ասեղ զանեղը, պատկում և սկսում եմ կարգալ Պուշկինը...: Իսկ Պուշկինին նվիրված բանաստեղծության մեջ ես գրել է.

Իմ սենյակում երկ կեսամ՝
Կարգում էի Անդրաստրին
Կարգում էի... և իմ հոգին
Հակա մի խիեղ էր սղողում.—
Այդքան պաշտոս ու ա՛տրին
Արեզա՛կն է միայն շողում:
Նվ կարգալով Անդրաստրին՝
Կրկին անգամ ես հասկացա,
Քե ինչո՞ւ է նրա անդրին
Սերունդների սրտում կեցած:
Քե գարեի հոբոսդեմում
Չառվելով՝ ինչո՞ւ է ես
Անվերջ շողում ու բարբառեմ
Նվ միշտ պայծա՛ռ պիտի մնա:

Կարելի է թվիլ բազմաթիվ ստեղծագործություններ եռաշատր Արտվանից, Միրզա Չափալի Ախունդովից և շատ ուրիշներից, որտեղ արտացոլվել է հայերի, վրացիների և ադրբեջանցիների շքեր սերը զեպի աուս մեծ ժողովուրդը, նրա կուլտուրան:

Վ. Ի. Լենինը նշել է, որ սկս երկու ազգային կուլտուրա յուրաքանչյուր ազգային կուլտուրայի մեջ: Կա Պուրիշկինիների, Գուշկովների և Ստրովենների վերկոտուսական կուլտու-

րա, բայց և կա վերկոտուսական կուլտուրա, որը բնորոշվում է Չերնիշևսկու և Պլիխանովի անուններով¹:

Վրաց, ադրբեջանական և հայ ժողովուրդների լավագույն ներկայացուցիչներին, ինչպիսիք են՝ Ի. Ծավճավաճեն, Պ. Պառչյանը, Ա. Մերեթլին, Ղ. Աղայանը, Մ. Ախունդովը, Ն. Նիկոլաճեն, Գ. Սունդուկյանը, Ալ. Մատուրյանը, Հովհ. Թասանյանը, Սեիդ Աղիմ Երիվանին, Սարիբը և շատ ուրիշներ կրել են Չերնիշևսկու և Պլիխանովի անուններով բնորոշվող ուսանական կուլտուրայի ազդեցությունը և իրենց նամականիում ու հիշողություններում բազմիցս հիշատակել են այդ մասին: «Նովոյե օրդոբնիե» թերթի խմբագիր Գ. Քունյանովը գրել է, որ Կովկասի ուսանողները և հասկապես Պետերբուրգի համալսարանի ուսանողները սերտ կապի մեջ են եղել առանձնապես Չերնիշևսկու հետ: «Անցյալ դարի վաթսուանական թվականներին մտավոր կյանքի աշխուժացումը Ռուսաստանում առանձնապես բարերար ազդեցություն ունեցավ Պետերբուրգում ապրող կովկասցի ուսանողների վրա: Որպես դուրսագրաց հարավցիներ, այդ ուսանողները շերտորեն արձագանքեցին կյանքի այն նոր պահանջներին, որոնք ծագում էին ասել այն ժամանակ ուսանական առաջավոր հասարակության շքերաններում: Կովկասցի ուսանողներն առանձնապես մտածեցան Չերնիշևսկու և նրա քնտանիքի հետ»: Իսկ հայ հրապարակախոս Ավետիս Արարսյանյանը իր հոդվածները մեկում եղել է. «Չերնիշևսկու առաջացրած շարժումը Ռուսիայում կղզիացած չէր մի կենտրոնում, այլ ծավալված էր այդ մեծ երկրի հեռավոր տեղերը եւս: Կովկասյան երիտասարդությունը կրեց նույն ազդեցությունը և բազմաթիվ պատանիներ Չերնիշևսկու զրվածքները ներկայագույնական պաշտամունք էին շինեմա՞ն²:

Ռուսական առաջավոր մտքի, նրա ներկայացուցիչների բարերար ազդեցության մասին հետևյալն է գրել վրաց մեծ

¹ Վ. Ի. Անին, Երկեր, հատ. 20, էջ 20:
² Գուրգեն Լովճան, Ռուս հայ-գրական կապերը 19—20-րդ դարերում, հատ. I, 1960, էջ 201—202:

գրող Իլյա մավճավաձենն. «Կասկածից դուրս է, որ առասկան գրականությունը մեր հաջողությունների մեջ խաղացել է դեկավար դեր և թողել է խոշոր ազդեցություն այն ամենի վրա, ինչ որ կազմում են մեր հոգևոր ուժերը և բանականությունը, մեր միտքը և զգացմունքը... Այժմ մեզ մոտ, գրականության և հասարակական ասպարեզում շկա և ոչ մի գործիչ ու ակտիվ աշխատող, որ ազատ լիներ առասկան գրականության ազդեցությունից: Եվ դա զարմանալի չէ. առասկան զգրոցը, առասկան գիտությունը մեզ բացեց լուսավորության դռները, իսկ առասկան գրականությունը՝ մեր բանականությունը, մեր միտքը սնուցանում էր առաջընթացի շարժման ճանապարհին... Դրա համար մենք ամենայն իրավունքով կարող ենք ասել, որ մեզանից յուրաքանչյուրը իր դավանանքը և ուսմունքը կանդնեցրեց այդ գրականության վրա և նրանից կախված ընտրեց իր հասարակական կյանքի ու գործունեության ուղին»:

Ազդեցությանի Ազիմ Երվանին (XIX դարի II կես) իր որդուն գրում է.

*Մի լեզու, խոսքի, զու պետք է սիրես,
Ուսանեն անգլյան ուսմանս արես,
Այդ լեզվի կարիքը շատ ենք զգում մենք,
Պիտի խոսանաք մենք այն, սիրել եյք լուծենք:*

Անդրիովկան էլ իր հերթին ոգեշնչել է ռուս առաջավոր մտածողներին: Հայ, վրաց և ազդեցական ժողովուրդների համառ պայքարը իրենց ճնշողների դեմ, նրանց քաջությունը, աշխատասիրությունը ոգևորության աղբյուր են հանդիսացել նաև ռուս գրողների համար: Վ. Բիլինսկին գրել է. «Տարբրի-նակ բան, Կովկասին կարծես վիճակված էր լինել մեր պոետական տաղանդների օրրանը, նրանց մուսայի ոգեշնչողն ու սնուցիչը, նրանց պոետական Հայրենիքը»¹: Իսկ Իլյա Էրեն-բուրգը իր «Մարդիկ, տարիներ, կյանք...» հոդվածում նշել է, որ «...Առանց Կովկասի դժվար կլինի պատկերել առասկան

պոեզիան: Այստեղ էր նա ոգևորություն ստանում, այստեղ էր կարծես գտնվում նրա մրցասակիբը»¹:

Այսպիսով, մեր ժողովուրդների առաջավոր մտածողները գաստրիարակվելով ռուս առաջավոր մտքի ներկայացուցիչների «ուլույցիտն գաղափարներով, միաժամանակ փոխազդել են նրանց վրա:

Ռուս առաջադեմ կուլտուրայի բարեբար ազդեցության առումով քավականաշափ բնորոշ են, օրինակ, թատրոնի բնագավառում տեղի ունեցած բարեփոխումները: Ռուսական բարձրարվեստ դրամատիկական երկիրը մի տեսակ խթան են հանդիսացել մեր թատրոնի համար՝ բեմ բարձրացնելու ևեպիտոսական արվեստի ստեղծագործությունները: Ռուս կլասիկ գործերը լայն տեղ են զբաղեցնում Անդրիովկասի ժողովուրդների թատրոններում: Վրաց, ազդեցական և հայ թատրոնի որոշ գործիչներ իրենց կրթությունն ստանալով Մոսկվայի և Պետերբուրգի արվեստի հիմնարկներում, շփվելով ռուս մեծ վարպետների հետ, նրանց առաջադիմական գաղափարները բերել են ազգային թատրոն:

Հայ թատրոնի ականավոր գործիչներից մեկը՝ Սևուսյանը, օրինակ, ասում էր. «Երբ խոսում ենք հայ թատրոնի մասին, չենք կարող մոռացության տալ ու շնորհիվ առասկան թատրոնի մասին, որի բարբարապարար անմիջական ազդեցության տակ է գտնվել և գտնվում է հայ թատրոնը»:

Ռուսական առաջադեմ կուլտուրայի ազդեցության ներքո, սկսած XIX դարի առաջին տասնամյակներից, ավելի են զարգանում և ամրապնդվում անդրիովկասյան ժողովուրդների գրական-կուլտուրական կապերը:

¹ Տե՛ս «Литературная Грузия», 1961, № 1, стр. 66.

¹ В. Г. Белинский, Сочинения, т. I, 1948, стр. 692.

ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ՈՐՊԵՍ
ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամության, բազմակողմանի եղբայրական փոխհարաբերությունների արտահայտություններից է դրական-կուլտուրական համագործակցությունը: Մտախի հարեանությունը, պատմական միեռնայն ճակատագիրը և ապրելակերպի նմանությունները անդրկովկասյան ժողովուրդների մեջ պատմատեղ են միմյանց նկատմամբ սիրո և հարգանքի ամենատեղիով զգացմունքներ: Ինչպես տեսանք, զարբեր շարունակ երեք եղբայրակից ժողովուրդներն իրենց պետական անկախությունը պաշտպանելու համար հարկադրված են եղել հարատև և համառ պայքար մղել հաճախակի իրենց երկիրները ներխուժող Արևելյնի և Արևմուտքի նվաճողների դեմ: Ազատագրական այդ պայքարի ընթացքում նրանց կոփված բարեկամությունը արտահայտվել է թե՛ մշտական զինակցությունը և թե՛ անասանական ու կուլտուրական համագործակցությունը:

Անդրկովկասյան քախտակից ժողովուրդների կուլտուրայի մշակները՝ պատմիչները, իրենց մազադաթյա մատյաններում արձանագրել են երեք զրկից ժողովուրդների քաղաքական պատմության արժանահիշատակ զեպիքը, սրտի մորմորով նշել են միմյանց կյանքի ողբերգական պահերը, ինչպես և ուրախացել են միմյանց չուրաբանչուր հաջողության համար: Պատմիչների նրկապարտություններում արտացոլվել են հայ-

րի, վրացիների և ադրբեջանցիների դարավոր բարեկամության բուրբ ձևերը՝ ուղղմական համագործակցությունը, անասանական ու քաղաքական բարդորացիական հարաբերությունները, կուլտուրական փոխըմբռնումը, միմյանց վիճակով մտահոգվելը:

Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը մարմնավորող աղբյուրներից ուշագրավ է XI դարի վրաց պատմիչ Լևոնտի Մրովելու միջոցով մեզ հասած Հասոի և Քարթլոսի եղբայրներ լինելու լեզնեզը: Ըստ այդ լեզնեզի կովկասյան ժողովուրդների նախահայրերը եղբայրներ են եղել. «Նախ և ասոջ հիշատակներ այսպես,— զրել է Մրովելին,— որ հայոց (սամիսների) և վրաց (բարթվելների), ուսնաց ու մովկանաց, հերաց և լեզգիների (լեկաց), եզերաց (մեղրեյների) և Կովկասյաց, սոցա բոլորի հայրը մի էր՝ Քորգոմ (Քորգոմոս) կաշեցյալը»¹:

«Հասո և Քարթլոս» լեզնեզում արտացոլվել է անդրկովկասյան ժողովուրդների բախտակից լինելու, օտարազգի նվաճողների դեմ միահամուռ ուժերով պայքարելու փաստը: Օտարի տիրապետության հետ շահավելու պատմական իրողությունը Լ. Մրովելին մարմնավորել է լեզնեզի այն հատվածում, որտեղ խոսվում է Հասոի առաջարկով աշխարհակալ Ներրոթին հարկ չառու մտախն: Ներրոթին խմանալով այդ՝ սե՛ծ զորքով արշավում է Կովկաս: Այստեղ է, որ հանդես է դալիս կովկասյան ժողովուրդների ուղղմական համագործակցության ուժը. «Մրանց բուրբին (իր եղբայրներին—Ա. Շ.) ժողովնց Հայկը (Հասոը) և կանգնեց Մասիսի ստորոտում: Եվ երբ մոտեցավ Ներրոթը Ատրպատական աշխարհին և կանգնեց այնտեղ, վժթսուն հսկա և՛ նրանց հետ՝ հոբը զորավարների ուղարկեց Քորգոմյաններին կարգի կանչելու համար: Հենց որ Ներրոթին զորավարները մոտեցան, Հայկի (Հասոի) յոթ հսկաները սե՛ծ զորքով զմամվորցնին նրանց, իսկ Հայկը (Հասոը)

¹ Լ. Մելիսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Հատ. Ա, Երևան, 1934, էջ 143:

հզորացույն դորքով կանգնեց ետեից՝ թիկունքում»¹։ Անզրկովիկայան ժողովուրդների ազատության համար դարեր շարունակ մղվող պայքարը սիմվոլացնող այդ ճակատամարտը վերջանում է Հասոսի և իր եղբայրների հաղթանակով։

Ընդհանրապես պետք է ասել, որ հայ, վրացի, ազրբեջանցի պատմիչների իրենց երկասիրություններում բազմաթիվ փաստեր են արձանագրել անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունների մասին։ Մանրամաստերեն կանոց շանկելով պատմիչների հազարգամ տեղեկությունների վրա, որպես օրինակ նշենք միայն հայ պատմագիրների՝ Փավստոսի, Խորենացու, Փարպեցու և ուրիշների մ.տ անզրկովկասյան ժողովուրդների բարեգրացիական հարաբերություններին վերաբերող բազմաթիվ էջերը։ Այս առումով հիշատակենք թևկուզ Փավստոս Բյուզանդացու պատմության մեջ արտացոլված մեր ժողովուրդների համընդհանուր պայքարն ընդդեմ պարսիական հարստահարիչների, կամ Կորյունի և Գանձակեցու հայտնած տեղեկությունները Հայաստանի և Վրաստանի սերտ բարեկամության մասին Թնրեսայ՝ դրևից ժողովրդի պատմությանը վերաբերող իրադարձությունների արտացոլումն է կղև այն հիմնական պատճառներից մեկը, որ մի շարք պատմիչների գործեր, կամ նրանցից բաղկած հատվածներ ղեռն շատ դարեր առաջ թարգմանվել են հարևան ժողովրդի լեզվով՝ Պրոֆեսոր Լ. Մելիքոսև-Քեկի վկայությամբ հայ մատենագրության շատ նմուշներ՝ Փաղբատուսի, Խորենացու, Փարպեցու պատմություններից բաղկած առանձին հատվածներ թարգմանվել են վրացերենի²։

XII դարում վրացիներից հայրենի է թարգմանվել վրաց ասրեզրության (սֆարբիլից յխոթրբրա)՝ հնագույն խմբագրությունը։ XVIII դարում Վախիճանգ Զ թագավորի հրամանով հայերենից վրացերենի է թարգմանվել Մխիթար Գաշի «Գա-

տաստանագիրը հայոց»։ Հետագայում վրացերենի են թարգմանվել Վենետիկի Մխիթարյանների առանձին գործեր։ Գրական կապերի և բարեկամության ամրապնդման գործում որոշակի դեր է խաղացել նաև Հազարատ-սանահինյան գրական-գիտական դպրոցը։

Ժողովուրդների բարեկամության զաղափարով են ներծծված եղել անզրկովկասյան ժողովուրդների թև՝ քանահայտությունը և թև՝ հին գրականության առանձին հուշարձանները։ Այդպիսիք են, օրինակ, հայ ժողովրդի հանճարեղ էպոս «Սասունցի Գավթիթը», ազրբեջանական «Քրու-օղին», վրացական «Ամիրան Գարեջանիանին», Ֆրիկի որոշ քանասանդուկությունները, Մուսթափելու «Վաղրենավորը», Նիզամիի «Խոսրով և Շիրինը» և այլն։

Այսպես, «Սասունցի Գավթիթ» էպոսում հայ և վրաց ժողովուրդների եղբայրական փոխհարաբերություններն իրենց մարմնավորումը գտել են Սասունցի Գավթիթ և վրաց դուռացու Վորգիդի բարեկամության զեղարվեստական պատկերման մեջ։ Միմյուրի կեն Գավթի հետևյալ խոսքերը՝ ուղղված Գորգիդին.

Փավոր Գորգիդ, արի մանենք ներս,
Տուրք մեաց մեկի, բակ մեաց հավերժու։

Ինչպես տեսնում ենք, Գավթիթը Գորգիդին բավոր է անվանում, որը ժողովրդի մտտ բարեկամության և եղբայրության խորհրդանիշ է։

Հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանը խոսելով հայերի և վրացիների բարեկամական կապերը սիմվոլացնող Գավթիթ և Գորգիդի փոխհարաբերությունների մասին, իրավացիորեն գրել է. «...հայկական էպոսի մեջ մշտապես անասան կանոնած են հայոց հակայի—Սասունցի Գավթիթ և վրացի հակայի—Վորգիդի (այլ վարիանտով՝ Համդուլ) հակայի զեղերը իրար կոչող, ուր Գավթիթը Գորգիդին է առաջ իր բարեք, Գորգիդն էլ միայն Գավթիթ բարեն է ստնում, նա է Գավթիթն զգուշացնում վերահաս վտանգի հանդեպ, և նրան է հայտատու Գավթիթն անվերապահ։ Նրանց սրերը երբեք չեն խաչաձևվում, և

1 Լ. Մելիքոսև-Քեկ, Վրաց ազրբեջաները Հայաստանի և հայերի մասին, հաս. Ա, Երևան, 1924, էջ 146.

2 Տե՛ս Մելիքոսև-Քեկ, Հայ-վրացական գրական կապերի պատմությունից, «Էքսթրանիս», 1957, հուլիս-սեպտեմբեր.

բացասազն սիրո և բարեկամութեան համար և Գավիթը Քիորդիի երկիրը գալիս:

Ահա Ձեզ ամբողջ ժողովրդի արտահայտած կարծիքը, սերունդներով ամբապնդված կապը, հավերժարեն դժված ճանապարհը: Հայ լինի, թե վրացի, եթի շեղվում է էդ ճանապարհից, էա դավաճանում է իր ցեղի ողբուն: Ահա թե ինչու «Սասունցի Գավիթ» էլստում տեղ դամ ընդամենը Հայրենասիրությունը, ժողովուրդների եղբայրության գաղափարը հարազատ է հելու՛մ բոլոր ժողովուրդների համար:

1939 թվականի դեկտեմբերի 15-ին «Պրավդա» թերթը գրեց. «... Պսոնի հերոսական կերպարները մտել են սովետական զրահանության և կուլտուրայի ընդհանուր գանձարանը: Գրանք հարստացնում են զրոզների, պոետների, նկարիչների ստեղծագործությունը մեր Միության բոլոր սեպուրիկաներում»:

Երբ 1939 թվականի սեպտեմբերի 15-ին մեծ հանդիսավորությամբ նշվեց հայ ժողովրդի հանճարեղ ստեղծագործության՝ «Սասունցի Գավիթ» 1000-ամյա հորեյանը, Սովետական Միության բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև վրացիներն ու ադրբեջանցիները, շերտերն ողջունեցին հորեյանը: Երեսնում տեղի ունեցավ Սովետական Միության զրոզների միության հորեյանական պլենում:

Ազրբեջանական զրոզների անձնից Ռասուլ Ռզան իր ողջունի խոսքում ասաց. «Այդ հույակապ ստեղծագործության յուրաքանչյուր էպիզոդը, յուրաքանչյուր տեսարանը լի է ատելությամբ դեպի կեղեքիչները, միևնույն ժամանակ «Սասունցի Գավիթ» էլստն իսկական ինտերնացիոնալիզմի և ժողովրդի մարդասիրական ոգու հռչակն է մի փաստաթուղթ է: Սկզբից մինչև վերջ ինտերնացիոնալիզմի ոգով է ներծրված նաև Շոթա Ռուսթավելու «Վազրենավոր» պոեմը:

Երբ սարբեր ժողովուրդների ներկայացուցիչների՝ Ավթանդիլի, Տարիլի ու Փրիզոնի նվիրական, անկաշատ և հավատարիմ գաշիները նվաճում է գերված արևը, կյանք տալիս նրան և աշխարհը շերտացնում նրա պայծառ շղերով: «Վազրենավորը» ներծրված է բարձր մարդասիրության, սեփական կեր-

չանկությունը ուրիշների կրթանկությանը զոհելու, հանուն լուսավոր ու արևաշող կյանքի համար պայքարելու ոգով: Ռուսթավելու ստեղծագործության այս առանձնահատկություններն է նկատի ունեցել Ավետիք Իսահակյանը, երբ գրել է. «Ռուսթավելին համաշխարհային այն եզակի հանճարներից է, որոնց մեջ ամփոփված են մարդկության լավագույն իղձերը, մարտունակները, երազները, իղեանները, որոնց մեջ մարդկությունը հասնում է իր արշալույսին, կատարությունը: Այն եզակի հանճարներից, որոնք շարժուճար անելով անասնականությունը, եղբայրասացությունը, տանում են մարդկությանը գեպի ազատություն, անձնվիրություն, սիրո և կրթությունների ներդաշնակ աշխարհը»¹:

Շոթա Ռուսթավելին փշրել է աղգային նեղ շրջանակները և կանգնել համամարդկային զաղափարների բարձրության վրա: Ահա թե ինչու հայ մեծ պոետ Հովհ. Թումանյանը գրել է.

Չէ՛, չէ՛ լույս մեծ Շոթայի

Երգի ձայնը կաթոյնի.

Որ ցարավոր ցավն ամենի

Չի խորտակել էն հողին:

Մերո, հայրենասիրության, հումանիզմի, ժողովուրդների բարեկամության վրա զգացմունքներով հպեցված Շոթա Ռուսթավելու ստեղծագործությունը միշտ էլ սիրվել է հայ և մյուս ժողովուրդների կողմից:

Ազրբեջանական «Փյոն-օղլի» էլստն հերոսը՝ զոյուղացիական ազատագրական շարժման ասաշնորդ և խանդավառ երգիչ աշուղը, սիրով է երգվում հայ և վրաց ավանդազրույցներում (ստասպեղներում): Փյոն-օղլու կերպարի մեջ մարմնավորված են ժողովուրդների բարեկամության համար պայքարողի գծերը: Հայանի են նրա խոսքերը.

«... Անարգեցին խոտերը հայրենի

Տանքումս՝ արին տիրանները վրացիներին...»:

¹ «Սովետական զրահանություն», 1938, № 1:

Պատահական չէ, որ Քյոն-օզուն հերոսական կերպարը հարողատ է ոչ միայն անգրկովկասյան եղբայրական ժողովուրդների, այլև անցյալում ճնշված մյուս բոլոր ժողովուրդների համար:

Պատմությունից հայտնի է ազրբեջանական ժողովրդի մեծ բանասեր Նիզամիի սերտ կապը հայ գրականության հետ: Իր ստեղծագործություններում նա արտացոլել է ժողովուրդների ազատության և եղբայրության գաղափարը: Նիզամիի գործերից, օրինակ, «Տոսրով և Երիբնը» մի երգ է ժողովուրդների բարեկամության, մարդու արժեքայնության, անձնագոհության և հավատարմության մասին: Ազրբեջանական մեծ բանաստեղծի այդ ստեղծագործության գործողությունները տեղի են ունենում Ազրբեջանում, Հայաստանում և Պարսկաստանում: «Տոսրով և Երիբնը» դիվանոր հերոսուհին՝ Երիբնը հայ է, Եսփուրը՝ պարսիկ, Ֆարհաբը՝ լինացի: Սրանք բոլորն էլ միասնական են իրենց ձգտումներով և արամազրություններով: Նիզամին զետեւ միջնադարի պայմաններում փոփազանց էր ազրբեջանական և հայ, ինչպես և բոլոր ժողովուրդների անկախությունն ու երջանկությունը: Այլ. Իսահակյանը խոսումով Նիզամիի մասին, նշել է, որ «... նա նույնպիսի թանկ է ու նվիրական մեզ համար, Կովկասի ժողովուրդների համար: Ենդուհիվ իր հումանիստ և ազատասիրտ զգացումներին, նա հանդիսացել է և հանդիսանում է կովկասյան ժողովուրդների եղբայրացման մեծագույն զոդղներից մեկը, որը միշտ պիտի ներկա լինի մեր՝ կովկասցիներին փոխհարաբերությունների մեջ: Նիզամին ոչ միայն Ազրբեջանի պարծանքն է, այլև մեր Կովկասի ժողովուրդների՝ Ազրբեջանի, Վրաստանի և Հայաստանի հոգեկան մեծագին նվաճումների, Նիզամին, Եսփուրու և Մուսթաֆայիի «Վազրենավորը», Հայաստանի հարտարարությունը և միջնադարյան լիբիկան այն փառապանծ ներդրումներն են, որ մուծել է Կովկասը համաշխարհային կուլտուրայի հավերժական դանձարանի մեջ»¹: Այդ խոշոր ներդրում-

ներից մեկը Նիզամիի ստեղծագործություններում առկա սերը և հարգանքն է դեպի մյուս ժողովուրդները: Նա իր դործներում բարոզել է մարդասիրություն, խոր հարգանք է տածել ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի և վրացիների նկատմամբ:

Նիզամին երազել է այնպիսի մի իրավակարգի մասին, որտեղ չեն լինի ոչ իշխանավորներ և ոչ էլ շահագործվողներ, և որտեղ կիշխի աշխատավոր մարդկանց բարեկամական փոխհարաբերություններն ու երջանկությունը:

Նույն տղամազրությունները տեսնում ենք նաև միջնադարի մի այլ բանաստեղծի՝ Ֆրիկի ստեղծագործություններում: Ժողովրդական լայն զանգվածների ձգտումների և օպրումների, կեղծքիչների դեմ ուղղված ըմբոստ արամազրությունների երգիչ Ֆրիկը շրջապանելով շատ քաղաքներ, տեսել է սոցիալական խոշոր հակասություններ: Նա այդ ամենը արտացոլել է իր ստեղծագործությունների մեջ: Դեռևս XIII դարում Ֆրիկը գրել է.

Եվ յուրաքանչյուր ստեղծված ազգ,
Ուրիշ լեզու ամեն մեկի,
Որ մեկն է հույ, մեկն օրացի,
Մեկն է տանիկ, մեկն Ասորի,
Մեկն է քուրդ Քանապցի,
Մեկն է քուրդ Քորգոմացի,
Մեկն էլ մուղալ նիթայացի
Մեկն շալաթ Սրբերգեղի...
Մեկն ֆոսաղ լաթիսացի...
Եվ մյուսն ուսուս և Տոնացի
Քանի՜ կանացա տանին այրի,
Ո՞րքան արյուն Հեզան երկրի,
Ո՞րքան ատեյին դեկո լաշխարի
Եվ կեղեքեն զհեռուս մեր հայտնի,
Եվ դա՛ւ ներքե համեմայի
Ի տեսնուս ատեյիմ զմեզ ի վշտի.
Նա մք ատեյիմք, որչափ պիտի,
Եվ համերկեմք ամենայնի...²

¹ Նիզամի Պյանշևի, լենի Մեյնուն, հայերեն հրատ. աստաբան, Հայ-սովետհրատ, 1947, էջ 8:

² Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 232—233:

կյանքը: Սայաթ-Նովան միաժամանակ սիրվել ու երգվել է և՛ հայերի, և՛ վրացիների, և՛ ազրբեջանցիների կողմից: Իր երգերը կատարող Սայաթ-Նովան հանդես էր գալիս որպես ժողովուրդների բարեկամության ջատագով: Սայաթ-Նովան երեք լեզուներով գրված համարժեք իր սակզծադրծությունների շնորհիվ պարճել է հայ, վրաց և ազրբեջանական ժողովուրդների բարեկամության սիմվոլը և իր պատվաբոր տեղը գրավել այդ ժողովուրդների գրականությունների պատմության մեջ: Ուշադրավ է այն ժաստը, որ երբ 1914 թվականի մայիսի 15-ին Քիֆլիսում Սայաթ-Նովայի շիրիմն Վրս բարձրացվում է հուշարձան, այդ նշանակալից ակտը, հուշարձանի բացումը, վեր է ամփոս հայ և վրաց ազգերի բարեկամության ցույցի:

ԳՐԱԿԱՆ-ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ
ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ
XX ԴԱՐԻ ՍՎՋԻՆ

ՊՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

XIX դարում տեղի ունեցող խոշոր բազաբական և տնտեսական տեղաշարժերը նոր նախադրյալներ են ստեղծում մեր ժողովուրդների գրական-կուլտուրական կապերի զարգացման համար:

Այդ խոշոր տեղաշարժերը կապված էին Անդրկովկասը Ռուսաստանին միանալու պատմական մեծ իրադարձության հետ: Անդրկովկասյան ժողովուրդները ազատագրվելով արևելյան բանապետությունից և իրենց բախտը կապելով ռուս մեծ ժողովրդի հետ, սննամխընթաց վերելք են ապրում իրենց կյանքի բոլոր բնագավառներում: Աշխուժանում է նաև կուլտուրական կյանքը: Երեք ժողովուրդների առաջադեմ մտածողների առաջնահերթ խնդիրն է դառնում մասսաների լուսավորության հարցը: Իրենց նպատակը իրագործելու համար մտավորականությունը հիմնում է մի շարք գպրոցներ, ուսումնարաններ, մասնավոր պանսիոնների, որոնց մեջ մատաղ սերնդին, բացի հիմնական կրթություն տալուց, ծանոթացնում են նաև հարևան ժողովրդի կուլտուրայի հետ, գասավանդում են եղբայրակից ժողովրդի լեզուն: Այսպես, օրինակ, 1824 թվականին Քիֆլիսում հիմնադրված Ներսիսյան դպրոցում, որը բավականաչափ նպաստել է հայ-վրացական գրական կապերի, երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդմանը, գասավանդվել է նաև վրաց լեզու: Այդ առարկան ներսիսյան դպրոցում վարել է հայտնի պատմաբան-հնա-

զետ Պլատոն Իսսելխանին Այս առումով մի փաստ եւս Հայտնի է, որ Խ. Արովյանի «Գրական և մանկավարժական գործունեութեան մի մասը ծավալվել է Քիֆլիսում, և քնական է, որ այդ ժողովրդասեր գրողը չէր կորույց անտարբեր անցնել Հայ ժողովրդին դարձր շարունակ բախտակից վրաց ժողովրդի կյանքի, նրա ապագայի և երկու ազգութեանների փոխհարաբերութեանների վրայով: Հայ ժողովրդի լուսավորութեան գործին նվիրված Արովյանի տեսագրաչափ զուր չի մնացել նաև հարևան ժողովուրդների լուսավորութեան գործը: Այդ է հաստատում այն փաստը, որ հումանիստ գրողը, իր մասնավոր միջոցներով Քիֆլիսում պանսիոն հիմնելով, հայերից բացի իր պանսիոնն է ներգրավում այլազգի, այդ թվում նաև վրացի երեխաների: Արովյանին մասհոգել է նաև Հայ և վրաց մասազ սերնդի ճիշտ դաստիարակութեան խնդիրը, որի մեջ մտել է նաև մայրենի լեզվի նկատմամբ երեխաների մեջ սեր ամբողջացումը: Այդ է վկայում Քիֆլիսի դաժնապահ դպրոցի տեսուչ Խ. Արովյանի «Ձեկուցումը» Անդրկովկասի դպրոցների վերանախնային. «Փավստական դպրոցի աշակերտների ծնողները, ընդհանրապես ամենքը, խնդրում են ինձ, որ զպրոցիս նաև առաջին դասարանում դասավանդվի իրենց որդիներին իրենց լեզունները՝ հայերեն և վրացերեն: Երանց այլազգի ցանկություն կատարումը բխում է բարի նպատակներից, բանի որ բարձր դասարան փոխադրված աշակերտները հետս դժվարանում են հնչողութեամբ սովորել իրենց լեզուն, որովհետև նրանք սովորած չեն լինում այդ լեզուն առաջին դասարանում»¹:

Ինչպես տեսնում ենք, նա հավասարապես և մեծ ոգևորությամբ գրավել է բոլոր ազգերի երեխաների դաստիարակությունը: Իր նամակներից մեկում Արովյանը գրել է. «Մանուկների կրթին աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար և զեռավելի, բանի որ սրանց մեծագույն մասն իմ ազգակիցներն են, իսկ մյուսները՝ վրացի և թաթար իմ կորաբախակիցները»:

¹ Տ. Կարապետյան. Հայ գրողներ և Արաստեղ. «Փաստա-բանագրական հանդես», 1967, № 1, էջ 46:

Հայ մեծ լուսավորիչը լավ է գիտակցել, որ հայ ժողովրդի անտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացումը հնարավոր է ինչպես ոռու ժողովրդի, այնպես էլ Անգրկովկասի մյուս կորաբախակի ժողովուրդների հետ ամուր համագործակցության միջոցով: Ահա թե ինչու նա պատգամել է լինել հավատարիմ Ռուսաստանին, հավատարիմ վրաց և աղբյուրաբանական ժողովուրդներին:

Նա մեծ երաստագիրությունը գրել է. «Թրճնլի էն սճաթը, որ ուի օրճնամ ուր հայոց լիս աշխարհը մտավ ու զվրաշու անիծած շար շունչը մեր երկրիցը հալածեց: Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է գիշեր-ցերեկ մեր քաշած օրերը մտքներիս բերեմք ու ուի երեսը տեսնելիս խաչ հանենք»:

Արովյանը անգրկովկասյան բոլոր ժողովուրդների կորաբախության շատագույն էր: Նա իր երկերում այն միտքն է հայտնել, որ հայերին ու աղբյուրաբաններին միացնում է ոչ միայն միևնույն հողը, այլև պարսկական բռնակալ լծի զեռ ասած ընդհանուր թշնամանքը: Հայտնի է, թե ինչպես Քանաքեռում կատարված զեղբերի, պարսիկ Ֆրանաշևերի բռնությունների կապակցությամբ աղբյուրաբանների զեկավարը նշավակել է այդ ամենը:

Արովյանը վրացիներին նույնպես համարել է հայերի բախտակիցը: Հայերի, վրացիների և աղբյուրաբանների աշխատությունը նա կապել է սուսների հետ և զրանում տեսել այդ ժողովուրդների մշտական, անխախտ կապը և համագործակցությունը:

Ահա թե ինչ է գրել նա «Վերք Հայաստանի»-ում. «Մեկ սճաղիս շոր շաղաջի շոր՝ մեկ բարձր բլրի տակից, զուր է պրծնում... Բլրի շոր կողմը պտտում, էլ ետ զետիքը մտնում, ու կես փայլ ստու դուռած զեռում երևանու դաշտը՝ որ Ապարանու սուրը էլ միտնին, Վաղարշապատին, Արմավրին, Մասիսին պատմի, ու զնա արտում Երասիս հետ Չանգին ու Գառնու զեռն էլ մեջն առնեն ու զեռն՝ Քուսն էլ մեջն առնեն իրենց արտասուրը նրանի հետ խառնեն, ու տանեն Կասպից ծովի սիրտն ածեն, նրա աղի շրում կորեն, պարսից նավերը

շախտորդ անեն, ուսաց նավերն իրենց բամակի վրա տանեն ու բերեն, որ ճամփին չճառահաստվի, չբեղրի, ու էն բարի ուր մեր աշխարհից չկտրի, որ բայրի մեր հայրենիքը՝ նրանց սրժվի թևերի տակին զորանս, մեծանա, դարգերը մոռոնա, ու էլ եղ՝ իր առաջին փառքին հասնի»:

Մ. Յ. Աթուցզուրը նույնպես ուսա ժողովրդի հետ է կապել իր ժողովրդի բախար. «Յնև ուսական տիրապետության մեջ սարդոջ մուսուլմանները,— դրել է Աթուցզուրը,— ներարկված լինեն Քրիմալ-Ուլգոլվի իդեալներով, այսպե՛ս նրանք կդադարեն օտար զգալ ուսաններից, որոնց հովանավորության ներքո կապահովվի նրանց թև կամքը, և թև սեփականությունն ու պատիվը»¹:

Արդվանը, ինչպես նաև անդրդոկության ժողովուրդների առաջավոր գործիչները իրենց ժողովուրդների փրկությունը տեսնելով ուսա ժողովրդի հետ համագործակցելու մեջ, միաժամանակ մերկացրել են ցարիզմի բռնապետական քաղաքականությունը, նրա ոտնձգությունները Այդ ամենին ներքանց հակադրել են իրենց միասնական գաղչիքը:

Կաշառուր Արդվանը, օրինակ, իր «Հազարափեշեն» պոեմում արտահայտել է հայերի, վրացիների և ադրբեջանցիների բուռն ցասումը ցարական աստրապյաների բռնությունների դեմ: Մեծ լուսավորիչը մյուս առաջուգեմ գործիչների նման մեծ սեր է տածել զեպի ադրբեջանական ժողովուրդը: Նշելով, որ հայերն ու տարբեջանցիները կրել են պարսկական բռնապետական լուծը, Արդվանը այն միտքն է հայտնել, որ կրոնի տարբերությունը չի կարող խանդարել երկու ժողովուրդներին՝ միանալու և պայքարելու ընդհանուր թշնամու դեմ: Իր «Վերք Հայաստանի» վկայում նա գրել է. «Ներևանու բնիկ թուրքերը, որ հայի հետ մեկտեղ միացել՝ ասպար պիս էին վարվում, Սարգարին, Հասան խանին տնիծելով, թրջում Ղզրբաշի վրա, ատամները դրճառացնելով՝ թիչ-թիչ քաշվեցին ու զեմը գնում էին, զեմը ասում. «Տեր աստված, ե՛րբ կըլի, որ

քո սղորմածության զուրք քացիդ ու մենք էս անիծած Ղզրբաշի ձեռքից մեկ օր ազատվենք»: Չունքի սրանք էլլու: Ըլի լով՝ չէին ուզում, մեկ օր էլլա նրանց ծառայեն ու շատ անգամ հայերի հետ միացել, քշել էին նրանց, ամա թրի զոռով եկել, էլ-էղ երկիրը զավթել էին»: Այն միտքը, թե ասարբեր դավանությունը չի կարող անջրպետ հանդիսանալ երկու ժողովուրդների միջև, Արդվանը արտահայտել է իր «Քուրբի ազնիվը» պատմվածքի մեջ. «...Հավանեմքս մեկ էլ, սիրունքս Նո մեկ ա, մեր ծամը չէ՛ր գալիս՝ մեկ երկրից տակ, մեկ երկրի երեսի է՛ր հո ինձ հետ կենում, ման գալիս, լեզուդ իմա չէ՛ր, սյասկերդ, հոգիդ հո իմից էր...» կամ թև. «Ծն հայ նմ, եվրոպացի շեմ, այլ քո համեմակացին, քո հայրենակիցը, Նույն հոգի և չբի զավակ, ինչ է դու... Քո վիշտը, քո լացը այրեցին ինձ, քոպի իմ... Եթև ցանկանաս, հոգիս քեզ կաամ...»:

«Քուրբի ազնիվ» և «Գծարխտ Սունա» գործերում Արդվանը նկարագրել է կանանց սարկական վիճակը, ցույց է տվել այն կրթական ետխապաշարմունքները, որոնք խանդարել են ադրբեջանցի աղջկա՝ Սունայի և հայ սղայի սիրուն:

Արդվանը շերտ սեր է տածել զեպի վրաց ժողովուրդը, նրա կուլտուրայի գործիչները: Նա այսպես է արտահայտվել վրաց ժողովրդի մասին.

Անտես, անճանալ տուն էլ որ մտնես,
Սուփրի զիբին զու կնասես, կրազնես:
Մեկ աշք աշքն, երեսզ երեսին
Բանելիս՝ կուզես տու իրենց հոգին:

Իր մի շարք ստեղծագործությունների մեջ՝ «Վերք Հայաստանի», «Հազարափեշեն» և այլն, Արդվանը շատ օրոտառու խոսքեր է նվիրել վրացիներին և շարունակ նշել հայերի և վրացիների մեծ բարեկամությունը, նրանց եղբայրական կապերը, միասնական պայքարը, փոխադարձ օգնությունը զավթիչների դեմ մղած պայքարում:

Անդրադառնալով հայ և վրաց ժողովուրդների պատմական

¹ М. Ф. Ахундов, Избранные философские произведения, Баку, 1953, стр. 50—51.

անցյալին Արովյանը ցույց է տվել, թե ինչպես են այդ ժողովուրդները միասնական ուժերով պայքարել օտարազգի հարստահարիչների դեմ: Այսպես, «Վերը Հայաստանի» լիպի երկրորդ դիտի հենց սկզբում պատկերված է հայության անկաշատ օգնությունը վրաց ժողովրդին: Հեղինակը գրում է. «Ենչ որ պորոսից կույի ժամանակ Հայք արին... քարերը վկայություն կտան: Հայքսթ որ մեկ օր մեկ արդար, անաչառ մարդ վրաստանու պատմությունը կգրի. էն ժամանակ կերի, թե Հայք ի՛նչ արին, ինչ հավատարմություն են ցույց տվել տերությունը, ի՛նչ արին են վեր ուժել»¹:

Լավատեղյակ լինելով վրաց ժողովրդի պատմությանը, Արովյանը իր ստեղծագործություններում անզրպագածն է նաև կերպարակից ժողովրդի պատմական անցյալին: Օրինակ, «Վերին հրաժարական քաջագոր արքային Հեղափոխ» արձակ և շախմատ գործում հեղինակը խոր հուզականությամբ է պատկերել պարսից հրոսակախմբերի զորածառ սփռները (1795) և օտար նվաճողների դեմ վրաց ժողովրդի տարած անձնուրաց պայքարը:

Արովյանը բարձր է գնահատել աղբրեջանական ժողովրդի կույտուրան, նրա լիզուն: Հետեղականտերին առաջ դնալով իր զազափարական համոզմունքների մեջ, Արովյանը լայնորեն պրոպագանդի է աղբրեջանական գրականությունը, նրա ֆուլյուրը: Հայ մեծ լուսավորիչ իդն է եղել շատ ավելի լայն կապեր ստեղծել ժողովուրդների միջև: «Նախաշավիդի» բացատրականի մեջ ի. Արովյանը նշել է. «Եթե ինձ բախտ վիճակի իմ այս առաջին փորձը կենսագործել, սպա ևս իմ բոլոր ուժերը կգործադրեմ, ինչպես վերահիշյալ քերականությունը, այնպես և օգտակար գրքերը կադմելու և թերևս դրանով կույկախ ուրիշ ժողովուրդների համար էլ օգտակար լինելու»:

Արովյանը արժանի գնահատական է տվել Մ. Ախունդովի գործունեությանը. նա գրել է, որ Ախունդովը «...իր ստանձնած պարտավորությունը... կատարել է զովելի վարքով, ա-

մենայն ճշտապահությամբ և գերազանց առաջադիմությամբ»: Արովյանը բարձր է գնահատել Ախունդովի գործունեությունը աղբրեջանական նոր այլոքերն ստեղծելու հարցում:

Պատահական չէ ի. Արովյանի հատուկ վերաբերմունքը Մ. Ֆ. Ախունդովի նկատմամբ: Նրանց կերպարն էլ հուզել են միևնույն հարցերը:

Ի. Արովյանի և Մ. Ախունդովի համասեղ գործունեությանը՝ հօգուտ ժողովուրդների բարեկամության՝ մեծապես նպաստել է Քիֆլիսը: Հայտնի է, որ XIX դարի 30-ական թվականներից Քիֆլիսը դառնում է Անդրկովկասի ժողովուրդների կույտուրայի կարևոր կենտրոններից մեկը, որտեղ միասին և միաժամանակ գործել են նաև երկու մեծ լուսավորիչները՝ Արովյանն ու Ախունդովը. մեկը որդես հայ նոր գրականության հիմնադիր, իսկ մյուսը աղբրեջանական սեպտական գրականության և դրամատուրգիայի հիմնադիր: Իրենց գործունեությունը ընթացքում կրկնապես աշխարհայացքն էլ համրիկել է: Ե՛վ մեկը, և՛ մյուսը հանդես են եկել որպես-պատկերներ և մերկացրել են հայ և աղբրեջանական կրոնական մոլեռանդների փորձը՝ կրկու ժողովուրդների միջև թշնամություն առաջացնելու ուղղությամբ: Ազատ լինելով ազգային-ազնամափականությունից, նրանք երկուսն էլ բարձր են պահել ժողովուրդների բարեկամության և կոքսությունը: Ե՛վ Արովյանին, և՛ Ախունդովին հավասարապես հուզել են ժողովուրդներին հետաքրքրող բոլոր հարցերը և իրենց ստեղծագործություններում նրանք զովեղիկ են երկու ժողովուրդների բարեկամությունը:

Ժողովուրդների միջև եղած փոխադարձ սերն ու բարեկամությունը արտահայտվել է ի. Արովյանի, Միրզա Ֆաթուլի Ախունդովի, Միրզա Շաֆիի և մյուսների ղեկավարածական երկերում: Ախունդովի, օրինակ, իր «Հաջի կարա» կոմիդիայի մեջ հայ գյուղացիության ներկայացուցիչների՝ Մկրտիչի և Ասաբիի կերպարները ստեղծել է շերմությունը ու սիրով-տվել է նրանց ազնիվ հավատարմությունը: Այդ սերը դեպի հայ

¹ Ի. Արովյան, Վերը Հայաստանի, Երևան, 1959, էջ 727.

ժողովուրդը նա արտացոլել է նաև իր մեկ այլ աշխատության՝ «Խարված առաղներ» մեջ: Երբ 1911 թվականին Քիֆլիում տոնվում է Ախունզովի ծննդյան 100-ամյակը, Ա. Երբվանզադեն կույթ է ունենում արտասուչ խոսքերով, իսկ Տիգրան նազարյանը ասում է. «Քող հավետ ազրի մեր համերկրացի, գրող, գրամատուր Մ. Ֆ. Ախունզովի փառքն ու բարի հիշատակը: Փառք նրա մենդյան հարյուրամյակին»:

Մ. Ախունզովը բարձր է գնահատել նաև վրաց ժողովրդին, նրա բարձր կուլտուրան, նրա բազմաթիվ ապրելով Քիֆլիում, նա մոռոխից ծանոթացել է վրացական կուլտուրայի հետ, շփվել վրաց գրողների, հասկապես Ա. Ճավճավաձեի, Գ. Էրիսթավիի, Գ. Օրբելյանիի ու Բարթաշվիլու հետ և իր գործունեությամբ աշակցել է վրաց և ազրբեջանական ժողովուրդների սերտ համագործակցության էլ ավելի ամրապնդմանը: Մ. Ախունզովը բարեկամական ամուր կապերով կապված է եղել նաև վրաց հայտնի պատմաբան-պոետ Կելիկոյա Քերձևիշվիլու հետ՝ Կովկասյան հնագիտական հանձնաժողովում համատեղ աշխատելիս: Նա սերտ կապ է հաստատել Բարթաշվիլու հետ, որը նույնպես մեծ համակրանքով է վերաբերվել ազրբեջանական ժողովրդին և նրա կուլտուրային: Մ. Ախունզովը իր բանաստեղծություններից մեկում, ղեռն 1850-ական թվականներին, նկարագրել է վրաստանը, այն համարել է Կովկասի մարգարիտ: Իր «Խարված առաղներում» նա պատկերել է մի վրացուհու, որը խորապես սիրում է իր հարազատ ժողովրդին:

Խ. Արովյանի և Մ. Ախունզովի սեսակետը հայ և ազրբեջանական ժողովուրդների հոգեհարազատության մասին հետազայում արտահայտել է նաև Մ. Նալբանդյանը:

Հայ սուլայուցիոներ-դեմոկրատն իր «Քննադատություն Սու և Վարդիթերի» աշխատության մեջ նշել է, որ «Քուրքը (նկատի ունի ազրբեջանացու— Ա. Շ.) և հայը գտնվում են այսօր զրեթե միևնույն աշխարհում. այդ ազգերը միևնույն հողի, միևնույն կերակրի, միևնույն բնության ազդեցության են ենթակա... Երկուքն էլ ախաջիք, երկուքն էլ արեկիցի և խորհելու, խոսելու ձևերով բնականապես մտա, պատճառը,

ինչպես առաջինը, անխտր միևնույն պայմանների տակ են պարունակում: Միջայլ նալրանդյանը բարձր գնահատելով հույների և ազրբեջանցիների բարեկամությունը, գտնում էր, որ նրանք բնդհանրապես իրենց կեցվածքով մոտ են, այդ իսկ պատճառով սիրով են ընկալում մեկը մյուսի կուլտուրան, արվեստը, հավասարապես սիրում են «Քյոտ-օլլին» և «Կաունի, ուստի կուլտաս երգերը:

Մ. Ախունզովը իր «Խարված առաղներ» պատմվածքում մերկացրել է նաև պարսկական բունապետական ռեժիմը, որն ավելի անազրք է արտահայտվել հայերի նկատմամբ: Նույն օտար բունակալների արքայտնության ապ հեծող ժողովրդի ազրբեջանական վիճակն է արտացոլել իր «Գոլջա» բանաստեղծություն մեջ Ա. Ճավճավաձե:

Մ. Ախունզովը, Մ. Նալբանդյանը և մյուս առաջադեմ գործիչներն անարգանքի սյունի են գտնել սուլթանական բունապետական ռեժիմը, որի հետևում նրանք միշտ կանգնած են տեսել արևմտակարգական սկսություններին: Քիչ առաջ զնայով տանը, որ հայ առաջավոր գրողները՝ Պ. Գոռչյանը, Ղ. Աղայանը, Քունանյանը, Երբվանզադեն, Սունդուկյանը և արիշներ, իրենց գործերում, ինչպես, օրինակ, «Սոս և Վարդիթեր», «Տեցեր», «Հուռն», նույնպես նշել են հայերի և ազրբեջանցիների կրթայություն և միասնական պայքարի մասին, իսկ ազրբեջանական առաջադեմ գործիչ Ն. Նալբանդուլը երկու ժողովուրդների բարեկամությանն է նվիրել իր «Բահադուր և Սոնան» երկը:

Անդրկովկասյան ժողովուրդները, բնդհանրապես, միշտ էլ միասնական են եղել և կուլտուրական արժեքների փոխանակությունը մեծապես նպաստել է նրանց բարեկամության ամրապնդմանը: Ինչպես արդեն տեսանք, Խ. Արովյանը և Մ. Ախունզովը կրթոտ պայքար են տարել ժողովուրդների բարեկամությունը անխախտ պահելու համար և պատգամել են սերունդներին անդամաձան մնալ հայերի, ազրբեջանցիների և վրացիների համակեցության և փոխօգնության զազալարերն, ինչպես նաև ոուս մեծ ժողովրդի հետ ունեցած եղբայրական կապերին:

Այդ քեզհանուր զազափարին զինվորադրված կուլտուրայի գործիչների միջև համար ստեղծվել են մտերմական կապեր։ Օրինակ, ազրբեջանական բանաստեղծ Միրզաբեյան Մազաթովը և վրաց բանաստեղծ Գրիգոր Օրբելիանին մտերմ բարեկամներ են եղել և միմյանց բանաստեղծություններ են նվիրել։

Անգրկովկասի կուլտուրայի գործիչները մեծ հետաքրքրություն են հանդիսանում ուղղությամբ Ալյասկայի, Ա. Ճավճավաձենի, ժանոթեանալով ազրբեջանական պոեզիային, ֆուլչորին՝ բարձր է գնահատել այն։ Ազրբեջանական ֆուլչորը ուսումնասիրելու արդյունք են նաև Չ. Անտոնովի «Քյուտ-օլլու» ողբերգությունը և Ռ. էրիսթավիի նույնանուն բալլադը, որոնց մեջ պատկերված է զրկից ժողովրդի ազգային հերոսի կերպարը։ Ընդհանուր առմամբ պետք է տեսլ, որ Քյուտ-օլլու, ժողովուրդների բարեկամության համար պայքարող այդ մարտիկի, գյուղացիական ազատագրական շարժման հերոս առաջնորդի և խանդավառ աշուղի կերպարը սիրով է երգվել նաև հայ և վրաց ամանդություններում։

Անգրկովկասյան ժողովուրդների բարեկամության զազափարի պրոպագանդումը ավելի մեծ քափ է ստանում XIX դարի երկրորդ կեսին, երբ բուրժուազոյայի զարգացման հետ միասին ստեղծվում են ազգային անաստեղծի տեսանկյան նախադրյալները։ Հասկապես ուժեղ դասակարգային պայքար է մղվում հայ բուրժուազոյայի և վրաց ազնվականության մեջ, նրանք երկուսն էլ այդ դասակարգային պայքարը փոխադրում էին մասսաների մեջ՝ ազգային գույն տալով նրան։ Երևելյան վրաց ազնվականության, այնպես էլ հայ բուրժուազոյայի զազափարախոսներն, իրենց սեփական զարմե հրամայելով համաժողովրդական զործի տեղ, ամեն կերպ աշխատում էին ազգային աստելություն սերմանել հայ և վրաց ժողովուրդների մեջ¹։ Իսկ ցարիզմը և ամեն տեսակի նացիոնալ-շովինիստներ, հրահրելով այդ պայքարը, իրենք ևս ձգտում են ազգային աստելություն բորբոքել ինչպես մյուս ժողովուրդների, այնպես

էլ անգրկովկասյան երեք եզրայալից ազգերի միջև։ Սակայն ժամանակի հայ և վրաց առաջագեծ գործիչները, գյուղերը, որոնք ազգվել էին առական առաջավոր կուլտուրայից և տողովել զնմոխրատեսական զաղափարներով, զեմ են դուրս գալիս այդ հակաժողովրդական ազգային պայքարին և ամեն կերպ աշխատում են ավելի ուժեղացնել հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը¹։ Ժողովուրդների բարեկամության գազափարը, սկսած հատկապես XIX դարի երկրորդ կեսից, իր վառ արտացոլումն է գտել Գ. Սունդուկյանի, Ի. Ճավճավաձեի, Ա. Մերեթիլու, Հովհ. Քոստանյանի, Ավ. Իսահանյանի և շատ ուրիշ հայ և վրաց գրողների գործունեության և ստեղծագործության մեջ։

Վրաց խոշորագույն գրող և հասարակական գործիչ Ի. Ճավճավաձեն մեծ քանակ է քափել երկու զրկից ժողովուրդների բարեկամությունը էլ ավելի ամրապնդելու համար։ Վրաց տաղանդավոր բանաստեղծը հայ և վրաց ժողովուրդների միասնություն մեջ անհաղթահարելի ուժ է տեսել։

«Մենք լավ գիտենք,— գրել է Ի. Ճավճավաձեն,— որ վաղեմի վրաստանի թուլությունը սկսվեց այն դժբախտ օրից, երբ Հայաստանը (իբրև պետություն) ստապակեց, մեր այդ երբեմնի անջրպետը հարավում... Փանի զեռ կար Հայաստանը, Վրաստանը ստապատեկելու համար թաթարները պետք է նախ ներխուժեին Հայաստան։ Գրա համար էլ մեր թագավորներն ու գահին մոտ մարդիկ ոչինչ խնայում, որպեսզի ներխուժյան պահին օգնեն Հայաստանին»։

Ի. Ճավճավաձեն զրվատելով հայ և վրաց ժողովուրդների անխախտ բարեկամությունը, միաժամանակ մերկացրել է այն մարդկանց, որոնք ձգտել են ազգային աստելություն սեռմանը երկու ժողովուրդների միջև։

«...Ոչ մի հասարակության և զրականության մեջ,— գրել է նա,— նույնիսկ մի օրինակ չեք կարող ցույց տալ, որ վրացիի վառ հիշն ամբողջ հայությանը, նրա ինտելիգենցիային, որի վրա հենված է ամբողջ հայության արդարացի հույսը...

¹ Մովսեսյանի զրականություն և արվեստ, 1954, № 4, էջ 122.

¹ Տե՛ս «Մովսեսյանի զրականություն և արվեստ», 1954, № 4, էջ 122.

ընդհանրապես, օրինակներ շատ կան, որ հայերի լավ գործին պատվով են վերաբերվել վրացիությունն ու նրա ինտելիգենցիան: Սրա ազատացր կարելի է գտնել ինչպես ամբողջ գրականության, նույնպես և կյանքի մեջն:

Վրաց մեծ գործիչը քաջ գիտակցել է, որ վրաց ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը չի կարող հաջողություն ունենալ առանց ռուս ժողովրդի օգնության, առանց Անդրկովկասի ժողովուրդների հերաշխական բարեկամության ու համագործակցության: Դեռևս 1859 թվականին գրած իր «Մեր վականն պոետում նա երազել է այն օրերը, երբ հայերը, վրացիները և աղբրեջանցիները կմիանան մեկ հերայրական միության մեջ:

Աղայր կզո՛ւ այն օրը, երբ ես նորից եմ տեսնում
Սրիկը, որ հասնելու է կյանքի համար նոր, պայծառ,
հազարվելու են վեները, ամառ հիմք է կապելու,
Միացնելու է իրար հետ բոլոր տանջված մարդկանց, ու
Միանալվելու են տարբեր ազգությունների այդ բոլոր:

Ճավճավաճեն հաճախ է անդրադարձել հայ ժողովրդի անցյալին, նրա հարուստ կուլտուրային: Նա, ինչպես և շատ ուրիշներ, ամեն շանք գործադրել է վրաց լայն խավերին ծանոթացնելու հայ ժողովրդի գարեհրի պատմություն ունեցող կուլտուրային Այդ նպատակն է հետապնդել նա, երբ 1863 թվականին իր կողմից հրատարակվող «Վեաստին Գրուպրի» ամսագրում գեանդել է նյութեր, որոնք վերաբերում էին հայ ժողովրդի մշակույթի հարցերին: Այսպիսի նյութեր էին Բյուզըրումենկյալիշվիլու «Նովվածը» «Համառոտ տեսություն հայոց լեզվի զարգացման մասին վերջին շրջանում»: Այնուհետև 1877 թվականին «Իվրիթա» թերթում սուպրիում են Սալաթ-Նովվալի բանասերգությունները, որոնցից Ի. Ճավճավաճեն իր ստեղծագործություններում հաճախ մեջբերումներ է կատարել: 1879 և 1880 թվականներին նա հրատարակում է

1 Ն. Գարսայան, Հայ և վրաց ժողովուրդների զարգացող բարեկամությունը և Հովհ. Բուստանյանը, «Գրա. աշխատությունների ժողովածու», Ժնև, ինստ., 1955:

Գ. Սունդուկյանի պատմվածքները և մասլահաթները, սուպրում է նաև «Պեպոն»:

Մեծ դրողը բարձր էր գնահատել նաև աղբրեջանական գրականությունը, հատկապես Միրզա Ֆաթալի Ախունդովին, որին համարել է մեծ սազանդ: Իր հերթին Ի. Ճավճավաճեն մեծ սիրով է ընդունել հայերի և աղբրեջանցիների կողմից: Դեռևս նրա կենդանության ժամանակ Ճավճավաճեն լավագույն գործերը թարգմանվել և սուպրվել են հայերեն և աղբրեջաներեն: Միայն այդ գործերի թարգմանությունը միծայես նպատակ է ժողովուրդներին հերաշխական փոխհարաբերությունների ամրապնդմանը:

Ախունդովին բարձր է գնահատել նաև Ա. Սերեթիին: Թարգմանելով աղբրեջանական գրողի «Էկեքորանի խանի վեպերը», որ առաջին անգամ վրաց դրամատիկական խմբի կողմից ընծադրվել է 1897 թվականին և արժանացել վրաց լայն հասարակչության հավանությանը, Ա. Սերեթիին Ախունդովի դրամատիկական երկերի մասին ընդհանրապես նշել է. «Մ. Ֆ. Ախունդովի երկերում աղբրեջանցիների կյանքին արտացոլված է ինչպես հայերու մեջ Ախունդովի պիեսները զրված են վարպետորեն, նրանց մեջ չկան դատարի խոսքերի ու ֆրազների զրգրում»:

Հայ մեծ դրամատուրգ Գ. Սունդուկյանը ևս նշել է, որ Միրզա Ֆաթալի Ախունդովը զուրա է եկել ազգային շրջանակներից և զարձակ է Կովկասի սերելի որդին: Քն որքան բարձր է գնահատել Ախունդովը հայ մտավորականության կողմից ցույց է տալիս այն փաստը, որ 1874—1875 թվականների ընթացքում Ալ. Սերեթյանը մեկը մյուսի հետևից հայերենի է թարգմանում Ախունդովի «Էկեքորանի խանի վեպերը», «Մոսույո ժողպան» և «Գերվիշ Մեանթիլ շահ» կատակերգությունները:

Ա. Սերեթիին հասուկ սիրով է արտահայտվել հայ ժողովրդի մասին: Նա ամեն կերպ աշխատել է ավելի ուժեղացնել հայ և վրաց ժողովուրդների միջև զուգություն ունեցող բարեկամությունը: Վրաց մեծ բանաստեղծը դրել է. «Նրանց (հայերին—Ա. Ե.) սիրում եմ և ցանկանում եմ, որ մեր մեջ այն-

պիսի հարաբերություն լինի, ինչպես էր մեր նախնիների օրոք: Ցանկանում եմ, որ սրանից հետո զոնե ձևեր-ձևերի տված մի ուղիղ համփոփ ընթանանք զնայի ապագան, թե չէ իրար հետ թշնամությամբ ոչ մեկս հետո չենք զնա»¹:

Քնքր անձամբ սիրելով հայ ազգին, իր հրապարակախոսական հողվածներում և բանաստեղծություններում Ա. Սերնիբլին հաճախ է անդրադարձել Լեհու ազգերի փոխհարաբերության հարցին: Նա միշտ էլ հիացել է և խանդավառվել այդ երկու հարևան ժողովուրդների փառավոր պատմական անցյալով, երբ նրանք միշտ օգնության են եկել մեկը մյուսին և միահամուռ ուժերով պայքարել ներքին և արտաքին թշնամիների դեմ: «Մեր նախնիները,— գրել է Սերնիբլին,— միշտ էլ կորսարական հարաբերություններ են ունեցել հայերի հետ... Շատ անգամ է շրվել Հայաստանի վայրերը նրան կողմնակից և նրա համար անձնվիր վրացիների արշավով— և այս կասյն ապացուցվում էր հայ-վրացական միությունը»²:

Նույն միտքը Ա. Սերնիբլին արտահայտել է նաև իր «Նաթեկյա» պոեմում: Այստեղ անվանի գրողը պատկերել է, թե ինչպես վրացիները օգնության են զնում Անի քաղաքի պաշտպաններին և հայերի հետ միասին զոհվում քաղաքը թշնամիների շտաղու համար: Ալեուհուս Ա. Սերնիբլին հուզաթափով խոսքերով է նկարագրում Հյուսիսային Հայաստանի մայրաքաղաք Անին:

Սրտառուչ է եղել Ակակի Սերնիբլիի բարեկամությունը հայ ահեղավոր դրամատուրգ Գարրիկի Մունդուկյանի հետ: Նա սարքեր առիթներով Լեքեր բանաստեղծություն է նվիրել իր սիրելի բարեկամին: 1901 թվականին «Պեկպոլի» բնմադրության 30-ամյակի առթիվ Մունդուկյանին է նվիրել իր «Բարեկամիս» բանաստեղծությունը, 1910 թվականին, հայ դրամատուրգի ծննդյան 85-ամյակի կապակցությամբ, գրում է «Գ. Ն. Մունդուկյանին» բանաստեղծությունը և 1912 թվականին՝



Հայ և վրաց բանաստեղծների մի խումբ 1924 թ.

1 Տ. Կարապետյան, Վրաց բանաստեղծները Հայաստանի և հայերի մասին, «Մովսեսյան գրականություն և արվեստ», 1954, № 4, էջ 123:

2 Նույն անգամ:



«Գարբիել Սունդուկյանի թաղման օրը» բանաստեղծությունը, Հայ մեծատաղանդ գրամատուրգին եմբրաված այս բանաստեղծությունները առգորված են վրաց և հայ ժողովուրդների բարեկամության ոգույ՛ն Իր և Գ. Սունդուկյանի մեջ մարմնավորելով հայ և վրաց եղբայրակից ժողովուրդներին, վրաց բանաստեղծը գրում է.

Ես մի վրացի, իսկ դու հայ ես մի,
Բայց մենք երկուսով եղբայր ենք հո՛ւմի.
Երկուսս էլ զգալակ ետյն հողի, ջրի,
Եվ ետյն բնութայն, և ետյն լինների՛,

Ակակի Սերնթևիլին սիրով է քնդունվել ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի կողմից: Գեռ շատ վաղուց նրա ստեղծագործությունները ապագրվել են հայ պարբերական մամուլում: 1889 թվականին «Մուրճ» ամսագրում ապագրվել են նրա բանաստեղծությունները, իսկ հայ և աղբյուրների գրողները հետագա բոլոր տարիներին թարգմանել և ժողովրդի սեփականությունն են դարձրել Ակակի Սերնթևիլու հայրենասիրական և հումանիստական գործերը:

Հայերի և վրացիների «ետյն հողի, ջրի» զավակ լինելու հանգամանքը եղել է նաև հայ մեծանուն գրամատուրգ Գ. Սունդուկյանը: Այսպես, վրաց բանաստեղծ Ռափիել Էրիսթավիի հորելյանական ճաշկերույթին, երբ առաջարկել են Սունդուկյանի կենացը, արգեն ճերմակահնր գրամատուրգը ասել է. «Մասնավորապես ես կենացի արժանի չեմ այսօր, քանի որ բոլոր այսպիսի կենացները մեր հորնյաբնին են պատկանում: Այս էլ կասեմ մեր ազգի փոխարեն, մենք՝ վրաստանում մեծացած հայերս վրացական հողի վրա ենք աճել, վրաստանի վշտին և ուրախությունը միշտ մասնակից ենք էղել և կլինենք»¹: Սունդուկյանը շատ է սիրել վրաց ժողովրդին, իսկ վրաստանը համարել է իր երկրորդ հայրենիքը: Մի այլ առիթով նա դիմելով վրաց ընկերներին, ասել է. «Վրաստ-

¹ «Վրաց գրականության ընտիր էջեր», Հայպետհրատ, 1961, էջ 170:

² «Կվարչ», 1895, № 46, էջ 8:

տանը սիրում եմ ինչպես իմ հայրենիքը, վրացիներին՝ ինչպես իմ եղբայրներին ու զավակներին. այսքան մեծարանք իմ համեստ վաստակին չի համապատասխանում: Սա վկայում է միայն Ձեր բարեբարությունը»¹:

Խոսելով վրաց քաղաքներին իր մատուցած ծառայությունների մասին, Մունդուկյանը «Եվերիտ» թերթի խմբագրությանը դրած նամակում մասնանշան է, որ «...Սա աշխատած էի ինձ համար հովանավորական թանկ երկու ազգի՝ վրացական և հայկական բնմի համար: Աշխատում էի իմ գրվածքներում պատկերել մարդկային բարձր զգացմունքները և մշտ-թերթը»²:

Երկու ազգերի եղբայրական համագործակցության համար է գործել նաև վրաց հայտնի գործիչ, գրող և մանկավարժ Յակոբ Գոգեբաշվիլին: Պայքարելով բոլոր տեսակի նացիոնալիստական աարբերի դեմ, Գոգեբաշվիլին նշել է. «Անտազոնեզմ, փոխազարժ առևտրություն— ահա տերմիններ, որոնցով բնորոշվում են հայերի և վրացիների փոխհարաբերությունները՝ հակառակ հազարավոր փաստերի, որոնք խիստ հակասում են նման կեղծ պնդման»: Վրաց մեծ մանկավարժը փաստերով ապացուցել է, որ հայ և վրաց ժողովուրդների միջև ոչ միայն անտազոնեզմ չկա, այլև նրանց մեջ «զոլություն ունեն ամենամառը, ամենաարտակից եղբայրական փոխհարաբերություններ»: Անդրադառնալով հայ և վրաց ժողովուրդների առջակի փոխհարաբերություններին, Գոգեբաշվիլին գրել է. «Պարտք եմ համարում հիշեցնելու, որ հայերի և վրացիների՝ հետո երբեմն ունեցած մի զավանակի ու համերաշխության շնորհիվ՝ և՛ Հայաստանը, և՛ Արսաստանը հզոր էին ու անվահեր: Հնտազալում Հայաստանի կործանումն ու վրաստանի թուլանալը հետևանք էին այն անմիտ, անախտժ տալանաշունչությունների և կոլիկների, որ սերմանեցին երկու ազգերի հոգեբարակալությունը և կիզեցիցիների անշատման ժամանակը: Գոգեբաշվիլին երկու ժողովուրդների հասարակական գոր-

ծիչներին կոչ է արել և խորհուրդ տվել պատշաճ եզրակացություններ անել պատմության դասերից: «Այսօր,— գրել է նա,— վրացիների և հայերի միջև ազգային, տոհմական, անտեսական հոգի վրա տարածաշունչայն արումը կործանելու ազդեցություն կունենա երկու ժողովուրդների համար, ինչպես այդ տեղի ունեցավ անցյալում կրոնական կոլիկների ժամանակ»:

Յակոբ Գոգեբաշվիլու սիրտը լի է եղել բարիգրացիական զգացմունքներով դեպի անբրկովկասյան ժողովուրդները. նա բուռն կերպով տենչացել է, որ հարևան հայ և ադրբեջանցի ազգերը ազատ ու ապահով աճեն և զարգանան: Պատահական չէ այն կտակը, որ թողել է Գոգեբաշվիլին. նա իր կարողություն մի մասը կտակել է վրաց ազգին, իսկ մյուսը՝ հայ և ադրբեջանցի ժողովուրդների կուլտուրական պետքերի համար՝:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ջատագովներից է եղել նաև անվանի վկայասն Գեորգի Մերեթիլին: Այս առումով ուշագրավ է նրա հրածնշտի խոսքը արասասանած Գրիգոր Արծրունու թաղման ժամանակ: «Պարոն Մերեթիլին վրացերեն ասաց,— գրել է «Եվերիտ»,— որ հանդուցյալը քրտանց կողմնակից էր վրացիներին և հայերի միությանը, քանի որ երկու ազգերն էլ առանձին-առանձին թույլ են, իսկ միասին մեծ ուժ են ներկայացնում: Այդ պատճառով այս աճյունի առաջ խոսք տալը միմյանց, որ այստեղ պատկած հարգանքի արժանի մտերմ պատգամը շնք մոռանա»:

Հայ և վրաց գրողների պայքարը՝ հանուն երկու զրկից ժողովուրդների համերաշխության էլ ավելի ամրապնդման, անհետևանք չի անցնում: Երկու ժողովուրդներին միմյանց հետ էլ ավելի մոտեցնելու, ծանոթացնելու համար հայ և վրաց պարբերական մամուլում, սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, փոխադարձաբար ավելի լայնորեն են լուսաբանվում հարևան ազգի կյանքը և գրական-կուլտուրական

¹ «Գրեքս», 1876, № 24.

² 294 «Տեղեկագիր», 1950, № 8.

¹ Գոգեբաշվիլու մասին տես Ս. Վարդապետյանի «Տոգածա՞ր» «Грузинская литературная мысль, об Армении», «Лит. Армения», 1950, № 6.

² «Եվերիտ», 1892, № 277.

երևույթները, սկսում են հաճախակի թարգմանել միմյանց: Մասնավորապես վրաց պարբերական մամուլում հաճախ լույս են տեսնում հայ գրողների մի շարք գործեր, տեղեկություններ նրանց մասին Ալյասն, օրինակ, վրացական պարբերական մամուլում բարձր է գնահատվել Բաֆֆին և նրա կատարած գերե հայ գրականության մեջ: Բաֆֆու կյանքի և նրա գրական գործունեության մասին հատկապես շատ է խոսվել «Եվերս»-ի մեջ, որը լույս էր տեսնում Իլյա Եավճավաճեի խմբագրությամբ: Արտահայտելով վրաց ժողովրդի խոր վիշտը հայ ապստամբությունը գրողի մահվան առթիվ, «Եվերս»-ը մի շարք խմբագրական հոդվածներ է տպագրում, որոնցից մեկում կարգում ենք. «Շայ գրականությանը կորցրեց մի պատվական, ազնիվ ու հանձարեղ գրող: Հանգուցյալ Բաֆֆին, որի իսկական ազգանունն էր Հակոբ Մելիք-Հակոբյան— մեծ ծառայություն է մատուցել հայերին իր գրական գործունեությամբ: Նա վերաբերակվեց Պարսկաստանից, նա ապաստան գտավ այստեղ՝ Փրիլսիում, այստեղ գործեց իր սիրելի ազգի համար, այստեղ վախճանվեց ու թաղվեց: Այսօր ամբողջ հայ ազգը սգում է այսպես անժամանակ վախճանված գրողին, որն իր կյանքում շատ անգամ է հեշտցրել իր շնորհալի ազգուխոսքը և որը շատ անգամ է շարժել իր հայրենակիցներին սիրտը, բարձրադույն զգացմունք և միտք ներշնչելով: Այս տեսակ մարդուն ազգը զմայր է մոռանում, որովհետև մարդն իր սրտում կրում է իր ազգի վիշտը և ուրխությունը»:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ երբ 1903 թվականին վրացերեն լեզվով լույս է տեսնում Բաֆֆու «եհենթ» վեպը, վրաց պարբերական մամուլը հատուկ ուշադրություն է դարձնում այդ երևույթի վրա: Այդ առթիվ ընդարձակ գրախոսական է տպագրվում նաև «Եվերս»-ի մեջ, որտեղ գրախոսողը բարձր գնահատելով «եհենթի» զեզարվեստական արժանիքները, նրանում թուրքական հարստահարիչների դեմ տարած հայ ժողովրդի ազատագրական պայքարի վարպետ

պատկերումը, միաժամանակ կանգ է առնում գրքի թարգմանիչի առաջարկության վրա. «Ամռթ է մեզ համար,— գրում է գրախոսականի հեղինակը,— որ այսքան մոտ հարևան ազգին, ինչպիսին են հայերը, մենք չենք ճանաչում, ծանոթ չենք հատկապես նրանց գրականությանը, որ չի կարող հետաքրքրի չիինել: Մեզ ներքևի է, և բն եվրոպական որևէ մի գրականության ծանոթ չիիննք, կամ չհետաքրքրվենք, իսկ հայ գրականությունը ոչ միայն պետք է հետաքրքրի մեզ, և ծանոթ պետք է լինենք նրան, այլև անհրաժեշտ է, որ մենք ուսումնասիրենք այն, ինչպես և հայերը՝ վրացականը: Վրացիներն և հայերի շահերն այսպես են զորգված իրար հետ, որ մտքով կույրն անգամ չի կարող բացասել այս հանգամանքը: Ուրեմն անհրաժեշտ է փոխադարձ հարաբերությունների ուժեղացում»:

Անդրկովկասյան ժողովուրդների այդ փոխադարձ հարաբերությունների ուժեղացմանը անձնվիրաբար ծառայել է հայ մեծ բանաստեղծ Հովհ. Քումանյանը: Ակրիլով և ստեղծագործելով այնպիսի ժամանակաշրջանում, երբ հայ ժողովրդի մի խոշոր հատվածը իմպերիալիստական զինատիչ զազարականության հետևանքով դատապարտված էր պարբերական կոտորածների ու ոչնչացման, Քումանյանը խորապես գիտակցել է, թե ինչ բախտորոշ նշանակություն է ունեցել իր ժողովրդի համար Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու պետքը: Մակայն նա երբեք չի նույնացրել ցարական կառավարությունը ուս ժողովրդի հետ: Բազմիցս հավաստելով, թե սուս ժողովուրդն առհասարակ մեծ միտք ունի կատարելու ժողովուրդների կյանքում, Քումանյանը, միաժամանակ, թե՛ իր ստեղծագործության և թե՛ հրապարակախոսության մեջ մերկացրել է ցարիզմի շահագործողական բնույթը, հակադրվել նրա պատակալի և պաշտի բազմապատկանությանը: Նա միշտ բարձր է պահել ժողովուրդների հզորությունն այն պահից, որ հազարամյակների ընթացքում սրբազործել էին անդրկովկասյան ժողովուրդները

1 Տ. Կարապետյան, Բաֆֆին վրաց գրական մտքի գնահատմամբ, «Գրական թերթ», 1955, № 22:

1 «Գրական թերթ», 1955, № 22:

անշահախնդիր բարեկամության ու փոխադարձ օգնության փառավոր զրվագներով 1905—1906 թվականներին Քումանյանն անկամք ապրտակ զրջանով շրջել է Լոռվա և Ղազարի շրջանի շատ գյուղեր ու ավաններ, միջնորդելով զազարեցեանքն ուսմանը արյունահեղությունները, ազգամիջյան կոտորածները: Հետագայում, երբ կանխվել են ազգամիջյան կոտորածները, Քումանյանը գրել է. «Ես այսօր այնքան զոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ գործ եմ արել, որքան զոհ եմ, որ ակներև կարգացա իրար զեմ կանչեմ ժողովուրդների սրերը պատյան զենե տալ և շատ-շատ անմեղներին ազատել այս զազանական կոտորածներից»:

Բայց Քումանյանը ժողովուրդներին իրար մերձեցնելու ուղղությամբ եզրով է արել նաև գրականության մեջ: Գնեա 1892 թվականին նա հանդես է եկել «Հաշտություն» բանաստեղծությամբ և հոր է արել ամբաստանել հայ և վրաց ժողովուրդների զարավոր բարեկամությունը: Քումանյանը վերջինից շրջալ բանաստեղծության մեջ Մասիս և Կաղերկ լեռների միջոցով սիմվոլացրել է հայ և վրաց ժողովուրդների միասնությունը.

Հեկա Մասիսի գագաթը փայլեց
Վիթխորի Կաղերկ սարի հանդիման:
...Մտարեք՝ մե ևս սրբան ենք սիրով
Միասին կանգնել փոթորկի ճիմաց:
Այստեղ սուր մեռցի, մտռցիք, ընկե՛ք,
Մի նայի՛ք Լեռ, Ի՛նչ է կատարվում...
Մենք հո նորայր ենք գործերի ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում:

Քումանյանի սերը և հարգանքը դեպի վրաց ժողովուրդը արտահայտվել է «Հաշտություն», «Ն. Բարաթաշվիլու զամբանի վրա», «Վրաստանի համար», «Վրաստանի ոգին», «Ներվեր Վրաստանի բանաստեղծներին» գործերում: Այս բանաստեղծություններում Քումանյանը սրտաբուխ, անկեղծ զգացումներով մեծարել է վրաց ժողովրդին, զրվատել ու բարձր

1 Նովե. Քումանյան, Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1950, էջ 449.

է զնահատել նրա ազգային քանքարը, հոգեկան զնեմ հատկությունները:

Հովհաննես Քումանյանը վրաց ժողովրդի ազգային քանքար է համարել Ն. Բարաթաշվիլուն, որի աճյունի տեղափոխումը Գանձակից Քիֆլիս, պատճառ է դարձել գրելու «Ն. Բարաթաշվիլու զամբանի վրա» բանաստեղծությունը: Ահա այն.

Միթարություն, ոգավոր Վրաստան,
Ինչու՞ է տերել զեմը այսպեան.
Շարժված աճյունը հանցած պոստի
Շարժեց վերստին ցավը քո սրտի,
Քե նորա մրթին զերդմանք իտր
Որը հոգուց համար շատ է աճար:

Կը թազես, այո՞, դարձյալ քո նրջչին,
Բայց նորա վտատ զզցցմունքներին
Չրեա գերկաման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կաման հավիտյան,
Եվ դու երանցով պոստի մի այլ որ
Քազես թեզ մաշուց ցավերը բուր:

Նվ թեզ, անցավոր շիրմից շիրմ,
Հեզ ժողովրդի կրդիլ մտերիմ.
Քեզ, որ տանելի ևս անհեղգիտա սրտով,
Հավիտենական հանգիտա անվրդով:

Իր կյանքի մեծ մասն անցկացնելով վրաց ժողովրդի մեջ, մեծաուուն բանաստեղծը շատ լավ է ճանաչել նրան և համալվելով նրա քարձր հատկություններով, բարոյական վեհություններին, ձգտել է բյորթին ծանոթացնել վրաց ժողովրդի առաջինություններին, մանավանդ նրա անկաշառ մարդասիրությանը և բարեկամասիրությանը: Հակադրվելով «Վրաստանի թշնամանքից» խոսող ազգայնականներին, «Վրաստանի համար» բանաստեղծության մեջ Քումանյանը մեծ արվեստով

1 Տե՛ս Տ. Կարապետյան, Հայ գրողները և Վրաստանը, «Պատմա-բանասիրական հանգես», 1961, № 1, էջ 49:
2 «Մուրճ», 1892, № 4, էջ 520.

և ջերմ զգացմունքով զովերպել է վրաց ժողովրդի ազատասիրական ոգին.

Ոչ ապրեան զհասն նրա,
Ոստիկներ մինչ անգամ,
Ազ ու հացն է սերի միշտ ես,
Միշտ աշխարհին բարեկամ:

Նվ ի՛նչդուս չեն աննում ամանք,
Նրա բեթացքն անկոտն,
Մ'ոց են սասում.— Իր բարեի տակ,
Նա ընկել է անկանգուն:

Նվ իր Անորը ձկն համառ
Տարածում է հին վրաս
Ոչ թե զգաման գործի համար,
Սյ յ զեղ պոլժառ աղապար:

Ոչ ապրեան Կովկան անասառ,
Պատ է կանգնած մինչ նրկին,
Որ չհաղթի րուրը կրտս,
Ինչքան սուրա մուկերին:

Մեծ բանաստեղծի սերը զևսի Վրաստանը արտահայտվել է հետևյալ խոսքերում. «Հավատացած եղևք, որ ամենալավ վրացու հետ ես կմրցեմ զեպի Վրաստանն իմ անկեղծ և խոր սիրով»: Նա վրաց ժողովրդի մասին գրել է. «Նա մի բանաստեղծական ժողովուրդ է, համակված գեղեցիկ բեռածին զգացմունքներով...»:

Հովհ. Քումանյանը ժրջանորեն գործել է աղբրեզանցիների, հայերի և վրացիների կուլտուրաների ավելի ու ավելի խոր ուսումնասիրության, ավելի սերտ կապեր հաստատելու ուղղությամբ:

Օրինակ, զեռես 1912 թվականին Քումանյանի նախածնունդով հիմնվում է հայ գրողների Կովկասյան ընկերությունը: Այդ ընկերությունը կազմակերպում է ոչ միայն հայ, այլև վրաց և ադրբեջանական գրականությունը նվիրված մի շարք երեկոներ:

1 Հովհ. Քումանյան, Որկերի ժողովածու, հատ. 1, էջ 187.

Ներառյալն ժողովրդի կյանքում տեղի ունեցող կուլտուրական ամեն մի խոշոր երևույթ Քումանյանը ողջունել է մեծ ոգեշնչումով: Այսպես, 1917 թվականին Քիֆիսի վրացական համալսարանի հիմնադրման առթիվ իր ուղարկված ողջույնի նամակի մեջ Քումանյանը գրել է. «Միայն գիտությունը, գրականությունն ու արվեստն են լցնում ժողովուրդներին բուսանող անդունդը և միայն զրանք կատեղծեն դասեր լավագույն կյանքն ու ճշմարիտ մարդուն: Ուստի և դուք կհասկանաք այն ուրախությունը, որ զգացի ես, երբ իմացա վրացական համալսարանի բացելու լուրը: Ես հիացմունքով եմ պատկերացնում մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստացող ուրախ, աչքիմ վրացու կյանքը... Խնդրում եմ Ձեզ ընդունել և հաղորդել ում պետք է իմ շերտ ողջույնը այդ առթիվ, ինչպես նաև իմ համեստ լուման, որ թերևս դառնա վրաց ժողովուրդի կուլտուրայի մեծ շինքի քարերից մեկը»¹: Իսկ սովետական կարգերի հաստատման նախօրյակին, 1920 թվականին, Քումանյանը խոշոր գեղեցիկ հատկացնելով գրականությանը՝ ժողովուրդներին միացնելու գործում, գրել է. «Ժողովուրդների միասնությունը հայանվում է իրենց հոգևոր կուլտուրայի մեջ: Նվ ամեն մի ժողովրդի մեծությունն առաջին նշանն իր գրականությունն է»:

«Պայծառ էջեր» հոդվածում Քումանյանը մերկացնելով ցարիզմի քաղաքականությունը ազգերին իրար դեմ գրգռելու գործում, գրել է. «Այ՛ս, եղևի են տխուր միջադեպեր, բայց զրանք կարողացել են միայն պաղեցնել, սղտորել, թունավորել ժամանակավորապես էղ ժողովուրդների հարաբերությունները, ևն էլ միշտ վերին խափերում, և շատ-շատ թույլը հասցնել գործիչների ու հրապարակախոսների լեզուն, բայց էղ թույլը հասցնել մինչև հայ և վրաց ժողովուրդների հոգու խորքը չի հաշտվել երբեք»²:

Այն ազգամիջյան թշնամանքը, որ ձգտել են մեր ժողովուրդների միջև իրենց արխայետությունը շրջանում ստեղծել դաշնակները, մենշևիկներն ու մուսավաթականները, հոգ չի

¹ «Заря Востока», 1961, № 20.

² Հովհ. Քումանյան, Որկերի ժողովածու, հատ. 4, էջ 423.

ունեցելու Անդրկովկասյան ժողովուրդները միմյանց հետ կապված են եղել եղբայրական կապերով և ապրել միմյանց ցավերով: Լուի՛. Քումանյանը իր համանկներից մեկում, որ հա 1919 թվականին գրել է Լևան Կրպիսեանն, պատմում է, թե ինչպես դաշնակների և մենշևիկների օրոք Սանահինի կամրջի մեկ ծայրին կանգնել է հայ զինվոր, մյուսին՝ վրացի: Ենթանք երկուսն էլ,— շարունակում է Քումանյանը,— հրացանները ուսերին բռնած՝ համառ նայում էին իրար: Բանից դուրս է գալիս ընկերներ, ևս, կովի գաշտում շարունակ կովի և միասին, միասին առառակում է Քումանյանը, միասին կերել ու միասին քնել... Երանք զիմում են իրենց կողքին գտնվող գյուղացիներին և խնդրում են տեսնել և իրենց հայտնել, թե աղջուք իրենց մեծավորներից մտտիկ կան թե չէ: Երբ խմանում են, որ շիան՝ վազում են, զավիս կամրջի մեջտեղը գրկվում են, համբուրվում, նորից ետ վազում իրենց տեղերը կանգնում ու դարձյալ հրացանները ուսերին համառ նայում են իրար... Թշնամությունը, որ ստեղծված է մեր ժողովուրդների մեջ՝ արհեստական է, իսկ սերն ու եղբայրության զգացումները բնական և շատ ավելի ուժեղ, քան թե կարծում են մեզանում: Եվ այնուհետև... Ե... Առեք հենց թուրքերին ու հայերին... Ես մեզ կպատմեմ շատ ու շատ սրտատուղ զեպոքեր թուրքերի ու հայերի հարաբերություններից, էն տեսելի սրտալի, եղբայրական մեղաբարձությունը թե՛ թուրքի, թե՛ հայի կողմից, որ կզարմանաք: Եվ էղ էլ էն ժամանակ, երբ վատությունն ու կաստրածն ամեն կողմից քաշալերվում են ու բորբոքվում, իսկ լավություն անելի արգելվում, նույնիսկ մահվան սպառնալիքով արգելվում»¹:

Մերկացնելով դաշնակների ու մենշևիկների կողմից կաշմակերպված ազգամոլության դժոխությունները, Լուի՛. Քումանյանը գրել է. «Ազգերի հարաբերությունների մեջ դժվար կլինի գտնել ավելի լավ հարեաններ, քան նշել են հայն ու վրացին: Վերջիններ որ հարեան ազգերը կուզեք, Անդրկան ու Ֆրանսիան, Ֆրանսիան ու Գերմանիան, Իտալիան ու Ալյասիան...

Թուրքը ու պարսիկը և այլն, և այլն: Ամենքն էլ իրար զեմ պատերազմ են մղել և հաճախ անհայտ ու երկար ժամանակ, բայց պատմությունը հայտնի չէ հայ-վրացական պատերազմա՛ն:

Անդրկովկասյան ժողովուրդների թշնամիները, ցարիզմի գործակալները՝ դաշնակները, մենշևիկները և մուսավաթականները ամեն ինչ արել են մեր ժողովուրդների միջև պատակաւում զցելու համար: Չնայած դրան մեր ժողովուրդների բարեկամությունը մնացել է անխախտ և ամուր:

Ազգերնշանական դաշկանություն կառնիկ Մ. Մարիբը զնուս 1905 թվականին գրած իր «Բեկյանիմենիչ» («Նւտերնացիոնալ») ստեղծագործության մեջ, մերկացնելով ցարական կառավարության կողմից հրահրվող ազգամոլության կոիկները, սրտաբուխ խոսքերով է գովերգել հայերի և ազգերնշանակների եղբայրությունը.

երկու զրկից, երկու ընկեր, իրարու
միշտ բախտակից,
Լաւակները հենց հուսն հուշի՝ ապրել
են հաշտ, սրտակից,
Գարեր անվերջ եղել իրար մտերմ ու
կարեկից,
Էշաթը հանկարծ արյուն կամեց
եւազող երկից ու կյանից.
Տղատայան ու շեյթանի մասն է
Աշտակ խառնակիչ,
Գյուլ ու քաղաք Եզան ավեր, տեր իմ,
Փրկիք շարիքից:
Ս. զիտաներ, հանգես եկիք, աշաթ
Սր է վե՛հ կոյի,
Լինենք եղբայր մենք մահերիմ,
Թշնամանքը թող կորչի:

Անդրկովկասյան ժողովուրդների մեծ բարեկամ Մ. Գորկին իր ժամանակին ոչնչ էլ, որ «...կովկասում լինելիս ես ամենուրեք տեսնում էի, թե ինչպես հաշտ ու խաղաղ կողոպտիչի աշխատում էին վրացին, հայն ու թուրքը, ինչպիսի մանկական զվարճություն կատակում էին նրանք, երբում ու ծիծաղում և որքան դժվար էր հավատալ, որ այդ պարզ,

¹ Լուի՛. Քումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 416—417:

հիանալի մարդիկ այսօր բխմամբ են ու անհմատ կերպով կոտորում են իրար՝ ենթարկվելով նրանց հրահրող վատ ու մուր ուժին:

Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ Հովհ. Քումանյանը խորապես ցնցվել է մարդկությանը հասնող զարհուրելի աղետներից: Գնալի մարզն ունեցած իր մեծ սիրով Քումանյանն ընդգլխ է պատերազմի դեմ, ժողովրդական կենսափոխոփառությամբ ժաղրել պատերազմները:

«Եվ երբ իրադարձվեց մարդկության մեծ երազանքս՝ Հռիտմերյան սոցիալիստական Մեծ սեռույցիսն, այլ ժողովուրդների հետ միասին կործանումից փրկվեցին եսև անդրերկրկապան ժողովուրդները: Քումանյանը մեր ինտելիգենցիայի մեջ առաջիններից մեկն է կղզի, որ ողջունել է Սովետական կառավարությունը, նրա մեջ տեսնելով ազգերի կորաչրության ու համերաշխության պատվարը:

Նորարական երեք ազգերի ոչ միայն հասարակական գործիչները, զորոները, այլև զուտանները, աշուղները դրել ու զոգիբրգել են անզրկովկասյան ժողովուրդների բարեկամությունը, կորաչրությունը, նրանք կուլտուրական սերտ կապեր են ստեղծել միմյանց միջև: Մայաթ-Նովան, Աշուղ Զիֆանին, աշուղներ Մհուրի Գևորգը, Շամշի-Բալին, Շիրինը, Եթիմ Գյուրջին և շատ ուրիշներ տարբեր լեզուներով կրկեր են հորինել և գրանով էլ՝ ավելի են նպաստել ժողովուրդների մտափկությանը: Նրանք հասարակապես սիրվել են և՛ հայերի, և՛ վրացիների, և՛ արարջանցիների կողմից ու ամենուրեք ջերմ և սրտազին ընդունելություն են գտել: Աշուղ Զիֆանին, օրինակ, դիմելով վրացիներին ու արարջանցիներին և հակազրվելով ազգայնական աղտեղությունը, գրել է.

Եթե թուգանք օերը,
Եվ մենք օլինե կեք, և դուք օլինե կեք:

Մեր աշուղներից շատերը գովերգել են Վրաստանը, նրա մարդկանց, Թիֆլիսը: Ահա թե ինչ է գրել Շամշի-Բալին Թիֆլիսի մասին.

Ով չի՝ տեսել, չգիտի լողաթիք, համը Թիֆլիսի,
Գիշեր-ցերեկ չի լուսմ ալորաթիք, դամը Թիֆլիսի,
Քուլդ ու ապով է անցնում ամեն մի ժամը Թիֆլիսի,
Համ է ապիտ մեջիտին ևս ոտկեծամը Թիֆլիսի,
Սեյր ու սովդայի միջին, չիս տեսնի գամը Թիֆլիսի...»

Իսկ աշուղ Եթիմ Գյուրջին հետևյալ տողերն է նվիրել հայ և վրաց ժողովուրդներին.

Հայոց-Պարսիսի իմ բյուր եզրաչրենը,
Գուք իմ տանեանքիս կենցանի վնաս,
Ինձ վաճառեցին կեղծ բարեկամները,
Ողջույն, ձեզ կարտը Եթիմը կկամէ:

Պատմությունը ցույց է տվել, որ ոչ մի դարաշրջանում ոչ մի ուժ չի կարողացել խախտել կորաչրական կապերի ու զգացմունքների այն ներդաշնակությունը, որ առաջացել է հայերի, վրացիների և աղբրեշանցիների միջև՝ նրանց կյանքի ամբողջ պատմական զարգացման ընթացքում:

Թ Ա Տ Ր Ո Ն

Անզրկովկասյան ժողովուրդների կուլտուրական սերտ համագործակցությունը բոլոր ժամանակներում էլ անզնահատելի դեր է կատարել հայերի, վրացիների և աղբրեշանցիների բարեկամությունը զարբանելու համար: Ժողովուրդների բարեկամության գաղափարը, ինչպես տեսանք, դեռևս շատ դարեր առաջ արտահայտվել է ժողովրդական առասպելների, էպոսների, դրոցազնեբանությունների և ընդհանրապես դրականության մեջ: Այն արտահայտվել է նաև երաժշտության, կերպարվեստի և թատերական արվեստի միջոցով:

1 Մ. Ջավադյան, Որվազներ հայ-վրաց գրական-կուլտուրական կապերի պատմության, Նրևան, 1959, էջ 115:

2 Նույն անգը, էջ 154:

Հայ և վրաց ժողովուրդները միշտ էլ ամենատեսերա կապերի մեջ են եղել, նրանց խորթ է եղել ազգային ամեն տեսակի անտառզոնիզմ: Երևու հարեան, բախտակից ժողովուրդները, պաշար մզելով թուրք-պարսկական զավթիչների, ցարսկան բռնակալների դեմ, հաղթահարելով դանազան դժվարություններ, պահպանել են իրենց լեռնը, զիրն ու զրահանությունը: Կուլտուրական, գրական սերտ շփումների հետևանքով դարերի ընթացքում կատարվել են շատ թարգմանություններ հայերենից վրացերեն և ընդհակառակը: Գանձվելով ամենատեսերա կուլտուրական կապերի մեջ, նրանք բոլոր տեսակի բռնությունների ու ավերածությունների միջով առաջ են մղել իրենց կուլտուրան, զարգացրել են այն՝ փոխադարձաբար ազդելով միմյանց վրա:

Վրաստանը Ռուսաստանին միանալուց հետո Հայ կուլտուրան ավելի լայն թափով է սկսում զարգանալ Թիֆլիսում: Գեուս սեպուրցիայից շատ առաջ Անդրկովկասի երեք ներսյա բազան ժողովուրդների թատերական զործիչները սերտ կապ են պահպանել և համագործակցել միմյանց հետ: Թեև Հայկական թատրոնն ունի երկու հաղարամյա պատմություն, բայց միայն Թիֆլիսում էր, որ անցյալ դարի կեսերին կազմակերպվեց Կովկասի առաջին հայկական պրոֆեսիոնալ թատրոնը, որի 100-ամյակը մեծ խանդավառությամբ նշվեց վրաց հոսանքահանության կողմից 1955 թվականին:

Ասումնափրությունը սրայ է ապխտ, որ մինչև սովետական կարգերի հաստատումը վրացական թատրոնը բնագրել է Հայ գրամատուրգության 19 դարը, այդ թվում Գ. Սունդուկյանի համարյա թե բոլոր զործերը: Բեմադրվել են Հեռակալ սանկձագործությունները՝ Գ. Սունդուկյանի «Պեպոս», «Մանգաձ օջախ» (թարգմանություն Ի. Բաբրաձև), «Եսթարայա» (թարգ. Տեր Դավթի Տալալյան և Ի. Բաբրաձև), «Էլի մեկ զոհ» (թարգ. Վ. Արաշիձև), «Ամուսիններ» (թարգ. Ի. Բաբրաձև), «Սեկան Պետրոփչև և կիբում», «Գիշերվա սարքը խեր է», «Բաղնիսի բոխա» (թարգ. Վ. Արաշիձև), Ա. Երբյանցյանի «Պատիխ համար», «Եվգրեն», Վ. Փափաղյանի «Շալա», Ա. Սարգսյանի՝ «Ասլան բալասի» (թարգ. Ա. Բա-

շխաշվիխ), Պ. Արսրսյանի՝ «Հարատուության զոհ» (թարգ. Ա. Բաշխաշվիխ), Ա. Կարենյանի՝ «Շուշանիկ», է. Տեր-Գրիգորյանի՝ «Եղևյալի թուղթ», Փաղեխյանի՝ «Դալալ Լազո» (թարգ. Գ. Մինամզևզվիխ), է. Տեր-Գրիգորյանի՝ «Ահա թեկ նշանդոր» (թարգ. Ի. Բաբրաձև), Խ. Բուրյանի՝ «Դոն Ֆրեդրիկո» (թարգ. Ա. Բաշխաշվիխ): Մինչև 1917 թվականի փետրվարյան սեպուրցիան վրացերեն լեզվով տպագրվել են «Պեպոս», «Գիշերվա սարքը խեր է», «Սեկան Պետրոփչև և կիբում», «Եվգրեն» և ուրիշ պիեսներ:

Հայ դրամատուրգների շատ զործեր բեմադրվել են վրացական բեմերում դեռևս 1873 թվականից սկսած: Այսպես, օրինակ, այդ թվականին Քուրբանի սերողների խումբը բեմադրել է «Շուշանիկ» պիեսը, իսկ 1874 թվականին այդ նույն խումբը բեմադրել է «Պեպոս»: 1875 թվականին Թիֆլիսի և Քուրբանի դրամատիկական խմբերի կողմից բեմադրվել են «Պեպոս», «Էլի մեկ զոհ»: 1876 թվականին Թիֆլիսի ամառային թատրոնում Ակակի Մեղիթևու մասնակցությամբ բեմադրվել է «Էլի մեկ զոհ», 1877—1878 թվականներին Թիֆլիսի վրաց դրամատիկական թատրոնը, Գորիի սերողների խումբը և Քուրբանի սերողների խումբը բեմադրել են «Եսթարայան»: Վրացական թատրոնները հայկական պիեսներ հասկալապես շատ են բեմադրել 1879 թվականին Թիֆլիսի դրամատիկական թատրոնը բեմադրել է «Էլի մեկ զոհ», Ախալցխայի սերողների խումբը, Թիֆլիսի դրամատիկական խումբը, Գորիի դրամատիկական խումբը, Քուրբանի խումբը, Բաթումիում, Աբասթումանում բեմադրել են «Պեպոս», Թիֆլիսի դրամատիկական խումբը՝ «Եսթարայան», իսկ Թելավիում ներկայացվել է «Դալալ Լազոն»: 1880 թվականին Թիֆլիսում վրացական դրամատիկական թատրոնի արխեսների կողմից բեմադրվել է «Պեպոս», «Էլի մեկ զոհ»: 1882—1883 թվականներին դարձյալ բեմադրվել են «Եսթարայան» և «Պեպոս», իսկ 1883 թվականին Բաթումի սերողները խումբը ներկայացրել է «Ահա թեկ նշանդոր», 1884 թվականին Թիֆլիսի թատերադերերը բեմադրել են «Կապիչոն», Գորիի խումբը՝ «Պեպոս», իսկ Թիֆլիսի Գ. Արծրունու թատրոնում

1885—1886 թվականների Քիֆիսում և Քուֆախում՝ դարձյալ «Պեպոն», «Խաթարալան», 1887 թվականին «Շուշանիկը»՝ Գորիում, Քիֆիսում՝ դարձյալ «Քանդած օջախը», «Խաթարալան», «Կապիշները»: 1888 թվականին բացի «Խաթարալայից», «Պեպոյից», որոնք դարձյալ բնագրվել են Քիֆիսում, վրացական Սաքարածե դյուզում սիրողները բնագրել են «Պեպոն», 1889 թվականին Սուխումում ներկայացվել է «Ենկույի թուղը», 1891 թվականին Քիլվիսում՝ «Գիշերվա սարրը խեր է», 1891—1893 թվականներին վրացական տարրեր թատրոններում բնագրվել է «Պեպո», «Քանդած օջախ», «Խաթարալա», «Գիշերվա սարրը խեր է», «Սեկան Պետրովիչն էն կինքումը»: 1904 թվականին վրացական դրամատիկական ընկերությունը բնագրում է «Ամուսիններ», «Գիշերվա սարրը խեր է», «Քանդած օջախ» և «Խաթարալա», Ցխինվալիի սիրողների խումբը՝ «Պեպո», Քիֆիսի ժողովրդական թատրոնը՝ «Անյան Բայասի»: Ախալցխայում և Քիֆիսի ժողովրդական թատրոնում 1905 թվականին բնագրվում է «Հարստության զոհը» պիեսը Ա. Բաղդաշվիլու թարգմանությամբ. այդ նույն պիեսը Հետագա տարիներին բնագրվում է նաև Ամնալայի ժողովրդական թատրոնի, Քիֆիսի գերասանական խմբի և վրացական ուրիշ թատերախմբերի կազմից: 1906 թվականին Գորիի թատերական խումբը բնագրում է «Գոն Զրիգորի», Քիֆիսի կրկնվուլայիների սիրողների խումբը՝ «Գիշերվա սարրը խեր է», Սոնախի սիրողների խումբը՝ «Կապիշոն», Քիֆիսի սիրողների խումբը՝ «Հարստության զոհը»: 1907—1910 թվականներին վրացական թեմերում դարձյալ խաղացվել են «Գիշերվա սարրը խեր է», «Հարստության զոհը», «Պեպո», «Բաղնիսի բոխա», «Խաթարալա», «Քանդած օջախ» պիեսները: Այդ և մյուս պիեսները կրկնվում են նաև Հետագա տարիներին: 1910—1913 թվականներին վրացական դրամատիկական խումբը և ժողովրդական տանը կից դյուզում ունեցող վրացական ներկայացումների կազմակերպման խմբակը և սիրողների խումբը՝ Տ. Արա-

კართული ღრგვანული საგონამდგენი
 1901 წლის 29 აპრილის
 30 წლის საბავშვო

საღვთისმშობლის საგონამდგენი

კეკელი

1901 წლის 29 აპრილის 30-ს
 საღვთისმშობლის საგონამდგენის
 საბავშვო კლასში, სადა
 1901 წლის 29 აპრილის 30-ს

აქტი

დასრულებული სემინარია 8-საათიანი

1901 წლის 29 აპრილის 30-ს

«Պեպո»-ի բնագրողը
 30-ամյակին նվիրված ներկայացման ակիբը



Ա. Արեւյանը ժողովրդական գործիչների հետ

շիկի մասնակցությամբ, բեմադրում են Ա. Շիրվանզադեի «Պատվի համար» պիեսը:

Նույնիսկ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ դրամատուրգների գործերը լայնորեն բեմադրվել են վրացական բեմերում: Թիֆլիսում, Գորիում, Սամտրեզիում, Մուխոմեթում, Քուրախիում բեմադրվում են հայ կատակների՝ Գ. Մունցուկյանի, Ա. Շիրվանզադեի և մյուսների գործերը:

Բաղական է նշել, որ սկսած 1873 թվականից մինչև 1917 թվականը Գ. Մունցուկյանի «Պեպոն» վրացական բուրբ թատրոնները, թատերասերները, դրամատիկական խմբերի կողմից բեմադրվել և վերաբեմադրվել է ավելի քան 80 անգամ¹:

Սերաբյանի Վրաստանի մայրաքաղաքը մեծ ու շնորհակալ դեր է խաղացել ոչ միայն գրականության, այլև հայ թատրոնի և ընդհանրապես արվեստի բոլոր ճյուղերի զարգացման գործում: Այստեղ արգասափորվել ու ծաղկել են հայ գրականության, երաժշտության, կերպարվեստի, ճարտարապետության, թատերական արվեստի մի շարք լավագույն կոթողներ, որոնք հարստացրել են հայ ժողովրդի բազմադարյան կուլտուրայի գանձարանը: Հինավուրց Թիֆլիսը հանդիսացել է հայ նոր թատրոնի զարգացման իսկական օջախը: Այդ թատրոնի օրինակով էլ թատերական խմբեր են ստեղծվել Ռուսաստանի մյուս քաղաքներում: Իր կազմակերպման հենց առաջին օրերից հայկական թատրոնը ստացել է վրաց լայն հասարակության օժանդակությունը: Այդ ժամանակաշրջանում աչնքան են ուժեղանում վրաց և հայ թատրոնների կապերը, որ վրացական ներկայացումներին հաճախ մասնակցել են նաև հայ արտիստները՝ Գևորգ Չմշկյանը, Քեթևան Արամյանը, Սաթևենի Չմշկյանը և ուրիշներ:

Գիտև 1879 թվականին Թիֆլիսում ստեղծվել է թատերական մի նոր դիկալոր մարմին՝ «Թատերական կոմիտե», որի խնդիրն է եղել զարկ տալ թատերական գործին: Այդ կոմիտեի կազմի մեջ, ուրիշ գործիչների հետ միասին, մտել է նաև

¹ Լալվ. ՍՍԻ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանի անտիպ էյտիֆերից:

Ք. Սունդուկյանը, իսկ Գևորգ Չմշկյանը կամիանի բարատուգարն է հզորը:

Հայ ժողովրդի լավ բարեկամներից մեկը՝ Իսահր Գրիշաշվիլին իր «Սունդուկյանը վրաց բեմի վրա» հոդվածում՝ ըստ արժանվույն է գնահատում Ք. Սունդուկյանի զերեք վրաց քառորդում: Հայ մեծ դրամատուրգի գործերը լայնորեն մտաբ են գործել վրացական բեմերը, հաստատուն տեղ են գտել վրաց բեմի վարպետների խաղաղասերերում և հանձնին նրանց՝ Վաստ Աբաշիձեի, Նաստ Գաբունիանի, Կասե Արփիանիի, լայնորեն պրոպագանդվել են վրաց բեմից:

Դեռևս 1874 թվականի հունիսի 7-ին վրացական «Գրեթե» քերթում գրվել է. «Պեկոյն» այս օրերին խաղում էին Ստամբուլում: Գուցե վրացիք էլ ականատես լինենք այս կոմեդիային՝ Քիֆիլիսի բեմում: Բայց «Պեկոյն» առաջին անգամ բեմադրվել է Քոթայքիում 1874 թվականի հոկտեմբերի 21-ին, իսկ մեկ տարի հետո՝ 1875 թվականի նոյեմբերի 27-ին Քիֆիլիսում: Այդ բեմադրությանը ակտիվ մասնակցություն են ունեցել վրաց արտիստներ Կոսե Արփիանին, Վաստ Աբաշիձեն, Նաստ Գաբունիան և ուրիշներ:

Քոթայքիի բեմադրության ակտիվ «Գրեթե» քերթում գրվել է. «Ուրեր ներկա էին այդ ներկայացմանը, լավ տպավորություններ գուրս եկան Առանձնապես մեր՝ հասարակության համակրանքին արժանացավ Պեկոյնի բնավորությունը»: Վրաց հայտնի բանաստեղծ Ռ. Էրիսթավիլն և հրապարակախոս Սերգեյ Մեսրիսն լայնորեն պրոպագանդել են Սունդուկյանի գործերը վրաց լայն հասարակչությանը, Սունդուկյանը նույնպես գործիչների հաշտարարությանը, Սունդուկյանը նույնպես ամուր տեղ է գրավել վրացական բեմում, որքան Գ. Էրիսթավիլն, Չուբար Անտոնովը, Ալլեքսեևի Յագարելին և մյուսները:

Վրաց ժողովրդի հայտնի դրողներ Ակակի Մերեթելին և Իլյա ճավճավաձեն միշտ էլ բարձր են գնահատել Սունդուկյանի գործերը և ամենից առաջ նրա «Պեկոյն»:

Նրա գործերը հափշտակել են ոչ միայն դերասաններին, այլև բանաստեղծներին: Ալյապե, օրինակ, Սունդուկյանի «էլի մեկ զոհ» պիեսում հանդես է եկել վրաց անվանի բանաստեղծ Ակակի Մերեթելին, կատարելով Մեքայիի զերթ:

Սունդուկյանի պիեսների բեմադրությունները բարձր գնահատականի են արժանացել հասարակչությունում և մամուլի կողմից: Ահա թե ինչ էրել «Գրեթե» քերթը. «Այս վերջին տարվա բեմացքում մեծապատիվ Սունդուկյանը մոգա է գտնում մեր բեմի վրա: Առաջին անգամ Քոթայքիի ժանոթացրեց այդ առաջավոր հայ դրամատուրգին: Առաջինն այնտեղ խաղացին նրա հրաշալի «Պեկոյն» կոմեդիան: Ապա նրա մյուս դրաման՝ «էլի մեկ զոհը», որը երկու անգամ ներկայացրին այնտեղ և հիմա, ինչպես ասում են, նրա երրորդ դրամատիկական գործի բեմադրությանն են պատրաստվում: Թրիլիսին այս զնայում Քոթայքիի հեսքերով է գնում: Այստեղ էլ վերջերս երկու անգամ ներկայացրին «Պեկոյն», իսկ անցած հինգշաբթի ներկայացրին «էլի մեկ զոհը»¹:

Ի. Գրիշաշվիլին վերը նշված իր հոդվածում գրել է, թե «Պեկոյն» XIX դարի նշանավոր երևույթներից է: Նրա մեծ պարզորոշ պատկերված է՝ մի կողմից, նոր արքի էլնող դերժուաղիան և, մյուս կողմից՝ այդ դասակարգի ձեռքով շահագործման ենթարկվող ցածր խավն իր նկատակացությո: Եվ այնուհետև. «...Սունդուկյանի դրամատուրգիայի զաղափարկան և զեղարվեստական ուժը ժամանակին զգացել են թե՛ վրաց ժողովրդի սիրելի դերասանները և թե՛ մեր առաջավոր դրողները: Նրա պիեսներում հանդես են եկել Ակակի Մերեթելին, Ռաֆ. Էրիսթավիլը, դրող Ալեքսանդր Աղաբաղին, բանաստեղծ և թարգմանիչ Իսահր Բաբրաձեն, դրամատուրգ Ասիկա Յագարելին, Նինո և Իլյա Նավաշիձեները և շատ ուրիշներ: Որպես թատերասեր, տողերիս գրողը Կակուլիով է բեմ բարձրացել»:

«Գրեթե» քերթը 1881 թվականի № 37-ում տպագրել է

1 Տե՛ս «Սովետական գրականություն և արվեստ», 1950, № 7»

1 Մ. Զավալյան, Որվողներ հայ-վրաց գրական-կուլտուրական կազմերի պատմության, երևան, 1959, էջ 96:

Ա. Մերթվելու հողաված¹ Եւփրոված Գ. Սունդուկյանի սեռաբարայաւս պիեսի վրացերէն ըմբարդությանը: Վրաց ակնանվոր բանաստեղծը բարձր է զնահատում այդ գործը: Մերթվելին հայաստրութիան նշան է դնում Օստրոփակու և Սունդուկյանի տաղանդների միջև: «...Յրկուսն էլ հայաստր տաղանդով և միաստեակ են մտեանում վաճառականների դասին»:

Վերոհիշյալից մի բանի տարի առաջ այդ նույն պիեսի բեմադրութեան առթիվ նույն «Կրտսեր» թերթը, զեռնս 1877 թվականին, գրել է. «Հազովագեպ ենք անւնում ամեն տեսակիսից հրաշայի և հասարցաւ անթերի այնպիսի խաղ և ներկայացում, ինչպես տեսանք անցած երեքշաբթի օրը: Կարծես յայտարանչյուր զերկատար իր զերի համար էր ծնվել, կարծես պիեսը հատկապէս այդ զերկատարների համար էր զըրված, որքան հաշող ու անթերի էին խաղում բոլորը... Հանդիսատեսը հետացավ թատրոնից լիովին բավարարված, բոլորը համոզվեցին, այդ թվում նրանք, որոնք թերահավատ էին, որ եթէ երբևէ վրացիներն իրենց սեփական թատրոնին արժանանան, ապա զերկատարները չեն պակասի...»:

Թե սրբան մեծ զեր են խաղացել Սունդուկյանի պիեսները երկու մոզովորդների կուլտուրական կապերի ամբապնզման գործում, ցույց են տալիս վրաց թատրոնի և առհասարակ հասարակական մտքի հայտնի ներկայացուցիչների զնահատականները: Մտրիամ Մսիաքովու-Արաշիճեն իր հիշողութիւններից մեջ գրել է. «...թատրոնն այն ժամանակ սնկում էր Սունդուկյանի պիեսներով: Հիշում եմ, երբ նեղութեան մեջ էինք ընկնում, նրա պիեսներն էին մեզ վերկուս: Այս պատվարժան հեղինակի պիեսները մենք համարում անթերի էինք խաղում և լավ էլ եկամտաւ էինք ստանում»¹: Իսկ «Կովալի» թերթը գրել է, թէ Սունդուկյանի պիեսները «միացրին երկու հարևան ազգերին արվեստի հիման վրաս»²:

Գ. Սունդուկյանի զերի զնահատման տեսակետից ուշադրով է վրաց հայրենի հասարակական գործիչ, զերասան Կո-

տե Զիփիանու հայ մեծանուն դրամատուրգի գրական գործունեութեան 30-ամյակի հորեկանական հանդեսին արտասանած սրտատուչ ճար. «...Ահա հանդես եկար զուց ու վրացական թատրոնի համար բացվեց մի այլ շրջան: Սկսվեց նոր կյանք: 25 տարվա լիթարգիական ընդից հետո եկավ նրա (վրացական թատրոնի) վերածնութեան շրջանը: Այս վերածնութեան համար մեր թատրոնն ամբողջապէս պարտական է Ձեզ, բանի որ Գուր, Ձեր թատրատիկական ստեղծագործութեամբ նորից շունչ տվիք և թատրոնի մարած զարկերակին հնարավորութեան տվիք նոր ուժով վերաբարեկուս Գուր, որ բարձր եք պահել արվեստի դուշը, որի ծիփանքի ու ստմբիկ տակ ավելացեալ մեզ բարձրարկիստ ստեղծագործութեաներ, պոետական լիսմ գործեր (պիեսներ): Գուր ոչ միայն դրամատուրգ եք, այլև բանաստեղծ, բանաստեղծ, որ ստեղծագործում է ոչ թէ լաւփածո և ոչ էլ հանգստով, այլ մեր կենդանի խոսքով: Այո, դուք կյանքից բարձրացրիք այնպիսի տիպեր, որոնք երբեք չեն նստմտա, որոնց դուք անմահութեան տվիք: Մի՞թէ կարող են մոռացվել Ձեր Զամբարտովի, Օսեփի, Զիմզիմովի, Պեպոյի, Կակուսի, Գեթույի, էփեմիայի, Օակն Պետրովիչի, Բաչու, Գեորգի Մասիսյանցի և Մարգարիտ տիպարները: Մենք՝ հարգաւոր թատրոնի գործիչներս անհի և դատախարակվել ենք Ձեր պիեսներով: Մենք ապոված ենք արվեստի Ձեր տիպերով: Մենք ոգիշնված ենք Ձեր ստեղծագործութեամբ և ինչքան էլ Ձերս աշակերտներն ենք մենք, այնքան էլ ավելի մեծ սիրով ենք զիմավորում այսօրվա հորեկանը...»³:

Այդ վերաբերմունքը բխում էր ոչ միայն հայ և վրաց մոզովորդների միջև եղած բարեկամութեանը, այլև նրանից, որ ինչպես «Պեպոյան», այնպես էլ Սունդուկյանի մյուս պիեսներում, հատկապէս արտացոլվել է Քրիլիսիի կենցաղը, նրատուկացը, այդ հնազարդան քաղաքի ողջ կոլորիտը:

Նրա գործերում լայնորեն օգտագործվել են նաև վրացական առածները և վրաց գրողների բանաստեղծութեանները, մի

¹ «Կոմունիստ», 1926, № 9.

² «Կովալ», 1901, № 2:

³ «Սովետական գրականութեան և արվեստ», 1950, № 7.

հանգամանք, որը հայ դրամատուրգի գործերը էլ ավելի հարգատ է դարձրել վրաց ժողովրդին:

Պատահական չէ, որ վրացական թատրոնի կողմից բեմադրված Սունդուկյանի գործերը միշտ էլ սիրով են ընդունվել վրաց թատերասեր հասարակածության կողմից: Ժողովրդական զերասան Եհիս Գոշերթիձեն իր հիշողություններում գրել է. «Էիշում եմ «Եսաթարալախ» ներկայացմանը մեծ դերասանուհու՝ Մափարովա խաղով ոգեղոված հասարակությունը 5—6 անգամ կատարել էր տալիս զերասանուհուն նաաուլալի իրզը: Իսկ «Գրոհրա» թերթը Մափարովայի խաղի մասին գրել է հետևյալը.

«Մ. Մափարովայի խաղը դիտողին բնավում է, թե այս զերակատարը երկար ժամանակ է ինչ նվիրվել է բեմին—բեմի վրա այդտա զգայն ու սիր լավ ըմբռնելը հասարակության ուշադրությունը գրավեցին. հրաշխ էր ամուսնու (Ջիմզիմովի—Վաստ Արաշիձեի) հետ գծովելու և խոսվելու տեսարանները»:

Հնդհանրապետ պետք է ստել, որ սկսած 1879 թվականի սեպտեմբերից, երբ Քիֆլիսում բացվում է վրացական մշտական թատրոնի սեզոնը, այդ օրվանից Սունդուկյանի պիեսները հաստատուն սեզոն են գտնում նրա խաղացանկում: «Պեպոն», օրինակ, 1905 թվականից մինչև 1917 թվականը, միայն Քիֆլիսում բեմադրվել է 14 անգամ և ուշադրավն այն էլ, որ ինքը հեղինակը շատ հաճախ է մասնակցել իր պիեսի բեմադրական աշխատանքներին: Մակայն, ինչպես արդեն ասվեց, վրացական թատրոնում բեմադրվել են նաև հայ մյուս զորդերի գործերը, որոնց նույնպես մասնակցել են վրաց թատրոնի լավագույն արտիստները:

Բազմազարյան արաղիցիոն բարեկամությունը արուստայովել է թատերական կյանքի բոլոր բնագավառներում, որը սպգային թատրոնի զարգացման համար ցարկական կառավարության կողմից ստեղծած խոշորոտները հաղթահարելու կարևոր նախապայմաններից էր:

Ռեժիսյորները, թատերական նկարիչները, երաժիշտներն

երկուստեք բեմադրել, ձևավորել են բեմադրություններ, գրել երաժշտություն:

Հայ շատ ռեժիսյորներ, ինչպես, օրինակ, Գ. Սունդուկյանը, Գևորգ Չմշկյանը, Միքայել Բեյրությանը, Գեղոն Միքայելյանը բեմադրություններ են տվել վրացական թատրոնում:

Հայ և վրաց թատրոնների անցյալի պատմությունը պահպանել է բազմաթիվ փաստեր, երբ ինչպես վրացական հեղինակների, այնպես էլ ասեր Գ. Սունդուկյանի պիեսները մշակամանակ բեմադրվել են և՛ հայկական, և՛ վրացական թատրոնների կողմից: Հայ բեմի վարպետներ Գևորգ և Մաթեի Չմշկյանները, Արարսյանը շատ հաճախ վրացերեն լեզվով կատարել են Պեպոյի (Չմշկյան) և Կառլոյի (Արարսյան) գերբը: Հնդհանրապետ պետք է ասել, որ Չմշկյանը մեծ հաճախակցով է վերաբերվել վրաց թատրոնի գործունեությանը: Մաթեի է, որ նրա նշխարակից ազգի գործիչները դիմել են նրան՝ վրաց բեմում հանդես գալու Պեպոյի դերակատարումով, նա սիրով հանձն է ասել և մեծ հաջողությամբ կատարելով իր ստանձնած դերը, արժանացել է վրաց և հայ հասարակածության շքեղ բեղունություններ: Վրացական թերթը՝ «Գրոհրան», զրվատակ է Չմշկյանի այդ զերակատարումը: Իր հիշողություններում Չմշկյանը նշել է, որ նա իր ընկերների հետ՝ Տեր-Ստեփանյանի վրացերեն թարգմանությամբ, ներկայացրել է «Շուշանիկ» օպերայությունը: Ամուսնու նա հիշատակում է Պուլխանիում արված մի բանի ներկայացումները:

Այս կապակցությամբ ուշադրով է նշել, որ մեծանուն զորդ Ակակի Տերթևիկին XIX դարի 60-ական թվականներից շատ մտա կանգնած էլնելով ոչ միայն վրաց, այլև հայ թատրոնին, բարձր է գնահատել նրանց դերը երկու ազգություններին ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու գործում: Ա. Տերթևիկին 1873 թվականին ներկա լինելով Չմշկյանի կողմից հիշատակված հայ-վրացական բարեկամության երկույն, երբ հայ զերասանական խումբը բեմադրել է Կարենյանի «Շուշանիկը»՝ վրացերեն և մի վողեկի՝ հայերեն, Տերթևիկին մեծ նշանակություն է տվել այդ երկույնին, գրելով, թե «Շուշանիկ» ներկայացումն արդեն բավական էր

1 «Նորհրգային արվեստ», 1940, № 2—3 (Ս. Բալայկոյրի հաղածը):

Հայ-վրացական թատերական երեկոյի նշանակութունը բարձր գնահատելու համար... Ում հայտնի չէ,— գրել է Մերեթինը,— որ պատմության ամբողջ հատորներն ի վիճակի չեն ներգործելու մարդու վրա, ինչպես մի օրինավոր հայերենասիրական գրամատիկ ներկայացում, որը կենդանի պատկերներով ցույց է արժուում մարդու մեկ կամ երկու ժամվա ընթացում և այն էլ կանոնավոր լեզվով... Այդ երեկոյից շատ օրերով նա հարց է բարձրացրել Քիֆիլիսում կառուցել հայ-վրացական մի թատրոն, ուր բնավորվեն հայ և վրաց գրամատիկները գործերը և հանդես գան թե՛ վրացի և թե՛ հայ գրամատիկները։ Վերահիշյալ փաստը միակերպ չէ, որ սպայացուցում է Մերեթինու հետաքրքրությունը դեպի թատրոնը։ Օրինակ, 1874 թվականի սեպտեմբերի 14-ին Քիֆիլիսի Հայկական մշտական թատրոնի կողմից բնակազրամ «Արշակ Բ» օդերկրություն ներկայացմանը նույնպես ներկա է եղել վրաց ակադեմիոր բանաստեղծը։

Հայ-վրացական միացյալ թատրոնի հարցը, որ բարձրացրել է Մերեթինը, իր ժամանակին եղել է առաջադեմ հասարակական-թատերական գործիչների ուշադրության կենտրոնում։

Վրացական ՍՍԹ արվեստի վաստակավոր գործիչ Գ. Բախնիկովիչին իր հետաքրքիր ուսումնասիրություններից մեկում եղում է, թե ինչպես է վրացական առաջադեմական թերթը՝ «Գրեոբրան», պայքարել վրաց և հայ թատրոնների գոյության և նրանց համատեղ զարգացման համար։ Հասկանալի է, որ այդ թատրոնները աշխատել են նյութական անասելի ծանր պայմաններում։ Ցարական շինությունները և ազգային բուրժուազիան ամեն կերպ խոչընդոտել են թատերական զործի զարգացմանը, չեն եղել համապատասխան շենքեր, խանգարել է ցարական ջեհզուրան և այլն։ Եվ այնուամենայնիվ թատրոնի գործիչները անխնայ նպաստել են առաջադեմական թատրոնի գաղափարները հաստատելու ուղղությամբ «Գրեոբրան» թերթը ևս խնդրել է գրել կառուցել մեկ շենք, որտեղ միասին պետք է աշխատեին և՛ վրացիները, և՛ հայերը։ Թերթը գրել է, թե մենք և հայերը եղբայրներ ենք... Եթե երկու ժո-

ղովորդները պաշտպանեն միմյանց, ապա թատրոնի կանոնադրման հարցը կհեշտանա։ Ինչպես պետք էր սպասել, հայ առաջադեմ հասարակաշունթները խանդավառությամբ է ընդունում վրաց գործիչների կոչը՝ երկու ազգային թատրոնների կապերն ուժեղացնելու մասին։ Պետք է ստել, որ վրաց և հայ թատրոններին հուզող հարցերը շատ հաճախ միասուղ են գրվել և միասնաբար լուծվել։ Երբ, օրինակ, 1879 թվականին Հայկական թատրոնում կազմակերպվել է հանրահուշակ Պետրոս Ազգայանի բնեկֆար Քիֆիլիսում՝ նրան սրտանց ողջունել և վրաց թատրոնի ներկայացուցիչները և նվիրել են զսփնեպատի։ 1903 թվականին վրաց մի շարք գործիչներ «Վիկերիա» թերթում գրել են. «Թող էլ ավելի շատ լինեն հայերի և վրացիների համար Պետրոս Ազգայանի նման անխոնջ մշակները։ Հայ առաջադեմ գործիչները նույնանման վերաբերմունք են ցույց տվել վրաց ժողովրդի կուլտուրայի ևստիւնջ մշակների նկատմամբ։ 1900 թվականին, Գեորգի Մերեթինու ահույնի առաջ հետևյալ խոսքերն է արտասանել ՄՄՀԿՍ թերթի խմբագիր Ա. Փարսեթարը. «Մերեթինի Անդրկովկասի ժողովուրդների ամուր կապին հետևորդն էր»։ Երբ 1900 թվականի հունվարի 2-ին տեղում է վրացական թատրոնի 50-ամյակը, նրկու ժողովուրդների երկու գրամատուրգները՝ Ա. Ցազարեյին և Գ. Սունդուկյանը ընտրվում են վրացական գրամատիկական ընկերության անդամներ։ Հայ հասարակաշունթյան կողմից անկեղծ ցանկություններ են հայտնվել վրացական թատրոնի ծաղկման և զարգացման համար. «Ցանկանում ենք վրացական թատրոնին ծաղկում իր լավ ապագայում։ Այսպես, սիրելի բարեկամներ, բացականերք միասին կեցցեն՝ մեր եղբայր վրացիները, կեցցեն՝ նրանց ստեղծած ազգային թատրոնը»։

Վերևում եղվեց Զմշկյան ամուսինների, Արտաբայանի մասնակցությունը վրացական ներկայացումներին։ Այս առումով արժե հիշել նաև հայ թատերական գործիչ Գեղան Միրազյանին, որն իր ղեկստանական գործունեության հենց սկզբից հանդես է եկել ինչպես հայ, այնպես էլ վրացական բնեկրում։ Նա հավասարապես սերելով է եղել և՛ մեկ, և՛ մյուս ժողովուրդի

կողմից: Այդպիսին է եղել նաև արտիստ Գևորգ Փերումյանը, որը շատ գործ է կատարել Հայ-վրաց թատերական կազմերի ամբարշտման համար:

Վարելի է բերել շատ օրինակներ նաև, երբ վրաց զերասանները հանդես են եկել հայկական բեմերում: Այսպես, «Գայալ Ղազար» պիեսում, 1858 թվականին, հայերեն լեզվով հանդես է եկել վրաց հայտերի զերասան Վաստ Աբաշիժեն: Նիկո Մոցերիժեն և Անգրո Աղամիժեն մի շարք դերեր են կատարել Հայ բեմում, իսկ Ալմա Մզնիաժեն աշխատել է հայկական թատրոնում: Այնուհետև, անցյալ դարի 60—70-ական թվականներին հայկական ներկայացումներին հանդես է եկել վրաց երգիչ Ի. Բերիժեն, իսկ 80-ական թվականներին հայտերի վրաց զերասանուհի Ն. Գարունիա-Ցազարելին հաճախակի և մեծ հաջողությամբ հայերեն և վրացերեն կատարել է լայն ժողովրդականություն վայելող «Միժենուհի» ներդ:

Գեուկ 90-ական թվականներին սկզբներից Արեւյանը սերտ բարեկամություն է հաստատել վրաց թատերական գործիչների՝ Վ. Գաևիայի, Ն. Գարունիա-Ցազարելու, Կ. Ղիբիսեու, Կ. Մեսխու, Վաստ Աբաշիժենի, Լ. Մեսխիշվիլու և ուրիշների հետ: Այդ գործիչները և Արեւյանը պայքարել են ազգային թատրոնի հարատև գոյության և նրա զարգացման համար: Այդ թվականներին Քիվիլիի Արժուճու թատրոնում ներկայացումներ է տվել նաև վրաց դրամատիկական խումբը:

Արեւյանն ու Վաստ Աբաշիժեն մեծ ջանքեր են գործադրել իրենց ազգային թատրոնների միճակի բարեկալիելու, վրաց և հայ թատրոնների գործունեությունը համատեղ ծավալելու համար: Վ. Աբաշիժեն 1903 թվականի հունվարի 27-ին բնաջրվում է «Հայոց դրամատիկական ընկերություն» պատվավոր անդամ: Հասուկ թատերական շնոր ունենալու հարցով մասնակցում են եղել և՛ Աբաշիժեն, և՛ Արեւյանը: Այդ հարցի կազմակերպությամբ նրանք համատեղ հանդես են եկել մամուլում: Ահա թե ինչ են գրել նրանք. «Չունեն թատրոն վրացիք, չունեն թատրոն հայերը: Առանձին-առանձին սեփական թատրոն չենելը նրկու ազգերի համար էլ դժգոյ է: Բացի այդ, ամենօրյա ներկայացումներն անհնար էլ: Փամանակը չէ՝ ար-

դյոք, որ հայկական և վրացական «Դրամատիկական ընկերությունները» հրավիրեն մի ընդհանուր խառը ժողով և վճռեն միացյալ ուժերով կառուցել հայ-վրացական թատրոն: Ուզում ենք հավատալ, որ երկու ազգերն էլ զեն կշարտեն անիմաստ գլուխկոտրումները և ձևեր-ձևերի օայտվ կկառուցեն այդ անհրաժեշտ կուլտուրական շենքը ի փաստ մեր ժողովուրդները: Վրաց խմբի ղեկավար Վ. Աբաշիժեն, հայ խմբի ղեկասան Հ. Արեւյան»:

Սլ ընայած այն հանգամանքին, որ հայ առաջադեմ թատերական գործիչներն այդպես էլ չի հաջողվել իրականացնել իրենց ցանկությունը՝ հայ-վրացական թատրոնի շնոր կառուցելու առնչությամբ, այնուհանդերձ, նրանք, օրինակ, Համյաբարում («Մուրաշիզի թատրոնում») կազմակերպել են համամասն՝ վրաց-հայկական ժողովրդական թատրոն, որտեղ արվել են վրացական և հայկական ներկայացումներ: Բայց ոչ միայն այդ. շատ քաղաքներում Փուլխախում, Գոցիում, Թելավիում, Սզնախում, Մուխումիում հաճախակի արվել են խառը՝ վրաց-հայկական ներկայացումներ, որին սկսանաես են եղել երկու ազգությունների հանդեսառեսները: Հայ թատրոնի կազմատան գործիչներից մեկը Գրիգոր Ավետյանը իր հուշերում ավել է վրաց և հայ թատերական գործիչների սերտ համագործակցության ժամ պատկերը: Նա գրել է. «Երկու խմբերն էլ (վրացական և հայկական) բարեկամական լավագույն հարաբերության մեջ էին: Այն, ինչ պահպանում էր մեկին, բերում էր մյուսը: Երբ մի խմբի զերասան չէր ունենում անհրաժեշտ որևէ բան, զիմում էր մյուս զերասաններին: Բենեֆիսից վերջված փողը ծախսվում էր մյուս խմբի հետ»:

Գրիգոր Ավետյանը այնուհետև շարունակում է. «1893 թվականի հունվարի 28-ին անսկիզ հայ թատրոնի 35-ամյակը, որին ի թիվս ուրիշ ազգերի ներկայացուցիչների մասնակցում էր նաև վրաց բեմի աստղ Վաստ Աբաշիժեն 1895—96 թատերաշրջանի օրերին խաղում էինք վրաց աղբը-

1 «Մշակ», 1915, № 182, մեջբերումը կատարված է Ս. Մելիքսեթյանի «Հովհաննես Արեւյան» գրքից, էջ 164:

մեկանների թափանցում: Այդ թափանցումն էր պատասխարված նաև վրաց խումբը, որի մեջ կախին շատ տուգանդավոր դերասան-դերասանուհիներ՝ Ավալովան, Գարունիա-Յազարիին, Սափարովա-Աբաշիձեն, Վաստ Աբաշիձեն, Ալեքսեև-Մեսխիեր, Կոստ Մեսխին, Կոստ Դիբիտինին, Գունիան, Միրադյան-Գեղեվանույր, Ավիսանիձեն, Ազամիձեն և ուրիշներ: Իսկ մեր խմբի անդամներն էին՝ Մելիքյանը, Փոստանձենը, Աբելյանը, Տեր-Գավթյանը, Վրույրը, Հարությունյանը, Ստեփանյանը, Հասան Զալալյանը, Մանվելյանը, Ազամ Սարգսրյանը, Ավետյանը և ուրիշներ... Քիչիլիսի վրաց թատրոնի մաշինիստ վարչի նիկոն, բեմի աշխատող Վանո Մայսուրաձեն և ուրիշներ, բոլորն էլ հայ թատրոնի բարեկամներն էին և ես ուրախությամբ եմ արձանագրում այդ... Գեղե՞տն Միրադյանը ծանախել է հայ բեմին, բայց ավելի շատ՝ վրաց բեմին: Վրացերենինց հայերեն բաժականին պիեսներ են թարգմանվել»¹:

Գրիգոր Ավետյանի խոսքը վերաբերում է նախասովետական շրջանում վրացերենից հայերենի թարգմանված և բեմադրված Վ. Գունիայի «Չղբայր և ցուլը» (թարգմանություն Գ. Տեր-Գավթյան), Ն. Ազիլանի «Գրչից պատուհաս» (թարգ. Լ. Կարապետյան), Ա. Յազարիու «Դոկտոր Աշիրբադյան» (թարգ. Լ. Կարապետյան), Ա. Յազարիու «Այժմ այլ ծանանների են» (թարգ. Գ. Միրադյան), Կ. Մեսխի «Մելանուչի բանասերկությունները» (թարգ. Ա. Փոստանյան), Ա. Ղազարի «Ղալաղ Աբսեն» (թարգ. Չղբանկարյան), Գ. Ազիլանի «Խարված հույներ» (թարգ. Ն. Ալիազյան), Ա. Յազարիլի «Սիրիսուկանը» (թարգ. Գ. Միրադյան), Ի. Քեթևիվանույրի «Դավաճան» (թարգ. Ն. Ալիսանյան), Ա. Յազարիու «Խանուսա» (թարգ. Պ. Աբաբյան) և շատ այլ պիեսների:

Բայց հայ-վրացական թատերական կապերը չեն սահմանափակվել միայն Վրաստանի ներքոն: Այդ շրջանում արասահմանում ես ստեղծվել են հայրենակցական ընկերություններ, որոնց միջոցով վրացիները և հայերը կազմակեր-

¹ Գրիգոր Ավետյան, Փաստունահինգ ասրի հայ բեմի վրա, 1933, էջ 31, 40—41, 55—56, 123.

պել են ներկայացումներ (այդպիսի մի երեկո տեղի է ունեցել Վարշավայում 1913 թվականի սեպտեմբերի 17-ին): Ուսումնասիրությունը ցույց է առել, որ վրացական ներկայացումներ են տվել նաև Երևանում, Ալեքսանդրապոլում, Ղարսում, Սարիզամիշում: 1903 թվականի սեպտեմբերի 26-ին Երևանում կազմակերպվել է վրացական երեկո՝ Վրացական խմբերը հետադա տարիներին կուլմներ են ունեցել Հայաստանի ղեկավարում: 1907 թվականին Քրիլիսի գրամատիկ թատրոնի դերասանները ներկայացումներ են տվել Երևանում, Ալեքսանդրապոլում և Ղարսում: Հետագայում՝ 1912 թվականի հոկտեմբերի 7-ին, Երևանում, շինվելիկները ապկումում բեմադրվել են Մուշարիու «Փաստարան Մելան» և էրիթթայում «Մահից հետո բախտավորություն» կոմեդիաները: 1914 թվականին Երևանում բեմադրվել է Գունիայի «Ցուլը և եղբայր» դրաման՝ մասնակցությամբ Գ. Գուլադյանի և տեղի վրաց սիրողների: Երևանում, Նույն տարին, դարձյալ բեմադրվել է Յազարիու «Խանուսան» և Գ. Մունդուկյանի «Պեպոս» վրացերեն լեզվով՝ մասնակցությամբ Գ. Գուլադյանի և տեղի վրաց սիրողների:

Վրաց սիրողները ուրիշ ներկայացումներ էլ են տվել. օրինակ՝ 1915 թվականի ապրիլի 26-ին և հունիսի 13-ին Երևանի շինվելիկների ակումբում բեմադրվել են Ա. Յազարիու «Սիրիբրականը», իսկ դեկտեմբերի 18-ին «ԸՆՉ տեսել ես, էլ չես տեսնի» կոմեդիաները:



Նույն տան բեղմնավոր և բազմաթվանդակ են եղել հայադրբերական կուլտուրական կապերը: Պետք է ստակն նշել, որ այդ կապերը զեռես ինչպես հարկն է չեն սուսումնասիրված:

Հայկական և ադրբեյջանական թատրոնը, կրթամշակութային կերպարվեստը և այլն վաղուց ի վեր սերտ կապերի մեջ են եղել:

Չնայած ցարական սատրապները և ազգային բուրժուազիան հսկայական Տիրիք են թափել հորալուստյան կատարածների հրահրելու միջոցով խորհուրդ հայ և ազգրեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը, սակայն այդ ժողովուրդների լավագույն մասնաժողովը բարձր են պահել բարեկամության դրոշը: Եվ այստեղ բիշ զիր շին խաղաղեցի սրվետաի առաջավոր ներկայացուցիչներն ու նրանց սանդղագործությունները, կուլտուրական կապերն ու համագործակցությունը:

«Հայ ազգրեջանական թատերական կապերի պատմությունից» իր հոդվածում¹ Մարիր Թիզակեր մի շարք փաստեր է բերում հայ-ազգրեջանական թատերական կապերից: Պատմությունից վաղուց հայտնի են այն սերտ կապերը, որ գոյություն են ունեցել հայ և ազգրեջանական զբաղմունքային և թատրոնի առաջավոր գործիչների միջև Այդ կապերը ամենից առաջ եղել են այն բնագծերի շահերից, որ ունեցել են երկու ժողովուրդները իրենց հասարակական-քաղաքական կյանքում, արտաքին և ներքին թշնամիների դեմ ազգային անկախության համար մղվող պայքարում:

Հայ թատրոնում միշտ էլ պատշաճ տեղ են զետել Ախունդովի և ազգրեջանական մյուս հեղինակների գործերը:

Գեոն Ախունդովի կենդանության ժամանակ հայերին թարգմանվում և բեմադրվում են նրա պիեսները: Այսպես, օրինակ, Ալ. Երիցյանը 1874 թվականին թարգմանել է Ախունդովի «Անեքորտի խառնության վիզիրը», ինքը՝ Ախունդովը թուրքերի է դերասանուհի Սաթնիկին խաղալու այդ պիեսը իր բեմադրության ժամանակ: Երկրյանը թարգմանել է նաև «Մուսուլ ժողովան» կոմիդիան, որը 1896 թվականին Երևանում խաղացվել է ազգրեջանական մի խմբի կողմից, այդ ներկայացմանը ներկա են եղել ազգրեջանցիներ, հայեր և ուսանիք:

Հետագայում ևս բեմադրվել են Միրզա Չաթալի Ախունդովի «Հաշի Կարա», Ռաշիդ էֆենդիի «Ռաշիդ» վոդեվիլը, ազգրեջանական օպերայի կլասիկ Ուլտիք Հաջիրեկովի «Արշի

մալ-այան», «Աշուղ Հարիր», «Մաշաի իրաթ», «Հիսուն տարեկան երիտասարդը», «Լեյլի և Մեղնուն», «Շահ Իսմայիլ», «Եղի Արվադ» սանդղագործությունները:

Ուշուհ մյուս ժողովուրդների, այնպես էլ ազգրեջանցիների համար կենսական պահանջ է եղել Անգրեկովկասում կողքի կողքի ապրող մյուս ժողովուրդների կուլտուրական արժեքների օգտագործումը:

Գեոն շատ տարիներ առաջ հայ դրամատուրգ Մազաթյանի «Կրթի-կրթի» վոդեվիլը հանրաճանաչ է եղել Ազգրեջանում և խաղացվել է ազգրեջաններին լավ տիրապետող Սաֆրազյան ամուսինների կողմից: Սկսած 1882 թվականից բեմադրվել են նաև Տեր-Գրիգորյանի «Ենեղյի թուղը» և Գ. Սունդուկյանի «Գիշերվա սարը խոր է»:

Սերտ բարեկամություն է գոյություն ունեցել հայ և ազգրեջանցի թատերական գործիչների միջև: Մինչև սովետական իշխանության հաստատումն Անգրեկովկասում, Մամեղ Կուլիզադեն, Ա. Հախվերդիք և Ալ. Երվանդազեն մտերիմ բարեկամներ են եղել: Իսկ ազգրեջանական ժողովուրդը Տերվանդազենի խորհրդով գրել է «Շատ լավ» պիեսը, որտեղ արտացոլվել է հայ և ազգրեջանական ժողովուրդների բարեկամությունը: Երվանդազեն ևս իր բազմաթիվ սանդղագործություններում սանեղել է ազգրեջանցիների կերպարները: Հախվերդիքը թարգմանել է ազգրեջանական ժողովրդի լայն խավերի սեփականությունն է դարձրել Գ. Սունդուկյանի «Պեպտե», «Գիշերվա սարը խոր է»: Հախվերդիքի կողմից թարգմանված «Պեպտե» բեմադրվում է 1920 թվականին և զանում է կարևոր իրադարձություն ազգրեջանական թատերական կյանքում: Պեպտի կերպարը կրտսել են արտեսաներ Սիդդի Ռոստոյան և Միրզա Աղա Ալիևը: Ազգրեջանական բանաստեղծ Արտա Սիխարը թարգմանել է Ալ. Մատուրյանի և Լուի. Քամանյանի մի քանի գործեր, իսկ 1916 թվականին Ն. Բարաթաշվիլու «Մերանիք» բանաստեղծությունը:

Վերևում նշված Սաֆրազյան ամուսինները ազգրեջանական թատրոնում հանդես են եկել զեռես 90-ական թվականներին: Հռոտկայես Այմա Սաֆրազյանը արդյունավետ օգնու-

1 Տե՛ս «Սովետական զբաղմունք», 1960, N 4:

թյուն է ցույց տվել ազդրեջանական թատրոնին: Հայտնի են նաև հայ և ադրբեջանական թատերական գործիչների՝ Հովհ. Արևիչյանի, Գրիգոր Ավետյանի, Ռ. Ալիևալի, Միզգի Ռուխուլյայի միջև եղած սերտ բարեկամությունը: Կրանք հաճախակի հանդես են եկել հայ և ազրբեջանական ներկայացումներում:

Հայ մեծատաղանդ դերասան Արևիչյանը տիրուպետելով ազրբեջաներեն լեզվին, ակտիվ մասնակցություն է ունեցել թատերասերների կողմից կազմակերպված ազրբեջանական ներկայացումներին: Նա մեծանալով ազրբեջանցիների հետ շատ մտախի հարեանությունը մեղ, լավ ծանոթ է եղել նրանց յիստուկացին, սովորություններին, սիրել է այդ ժողովրդին և փոխադարձաբար սիրվել է նրա կողմից: Արևիչյանը իր գործունեությամբ ամեն կերպ աշխատել է ամրապնդել երկու ժողովուրդների բարեկամությունը, նրանց կուլտուրական հարապիրտ: Արևիչյանը Շուշի քաղաքի ազրբեջանական թատերասերների դրամատիկ խմբում բեմադրել է Շեքսպիրի «Օթելլոն»: Նա տարբեր ժամանակներում ազրբեջանական թատրոնում բեմադրել է Միրզա-Չոբանի Ախունդովի պիեսները: Հայ մեծատաղանդ դերասանը մոտ է եղել ազրբեջանցի տաղանդավոր դերասան Հուսեյն Արարիխանու հետ: Վերջինիս հրապարակ Արևիչյանը մի քանի ներկայացումներ է տվել ազրբեջանական «Նիջամթ» կուլտուր-լուսավորական բեկերության օրամատիկ խմբում: Հայ ակնավոր դերասանի ղեկավարությամբ խաղացել են «Գարբին Գյալվ», «Կավկաս շիշկլերի», «Փեհ-լեանի գիման», և որիչ պիեսներ: Նա հանդես է եկել նաև ազրբեջանական ակադեմիկ թատրոնի ներկայացումներում՝ «Նամուս», «Մեխր» և այլն:

Գրիգոր Ավետյանը ևս սերտորեն կապված է եղել ազրբեջանական թատրոնի և նրա գործիչների հետ: Ինչպես Արևիչյանը, Գ. Ավետյանն էլ հանդես է եկել ազրբեջանական բեմերում: Իրենց հերթին Միրզա Աղա Ալիևը, Ռզա Քահմասիրը և ուրիշներ խաղացել են հայկական թատրոնում: Հայտնի ազրբեջանցի ողբերգու Հուսեյն Արարիխանին մշտապես հաճախել է Գրիգոր Ավետյանի կազմակերպած ներկայացումներին: Ավետյանը Արարիխանու մասին գրել է. «Արարիխանու ևս

տեսա բեմում, 1903 թ., նրա առաջին ելույթի օրը, երբ նա, շատ երիտասարդ դերասան, մտավ ազրբեջանական խումբը... այդ ներկայացմանը Արարիխանին իր զերկատարումով զրավեց հասարակության ուշադրությունը: Նա արդեն պատրաստի զերասան էր, անելպերամենտով, ապագազավոր, զարգացած, լավ ձայնով, հռչակապ զրկցիալով ու շնորհավի արտաբեմով...»¹: Արարիխանին սերտ կապերի մեջ է եղել հայ արտիստների, այդ թվում նաև հայկական թատերական ամսագիր «Հուշարարի» խմբագիր Արամ Վրույրի հետ, որն իր ամսագրում հոդվածներ է գրել Արարիխանու մասին: Իսկ Արարիխանին, ելնելով իր և հայ դերասանների բարեկամությունից, Ա. Վրույրի 25-ամյա հորեղանական հանդեսին իր ձևով մեջ ասել է. «...Բնոր արտիստների դարձնում է կրթայրներ, հույսով եմ, որ բնոր կցենսանի մեր ժողովուրդների կրթարությունը»: Ավինի քան 50 տարի բարեկամություն են արել նաև ազրբեջանական հայտնի արտիստ Միզգա Աղա Ալիևը և Շիրվանզադին ու Արևիչյանը: Ալիևը հանդես է եկել «Պեպու» և «Նամուս» պիեսներում:

Եղել են շատ զնայքեր, երբ հայ և ազրբեջանցի դերասանները համատեղ ներկայացումներ են կազմակերպել Հովհաննես Արևիչյանը ազրբեջանական թատրոնում բեմադրել է «Օթելլոն»՝ արտիստուհիներ Ազիլիյի և Զարեֆյանի ակտիվ մասնակցությամբ: Հետագա տորիներին Օթելլոյի զերը կատարել է Արարիխանին: Հայ արտիստուհի Մելիթ-Շահնազարու հետ մեկտեղ Շուշիում հայ և ազրբեջանցի թատերասերները կազմակերպել են նազաֆրկ Վեհերի «Անձերից հեղեղ» պիեսի բեմադրությունը, նուխում 1910 թվականին որտ, ազրբեջանցի և հայ թատերասանները ազրբեջաներեն լեզվով բեմադրել են «Հայրենիք» պատմական դրաման: 1910—1911 թվականներին Գրիգոր Ավետյանը իրեն ազրբեջանական թատրոնի ռեժիսոր հրավիրվում է Քրիլիսի, որտեղ նա բեմադրում է Շամսադին Սամիի «Գարբին Գյալվ» պիեսը: Հայ հանդիսականները միշտ էլ մեծ հետաքրքրություն են

¹ Ավետյանի զրգանություն, 1960, № 4:

ցուցարներն Ուլ. Հաչիրեկովի օպերետներն ու օպերետների նկատմամբ: 1916 թվականին Բաքվի Փաղերի Քառասունամ բնագործի է Սերժին մայ-ալանը, որտեղ հանդես է եկել Արուս Ոսկանյանը: Հետագայում հայերի կողմից Սերժին մայ-ալանը բնագործի է Քիֆիլտում և աղա նրանում, իսկ Արմեն Արմենյանի բնագործ մյու օպերետը ցուցադրվել է Ատարխանում, Ֆարիջեում, Թոստոլում, Եկատերինոգայում և այլ քաղաքներում:

1917 թվականի ապրիլի 29-ին Նախիջևանի քաղաքային ակումբում հայ զինասանները բնագործ են Ուլ. Հաչիրեկովի Սերժին մայ-ալանը: Հանդես են եկել Խ. Մասումյանը՝ Վ. Տեր-Մկրտչյանը, Ս. Խալաթյանը, Ս. Արզարյանը, Խ. Միսակյանը, Մ. Գասպարեկյանը, Ա. Աղամյանը, Վ. Աղամյանը: Բնագործում ակումբում է եղել Մ. Մելիքանյանը:

Գրկից ժողովրդի Քատերական կուլտուրային ծանոթանալու տեսակետից ուշագրավ է նաև Քիֆիլտի աղբրեշունական Քատերնի մի խումբ զինասանների՝ Մ. Փաղերի, Մ. Ալիևայի, Թ. Քախրատի, Քիրմանշահի կողմից տրված Մեծգեշվիլու «Ավազակ Քերիմ» պիեսի բնագործությունը:

Աղբրեշունական Քատերական կյանքի կարևոր իրադարձություններից են հանդիսացել նաև Լ. Մեսիշվիլու վրացական Քատերնի գաստրոլները՝ 90-ական թվականներին, և Շավլա Գաղթանու մասնակցությամբ վրաց Քատերնի 1914 թվականի գաստրոլները Բաքվում:

Կ Ե Ր Պ Ա Ր Վ Ե Ս Տ

Հայ-վրացական կուլտուրական փոխադարձ կապերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս XVIII դարի սկզբներին՝ 1710-ական թվականներին, հայ ակադեմիոյ նկարիչ ու բանաստեղծ Նաղաշ Հովնաթանյանը՝ Հովնաթանյան նկարչական ընտանիքի հայրը, տեղափոխվել է Քիֆիլտ և այնտեղ նկարել է մի շարք վրաց գործիչների, ինչպես նաև վրաց գեղեցկուհիների (գրողայնիքի): Նաղաշ Հով-

նաթանը Քիֆիլտում կազմակերպել է իր արվեստանոց-դրամատրից (քաղաքական), որ նկարադրվում են սովորել ոչ միայն հայերը, նրա որդիները, այլև վրացի երիտասարդները: Նրա Քոտի-Քոտը՝ Հակոբ Հովնաթանյանը, նույնպես կազմակերպել է իր արվեստանոցը և նկարել է վրացի մարդկանց դիմանկարները: Նա բաբերաբ ազդեցություն է գործել վրաց կերպարվեստի զարգացման վրա, ստեղծել է իր դրամոցը, որի ներկայացուցիչները հայտնի են «Անհայտ վրացի նկարիչներ» ընդհանուր անունով:

Հետագայում, սկսած XIX դարի 70-ական թվականներից, հայ և վրաց նկարիչների միջև ստեղծվում են ավելի սերտ կապեր, նրանք միասին կազմակերպում են «Արվեստները խրախուսող կոլեկտիվությունը», որի ցուցահանդեսների մասին հոդվածներ է գրում նաև Ալ. Շիրվանդադեհ: Այդ հոդվածներում նա հավաստագրական անդրադարձել է ինչպես Բաշինջաղյանի, Շամշինյանի, Հմ. Հակոբյանի, այնպես էլ Գրգոր Գաբաշվիլու և Նիկոլաձեի ստեղծագործություններին:

XIX դարի վերջերից էլ ավելին են ուժեղացել հայ և վրաց կերպարվեստի ակադեմիոյ ներկայացուցիչների անձնական ու ստեղծագործական բարեկամական կապերը: Այսպես, օրինակ, Հովնաթանյանների հետ միասին ապրել ու ստեղծագործել են վրաց նկարիչներ Չուլուկաշվիլին և Անդրոնիկաշվիլին: Այնուհետև, Ստեփանոս Ներսիսյանը և Մալասրաձե, Բերիձե, Գվելիխիանին և Շամշինյանը տարբեր ժամանակներ միասին առանկ են Պետրոզբաղի Գեղարվեստի ակադեմիայում: Համագործակցություն է գոյություն ունեցել նաև Հ. Շամշյանի, Գ. Բաշինջաղյանի և Ա. Բերիձեի ու Գվելիխիանի միջև:

Ինչպես զբաղակառքայան, այնպես էլ հայ կերպարվեստի զարգացման զինավոր օջախներից է եղել Արաստանի մայրաքաղաքը: Քիֆիլտում են ապրել ու ստեղծագործել նախասովետական շրջանի շատ հայ նկարիչներ, որոնց թվում Գ. Բաշինջաղյանը, Հ. Շամշյանը, Հմ. Հակոբյանը, Ծ. Քաղաթյանը, Գ. Շարբաբյանը, Վ. Խաչարիկյանը և ուրիշներ, որոնք իրենց ստեղծագործություններում արտացոլել են նաև Արաստանի բնությունը, ժողովրդի կյանքը, կենցաղը և կուլտուրան: Օրի-

նակ, Գ. Բաշինջաղյանը նկարել է Վրաստանի բնության քաղ-
ժաթիվ պատկերներ, այդ թվում՝ «Ճանապարհը Ախուրցա-
լից Աբասթուանի» (1893), «Գիշերն Օրթմաշալայում» (1899),
«Ալազանի հովիտը» (1902, 1907), «Փոռ գետը Բորժոմի մոտ»
(1908), «Գիշերը Քիֆլիսի շրջակայքում» (1909), «Քիֆլիսը
դիշնրով» (1912), «Մանգլիսի շրջակայքը» (1919) և ուրիշ-
ներս Ուշագրավ է նշել նաև, որ 1888 թվականի մարտի 22-ին,
Վաստ Արաշիձեի բնեկիցային երկնային, Բաշինջաղյանը
կենդանի պատկեր է ավել Վրաստանի կյանքից:

Բաշինջաղյանը մի շարք նկարներ է ստեղծել նաև վրաց
դեկորատիվ-հասկան հրահանույթյան թեմաներով: Հայտնի են,
օրինակ, Ռուսթավելու «Վազրենավորը» պոեմի թեմաներով
ստեղծված Բաշինջաղյանի մի քանի պատկերները, 1889 թվա-
կանին նա նկարել է «Վազրենավորը» պոեմի այն հասցվածք,
որտեղ սևամորթները նեստոս Գարեջանին առնում են վաճա-
ստան Ռամանի կնոջ՝ Ֆոթիմային պատկանող զգյակը¹:
Հետագայում, 1919 թվականին Բաշինջաղյանը նկարում է
«Վազրենավոր» երկու դրվագը, որոնցից մեկը պատկերում է
Ալթինազիլի և Քինոսթինայի երտղը: Այդ պատկերները բարձր
դասհատականի են արժանացել վրաց կուլտուրայի զործինե-
րի կողմից: Բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին խրախուսելով հայ
նկարչի բարձր արվեստը, վրացական «Մախալու Մարմն»
(«Ժողովրդական զործ») թերթում 1919 թվականին գրել է-
«Շարգեյի նկարիչը խոստանում է ասորհասարար նկարի և
այլ միջազնայի «Վազրենավորից», որը երկար ժամանակ է
ուսումնասիրում և սրտում կրում է»:

Հարսիլյուն Շամշյանի Վրաստանի բնությունը արտաշուղղ
նկարներից հայտնի է Կոչորի տեսարանը պատկերող փոքրիկ
ակվարելային նկարը (1889), նա ստեղծել է նաև «Իմերեթ»
փայտապրտիլյունը (բախտգրաֆիա) և «Մաղրաբափորը»
(«Հինխար») մեծակապ թղթմաֆիգուր, սյուժետային նկա-
րը, որտեղ պատկերված է այդ անունը կրող ժողովրդական

տանի տեսարաններից մեկը: Այդ նույն թեմայով նկար է
ստեղծել նաև Գիգո Շարբաբյանը: Շամշինյանը Քիֆլիսում
նկարչական դպրոց է ստեղծել, որտեղ սովորել են նաև վրացի
պատանիները: Նշենք նաև, որ Քիֆլիսի Գեղարվեստական
ակադեմիայի պրոֆեսոր Նիկոլե Մաղուսոյանի մոտ են սովորել
Քեթևան Սաղուաշվիլին, Քամարա Արակելիան և ուրիշներ:

Նախասովետական շրջանում հայ և վրացի նկարիչները,
անդրովկասյան մյուս նկարիչների հետ միասին, բողմիցս
հանդես են եկել համասեղ կազմակերպած ցուցանահանու-
թյուն: 1888 թվականից սկսած Քիֆլիսում պարբերաբար կազ-
մակերպվող ցուցահանահանություն այնպիսիներ ստեղծ են հայ
և վրաց նկարիչների ստեղծագործությունները՝ կողք-կողքի
կախված, որը զբաղյուրեն նպատակ է երկու ժողովուրդների
կերպարվեստի փոխադարձ հանաչմանը և զնահատմանը:

1917 և 1919 թվականներին Քիֆլիսում կազմակերպված
«Հայ արվեստագետների միություն» ցուցահանահանու մաս-
նակցել են նաև վրաց նկարիչները, այդ թվում Վ. Գուղաշ-
վիլին, Մ. Քոթիձե և ուրիշներ: Նույն ժամանակաշրջանում
կազմակերպված վրաց նկարիչների ցուցահանահանություն մաս-
նակցել են հայ նկարիչները, հատկապես՝ Գ. Բաշինջաղյանը:

Գ. Բաշինջաղյանը շատ օգտակար աշխատանք է կատարել
նաև երկու ժողովուրդների գրահանույթյունը փոխադարձաբար
մասսայականացնելու զործում: Նա թարգմանել է վրաց
գրողների երկերը՝ հայերենի և հայ գրողների մի քանի աշխա-
տությունները՝ վրացերենի:

Հայտնի է, որ նա թարգմանել և հրատարակել է վրաց բա-
նաստեղծ Ակակի Մերեթիլու մի քանի ստեղծագործություննե-
րը, որոնք ապագային են «Մշակ» թերթում և «Տարազ» ամ-
սարում: Նա թարգմանել և հրատարակել է նաև հայերի շքը-
ջումում լայն ժողովրդականություն վայելող «Լուսատիտիկը»
և «Մշակի տեղյանքը» երգերը:

Գ. Բաշինջաղյանը գրել է նաև մի շարք պատմվածքներ և
ակնարկներ՝ վրացիների կյանքից, ինչպես, օրինակ, «Վրացի
Իվանեն», «Իշխան Վաչնաձեի ազարակում» և ուրիշներ: Իր
պատմվածքներից մի քանիսը նա հետո թարգմանել է վրացի-

¹ Մանրամատույթյունները տե՛ս Մ. Սարգսյան, Գեորգ Բաշինջաղյան,
1957, էջ 120—130:

րենի և հրատարակելու լազմ տիրապետելով վրացիներին, նա վրացիներն լեզվով ևս զրկել է պատմվածքներ, որոնք տպագրվել են վրացական թերթերում: Այդ թարգմանությունները, ինչպես նաև Բաշինջադյանի գրական ստեղծագործությունները զգալիորեն նպաստել են հայ և վրաց գրականությունների փոխադարձ ճանաչմանը և կտրեոթ նշանակություն են ունեցել երկու եղբայրական ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Ն. Մ. Միկելաշվիլիայան իր «XIX դարի նկարչիներ—Միքղա-Վաղվաժմ էրիվանի և Միք Մոխառն նավվար» ուշագրավ աշխատության մեջ՝ նկարագրում է ազդեցնական կուլտուրայի զարգացման պրոցեսը Անդրկովկասը Ռուսաստանին միանալուց հետո: Հեղինակը առաջին և XIX դարի ազդեցնական նկարչիների՝ ուստա Ղամբարի (Ղարաբաղից) և Վիկտորի (Մուղանից) մասին քնդհանուր տեղեկություններ, այնուհետև նույն դարի երկու ներկայացուցիչների կյանքն ու գործունեությունը, որոնց ստեղծագործության մեջ սկիզբ են առնում ուստաիտական էլեմենտներ (Միրզա Վաղվաժմ էրիվանի և Միք Մոխառն նավվար): էրիվանի նպրիկ և աշխատել է անցյալ դարի կեսերին: Մեղիկ է 1825 թվականին, Երևանում և մահացել է 1875 թվականին: Սուվորև է Քիֆիսի դիմադրալուսում և հենց այդ տարիներից էլ շրվիկ է ուստական կուլտուրայի հետ: նա տիրապետել է ուստներն, ֆրանսերեն և պարսկերեն լեզուներին: 50-ական թվականների սկզբին նա արգեն հայտնի է դարձել որպես դեկորատիվ-կերպարական արվեստի վարպետ:

Նա սեստավրացիայի է ենթարկել Երևանի Սարգարի խանի պալատը, ստեղծել է շատ գործեր, գրավուրներ և այլն: Իր կյանքի վերջին 15 տարիներին նա ավելի արդյունավետ ստեղծագործել է պորտրետներ, արևելյան մինիատյուրներ ստեղծման քննարկումում: Իսկ նավվարին, որ ծնվել է 1829 թվականին Շուշում, մահացել է 1918 թվականին, կեր-

պարվեստի մեջ նշանակալից է եղել ծրագրերի և գրքերի նկատմամբ:

900-ական թվականների սկզբներին ազդեցնական նկարի Աղիբ Զադեն աշխատակցելով «Մոսկա Նասրեդդին» աստի-րական ժուռնալին, ստեղծում է շատ սուր ծագրանկարներ: Այդ ժուռնալին աշխատակցել են նաև վրաց ու հայ նկարիչներ:

Մյուս նկարչի՝ Բիխրուզ կենդրի (1892—1922) ստեղծագործությունը նույնպես զարդացել է ուսական առաջավոր կերպարվեստի ազդեցությունով: նա դաստիարակվել է Քիֆիսի կերպարվեստի ուսումնարանում:

Հայ, վրաց և ազդեցնական ժողովուրդների ճարտարապետության ստպարեկում են ակնուու են քնդհանրության և փոխազդեցության բազմաթիվ փաստեր: Հանրահայտ է, որ աշխարհագրական, սոցիալ-տնտեսական և կենցաղային պայմանների նույնությունը դեռ շատ հին ժամանակներից ստաշացել են ժողովրդական բնակարանի մի քնդհանուր տիպ, որը լայն տարածում է ստացել ողջ Անդրկովկասում — դա փայտաղմբթ ծածկով երդիվավոր բնակարանի տիպն է: Հայաստանում այն կոչվում էր զլխտատն, Վրաստանում՝ դարբաղի, իսկ Ազդեցանում՝ դարագամ: Բնակարանի այդ տիպը անցնելով զարգացման ու կատարելագործման երկարատև արդցես, ուշ ժամանակաշրջանին վերաբերող իր բազմաթիվ նմուշներով հասել է մինչև մեր օրերը:

Դեռ վաղ ֆեոդալիզմի շրջանում, երբ Անդրկովկասում տարածվեց քրիստոնեությունը, միայնալ շանբերով մշակվեցին եկեղեցական շենքերի մի քանի քնդհանուր տիպեր: IV—V դարերում կատարված այսպես կոչված բրազիլիկատիպը եկեղեցական շենքերը հայտնի են ն՝ Հայաստանում (Երերույզ, Դվին, Փասաղ և այլն), ն՝ Վրաստանում (Բուլխի, Ուրնխի), և Ազդեցանում (Կում): ճարտարապետության առաջարկում հայ-վրացական ստեղծագործական համադրծակցության փայլուն օրինակ է հանդիսանում կենտրոնական խաչաձև սաճարների տիպի ստեղծումը VI—VII դարերի ընթացում, որի լավագույն նմուշներից են Հայաստանում Ավանի, Հոփ-

1 «Искусство Азербайджана», IV изд., АН Аз. ССР, 1954.

ւիմէի, Միստոյանի և այլ տաճարները, իսկ Վրաստանում՝ Ջվարիի և Աթնների տաճարները (վերջին կառուցել է Շայ ճարտարապետ Քոզոր): Ճարտարապետութեան տեսարանները վաղուց է ինչ առաջուցիկ են, որ Ջվարիից տաճարի տիպը եուրոպեան մշակիչի և տարածում է դտել Անդրիովկասում, ապով իր առարանակները Ազրբեջանում (Լյարիթ) և Վրաստանում (Բանա):

Արարական երկարատե ծանր լծի թոթափումից հետո, որը հետևանք էր Անդրիովկասի ժողովուրդների համատեղ ազատագրական պայքարի և որը պատկիցը անկախութեան վերականգնմամբ, X—XIII դարերում սկսվում է ֆեոդալական ճարտարապետական կուլտուրայի զարգացման մի նոր փուլ: Այս շրջանը ևս ապին է ընդհանրութեան ուղադրով օրինակներ: Այդ ընդհանրութեան առանձնատեսն բեղմնավոր արտահայտութուն ունեցավ XII դարի 2-րդ կեսում և XIII դարի սկզբներին, երբ Շայ-Վրացական ռազմա-քաղաքական համագործակցութեան հետևանքով ստեղծվեց հզոր ու անկախ, միացյալ ֆեոդալական պետութուն (վրաց թագուհի Քամարի ժամանակ), որն իր հերթին մեծապես խթանեց երկու ժողովուրդների կուլտուրայի, նույն թվում և ճարտարապետութեան մերձեցմանը: Հռոթնալանքում, Գեղարզավանքում և XIII դարի մի շարք այլ հուշարձաններում կարելի է նկատել որոշ զեկորատիվ մտախիներ, որոնք բնորոշ են նաև վրացական ճարտարվեստի համար:

Ֆեոդալիզմի ժաղկման շրջանում Անդրիովկասի ժողովուրդների կուլտուրական մերձեցմանը մեծ չափով նպաստում էին բարգավաճող քաղաքները, որոնք բազմազգ բնակչութեան ունեին ու հանդիսանում էին սրհնոտների և առևտրի զարգացման օջախներ: Նրանցում տեղի էր ունենում աշխույժ սարքնափոխանակութուն և առևտուր ոչ միայն Շայ, վրացի և ադրբեջանցի, այլև ուրիշ երկրներից եկած վաճառականների միջև: Այդ հանդիսմանն իր դրոշմն էր դրել Անդրիովկասի քաղաքների սոցիալ-տնտեսական կյանքի, քաղաքաշինութեան ու քաղաքային կոմունալ տնտեսութեան մակարդակի, քաղաքային աշխարհիկ շենքերի ճարտարապետութեան վրա,

և ժողովուրդներից որոշակի ընդհանրութեան գծերով: Նույն այդ հատկանիշները նկատելի են Անդրկովկասով անցնող միջնադարյան առևտրական ճանապարհներն սպասարկող կառուցվածքներին (կամուրջներ, քարվանսատներ, վաճառատներ և այլն):

Հայկական, վրացական ու ադրբեջանական ժողովուրդների ճարտարապետական կուլտուրայի խաչաձևման օրինակները կարելի է տեսնել միևնույն միջնադարը և հետագա զարգացման ամբողջ ընթացքում:

Պ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն Մ Ա Մ Ո Ւ

Տպագիր հրատարակությունները՝ ընդհանրապես և հատկապես առաջադիմական մամուլը խոշոր դեր է խաղացել անդրկովկասյան ժողովուրդների հզորացման, նրանց կուլտուրական կյանքի ամրապնդման գործում: Երեք ժողովուրդների կուլտուրայի մյուս բնագավառների հետ միասին ազդերի բերվելը մեծապես նպաստել է հայերի, վրացիների և ադրբեջանցիների ինչպես օտար, այնպես էլ ներքին բանակալներին զեմ մղված պայքարին: Առաջադիմական մամուլի լայնահորիզոն գործունեությունը ամբողջապես կազմված է եղել ժողովուրդների ազատագրութեան, նրանց հզորացման ու միասնական նպատակների կենսագործման հետ:

Հայ, վրաց և ադրբեջանական պարբերական մամուլի վերաբերյալ կան հրատարակված շատ գործեր: Այդ աշխատությունների բազմաթիվությունը ցույց է տալիս, որ ինչպես վրաց և ադրբեջանական ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովրդի առաջադեմ մասնուղեր տարրեր ժամանակներում առաջ են քաշել ազատ մամուլ ստեղծելու գաղափարը, մասնու, որը պետք է մեծապես օգնել այդ ժողովուրդների քաղաքական զարթոնքին, իրենց ազատագրութեան համար մղված միասնական պայքարին: Եվ իսկապես, այդ նպատակով ստեղծված մամուլը տարբեր շրջաններում խոշոր դեր է խաղացել ժողովուրդներին թմբած վիճակից հանելու և իրենց

վնձակն ըմբռնելու գործում: Առաջադիմական ուժերի համագործակցությունը մամուլի քննազննարանում արտահայտվել է նրանով, որ բանակայինների դեմ մղվող պայքարի հարցերը համատարապես արժարժվել են նրեք ժողովուրդների առաջադիմական պարբերականներում:

Այդ հարցում Անդրկովկասի առաջադեմ գործիչների համար օրինակ է ծառայել ասուական, մասնավորապես Գերցենի գլխավորած ասուական ազգայն մամուլը, որը մերկացրել է ցարական բյուրոկրատիայի, ճորտարարության ազնվականներին, սոսիալական կամադատարներին: Վ. Ի. Անինը «Գերցենի հիշատակին» իր հոդվածում նշել է. «Գերցենը արտասահմանում ստեղծեց ասուական ազգայն մամուլը—առ նրա մեծ ծառայությունն է: «Полярная звезда»-ն բարձրացրեց դեկարիստների տրագիկան, «Колокол»-ը (1857—1867) սարի պես կանգնեց գյուղացիների ազատագրման համար: Ստրիական լուսիկներ խախտվեց»¹:

Անդրկովկասի ժողովուրդների առաջադիմական գործիչները, ուսանողները², որոնք Պետերբուրգում և մյուս վայրերում շփվել էին ուսու առաջավոր մտածողների՝ Զերինիսկու և ուրիշների հետ, հետագայում մեծ դեր են խաղացել վրացիների, հայերի և ադրբեջանցիների առաջադիմական մամուլի ստեղծման գործում: Հայ իրականության մեջ ասուական ազգայն մամուլի հետևորդներ Մ. Նալբանդյանի և Սո. Նազարյանի հիմնած «Հյուսիսափայլը» ազատամիտ մտքեր է բարոզել ժողովրդի մեջ, պրոպագանդել է բուրժուազգրիկ համերաշխություն՝ ընդհանուր թշնամու դեմ պայքարելու համար: 1856 թվականից սկսած հայ ժողովրդի արևմտյան հատվածի առաջադիմական ուժերը ևս Հարուսթյան Ավանյանի խմբադրությանը լույս են բնծայում «Մեղուն», որը արդեն ԵՂ-ական թվականներից ենթարկվում է Նալբանդյանի և նրա հետևորդների գա-

ղափարական դիրքավորմանը և ձևակերպվում իրեն արեմբրասայերի առաջադիմական հոսանքի օրգան «Մեղուն» «Հյուսիսափայլի» նման բարոզել է ժողովուրդների կուսմիանություն ստեղծելու գաղափարը:

Տոգտատվում նշված «Հայեր և վրացիք» հոդվածի հեղինակը նշելով, որ Անդրկովկասի երեք ժողովուրդները միատեսակ շահեր ունեն և պետք է որ հասկանան այդ հանգամանքը, այնուհետև շարունակում է. «...Մենք ուրախանում ենք, երբ տեղեկություն ենք ստանում մեր համայնարանական քաղաքացիներից, որ մեր կողմիցայն ուսանողները, հայերը և վրացիները, սկսել են միմյանց մոտենալ, միմյանց փոխադարձաբար օգնել, միմյանց հասկանալ, նույնիսկ միմյանց կյանքը, պատմությունն ու զրամունտիկներ ուսումնասիրել, սկսում են, որպես կողմացիներ, միևնույն երկրի գավառներ, իրար բարոյական, մտավոր և նյութական համերաշխություն կապի հաստատել»:

Վրացական իրականության մեջ առաջադիմական պարբերականներ են եղել «Մաքարթվելուս Մոսմբին» («Վրաստանի լրագրի»), «Գրոբան» («Ժամանակներ»), «Եվրիան» և այլն:

Անցյալ դարի ադրբեջանական կուլտուրայի առաջավոր գործիչներից մեկի՝ Գ. Զարդարիի նախաձեռնությամբ 1875 թվականին հիմնվում է առաին ադրբեջանական դեմոկրատական «Էբիդի» («Հողագործ») թերթը, որն իր էշերում գրում է դեմություն և լուսավորության զարգացման անհրաժեշտություն մասին, հանդես է գալիս միջնագրայն հետամնացության, կրոնական նախապաշարմունքների դեմ, քաղաքում է հարևան ժողովուրդների բարեկամության և եղբայրության գաղափարը:

Վրացական և ադրբեջանական առաջադիմական մամուլի էշերում ապագրվում են հողվածներ, որոնց մեջ լուսաբանվում է հայ ժողովրդի մղած պայքարը թուրք գավթիչների և քրոնականների դեմ: Հայ, վրաց և ադրբեջանական կուլտուրայի գործիչները միմյանց թերթերում հողվածներ են ապագրում կուլտուրայի, գրականության հարցերի մասին:

Հայ պարբերականներում՝ «Մորե», «Տարազ» և մյուս թեր-

1 Վ. Ի. Անին, Երկեր, հատ. 18, Հայսնահրատ, 1950, էջ 16—17:

2 Ի զեպ «Մշակ» թերթի 1889 թվականի № 32-ում «Հայեր և վրացիք» հոդվածում ուղաղրվող տեղեկություն է արվում հայ և վրաց ուսանողների փոխհարաբերության մասին:

Քերում թարգմանաբար տպագրվում են վրաց գրողների՝ Ի. Ճավճավաձեի և ուրիշների սակզմագործությունները: Մասնավորապես տպագրվում են Ի. Ճավճավաձեի «Էլնգրիա», «Բարուն» բանաստեղծությունները, Ալ. Ղազրեգիի «Էլիսո», «Բերդիա», «Էլզուլա», «Չորի նահապետ Գոչան» սակզմագործությունները, ինչպես նաև էրնատի Նիեռշվիլու, Գեորգի Սերեֆիլի մի շարք գործերը: Այդ և ուրիշ սակզմագործությունների մասին գրված հայ բանասերների գրախոսությունները ցույց են տալիս, որ վրաց առաջադուր մտածողների երկերը չեբմբոսին են ընդունվել հայ ընթերցանի հասարակության կողմից:

Պարբերականներում առանձնապես կարևոր տեղ են զբաղվել վրաց և հայ ժողովուրդների համերաշխությանը և համագործակցությանը նվիրված հարցերը: Այս առումով ուշագրավ է «Մշակում» տպագրված «Միմյանց ձանաչելու անհրաժեշտության մասին» վերնագրով հոդվածը, որտեղ հեղինակը ներշնչով, որ Հայաստանը և Արաստանը ասարձաթխամբ շատ մաս են միմյանց և հայ ժողովուրդին էլ բախտակից է վրացիներին՝ թե՛ պատմական և թե՛ քաղաքական կանցով, միաժամանակ ընդգծում է, որ այնուհանդերձ այդ ժողովուրդները անտեղյակ են միմյանց կյանքին: Հողվածագիրը անհրաժեշտ է համարում, որ այսուհետև հայ մամուլը ընթերցող հասարակությանը տեղյակ պահել վրաց կյանքում կատարվող դեպքերին: Հեղինակը նշում է նաև, որ վրացիները նույնպես քիչ են տեղյակ մեր կյանքին: Վերջում հողվածագիրը խոստանում է «Մշակ» թերթում սխտանատիկաբար անդրադառնալ երկու ժողովուրդների կյանքի պարզաբանմանը: Վերջացնելով իր հողվածը, հեղինակը Լորդակցնում է, որ մեզ անհրաժեշտ է ամեն կերպ հետաքրքրվել հարևան ժողովուրդների կյանքով, ծանոթանալ իրար և միմիայն զրա մեջ տեսնել մեր երկրի ժողովրդի ապագա բարեկեցությունը¹:

«Կական հետաքրքրական չէ նույնպես «Մշակում» տպագրված Ատրպետի «Անդամանան գրացիները» հոդվածը, որտեղ

հեղինակը կյանքից առնված սեռյ փաստերի հիման վրա, ըստ էության, ապացուցում է հայերի և վրացիների եղբայրական կապերը: Ատրպետը նշելով, որ հազարավոր տարիներ կողք-կողքի են ապրել հայերն ու վրացիները, այնուհետև շարունակում է. «... հազարավոր անգամ նրանք իրար արտահայտակ են իրենց անդամանան հարցնությունն ու բարեկամությունը, նրանք շատ փոխադարձ զոհողություններ են կատարել իրենց թշնամիների և հալածողների դեմ»: 1914 թվականին Փրիկտրի հայ գյուղացիների վրացիները պաշտպանել են օսմանցիների և լազերի հարձակումներից: Այն տեղի է ունեցել այսպես Իմերխեթի 18 գյուղերից մարզիկ են համարվել և հայերին պաշտպանել են անակնկալ հարձակումներից: «Մանի-բանի հարձակումների առաջն առան և լթողին,— շարունակում է Ատրպետը,— որ չեթանկը կողոպտեն կամ մեկ հայի քիթն արյունառեն»:

Երբ այս դիմազրույթունների ժամանակ չեթանկից եկան պատգամավորներ և Փրիկտր գյուղը կողոպտել պահանջեցին—Իմերխեթի ծերունիները նրանց պատասխանեցին.

— Մեր դիակների, մեր զավակների և կիների ընկած զիակների վրայից միայն կարող եք անցնել և Փրիկտր մըտանել²:

Իվ ոչ միայն այդ, Արաց ժողովրդի մշակութային կյանքի շատ բնագավառների՝ Արաստանի պատմական անցյալի, վրաց թատրոնի հիսնամյակի, վրաց բեմի դերասան-դերասանուհիների, գրականություն, վրաց գրական լեզվի, պարբերական մամուլի և շատ ուրիշ հարցերի մասին բազմաթիվ հողվածներ և տեղեկություններ են հաղորդվել հայկական պարբերականների շրջում:

Ուշագրավ է Կրճանիսի ճակատամարտի 100-ամյակի առթիվ «Մուրճում» տպագրված «Գովկասը հարուր տարի առաջ» հողվածը, որտեղ հողվածի հեղինակը խոսելով 1795 թվականի Կրճանիսի զաշտում վրացիների կրճ պարտությունից ան-

¹ Տե՛ս «Մշակ», 1908, № 60:

² «Մշակ», 1915, № 101:

սին, անդրադառնում է նաև XIII—XVI դարերի Վրաստանի պատմությանը, երբ Վրաստանը ստեղծված է եղել շարունակ պաշտպանվել մի կողմից պարսիկների և տաճիկների և մյուս կողմից՝ լեզգիների անզազար հարձակումներից, որոնք խանգարել են Վրաստանի խաղաղ զարգացմանը: Հողովածի հեղինակը կանգ առնելով մի շարք պատմական և կուլտուրական նրբալիքների վրա, այնուհետև անցնում է Աղա-Մամադ խանի կողմից Քիֆլիսի զբաղման պատմության մանրամասնությունների նկարագրմանը, Հեղինակը վրդովմունքով է խոսում Աղա-Մամադի հրոսակների գազանությունների մասին: «...Բայց այդ կոլոպուտներով և կործանումներով չվերջացան Քիֆլիսի դժբախտությունները,— շարունակում է հողվածագիրը,— Հասավ նրա համար ավելի սարսափելի օրը—սեպտեմբերի 14-ը: Աշառի թև, թև ով լուր էր տարածել, թե Հեթանոսները գրգռողները Պարսկաստանի իշխանությունը շնանալու համար՝ հոգևորականներն էին Գազանարար շահը հրամայեց, ի խրատ հետնորդներին, մահու պատիժ առ բոլոր բաճանաներին, թե վրացաց և թե հայացու: Եվ այնուհետև: «Ոչ միայն սրբություններ պղծելով պարսիկները ուղեցին աճ ու զոդի մեջ պահել ժողովուրդը. քաղաքի բաղարներում առևտուր էր լինում շահել կանանց և աղջիկների, որոնց պարսիկները խնայել էին նոցա գեղեցկություն համար: Վաճառողները պարսիկ զինվորներ էին, որոնց պատկանում էր որսը, բառ օրերին: Բայց որովհետև գեյրի բռնված էին նաև ծոցի երեխաներ, առևտղները չէին վերցնում նոցա, որոնք երեխաներ ունեին: Այդ տեսնելով՝ վաճառականները, կամենալով իրենց ազրանքը ավելի լավ գնով ծախել, երեխաներին կոսից կըտրում էին և այդ միջոցին սրտխուսում էին, թե այդ նոքա առևտուր էին իրենց թրերի սրությունը փորձելու համար... Եվ ոչ միայն շահի զորքում վզող կիսավայրենի ցեղերն էին փայլում այդքան անմարդկային դադանություններում, այլև զոքապետները իրար գերազանցել էին ուղում ամենազղվելի անկարգություններով: Նորս մտնում էին տները, բռնաբարում էին կանանց և աղջիկներին և հետո նոցա պարզում էին զինվորներին կամ ուղարկում էին Սողանլուղի բանակ,

ուր նոցա ստեղծում էին ամբողջ դիշերներ անցկացնելի զղվելի օրդականների մեջ: Այդ պարամունքները մնացած փորքաթիվ ժողովրդեան հուսահատության մեջ էին դրոյում, և բիշ չէր պատահում, որ կանայք, իրենց պատիվը պաշտպանելու համար, զենքի էին դիմում... Բայց ամենաաբասափելի անզբույթությունը կատարվում էին քաղաքային պատի հյուսիսային կողմում, որի զարպատով փախչում էին քնակիչները: Այդտեղ պարսիկները օրի հարվածներ ստվա էին աշ և ձախ՝ սասնականքը սպանելով տեղե ու տղա»¹:

Պաղան հետաքրքրական չէ «Մշակ» թերթում 1912 թվականին տպագրված Գ. Բաշինջադյանի «Վրաց-հայ ազգի բանասեղծները» վերնագրով հողվածը, որտեղ նա տվել է Սայաթ-Նովայի և Կրան հետևող մյուս աշուղների բնութագրերը: Իր հերթին վրաց մամուլը սխալմատաբար տեղեկություններ է տպագրել հայ զորղների, զործիչների մասին, լուսարանել է հայ հասարակական մտքի զարգացման հետ կապված մի շարք հարցեր: Սրինակ, ինչպես արգին տավեց, «Եվերիա» թերթը բազմիցս անդադարձել է Բաֆլուս տեղծագործություններին, «Եվալի»-թերթում հողվածներ են տպագրվել հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, նրանց միասնական պայքարի հարցերի մասին:

Մ. Զավարյանը իր աշխատության մեջ նշում է. «Այդ տարիներին վրաց պարբերականներում հանդիպում են հայ խոշոր գրողների նկարներ և բնութագրումներ: Որպես օրինակ հիշենք «Թեատրի դա ցիովրներ» («Թատրոն և կյանք») շարքաթիվերը, որի շակի վրա 1916 թվականին տպագրված է Հովհ. Թումանյանի, Պերճ Պոռչյանի և Ղազարոս Աղայանի խմբանկարը: Նկարի սակ թումանյանի մասին գրված է. «Հայ հայկավոր բանաստեղծ, հայ զորղների ընկերության նախագահ»: Պոռչյանի մասին գրված է՝ «Հայ հայտնի վիպագիր», Ղ. Աղայանի մասին՝ «Մանկավարժ, մանկական զորղ, սողազրություն հիմնադիր»:

Ինչպես արդեն տավեց, նախասովետական հայ մամուլը

¹ «Մուր», 1895, № 9—10, էջ 1287—1289:

Հանձնի է անդրադարձել վրաց և ազրբեջանական գրականության և արվեստի նշանավոր գործիչների կյանքին ու զործունեությանը և ընդհանրապես հարևան ազգի հույատուրական կյանքում տեղի ունեցող ամեն մի նշանակալից իրադարձությունը, Բացի արդեն նշվածից, հիշենք մի քանի փաստեր կա Ալապին, «Աղբյուր» և «Տարազ» հանդեսների խմբագիր Տիգրան Կազարյանը հետևյալն էլ գրել Քիֆլիսում տեղի ունեցած Միրզա Ֆաթալի Ախունզովի ծննդյան 100-ամյակի տոնակատարության մասին. «Մեր երկրացի գրամատուրգ և թուրքական քառյուծի հիմնադիր Միրզա Ֆաթալի Ախունզովի ծննդյան հարյուրամյակը լրացավ անշույլ առիտ Անդրկովկասի թուրքերը, օգտվելով այս առիթից, ապացույցեցին, որ իրենք ևս չեն մոռնում երկրիս մյուս ազգերին պատկանող ժողովուրդներին ու անշույլ տարի զիկանությունից 5-ին (1911 թ.— Ա. Ե.) տանեցին այս հարյուրամյակը՝ իրենց մեջ զեռ չեղած շտրով», և այնուհետև. «եվ Աղբյուրն ու Տարազը խնդակից են Զեղ, հայրենակից թուրքեր, ողջունում են Զեր սխախտան, զհասցեզույթյան այս նշանակալից տոնը և մաղթում Զեր երկրակամարի վրա Միրզա Ֆաթալու նման պայծառ շատ առաջըր ու արեղենը: Իսկ Գ. Սունդուկյանը իր հեռագրում նշել է. «Ամբողջ հողով ուրախանում եմ Կովկասի թանկագին զավակ Միրզա Ֆաթալի Ախունզովի հիշատակը մեծարելու համար: Մրտանց ցանկանում եմ մտապահանական ժողովրդի գորգաշուտը և բարեկեցությունը»:

Հայ պարբերական մամուլում նշանակալից ելույթ է համարվել նաև այն, որ երբ ազրբեջանցիները հրատարակել են «էրինչի» թերթը (1875—1877), «Մշակ» թերթի խմբագրությունը ողջունելով այդ կարևոր իրադարձությունը, թերթի հրատարակիչ Հասան Բեկ Զարդարբի մասին տպագրում է մի հոդված, որտեղ ասված է. «Մի բարձր ուսում ստացած թուրք երիտասարդ, Հասան Բեկ Մեկրավ, առաջինն է, որ հաղթահարելով բոլոր նախապաշարումները և ամեն տեսակ արգելքներ, հանդես պիտի դուրս գա թուրքերեն լեզվով մի լրագիր հրատարակելով Բարբլի մեջ: Մենք առանձին բավականու-

թյամբ մեր ընթերցողների ուրախությունն ենք զարձնում այդ երևույթի վրա»¹:

«էրինչի» թերթը իր էջերում մասսայականացնում էր առավանհ կուլտուրան և զրահանությունը, պայքարում էր կրոնական մոլեռանդություն, խաղաբաժնեություն դեմ: Նա անդրադառնում էր նաև հայերի և ազրբեջանցիների բարեկամության հարցերին:

Հետագայում էլ հայ և ազրբեջանական ազգերի առաջադիմական պարբերականները լայնորեն պրոպագանդում են միմյանց գրականությունը և մամուլում շոշափված կարևոր հարցերը: Այսպես, «Մուրճ» ամսագրի էջերում տպագրվում է «Կովկասի թուրք մամուլը» հոդվածը, որտեղ կարգում ենք. «Մենք նմաներ ենք հավանաբար միևնույն ասն մեջ սպրող բնասանիքներում, որ չեն գիտեր թև իրենց դրացի սենյակին մեզ սպրողներ ուլքն՝ ր են», և հետև. «Ահա այս նկատմամբ պիտի ջանանք պարբերաբար տեղեկություն ապա մեր ընթերցողներում, ի՛նչ կանցնի կդառնա Կովկասի թուրքերուն մեջ»²:

Անդրկովկասյան ժողովուրդների առաջադիմական մամուլը պայքարել է նաև նացիոնալիզմի գրսեղաններին դեմ, պրոպագանդել է ժողովուրդների բարեկամության գաղափարը՝ հասկնապես ցարկովի կողմից հրահրվող հայ-թուրքական խաղվությունների ծամանակ: Այդ պայքարում համագործակցել են, օրինակ, հայկական «Խոսքաբայա» և ազրբեջանական «Մուլլա Նասրեդդին» երգիծական պարբերականները:

Ազրբեջանական առաջադիմական գործիչ Զալիլ Մամեդ Կուլիզադեն «Մուլլա Նասրեդդինը» խմբագրել է ազրբեջանական ժողովրդի թշնամիներին՝ մուլլաների կողմից հրահրվող թշնամական պայմաններում: Ուշագրավ է այն հանդամանքը, որ «Մուլլա Նասրեդդինը» հրատարակվել է ոչ թե Բարդում, այլ Քիֆլիսում, և նույնիսկ այնտեղ էլ՝ մուլլաների թշնամական գործունեությունից ապահով լինելու համար՝ ազրբեջանական

¹ «Մշակ», 1875, № 8:

² «Մուրճ», 1903, № 10—11:

Քաղաքացիական պատերազմի շրջանում՝ Գավթի փոփոխում:

«Մուլա Նասրեդդին» ամսագրում բնորոշ ծագրանկար է ժողովուրդների միջև ընդհանրապես հրահրող շեղյալներ (սատանան), որք մարմնավորում է ցարկոմը: Տիպական է նաև մի ուրիշ ծագրանկար, աղբրեանցիկները և հայերը գիտված են սերտով, սատանան շարափախող ծծողում է: Կոթիվ է աղբրեանցիկների և հայերի միջև, սատանան հիացած է: Աղբրեանցիկները և հայերը հաշտվում են, սատանան զգոհություններ փոխում է:

Հայկական մամուլը համախառն աղբրադարձն է նաև վրաց տպագրության գործի պատմությանը, վրացական պարբերականներում արժարժվող հարցերին և այլն: Այս առումով հետաքրքրական է Գ. Տեր-Պավլյանի «Տարազում» տպագրված «Վրաց տպագրության և լրագրության գործը տասնիններորդ դարու սկզբներում» հոդվածը, որտեղ հեղինակը նշելով, որ վրաց թագավորի՝ Գեորգի XIII ժամանակ տարողը Վրաստանում միմիայն մի տպարան է եղել (Քիֆլիսում), որտեղ տպագրվել են վրացական այբրենարաններ, աղյթատետրեր և կենդանական դանազան գրքեր, այնուհետև խոսում է 1818 թվականից հրատարակվող «Մակվիթափա դաղնիթի» (շարափախներ) մասին, որն իր գոյությունը պահպանել է շատ տարի: Հոդվածի հեղինակն քննադատ է այդ շարափախներին հիմնական ծառայություններից մեկը, այն է՝ որ ինչպես վրացիները, այնպես էլ հայերը և աղբրեանցիկներն ընտելացել են ընթերցանության և այդ պատճառով էլ այդ թերթի փակվելուց հետո, 1822 թվականին, վրացիների նախաձեռնությամբ սկսվում է հրատարակվել «Մմինդա-Գեորգի» («Մուրը Գեորգի») անունով շարափախները, որը լույս է տեսնում 1823—1825 թվականներին:

1828 թվականին Մուլուման Գոզաշվիլին հիմնում է նոր տպարան և սկսում է տպագրել «Քրիլիսիս ուժգրա» («Քիֆլիսի հայտարարություն») անունով շարափախները: Վրացի-

ները, հայերը և աղբրեանցիկները այնքան են սիրում այդ շարափախները, որ 1829 թվականին շարափախների բաժանորդների թիվը հասնում է 500-ի: Հետագայում այդ, ինչպես նաև այդ նույն անունով հավելված-շարափախները նույնպես զարգանում են հրատարակվելուց: Եվ միայն 1857 թվականին իմանն Կերեսիձև սկսում է հրատարակել «Յիսկարի» («Արշալույս») ամսագիրը, որը լույս է տեսնում մինչև 1874 թվականը, իսկ 1877 թվականին նորից է վերսկսվում, բայց կարճ ժամանակով, որովհետև Կերեսիձևն շրջափոխության պատճառով այլևս չի կարողանում ապահովել ամսագրի գոյության հարցը¹:

Ուշագրություն արժանի է մի հանդամանք. հայ մամուլի գործիչներն ընթերցողներին տեղեկացնելով վրաց որևէ նոր պարբերականի լույս աշխարհ գալը, միաժամանակ խոսել են այդ պարբերականի ուղղության և նրանում բնակարկվող հարցերի մասին: Օրինակ, «Մուրա» ամսագրում տպագրված «Վրաց կյանքից և գրականությունից» հոդվածում Տ. Փիրումյանն ընթերցողին տեղեկացրել է, որ Ի. Ռոստոմաշվիլու խթմ-բազրությունում լույս է տեսել «Մոզապուրի» («Ճանապարհորդ») ամսագիրը, որի նպատակն է լուսարանի վրաստանի պատմության, հնկադրությունների, ազգագրության և աշխարհագրության հարցերը:

Հոդվածագիրը դրական կարծիք է հայտնում ամսագրի մասին՝ իր պարզ, հասարակ լեզվի և կարճատև գրելու համար: Փիրումյանը հատկապես կանգ է առել ամսագրի այն հոդվածների վրա, որոնք վերաբերում են հայ-վրացական փոխհարաբերությունների հարցերին: Հոդվածի հեղինակը խոսելով Իվանին Արուսեանի «Վրաց մի մասյանի հին հայերեն թարգմանությունը» և Զ. Ճիճինաձեի «Շարավալին Վրաստանը» ուսումնասիրությունների մասին, հատկապես կանգ է առնում «Շարավալին Վրաստան» հոդվածի հեղինակի մի շարք ոչ ճիշտ գրությունների վրա և ցրում, «Վրացիք միշտ սիրով էին սպրում հայերի հետ և անխտր համախոս նրանց կենդանի»:

¹ «Մուլա Նասրեդդին», 1907, № 13:

¹ Տե՛ս «Տարազ», 1895, 15 հունվարի:

կնքահայրություն, խաշ-կղարություն անում նրանց հետ...»¹։ Հողվածում բարձր է գնահատվում նաև վրաց գեղարվեստական գրականությունը, արժեքավորվում է Վաթա Փշավիլու «Յձակերբ» պոեմը և Շ. Արզղվապետի «Եմ սիրտը իմ հայրենիքն է» պատմվածքը։

Վ. Փշավիլու մասին ասվում է, որ կիսատ թողնելով իր ուսումը, նա վերադառնում է իր հայրենի լեռները, որտեղ դարձրել շարունակ ապրել են կորիճ ու վեհանձն լեռնականները, և խոսին ու արտը ձևորն անելով՝ հասարակ երկրագործի կյանք է վարել, մոտիկից ուսումնասիրել է հայրենակիցներին ներկան ու անցյալը։ «Ահա Կախեթի այդ լեռները լիքն են այսօր անթիվ ալանդություններով ժողովրդական նշանավոր հերոսների մասին, որոնք կարծես իման, անվեհերություն և վեհանձնություն գովքն ու պատմությունը երգվում են ու բերն-նե-րերան անցնում այնտեղ, ուժ ու աշխույժ ներշնչելով նոր սերունդներին, և այ. Վաթա Փշավիլան, այդ լեռների որդին, սուգորված այդ հերոսների աշխարհի մթնոլորտով, ընծայում է մի բանի մեծ ու փոքր շքնաղ, կախարհիչ պոեմա, իր մայրենի գրականությանը, որոնք բոլորն էլ կարողացվում են անպայման համընդհանրվածք»²։

Հողվածագիրը բարձր է գնահատում նաև Շ. Արզղվապետի լիլիկնու նշելով, որ նա ստեղծել է մի շարք գեղեցիկ և ճշգրիտ պատկերները գյուղական նրատակացից, Փիրումյանը գրում է. «Նա մեծ ջանք է գործ դնում իր հերոսների հոգեբանական վերլուծության վրա և այդ կողմից նա ունեցավ մի շարք հեան-վողներ երիտասարդ վրացի վիպագրողների մեջ և համարվեց հիմնադիր մայրենի վիպագրության հոգեբանական գյուղիկ»³։

Նշենք նաև, որ Փիրումյանը վերահիշյալ հողվածում խոսում է նաև վրաց կամպոզիտոր Փ. Քորիձեի մասին նա գրում է. «Քսան ասրուց ավելի է, որ վրացիք ունեն մի արդյունավետ

և համակրելի երաժշտադես պ. Փ. Քորիձե... Նա նվիրեց իրեն բացառապես արդալին ժողովրդական երգերի հին և նոր նշանակները ուսումնասիրելուն և իր հայրենակիցներին մեջ մտ-դիկալի ճաշակը զարգացնելուն... Մյուս կողմից պ. Քորիձեն պատրաստում է հաճախ երաժշտական խմբեր և համերգներ տալիս իր սիրած ժողովրդական երգերից թե՛ Քիֆլիսում և թե՛ զավտաններում։ Այդպիսով նա հիշեցնում է մեզ մեր երանջ-տագետ պզ. Կարա-Մուրզալին և Մ. Եկմայանին՝ միասին վեր առած։ Բայց պ. Քորիձեն զեն մի բանով էլ զերազանցում է նրանց... Նա տալիս է շարունակ ձրի գլուխը իր բնակարանում և մեծ պատաստականություններ՝ բոլոր այն երկու սեռի երիտասարդներին, որոնք կցանկանան նախ այդ աղագային մոտիկները և ապա քնդհանուր, եվրոպական երաժշտու-թյունը»⁴։

Հետևյալ, 1902 թվականին «Մուրճ» ամսագիրը տպագրում է հողված, որը բավականաչափ հետաքրքրական է հայ-վրաց կուլտուրայի գործիչների փոխհարաբերությունները պարզելու, նրանց գործունեությունը միասնական նպատակի՝ հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը ամրապնդելու ուղղությամբ։

«Մուրճում» խոսվում է 1876 թվականին «Դրոբեա» թերթի 10-ամյակի առթիվ կազմակերպված ճաշկերույթի մասին, որին մասնակցին են նաև հայ մտավորականության ներկայացուցիչները՝ Գ. Արծրունին, Ար. Հովհաննիսյանը, Գաբ. Սունդուկյանը և զերասան Չմշկյանը։ Այդ ճաշկերույթին Ար. Հովհաննիսյանը ասել է. «...Ուժը միության մեջ... մենք՝ ներկայացուցիչներ վրացի և հայ ժողովրդի, հավաքվել ենք այսօր այստեղ, ստանլու վրաց լրագրի ասանամյակը։ Գարոններ, ամենքդ համաձայն կլինեք ինձ հետ, որ այդ միության մեջն է ուժը։ Ուղիղ է արժ փոքր, բայց այնպիսի, որ ապագայում կարող է մեծանալ...»⁵։

Իսկ Չմշկյանն ասել է. «Նա ցանկանում եմ շնորհակալու-թյուն հայանկ «Դրոբեալին» այն համակրության համար, որ

¹ «Մուրճ», 1901, № 7, էջ 203.

² Նույն տեղում, էջ 204.

³ Նույն տեղում, էջ 205.

⁴ «Մուրճ», 1901, № 7, էջ 203.

⁵ «Մուրճ», 1902, № 11—12, էջ 244.

ևս ցույց էր տալիս, երբ խոսքը լինում էր հայ-վրացական
Քատրոնի մասին»¹։

«Կրոնքա» քերթը իսկապես հաճախ է անդրազարծել հայ-
վրացական Քատրոնների շահերի ընդհանրության հարցերին,
որք մասին մասամբ խոսվել է սույն գրքի «Քատրոն» ենթա-
գլխում։ Սակայն այստեղ ուշադրության արժանի է մի այլ
հանդամանք։ Հայտնի է, որ հայ-վրացական Քատրոնների
մասին բիշ չի խոսել նաև Գ. Չմշկյանը։ Հանդես գալով մա-
մուլում, մեծանուն դեմասանը հատկապես ընդգծել է վրաց
Քատրոնների հասարակչության էնտոլոգիայով՝ Քատրոնը
գարգացնելու և պահպանելու գործում։ Այս առումով ուշա-
դրության արժանի է Գ. Չմշկյանի «Վրաց և հայ Քատրոնա-
կան բնմը» հոդվածը, որտեղ հոդվածի հեղինակը նշելով, որ
վրաց Քատրոնը սակզծել է դեռևս քառասունական թվական-
ներին և ահել միայն մի քանի տարի այն պատճառով, որ չի
ունեցել հարուստ անպիտանար և, որ դիտավորն է, այն կազ-
մակերպվել է ոչ իրրի ժողովրդական պահանջ, այլ իշխան
Վորոնցովի հրամանով։ Իսկ հայոց Քատրոնը ստեղծվել է
ինքն իրեն և սկսվելով հիտունական թվականներին՝ իր գոյու-
թյունը պահպանել է մինչև 1887 թվականը՝ միշտ գտնվելով
մերձխաճ գրության մեջ։ Մինչդեռ վրաց բնմը, որ երկար ժա-
մանակ գաղտնի է գոյություն ունենալուց, ընտրից սկսել է
գործել՝ այս անգամ ժողովրդի գրգամք և գանձում է նրա
հովանավորության ու պահպանության ներքո և շարունակում
է իր գործը՝ անընդհատ ու հաստատուն քալելով առաջ ըն-
թանալով»։

Ցանկանալով նույն էնտոլոգիայով առաջացնել հայության
մեջ, Չմշկյանը օրինակ է բերում վրաց Քատրոնը և գրում, որ
երբն գարմանք է պատճառում, թե ինչու հայոց բնմը, որ ունի
թե՛ ինքնուրույն և թե՛ Քարգմանական անպիտանար ու ավելի
առաջ է գոյություն ունեցել, բան վրացականը, գտնվում է
անկման եզրին, իսկ վրաց Քատրոնը, չնայած վրաց ժողո-
վրդի նյութական սուղ միջոցներին ու նրա աննախանձ ան-

պիտանարին՝ զարգանում է կանոնավոր և հաստատուն կեր-
պով։

Չմշկյանը այդ բացատրում է նրանով, որ «մենք՝ հայերս
(նկատի ունի հարուստ դասակարգին— Ա. Շ.) հասարակա-
կան գործում միշտ մեր ես բարձր ենք գտնում ընդհանուր
շահերից և ի՞նչ տեսնում ենք, որ այդ ընդհանուր շահերի մեջ
մեր եսը պետք է ստվերի մեջ լինի— մենք ամեն շանք գործ
ենք դեռում, ամեն բան ոտի տակ առնելու համար, միայն թե
մեր եսը վաչլի»։

Վերջները ամեն մի հասարակական գործ վրացիների մեջ
և որք կանանք, որ նրանց գործիչները խմբում են իսկույն
գործի շուրջը և աշխատում են միահողի և միաբերան հաս-
րակական գործի օգտին։ Չեք կարող գտնել մի խնտելիզեևտ
վրացի, որ Քատրոնի գործը իրենը չհամարի և բուրբ ուժերն
է նվիրում նրան»²։

Այսպես, հայ նախառնույցյետն Քատրոնի անխոնջ մշակը
ցանկացել է բարեկամ ժողովրդի Քատրոնի լավագույն օրի-
նակով դաստիարակել նաև հայ ինտելիգենցիայի և վերնա-
խավի այն ներկայացուցիչներին, որոնք պետք է պահեն և
պահպանեին հայկական Քատրոնը։ Այսպիսի դեպքերում հայ
պարբերական մամուլը իր էջերը լայնորեն տրամադրել է
եզման հարցերի լուսարանմանը, հաճախ հոդվածներ և հարդ-
րագրություններ է տպագրել վրաց Քատրոնի մասին և սուին
կերպ խրատուսել հայ Քատրոնի գործիչներին՝ ընդօրինակել
այն ամեն լավը, որ գոյություն ունի վրաց Քատրոնում։ Միա-
ժամանակ հայ մամուլը, տպագրելով հոդվածներ վրաց Քատ-
րոնի մասին, ցանկացել է հայությանը ծանոթացնել վրաց կուլ-
տուրայի կարևոր բնագավառներից մեկի՝ Քատրոնի հետ։ Այդ
նպատակն է հետապնդել, օրինակ, 1903 թվականի «Գեղար-
վեստ» ամսագրի երեք համարներում տպագրված Գեղեկոն
Միրադյանի «Վրաց Քատրոնի անցյուլը և ներկան» հոդվածը։
Հեղինակն ընդգծելով, որ «ժամանակի պահանջներին համա-
պատասխանող Քատրոնը նույնքան մեծ նշանակութուն ունի

¹ «Մուրճ», 1902, № 11—12, էջ 244։

² «Մուրճ», 1887, № 96։

ժողովրդի համար, որքան և լավ սկզբունքների վրա դրված միջնակարգ դպրոցը կամ համալսարանը...», շարունակում է. «Այդ կողմից ուղարկության արժանի է մեր գրացի վրաց ազգը. նա այնպիսի եռանդով ու սիրով է առաջ տանում այդ սուրբ գործը, որ միանգամայն խոնարհվում ենք նրա առջև և բարե նախանձ զգում զեպի նա: Եվ իրոք, ինչով բացատրել այսպիսի աննորմալ դրությունը:

Ձեր առաջ կանոնած են երկու փոքր ազգություններ— հայ և վրացի— միասնակ հասակով, անցյալով և ներկայով, երկուսն էլ լավ են բովանդակ այդ վսեմ գաղափարի սկզբունքը. երկուսն էլ ցանկանում են մարմնացնել այդ գաղափարը, բայց դրանցից մեկը, որը նյութականացան ավելի խեղճ է, ցանկությունը իրականացնում է, իսկ մյուսը, որը ավելի շատ շանս ունի՝ իրականացնելու, ցանկության շուրջն է պտտում մինևն վերջին տարիները:

Այս երկու ազգությունների մեջ այդ միտքը համարյա միատամանակ է հղացել, միայն մեկը ավելի և ավելի լայնացրել, մեծացրել է գործը, իսկ մյուսը ճնշել, խեղճել նրան: Ինչո՞ւմն է սրա պատճառը:

Այս և սրա նման հարցեր շատ անդամ է իրեն առաջարկել հայ հասարակությունը, բայց չի կարողացել լուծել¹: Մերազգայն արջ կերտվեց կապում է այն բանի հետ, որ վրաց կուլտուրայի առաջադեմ գործիչները արդեն հասկացել էին թատրոնի զերբ վրաց ժողովրդին միջնադարյան քնից զարթեցնելու գործում: Հողմածողիբը նշում է, որ հասարակությունը թատրոնի հիմնադրումից հետո ստափում է, նրա մտովոր հորիզոնը լայնանում է և ավելի ուղարկությունը է սկսում դիտել շրջապատող կյանքը:

Միբողանքը գրում է, որ վրաց թատրոնը 1855 թվականին փակվելուց հետո, տարբեր ժամանակներում թատերասերների խմբեր են հանդես եկել, բայց դժվար է եզրի զերասանուհիների հարցը. կանանց զերերը կատարել են երիտասարդ ուսանողները: Համախ ևրաց թատերասերների խմբում կանանց

զերերի կատարումը հանդես է եկել Քիֆիտի ետիկին քաղաքազուխ Պոզոս Իզմայիլյանցը:

Հետագայում վրաց բեմի վրա երեսցել են հայ զերասանուհիներ՝ օր. Արամյանը և տիկ. Աբրահամյանը. վերջինս վատ է տիրապեանել վրացերենին և այդ պատճառով էլ զերերը գրվել են հայաստա վրացերենով:

Շուտով, շնորհիվ բանաստեղծուհի նինա Օրբելիանու՝ ներկայացումներին սկսում են մասնակցել նաև վրացուհիները:

Այսօրիս հեղհեղով վիճակում է գտնվել վրաց թատրոնը մինչև 1868 թվականը: Սկսած այդ ժամանակից վրաց թատերական գործը նորից աշխուժացել է: Գևորգ Չմշկյանը մեծ օգնություն է ցույց տվել վրաց թատրոնին. նույնը նաև Յ. Էլիսավր և ուրիշներ:

Վրաց թատրոնի վերականգնմանը մեծուպես օժանդակել են նաև Օրբելիանները, Ակակի Սերնթեյն, Դիմիտրի Դիմիտրի, վիպասան Անտոն Փուրացելյանն, ուսուցիչ Պ. Ումիկաշվիլի և իշխաններ Բեհհուրյանը, Քումանովը և Գավիթ Էրիթովը:

1877—1878 թվականներին առաջ են գալիս մի քանի թատերական խմբեր: Այդ թատերասերների խմբերից մեկը զեկավարում է հայ թատերասեր իշխան Գ. Քումանովը: Սա մեծ ծառայություն է մատուցում վրաց թատրոնին՝ նրա վերականգնման շրջանում: Գործն ավելի առաջ տանելու համար կազմակերպվում է կոմիտե, որի մեջ մտնում է նաև Գ. Քումանովը, իսկ հնազաղաում կանայք՝ Ն. Գաբունիան, Մ. Սափարովա-Արաշիճեն, որը ծագումով սղնիսցի հայուհի էր և վրաց բեմի զարդն ու փառքն էր: Այսպիսով, 25 տարուց հետո, 1878 թվականին, Քիֆիտում հիմնադրվում է նոր մըշտական խումբ: Սրանով սկսում է վրաց թատրոնի երկրորդ շրջանը:

Պատմական նման էրակուրա կատարելուց հետո Միբողանքը գրում է. «Եկանաղ ավերորդ չէր լինի սակ երկու խոսք այն զերի մասին, որը խաղացել են հայերը վրաց թատերական գործի զարգացման մեջ... Սա արվում է ցույց տալու

¹ «Վեղարկեստ», 1908, № 1, էջ 26.

համար, թե որքան համակրանքով են վերաբերվել հայերը դեպի վրաց թատրոնը և թե ինչ սեղա կապ է եղել հարևան ազգերի զեղարվեստի մեջ...»¹ Այնուհետև, իր այս փաստարկումն ապացուցելու համար հողվածի հեղինակն առում է, թե վրաց թատրոնի պատմությունից հայտնի է, որ Գ. Էրիս-Քավիի կողմից հիմնադրված թատրոնի հենց առաջին երկու ներկայացումներին մասնակցել են Գ. Շանշյանը և Մ. Լորիս-Աբիխովը, իսկ 1851 թվականին ասպարեզ է եկել գործիչ հայ Զարար Անտոնովը, որը երիտօրինակ աչ ձեռք է եղել և այդ թատրոնի համար գրել է մի շարք պիեսներ։

Երկրորդ շրջանում, այսինքն՝ թատրոնի վերականգնումից հետո հանդես են եկել՝ Մ. Սափարովյան, Գ. Փումանովը, Միք. ՔեչրուՅյանը, Գար. Սուևրուկյանը, Գ. Չմշկյանը, որոնք իրենց գործունեությունը բավականաչափ օժանդակել են վրաց թատրոնի զարգացմանը։ Վրաց թատրոնում գործել են նաև Ամբաս Կարինյանը իբրև հուշարար, տիկին Վ. Մեյիքյանը, կոմիկ Արտաշես Սուբիասյանը և թատերասեր Յ. Տեր-Փրի-կուշյանը, իսկ Գեղեկոն Միրզազյանը 13 տարի անընդհատ ծառայել է վրաց բեմին։

Նույն 1908 թվականին Կոսե Ափիխանին հատկապես «Էուշարար» ամսագրի համար գրում է «Վրաց թատրոնի սկզբնավորությունը» հոդվածը, որտեղ հեղինակը խոսելով նույն փաստերի մասին, որ տեղ էին գտել նաև Գ. Միրզազյանի հոդվածում, նշում է նաև, որ վրաց թատերասերների կողմից կազմակերպված խմբերին մասնակցել են հայերը ևս։ Չմշկյանը իր կնիշ հետ, նստալյա նազարյանը, Ամբիխյանը, Անտոնովը և ուրիշներ։

Հետազոյում նրա հայրը՝ Գիմիտրի Ափիխանին, իր տունը բաց է արել թատերասերների համար և ինքն էլ ղեկավարել է այդ խումբը։ Հայերն ու վրացիները Գ. Ափիխանու ղեկավարությամբ բարեկամարար և սիրով գործի են անցել։ Հենց այդ ժամանակ էլ հանդես են եկել հայ տիկնայք՝ նազարյանը, Սաթևնիկը։ Սրանց գործունեությունը օրինակ է ծառայել

վրացիների համար և նրանցից հետո հանդես են եկել վրացուհիները՝ Բարո Խերխուսիձեճեն, Բրձուլին, Կանապական և ուրիշներ։

Ներկայացումներին համախել են և՛ վրացիները, և՛ հայերը՝։

Թիֆլիսում հրատարակվող գրական-թատերական հանդես «Թատրոնը» ևս իր էջերում հաճախ է անդրադարձել հարևան ժողովուրդների թատերական կուլտուրայի հարցերին։ «Թատրոն» հանդեսի 1903 թվականի 8-րդ համարում տպագրվել է Գեղեկոն Միրզազյանի հոդվածը՝ «Վրաց թատրոն» խորհրդով, իսկ 10-րդ համարում զետեղվել են Միրզա-Շաֆիի մի շարք կրկերը։

Հայկական «Գեղարվեստական գրական երգիծարանական» պատկերազարդ շաբաթաթերթում (հետագայում ամսագրում) պարբերաբար հողվածներ են տպագրվել նաև վրաց և ադրբեջանական ժողովուրդների կուլտուրայի հարցերի վերաբերյալ Ալապես, 1894 թվականի № 18-ում տպագրվել է ն. Նիկոլանի «Ամուսնական վաճառքը», մեկ ուրիշ համարում՝ է. Նինոշվիլիի պատմվածքը, 1895 թվականի համարներից մեկում տպագրվել է Գ. Տեր-Դավթյանի հողվածը՝ «Վրաց տպագրության և լրագրության գործը XIX դարի սկզբում», մի ուրիշ համարում Անուշ Հաղբիրի «Անչուություն և մուսրջկանություն» հողվածը և այլն։

«Տարախո» 1900 թվականի № 1-ում տպագրվել են «Վրաց թատրոնի հիմնադնակը», իսկ «Թատրոնում»՝ «Վրաց բեմը» հողվածները։ Մուրճիս մե բանի համարներում տպարվել են վրաց մամուլին, գրականությանը, վրաց գրական լեզվին և ուրիշ հարցերի նվերված հողվածներ, իսկ «Մշակո» համարներում լույս են տեսել վրաց կյանքին, գրականությանը, մասնավորապես գրողներին վերաբերող բազմաթիվ հողվածներ։ Ալապես, վրաց հայտնի փյուսան Գևորգի Սերեթիլիի մահվան առթիվ «Մշակը» տպագրում է հողված, որտեղ նշվում է, թե ինչպես վրաց ազնվականները շեն սիրել, հայհույել են

¹ «Գեղարվեստ», 1908, № 3, էջ 36.

¹ Տե՛ս «Էուշարար», 1908, № 14, էջ 216—218.

Ք. Մերթվելուն, մանավանդ, երբ վերջին բաղադրային ընտրությունների ժամանակ նա գրում և «վճարի» մեջ տպագրում է «Վրաց և հայոց հարաբերությունները» վերնագրով հայտնի հոդվածը¹:

«Մշակը» լայնորեն արձագանքել է նաև ակամավոր բանաստեղծ Ի. Ճավճավաձևի մահվանը: Խոսելով ակամավոր գրողի սպանության մասին, թերթը գրել է. «...հայ մամուլը, հայ հասարակայնությունը չեն կարող նույնպես իր ամենամեծ զոյրույթը և խորին, անկեղծ կեղծոր շարտահայտել բանաստեղծ Ճավճավաձևի արագեղական մահվան առիթով...»², իսկ իր բանի համար հետո «Մշակը» տպագրել է հարդորում Ի. Ճավճավաձևի թաղման մանրամասնությունների մասին, որին մասնակցել են նաև հայ հասարակայնության և մամուլի ներկայացուցիչները:

«Մշակ» արթնիրթի ավելի հանդամանորեն է լուսարանել Ակակի Մերթվելու կյանքը և գործունեությունը: Վրաց ժողովրդական բանաստեղծի մտաին թերթը հատկապես շատ է գրել նրա մահվան կապակցությամբ: Տոգազրված նյութերի մեջ հատկապես հետաքրքրական է Ք. Չմշկյանի նամակը խմբագրությանը, որտեղ մեծ դերասանը գրել է. «Վրաստանի մեծահռչակ գրան Ակակի Մերթվելու մահվան առթիվ հայտնում եմ իմ ցավակցությունը և նրա շուրջված երկերի հրատարակության ֆոնդին իրեն նվիր հասկացնում եմ վրացերեն լեզվով հրատարակված ԲաՖՖի սկեմնեղ վաճառք» գործերից 50 օրինակ»³, նման սրատուռչ և հուզվել փաստի մասին խոսվել է Յա. Գոգերաշվիլու կապակցությամբ: Ուշագրավ է «Տարազ» հանդեսում վրաց մեծ մանկավարժի մահվան առթիվ տպագրված հոդվածը: Հոդվածագիրը հարորդելով, որ Գոգերաշվիլին իր զուամրները կտակել է վրացիների մեջ գրադատությունը առարձելու գործին, ինչպես նաև 100-ական սուրբի կտակել է մի բանի հաստատությունների, այդ թվում

¹ «Մշակ», 1900, № 8.

² «Մշակ», 1907, № 100.

³ «Մշակ», 1915, № 30.

նաև Կ. Հ. Քարեղործական ընկերությանը, այնուհետև հայտնում է, թե նրա թափոնը անցել է Եկեղյուղ— Տաղալիս խմբագրության շենքի առջևից, հայկական հանդեսի խմբագիրը Գոգերաշվիլու դազադին է գրել ժողովների մի փունջ և արտասանել է հետևյալը. «Հավիթ հիշատակ հայրենիքին անբեծ սպասավորված մանկավարժ Գոգերաշվիլուն»:

Փոքր լքեաղ Վրաստանի անխուշ սիրմանցան զավակին, որ իր մայրենի բուրաստանում շատ տասնյակ տարիներ անցրեց զվարթ ու կենտանի անմար ծիրի:

Վրացի եղբայրակիցներ, Աղջյուրի և Տարաղի խմբագրությունը խորատուլված Ձեզ հետ խորին վշտի մեջ, զիտակցում է այսօրվա մեծ կորուստի ծանրությունը և երկրպագելով Գոգերաշվիլու աճյունը, վստահում է թարգման լինել վշտարելի վրացիների, որ հայրենասեր մանկավարժի կորուստը Ձեզ հետ հավասար ողբում ենք ոչ միայն մենք՝ հայերս, այլև կովկասյան բազմաքեղ ժողովրդի զիտակից բոլոր հատվածները, բմրունելով վեհ և նվիրական այն փայլուն սպասավորությունը, որ հինգ տասնյակ տարիներ ընծայարերեց բեզմավոր և պաշտառ Գոգերաշվիլին իր մայրենի լեզվին, դպրոցին, իր հայրենիքի սերունդներին»⁴:

Պետք է ասել, որ «Տարաղը» հայկական այն պարբերականներից է, որտեղ հաճախ են տպագրվել վրաց գրականություններ և գրողներին նվիրված զանազան բնույթի հոդվածներ և անգլեկոլյուններ: Թերթը մի բանի փաստեր: 1893 թվականի համարներից մեկում «Տարաղը» հատուկ հոդված է նվիրում վրաց հայտնի գրող Իլյա Ճավճավաձևի ստեղծագործություններին: Հոդվածում ասվում է, որ վրաց հրատարակչական ընկերությունը վերապահ սկսել է հրատարակել նշանաբով լիպասանների և բանաստեղծների գործերի լիակատար մոզովածուններ. թերթը արժեքավորում է հատկապես Իլյա Ճավճավաձևի գործերը և առանձնապես նրա աշխատությունների երբորդ հասարը, որտեղ զետեղված են եղել հեղինակի ինքնուրույն գործերը՝ «Անրաւերի սպասավորության առաջին

⁴ «Տարազ», 1912, № 6—7, էջ 135.

տարիներից ահաարանները» և «Օթարենց աչրին»¹ Այնուհանե, հետևյալ տարին «Տարազը» իր էջերում նշումներ է գետնելում Ն. Նիկոլաձեի, Ի. Ճավճավաձեի, Բ. Մաշարեյի մասին: Նիկոլաձեի մասին հաղորդում է, որ նա իր ուսումն ստացել է Ռուսաստանում այն ժամանակ, երբ Չերնիշևսկին և Գորբուլովը ազատության գաղափար են ներշնչել, նա ուսումնասիրել է ֆրանսերեն, գերմաներեն, անգլերեն գրականությունները, եվրոպական փիլիսոփայությունը, սոցիալական գիտությունները և զարմել է հրապարակախոս ԾՕ-ական թվականներին վերադարձել է հայրենիք և սկսել է գրադիվել գրական գործունեությունը: Իսկ Ի. Ճավճավաձեի մասին գրված է, որ նա գործելով վրաց գրականության ասպարեզում, հրատարակում է նաև «Իվանիա» ամսագիրը: Նրա այդ շրջանի գործերից «Կաջարա սարսիանի» («ՄԻ»-ի մտրդ է աղամորթին») պատվածքը ազգագրվել է «Մուրճ» ամսագրում: Բ. Մաշարեյի մասին հաղորդվում է, որ նա եղել է նաև «Գրեքա» լրագրի խմբագիր, նրա խմբագրությունը հրատարակվել է Շ. Ռուսթավելու «Ընձննագիրը», նա թարգմանել է Շերսպիրի «Օթիլլոն», «Համլետը», «Մահերեքը», «Ռիշարդ III» և այլն²:

XX դարի սկզբներին վրացերեն, աղբյուրներն և հայերեն լեզուներով հիմնվում են սոցիալ-դեմոկրատական լրագրեր, որոնք մարտիզմի գիրքերից պաշարում են ցարիզմի դեմ և ուշնացնող քննադատության են ենթարկում բուրժուազազանական հոսանքներին: Անդրկովկասի առաջադիմական, բուժկիկյան թերթի կազմակերպիչներն ու գործիչները սկստ կապ են պահպանում առաջադիմական դեմոկրատական ինտելիգենցիայի հետ և իրենց ազդեցության տակ առնելով նրանց՝ միասնական ուժերով պայքար են մղում Անդրկովկասի ժողովուրդների նորությունը և համագործակցությունը ամբարնդելու ուղղությամբ: Այսպես, օրինակ, աղբյուրների կապուրայի այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Զալի Մա-

մեզ Կուլիգազեն, Միրզա Ալեքսյան Մարիբ, Մամեդ Օրդուրազլին, կոմպոզիտոր Ռազ. Հաչիրեկովը, գերասաններ՝ Հուսեին Արարիխանյան, Հուսեին աղա Մարաբակլին, Միրզա աղա Մարաբակլին, Միրզա աղա Ալիև և ուրիշներ, համախմբվելով առաջադիմական մամուլի շուրջը, անգնահատելի ծառայություն են մատուցում մեր ժողովուրդների բարեկամական փոխհարաբերությունների աճելի և բարելավման գործում:

Այդ նույն ժամանակաշրջանում Անդրկովկասի բուժիկները ստեղծում են սուպերի թերթեր, որոնց միջոցով համառ պայքար են մղում լեհիկան ժրագրի իրականացման, նոր տիպի պարտիայի հիմքերի ամբարնդման համար:

Վ. Բ. Լենինը իր «Ինչից սկսել» հայտնի հոդվածում գրել է. «Մեր կարծիքով, գործունեության ելակետը, ցանկերի կազմակերպությունն ստեղծելու առաջին գործնական քայլը, վերջապես այն հիմնական թելը, որը բռնելով մենք կկարողանանք անշեղորեն զարգացնել, խորացնել ու քնդարձակել այդ կազմակերպությունը,— այնտք է լինի համառուսական քաղաքական լրագրի հիմնելը: Ամենից առաջ մեզ լրագրի է հարկավոր, առանց զրու անհնարին է սկզբունքային կառույց և բազմակողմանի այն պրոպագանդայի և ազդեցությանի սխտանմասին մղումը, որ կազմում է սոցիալ-դեմոկրատիայի մշտական և գլխավոր խնդիրն քնդարձակել և ներդա մտնմանի կենսական խնդիրը առանձնապես, երբ զեպի քաղաքականությունը, զեպի սոցիալիզմի հարցերը հետաքրքրություն արթնացած է բնակչության ամենալայն խավում»³:

Արդեն 1901 թվականի սեպտեմբերին լույս է տեսնում վրացերեն լեզվով լենինյան խիբարական ուղղության «Բրեժուդա» («Պայքար») անլեզու թերթը, որից հետո մեկը մյուսի հետևից հրապարակվում են «Նոր կյանք», «Նոր ժամանակ», «Զաճ» և ուրիշ թերթեր: Հայերեն լեզվով լույս են տեսնում «Կույժ», «Նոր խոսք», «Յորք» (մարտիստական առաջին հայերեն լեզու ժուռնալը), աղբյուրներն՝ «Ընտրման» («Ե-

¹ Տե՛ս «Տարազ», 1892, № 27, էջ 400—432:

² Տե՛ս «Տարազ», 1894, № 18, էջ 276—277:

ոսնզ»), «Թիվաձուլ» («Օրբեր») և ուրիշ թերթերը Իսկ 1903 թվականի ապրիլից ՌՍԳՔՊ Կովկասյան միութունը վրացերեն, ուսերեն և հայերեն լեզուներով սկսում է հրատարակել «Պրոլետարիատի կոիվը» թերթը: Բացի թերթերից, Ազրբեջանի բուլշևիկյան կազմակերպությունները ուսերեն, վրացերեն, ազրբեջաներեն և հայերեն լեզուներով հրատարակում են նաև բրոշյուրներ, կոչեր և թերթիկներ: Այդ գործի կազմակերպիչներն են լինում Ցխակալյան, Կեցիտովիչին, Մուլուկիձևե, Եա-հումյանը, Գավթիաշվիլին, Սպանզարյանը, Մախարաձևե, Ազրբեյկովը և ուրիշներ:

Վրաց և հայկական սոցիալ-դեմոկրատական թերթերը՝ «Բրժույան» և «Պրոլետարիատը», համատեղ պայքար են տանում անգրգիտվածայան կազմակերպությունների առաջին անգլալ համագումարը հրավիրելու համար:

Խ. Բարսեղյանը իր «Բուլշևիկյան» մաս պարբերական մամուլի բերվող զորակիս, 1900—1920» արժեքավոր աշխատության մեջ մի շարք մասաներ է բերում Վրաստանի, Ազրբեջանի ու հայ բուլշևիկյան մամուլի սերտ համագործակցության մասին: Լինելով ՌՍԳՔ (բուլշևիկների) պարտիայի մի ջոկատը, Անդրկովկասի բուլշևիկները անզորում և միասնական պայքար են տանում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար: Այդ վիթխարի գործում հակալական դեր է խաղում նաև մամուլը: Վերևում հիշատակված «Պրոլետարիատի կոիվը» թերթը իր էջերում լուսարանում է Կովկասում տեղի ունեցող քաղաքական անցքերը, հազորդուներ է ապագրում ռևոլյուցիոն շարժումների մասին:

Հետագայում ինչպես վրաց, ազրբեջանական, այնպես էլ հայ սոցիալ-դեմոկրատներին կողմից լույս են ընծայվում մի շարք թերթեր և ժուռնալներ: Հայ բուլշևիկները հրատարակում են «Բանվորի ձայնը», «Մեր խոսքը» շարաթաթերթերը, «Սոցիալ-դեմոկրատ», «Բանվորի կոիվը», «Նոր կյանք» (ՌՍԳՔՊ Ալեքսանդրապոլի կազմակերպության օրգանը), «Նեցուկ», «Բանվորի խոսք», «Կարմիր օրեր», «Խոսք» (ՌՍԳՔՊ Երևանի կազմակերպության օրգանը), 1918 թվականի սեպտեմբերից «Սպարտակ» (Հայաստանի Սպարտակ Լեռնասար-

դական միության օրգան), «Կարմիր գրոշակ», «Պահակ», «Կոշակ» պարբերականները, որոնց մեջ լուսարանվում են Անդրկովկասի ժողովուրդների բնօրհանը, միասնական պայքարի հարցերը, հազորդուներ ապագրում Ազրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվոր դասակարգի մղած պայքարի մասին: Բացի դրանից, վերահիշյալ պարբերականները խոշոր նշանակություն են տալիս ժողովուրդներին համերաշխության ոգով դաստիարակելու գործին: Այսպես, օրինակ, Բաքվի պարտիական կազմակերպության ազրբեջանական սոցիալ-դեմոկրատական խմբակի օրգան «Հումբալներ» իր էջերում պրոպագանդում է բույր ազդերի աշխատավորների համախորհումը բուլշևիկների շուրջը, ազրբեջանական բանվորներին կոչ է անում միասնական պայքարի նկին ընդդեմ ցարիզմի:

Այնուհետև, 1906 թվականի ապրիլի 1-ին լույս է տեսնում հայերեն բուլշևիկյան առաջին լեզու թերթը՝ «Կայծը», որը վրացական և ազրբեջանական բուլշևիկյան մամուլի հետ միասին հետևողականորեն թարգմանում է Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի երտրություն ու համերաշխություն և միասնական՝ նրանց որպես Ռուսաստանի բանվորական շարժման մի ջոկատի, կոչ է անում միասնական պայքարի:

Ռևոլյուցիոն շարժման վերելքը Ազրբեջանում և ամբողջ Անդրկովկասում բարձրորակ ազդեցություն է ունենում հայ և ազրբեջանական ժողովուրդների հասարակական մտքի, նրանց կուլտուրայի զարգացման վրա և նպաստում է կուլտուրական կայսրի ամրապնդմանը, խորացնում բարեկամության, ինտերնացիոնալիզմի գաղափարի արժանաժույժ ազատության տեսնելու համար: Այս տեսակետից մեծ դեր է կատարում 1906 թվականի մայիսի 26-ից հուլիսին և ազրբեջաներեն լեզուներով հրատարակվող «Կոշակներ» թերթը, որը հայ-ազրբեջանական լիգայի օրգանն էր: Ինչպես մյուս թերթերը, այնպես էլ «Կոշակներ» լուսարանում է ազրբեջանական և հայ ժողովուրդների պայքարի խնդիրները, մերկացնում է ցարական ինքնակալության զազոթային քաղաքականությունը, հայ և ազրբեջանական ռեակցիոն հոսանքների կուլյուրը և տարբեր ազգերի պրոլետարներին համերաշխ պայքարի կոչ է ա-

նում և կարևոր զեք խաղում ժողովուրդների զարավոր բարեկամության ու համագործակցության ամրապնդման գործում: Ծարիզմի կողմից հրահրվող ազգամիջյան ընդհարումները շրջանում «Կուչ-Գեվեթի» հրապարակ զարբ խոշոր նշանակություն է ունենում երկու ժողովուրդների աշխատավորության ինտերնացիոնալիզմի գրոշի ներքո համախմբելու տեսակետից:

«Կուչ-Գեվեթում» հանդես են գալիս հայ և ադրբեջանցի բանվորները և համախորվածություն կողմնակից իրենց ժողովուրդներին: Այսպես, օրինակ, Սուրեն Քարվերդյանցը թերթի համարներից մեկում հանդես գալով ադրբեջաներեն լեզվով գրված իր «Սեր» ստանավորով, այն միտքն է հայտնում, որ եթե մենք ցանկանում ենք երջանկություն, ապա պետք է միացնենք մեր սրտերը: Ի՞նչ մենք ուզում ենք ազատվել դժբախտությունից, ապա պետք է վերացնենք ամեն մի թշնամանք: Իսկ զրա համար անհրաժեշտ է, որ մենք բարեկամանանք և ազատագրվենք բոլոր տեսակի վտանգներից:

Մեկ նպատակ, մեկ մտածածք մենք տենենք.

Մեկ ազդուրից մենք կաթ ու շուր կիմենք.

Միանալով լուկ կցտանենք փրկություն.

Մեր վերքերը լուկ կրումն սիրտբյուռն:

«Կայծա թերթը իր 1906 թվականի № 21-ում «Կուչ-Գեվեթը» իրավամբ անվանել է հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության գրոշակակիրը: «Կայծա» թերթում կարգում ենք. «Հրապարակ է եկել «Կուչ-Գեվեթը» իր խաղաղության կոչով, հրապարակ է եկել խաղաղության և համերաշխության նշանաբանով: Հետագայում այդ թերթը փակվում է ցարական ինտելիգենտների կողմից, որպես «վտանգավոր ուղղության» թերթ:

Նախքան մյուս պարբերականների մտախն խոսելը նշենք, որ այդ շրջանում, այսինքն՝ ռուսական առաջին ռեյտուցիայի տարիներին հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հզոր հենարան են ստա-

1 Ա. Երևանի, Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության ասոցացումը գրականության մեջ, 1955:

նում հանձին ռուս պրոլետարիատի դասակարգային պայքարի, որի նպատակն էր տապալել ցարական ինքնակալությունը և ազատություն բերել ինչպես ռուս, այնպես էլ ինքնակալության կողմից ձնշվող մյուս ժողովուրդներին: Ռուսական ռեյտուցիոն պրոլետարիատը գլխավորում է մյուս ժողովուրդների պայքարը ինչպես միասնականության տապալման, այնպես էլ ներքին կեղծիչներից ազատվելու համար: Հայ, վրաց և ադրբեջանական գրականությունը հարստանում է նոր թեմաներով, զգալիաբարական բովանդակությամբ: Այսպես, վրացական գրականության մեջ հանդես են գալիս Իրոզին Եվդոշվիլին և ուրիշ գրողներ, որոնց սանձազերծություններում արտացոլվում են հայերի, վրացիների և ադրբեջանցիների միասնականության զգալիաբար, ցարիզմի դեմ մղած նրանց պայքարը:

Ցարական բռնապետական կարգերի դեմ մղվող միասնական պայքարի ընթացքում, ռուսական պրոլետարական գրականության բարերար ազդեցության տակ ձևավորվում է հայ, վրաց և ադրբեջանական պրոլետարական գրականությունը:

Այդ ժամանակաշրջանում իր մարտաշունչ գործերով հանդես է գալիս հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանը և բոլոր ազգերի սրանվոր աղերքին» կոչ անում:

Չե՛լ ևնկ մտառը, բանվոր աղերք.

Մե՛կ էլ, մե՛կ էլ, մի սորք ա՛վերք.

Մի զա՛րկ ա՛վեր ցարի զա՛հին,

Որ խորտակվի նա հիմնովին:

Անգրկավիսայան ժողովուրդների ռեյտուցիոն պայքարը զովերգում են նաև Ե. Կուրդիյանը, Վ. Տերյանը, Ա. Վարդանյանը, Մ. Ա. Սարգիս, Զ. Մամեզ Կուլիզադեն, Ե. Չարենցը և ուրիշներ, որոնք մեր ժողովուրդներին կողմնակից Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, ռուս պրոլետարիատի հետ համատեղ, ոտքի են բերել ընդհանուր թշնամու՝ ցարական ինքնակալության դեմ, դրանով իսկ նրանք կոտմ և կոփում են հայերի, վրացիների և ադրբեջանցիների ինտերնա-

ցիոնալ Համերաշխությունը: Օրինակ, 1905 թվականին ազերբեջանական սևույտցիոն նրքիծարան Միրզա Ալեքսանդր Մաբրերը գրում է իր «Իստերնաշիոնալ» ռուսալեզու, որտեղ ազերբեջանցիներին և Հայերին կոչ է անում ավելի սերտ համախորհել՝ ընդհանուր թշնամու զեմ պայքարելու համար:

Ընդհանրապես պետք է սակե, որ ազերբեջանական գրողները, մինչև Անդրկովկասում սովետական կարգերի հաստատվելը, անզրադարձն են հայ և ազերբեջանական ժողովուրդների մտերիկամություն արտացոլումներ և գրանով իսկ իրենց լուսնում ատրել նացկոտակիտաների զեմ մղովղ պայքարում: Այդ գրողներից Հիշենք, օրինակ, Ջ. Մամեդ Կուլիզադեին, որն իր «Փյամանչա» սգրերգության մեջ ընդգծելով Հայերի և ազերբեջանցիների հոգևոր կուլտուրաների բազմադարյան կապերի անկասկածելիքը, նրանց ժողովուրդները, միաժամանակ շեշտել է, թե որքան խորթ է ազգային թշնամանքի, խաբահանություն գազափարք այդ երկու ժողովուրդների համար: Այնուհետև, նարիման նարիմանովը իր «Քաճազուր և Սոնա» վիպակում նկարագրել է ազերբեջանցի Քաճազուրի և հայուհի Սոնայի սիրտ սլամությունը: Երկուսն էլ անսահման սիրում են միմյանց, բայց կրտական նախապաշարմունքները և նրա կրողները խանցարում են նրանց հասնելու իրենց նպատակին և երկուսն էլ կործանվում են:

Ռևույցիցիայի հաղթանակի համար անդրկովկասյան ժողովուրդներին համախմբելու գործում խոշոր դեր է խաղացել նաև Ազերբեջանի բուլեիկիներ ժարտական օրգան «Քակինակի սարսիչ» թերթը, որին աշխատակցել են Ս. Շահումյանը, Ս. Սոլանգարյանը և ուրիշներ: Թերթը պրոպագանդել է ժողովուրդների եղբայրություն, պոետաարական ինտերնացիոնալիզմ: Նույն հարցերին է անզրադարձել նաև ազերբեջաներին լեզվով լույս տանող «Տուրաշ» («Ընկեր») թերթը, որն իր ալկանալոր գործիչներով՝ Ն. Նարիմանովի, Մ. Աղիզբեկովի, Ս. Էֆենդեևի, Ա. Ախունզովի և մյուսաների զխաժորությունը նույնպես պայքար է մղել ազերբեջանական և հայ ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման համար: Թերթը բացատրել է, որ այժմ արդեն երկու ժողովուրդներն էլ լավ են

ճանաչել իրենց իսկական բարեկամներին ու թշնամիներին, և որ ցարական կառավարությանը երբեք չի հաջողվի Հայերին և ազերբեջանցիներին օգտագործել իր շահողիտական նպատակների համար: Բարձրում լույս տեսնող այն և նման բուլեիկյան թերթերը խոշոր աշխատանք են ատրել անդրկովկասյան ժողովուրդների շրջանում, այդ թերթերը լայնորեն տարածվել են նաև Անդրկովկասի օտարականներին զուրա:

«Պրավդա» թերթը, որի առաջին համարը լույս է տեսել 1912 թվականի ապրիլի 22-ին, անգնահատելի դեր է կատարել Անդրկովկասի բուլեիկյան և զեմեղխատական մամուլի գործունեությունը ավելի ու ավելի աշխուժացնելու գործում: «Պրավդան» անհրաժեշտ է համարել Բարձրում անմիջապես սակզեմը բանվորական պարբերակներ ազերբեջաներին, հայերին և ասուերին լեզուներով:

Վրացական, ազերբեջանական և հայ բուլեիկյան թերթերը ամուր կապ են պահպանել ԽՍՀՊ կենտրոնական օրգանների հետ և առաջնորդվելով լեւինյան «Բեկայա» սկզբունքներով, պայքարել են Անդրկովկասի բանվոր դատական շարժման վերելքի և սոսական պրոլետարիատի հետ միասին սևույտցիոն ախաթիվ պայքար մղելու համար:

Ս. Շահումյանի, Ս. Օրշոնիկիձևի, Ս. Սոլանգարյանի, Ն. Նարիմանովի, Մ. Աղիզբեկովի և ուրիշների ղեկավարությամբ բուլեիկյան մամուլը իր էջերում միասնական պայքարի ու համագործակցության համար, անզուգար պրոպագանդել է Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի համախմբմանության գազափարք: Այս մեծ գործում, ինչպես արդեն ասվեց, իրենց լուսն են մտքերը նաև մեր ժողովուրդներին առաջավոր գրողները, կուլտուրալի գործիչները: Հանգիս զալով թերթերի էջերում նրանք զովերել են հայ, ազերբեջանական և վրաց ժողովուրդների եղբայրությունը, նրանց պրոլետարիատի միասնական պայքարը:

«Պալբար» թերթում, օրինակ, սպաղրվել են բացառնել սևույտցիոններ, բանաստեղծ Հ. Հախոբյանի գործերը, նրա շերտ առաջում պոետը, որտեղ հեղինակը արտացոլել է գրծազուպային շարժման վերելքը, նկարագրել եղբայրական ժո-

զովուրդների սեռայուցիտեններին և ցարական գահը խոր-
տակելու նրանց ձգտումը:

Նշենք նաև այն հանգամանքը, որ շնայած բուլշեիկյան
թերթերի զեմ ուղղվել են ժանդարմերիայի, ոստիկանության,
զրահնության և բնդհանրապես բյուրոկրատական սպարապի
բոլոր ուժերը, այնուհանդերձ, նրանց թափած ջանքերը՝ ցա-
րիզմի կոլկասյան սատրապների համար, հաղվազեպ են ար-
դյունքներ ափել: Մի փակված թերթի փոխարեն սկսել է լույս
տեսնել մյուսը, երկրորդի փոխարեն՝ երրորդը:

Հետագա տարիներին Անդրկովկասում լույս տեսնող առա-
ջադիմական և բուլշեիկյան մամուլը անդադրում պայքար է
մղել բոլոր ազգերի բանվորությանը կազմակերպելու՝ իմպե-
րիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի
վերածելու և սեռայուցիայի հաղթանակի համար, բացատրել է
պատերազմի իմպերիալիստական բնույթը և մասսաներին
համախմբել սեռայուցիտեն մարտերի անցնելու համար:

ԿՈՄՄՈՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆ
ԺՈՂՈՎՈՒՐՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ
ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1913 թվականին Մ. Գորկուն զբաղեցրած էր մամուլում պրոլետա-
րիատի հանձարեղ առաջնորդ Վ. Ի. Անինը խոսելով Անդրկով-
կասի երեք ժողովուրդների առաջավոր կազմակերպություն-
ների միասնության մասին, նշել է, որ «Մեզ մոտ և Կովկասում
ա.-դ. վրացիները + հայերը + թաթարները + ուսսները աշ-
խատում էին միասին տասը տարուց ավելի մի ա ս ե ա կ ա ն
ա.-դ. կազմակերպության մեջ: Այդ Ֆրոսդ չէ. այլ աղբային
հարցի պրոլետարական լուծումը»¹:

Վ. Ի. Անինը բազմալին հարցի պրոլետարական լուծումն
ասելով նկատի է ունեցել այն դործունեությունը, որ Անդր-
կովկասում ծավալել են իր աննկուն բուլշեիկ-հեռուդեղերը՝
յանը Միլիոնավոր մարդկանց, միլիոնավոր բահերի, բլուժե-
ների, մեքենաների ծայները հյուսվում են իրար, ստեղծելով
հաղթական սիմֆոնիա: Հայ, ազրբեջանական և վրաց ժողո-
վուրդները այսրում են մեծ զգարմունք: Այս գաղափարն է
արտահայտված Հակոբ Հակոբյանի «Զարթնք» բանաստեղ-
ծության մեջ.

Կովկաս է արթնացել, նայեցե՛ր, ահա ես, Վրաստան,
Քաստերով մի զրգալ—սակե՛նու Հակոպի փունջ աստղեր:

Չունաթույր բամբակի թփերով պնձվել է Հայաստան,
Եվ Բարսն ետվերով զարժարար ՍՍԻ-ն զարգարել:

Հակոբ Հակոբյանը առաջիններից է եղել, որ հիացմունքով
ու հպարտությամբ նկարագրել է վրաց աշխատավորության
հերոսական աշխատանքը՝ երկրի բայությամբ տնտեսությունը
վերականգնելու, երկիրը լեկտրիֆիկացնելու և ջրանցքներ
կառուցելու ուղղությամբ: Այդ իրազարմոթյունների նշանա-
կությունը Հակոբյանն արտահայտել է «Միտնդէս» բանաս-
տեղծության մեջ.

Մու իտում ես Փոսթիսի ամեն ժամ հեռ,
Մու՛թ հյուզերին ու գյուզերին նոր կյանք շնում,
Փեղ եկել է սոցիալիստե մի ձեք պոնտ,
Զահէ ումիդ, արև լույսից հազար օրջույն:

Ե. Չարենցը ուրախությամբ է նշել հայ և վրաց ժողովուրդ-
ների հաղթական երթը դեպի լուսավալածառ ապագան.

Նյանք՝ մեկտեղ ու միասին՝ մենք պայքարի մի վեժմ—
Եվ թափեցինք, թթափեցինք սարկոսթան լուսը սե.
Երկրի հեռ ողջ աշունհետ միասնաբար, միասիրտ,
Կյանք կերակրենք արտաշին, մարդկության այդ անբասիր...

Եվ միասին ու միասիրտ՝ փում ենք այդ հաղթական
Գեպի երգի՛, կյանքի՛, լույսի մի անարատ ապագա.
Գեպի շքեղ խոչանքների մի խրատանան վարդապետ—
Եվ ես—պետև երկրի հայցը—հզում եմ իրաք արտաբուր,
Երկիր վերձի՛ր, վեժմ զարմից զեպի սենար մի գարուն,
Որ բուրբուս կյանք է անձի՛ր, անձարածի՛ր երկարում...

Բացի այս՝ «Տաղ սրտատուչ եղբայրական Վրաստանին»
ձոն-բանաստեղծությունից, Ե. Չարենցը վրաց ժողովրդին,
նրա լավագույն դավակներին զովբեղել է նաև իր այլ գործե-
րում: Հիշենք նրա բանաստեղծությունը նվիրված Վրաստանի
կամեռիտիության հիմնադիր Բորիս Չենյանին կամ «Չու-
զունն մարզը», որտեղ հայ բանաստեղծը ներգում է Վրաստանի
սոցիալիստական շինարարության առաջին կառույցներից
մեկը՝ Չազկար:

Հազիկ են երա լույսերով անկէ
Մեր խոհերը բար, Տույները բար...
Ինչպես միևնույն արմատից անած
երկու ճուխ ալիք՝ հակիթ խաղաղի,
Մեծ կարայրոյթն արմատով կազմած՝
Մենք ժպտում ենք նույն արևի շողին,
Գե՛, որպես օվկիան թող ծփա՛, շաշի՛,
Գնդ մեծ հայրենիքին մեր սերը անանց
եվ կոմունիզմի վտա աղերարգին
Այսպես ուս-ուսի երևեր ընդատու...։

Քարճը արվեստով է գրված Գ. Սարյանի սերգը Վրաստանից բանաստեղծութունը, որի մեջ սանգծված է վերածնված Վրաստանի պատկերը՝ Սկզբում հեղինակը տալիս է նախաձեռնություն Վրաստանի երգարարը, որտեղ ավշաբ հարբած վրաց ժողովրդի սերգիչ նկրինն հնչեցրել է ախոր մի երգ։ Բայց ահա մարտերով ու համառ կռիվով վրաց ժողովուրդն իր համար բերում է մի լուսապայծառ անավտա ու արզեն բանաստեղծը կարայրոյթից Վրաստանից լսում է.

Որպես գարեան մի՞նով հնչ,
Որ ճարտում է որում նորից,
Հասնում է ինձ արախ մի երգ
Չբնադարկոյ Վրաստանից։

Խոր հուզականությամբ ու ներգրգման մեծ ուժով է տողոված տաղանդավոր բանաստեղծ Հ. Երիրազի շափածո խոսքը՝ ուղղված վրաց ժողովրդին։ Այդ չեքմաշունչ բանաստեղծություն մեջ հայ է վրաց ժողովուրդները պատկերված են որպես լեռնային երկու աղբյուրներ, որոնք իրար են զգվել ձեռքում անձայրս, ալիքին՝ լայնածիր, հզոր Սովետական Հայրենիքում։

Մեր առջև պոետական շքեղ պատկերներն մի ամբողջ աշխարհ է բացում Հ. Երիրազի «Ռուսավիցի Եոթան և Քամաբը» պոեմը, որի մեջ աննախընթաց հմայքով զովերզված է վրաց ժողովրդի հանճարեղ պոետ Եոթան Ռուսավիչին։

1 Վրաց գրականության ընտրի էրես, 1961, էջ 504.

Սովետական Վրաստանի նոր անօրյան իր լայն արտացոլումն է գտել Սողոմոն Տարանդու ստեղծագործություններում. երա բանաստեղծությունների մեջ այսօրվա Վրաստանը գառնում է հարուստ ու հզոր մի երկիր՝ ձգված Կասկից մինչև Սվանիթի, մինչև Ան ժողը, որտեղ միանելույցներն ու սասիները կունգնած են իրար կողքի, և որը իր լայնածիր շրջապատը լցնում է հույզով, ջանքով, կրքով։

Ուշագրավ երևույթ էին Ի. Նոնեշվիլու «Հայաստանում» և Ս. Չիրովանու «Եղբայրության ճամփաներով» բանաստեղծությունների ժողովածուները, որոնք վրաց ժողովրդի՝ դեպի Հայաստանը, նրա ստեղծագործ ու կուտոցող ժողովուրդը տաճած ջերմ սիրտ ու կարայրական զգացումների բանաստեղծումն արտահայտությունն են Ի. Նոնեշվիլին և Ս. Չիրովանին խորը հուզականությամբ կրքում են հայ ու վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը, հայ ժողովրդին և Հայաստանի գեղեցիկ արևավառ բնությունը։ Ինքնատիպ է Ի. Նոնեշվիլու «Ծջախ, դրոշ, ճշմարտություն» բանաստեղծությունը։ Այստեղ հեղինակը կրքով կարողացել է առ հայ և վրաց ժողովուրդների հուզահարազատությունը, նրանց սիրտ համագործակցությունը և դարավոր բարեկամությունը։ Օջախ, դրոշ, ճշմարտություն բառերի միջոցով, որոնք ինչպես հայերենում, այնպես էլ վրաց լեզվի մեջ նույն նշանակություն ունեն, բանաստեղծն արտահայտել է երկու զրկից ժողովուրդների մտախկնությունն ու անկաշառ կարայրությունը, կրքավորությունը, որի անխախտ է կղև և դարերի ընթացքում զիմացել թաղմամբիվ փորձությունների.

Որք որբազան բառեր այս հին
Մեր միասնության զբաճն են կոն,
եվ միասնության այդ կուտ զբաճն
Ոստիներ իրենց թերեն են փշրե...

«Քարթլից ցեղովերային» վարիանտներից մեկում XI գարի վրաց պատմիչ Լեոնաի Մրովելին այն միտքն է հասնել, որ հայ ժողովրդի նախահայր Հայասր և վրաց ժողովրդի նախահայր Քարթլոսը կարայրեր են եղել, և որ այդ ժողովուրդները

հնազույն ժամանակներում խոսել են հայերեն: Մրովելու հազորգած այս ավանզուխան վրա է հիմնված Ի. Նոնեշվիլու «Երկի ինքն էլ հավատար» բանաստեղծությունը¹: Հեղինակը հաջողությամբ է օգտագործել Հայոս և Քարթլուս եղբայրների ավանզուխները, որը Ի. Նոնեշվիլու կարծիքով վրաց պատմիչի կողմից հորինվել է այն պատճառով, որ նա դժգոհ էր լինելով իր տխուր ժամանակաշրջանից, ստեղծել է այդ հիանալի հերթաթիվը, ցանկանալով օգնել ժողովուրդների բարեմեծության ամբողջմանը: Եվ բանաստեղծը տեսնելով, որ վրաց պատմիչի երգանքը հայ և վրաց ժողովուրդների եղբայրության մասին իրականություն է գործել, տեսնում է, որ այն պատմարանը կենդանանա, տեսնելով երկու ժողովուրդների միջև ստեղծված կուռ դաշինքը և ինքն էլ հավատար իր հորինած հերթաթիվին:

Պե՛ս Մտախե՛ն է՛ կրկուտի կեպում—
Ետե՛ր՝ խաղար, ճահա՛տը՝ ցե՛ծուն:
Այնտեղ կզայրև է կզբոր զե՛ծ զիկված
Այնտեղ—դրկում է հայր վրացուն:
Այնտեղ հարգում է երգն կզայրության
Ու ամեն քայլին շողջպում աերի՛ծ...
Ս՛. հնար լինե՛ր, ձե՛ր պատմիչը այն
Պե՛ր մի վայրկյանով վեր կենար լիբից,
Վեր կենար, տեսնե՛ր պաշտու ճառագած
Մեր կզայրության հանգրվան արցար:
Եր ինքն էլ, ինքն էլ իր խեղ հորինած
Չբնող լեզվեզին այսօր հավատար:

Հայ ժողովրդի դատը, տառապանքներով լի անցյալը և ներկայիս ուրախ կյանքն են իրենց արտացոլումը գտել «ԱՆՃ Այնքաննոր ճավճավածի հետ Պոզուս կամ Սևանա լճի ափին» բանաստեղծության մեջ: Ընտրելով վեճի ձևը, Խոսեք Նոնեշվիլին կարողացել է գտնել բանաստեղծական մի այնպիսի հրեմարանը, որը շատ նպատակահարմար է երկու տարբեր հասա-

¹ Տ. Կարապետյան, Վրաց բանաստեղծները Հայաստանի մասին, «Սովետական Հայաստան», 1955, № 243:

բակարգների հակասությունները ցույց տալու համար: Հայկական զեղատեսիլ լճի զեղեցիկությունները պատկերելու միջոցով բանաստեղծին հաջողվել է ցույց տալ անցյալում օտարի լճի տակ կենդանող, իսկ այժմ իր երջանիկ ապագան կերտող հայ ժողովուրդին:

Ամպերի հետ անցան այն օրերը մթնը,
Եվ այսօր ջարհ անգամ մոլոր ունի շրթին:

Ձեռնի խանդավառությամբ ու հարգալից սիրով վրաց պոեզիայի տաղանդավոր ներկայացուցիչ Ս. Զիրովանին իր «Սևանի ճանապարհին», «Սևանի վրա» և «Հայաստանի լեռներում» բանաստեղծություններում երգում է Հայաստանը, նրա սեզ լեռները, սուկնոճ արտերը, լեռների մեջ որպես «մատանու լույս ակ» Սևանա լիճը: Բանաստեղծին հիացմունք է պատճառում իր եղբայրակից հայ ժողովրդի ծաղկուն ու հարուստ կյանքը, նա այլևս չի տեսնում այն ամայությունը և տխրությունը, որի մասին իր ժամանակին գրել է բանաստեղծ Ա. Եսվճավաճեն»¹: Ս. Զիրովանին նշում է, որ սուրբալով Եզրպի լիճը լուրջք,

Ցորենի զեղեր տեսանք մենք Համփին,
Գեղեր սակեցույն ու լեռնակուտակ,
Բարեկեամտյան խոհերով անբիծ
Կանգնած ենք հիմա հայաց երկնի տակ:

Բանաստեղծին հիացմունք է պատճառում մի քանի անգամ արդեն տեսած Սևանա լիճը, որը նրա մեջ պահանջ է արթնացնում երգելու բնության այդ հրաշալիքը, օժնու մաղբերը նրա վճիտ ջրով:

Եվ Հայաստանի բնությանը ոգեշնչված պոետի մեջ առաջ է դալիս ցանկությունը երգել հայոց աշխարհը և վրաց ու հայ ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Ես կզայրություն լույսն եմ փայտալուսմ,
Հայոց աշխարհն եմ ես ուզում երգել:

¹ «Սովետական Հայաստան», 1955, № 243:

Հուզիչ ու շինմ առդերսով են արձագանքել վրաց բանաստեղծները արտասահմանյան երկրների հայերի հայրենադարձությունը Ի. Նոնեշվիլին «Կատարված երազ» բանաստեղծութան մեջ ցույց է տալիս, թե ինչպես հայրենի հողի կարտար սրտում, օտարությունից մեջ տառապող հայությունը զարբեր շարունակ երազել է «օջախ ունենալ Արազի ափին և օջախի մեջ կրակ ունենալ»:

Երազել եր զուք ցրտին ու տապին՝
Սեփական գրուց ու չքուց ունենալ,
Օջախ տանեալ Արազի ափին
եվ օջախի մեջ կրակ ունենալ,
Հայաց հողն էկր զուք տենչում անվերջ,
Հայաց ծաղիկների բույրն էկր տանչում:

Սեվ ահա կատարվել է հայությունից զարգացող իդեա. պանդուխտ հայը հայրենիք է վերադարձել: Բանաստեղծը պլյարաեական պատկերի միջոցով տալիս է արդեն հայրենիք վերադարձած և ուրախ կյանքի տեք զարձած հային:

Մասի զեմ-զիմաց, զճետ երկերում
Չուունին էր թռչում ապաս ու անհոգ,
Եւ բույն է շինել հիսափուրց բարգռեմ
եվ ձագ է հանել բեր մեջ նորոգ:
Եւ չի ահապում էլ իր երամից
եվ էլ չի չվում եւ Հայաստանից:

Սովետական Հայաստանում իր նրջանիկ կյանքը կերտող հայրենադարձ հայի առօրյան է պատկերել Ս. Զիբովանին «Բեկորվից կեամ մեղվաբույժը» և «Վերադարձ» բանաստեղծություններում: «Բեկորվիցի ձերուլը, որի մեջ հեղինակը ժարմնավորել է հայրենադարձ հայությունը, փոխել է դուռն վշտից ու սովից և փրկություն գտել «հայրենի կանաչ ափերում», որտեղ մեղուները «ծաղիկների ծովից լուկ քաղցրություն են նրա տուն բերում»: Գեղեցիկ ու խորիմաստ բանաստեղծական պատկերի մեջ մարմնավորելով հայերի հայրենադարձության փաստը և վշտին ու ցավին հրամեշտ տված հայրենա-

գարձ ձերունուն համեմատելով հայ ժողովրդի սիմվոլը համարված Արարատ լեան հետ», Սիմոն Զիբովանին գրել է.

Իջում է մօլթը, ու թվում էր ինձ,
Թե ինչ-որ բան է փոխվում աշխարհում,
Թե Արարատ դեմ աչք մյուս ափից
Արարատ լեռն է տուն վերադառնում...
Թե նրա հանգեց յայնք են հանում,
Եւ բարդիներն են ցնծում երգելով,
Ով Արարատը իր տունն է դռանում
Եւս հայ ձերունուն սանահարերով:

«ՕՏընվիս» գործում Ի. Նոնեշվիլին գրանրել է ուսու մեծ ժողովրդի, նրա լեզվի և կուլտուրայի հսկայական դերը անցյալում իրավագրուկ, ներկայումս իրավահավասար սոցիալիստական ազգերին համախմբելու, նրանց ղեկի լուսավոր գալիքը տանելու գործում:

Ման եմ զալիս Հայաստանում
Նս ուրախ ու զմտթ,
Եվ իր տունն է հրավիրում
Ինձ ամեն մի մարդ:

Եվ ամենուր, ամենքի հետ,
Գործարանում, գաղտում,
Ուտերեն եմ իստում թեղեմ,
Վրացերեն եմ շեշտում:

Նս մայրական համբույր է շեքմ
Եվ շուրթերի վրա,
Ողջ աշխարհը եւ կըրքեմ
Նորթյունով նրա:

Հողում է եւ և փառսում
Մեր փառավոր Համփան.
Թող օրհնվի ուսաց լեզուն,
Ազուն եղբայրություն:

Հիշողության մեջ մնացող պատկերներով գրված «Բալլադ աղբյուրների մասին» և «Սահմանապահ» բանաստեղծու-

Յրունների թեմաները նորոթյուն չեն, սակայն նրանք վարպետ վերաբաղադրության շնորհիվ կարգացվում են/հաճույքով/ Հատկապես լիբիկական ջերմությանը է գրված բալլադը, որտեղ հեղինակը բանաստեղծական գեղեցիկ պատկերների միջոցով բնորոշում է հայրենիքի համար զոհված հերոսների անձամասնական գաղափարը: Բանաստեղծին սցենարի էն Ձանգուի ամին կատարված աղբյուր-հուշարձանները՝ նվիրված Ջոյն Կոստոպեյանսկայային, Նեյսոն Ստեփանյանին, Օլեգ Կոշենյին, Սերգեյ Օհանյանին, Ալեքսանդր Չեկայինին և այլոց պայծաս հիշատակին:

Չհաղգվեց թեման
 Ելել կյանքը մեր սեպին...
 Աղբյուրներ եք գարեկի գուր
 Հիմա Ձանգվի եզերքին

Գուք չինք երգեր եք հյուսում
 Ժողովրդի սրտը մեզ.
 Կարեւորում եք ... հոսում
 Այս խոսում եք գուր սեպերը:

Գեղեցիկ, էմոցիոնալ գործ է «Հոկտեմբերի սկզբին էր դեռ ստանաժորը, որտեղ տրված է մի հուզիչ պատկեր Հայաստանի Հոկտեմբերյանի շրջանի կոլտնտեսային առօրյայից: Ի. Նոնեշվիլին խաղողի այգում շրջելիս հանկարծ փարթում վաղերի միջից լսում է վրացական երգի հնչյունները: Նա նկատում է գուրիական բաշլուղներ: Պարզում է, որ նախաներջի կոլտնտեսականները հյուր են եկել իրենց մրցակից հայ կոլտնտեսականների մոտ: Բարեկամ ժողովուրդների սերը հեղինակը ասվիս է հուզիչ պատկերով:

Սիրվում էր երգը վեա-վեա,
 Փարվում նազոզ այգիներին,
 Համբուրվում էր սիրով խորին
 Հայաստանի վաղերի հետ
 Կրտստանի Թրամիթիին:

«Ղվարելիում» բանաստեղծության մեջ Ջիրովանին գովերգել է հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը, նա



Ա. Բամակյանը և Ք. Մանթին



Շ. Պողոսյանի նախկին քանդակած քանդակը Կոմիտասի հուշարձանում

նշել է, որ Իլյա Ճավճավաձևի հայրենիքում՝ Ղվարկիում, սիրով են հիշում հայ մեծ պոետ Քումանյանին, որն իր հերթին սիրել է Ճավճավաձևի հայրենիքը:

1957 թվականին գրած «Հայ գրողներին» բանաստեղծության մեջ Սանդրո Հուլին, ողիշելով ինքն իր հայ և վրաց ժողովուրդների ներկայիս բարեկամությունը, ասել է.

*Աչսօր ես էլ եմ երջանիկ ձեզ հետ,
Մեր սրտերն էլ են կոփվել զարբրում,
Նրա Ասիատական Հայաստանի ես
Գրուի եմ ամօր պահում իմ ձեռքում:*

Վրաստանին նվիրված բանաստեղծությունների շարքում իր արվեստով և մասնազանգաման ինքնատիպությամբ աչքի է ընկնում Հ. Սահյանի «Վրաց ժողովրդին» բանաստեղծությունը: Պոետը կարողանում է վեր հանել հայ և վրաց ժողովուրդների անխախտ սերն ու հոգեհարազատությունը:

*Տեք սրտերում բույն են շինում
Նրա սրտերը մեր սրտերի,
Մեր ձորերից շար են խմում
Լրամենիք Ձեր ամպերի...*

*Ո՛վ չգիտե արեի տակ,
Իր հայաց հին հորովելին
Նախակցել է զարբերի մեջ
Սվանդական Ձեր սիրումիս-ն:*

*Նդրայրենք են մեզմ որից
Նշխարում հաշի ու վրացին
Նվ գառնություն իր խառնելի
Երբեք նրանց ազ ու հացին...*

Բանաստեղծությունների մի ամբողջ շարք է նվիրել Վրաստանին բանաստեղծ Վ. Գավթյանը: Նա գովերգում է հայ և վրաց ժողովուրդների նդրայրական հոգեհարազատությունը, Վրաստանի հարուստ քնությունը և նդրայրական մարտի սերը: Հետաքրքրական և հույզիչ է այդ շարքում ծերունի

Քվաչախիայի խոսքը: Ես դիմելով իր հայ հյուրերին ասում է.

Մենք իբրևու հետ ապրել ենք զարքը
Մեր լեռների պես մեքը-մեքըի ավառ,
Իբրև ոչախից կրակ ենք տարել,
Իբրև հետ կրակն է՝ գինի, է՝ հաց:

Անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունների արտահայտությունը պետք է համարել նաև այն, որ նրանց զրականությունների մեջ արտացոլվել են միմյանց բանահյուսության և ավանդությունների շատ և շատ աչելիսի նմուշներ, որոնց հիմքում ընկած են մարդասիրության, բարեկամության, համառոտ պայքարի բարձր գաղափարները: Այդպիսիներից են, օրինակ, ագրիցյանական զրականության մեջ Քյոտ-օղլու պատումները, հայ զրականության մեջ՝ «Սասունցի Գավիթը», վրաց զրականության մեջ՝ Շոթա Ռուսթավելու «Վազրեսևալտը», Քարթլուսի և Հայոսի եղբայրության ավանդությունը և այլն:

Ահա բազմաթիվ օրինակներից մեկը՝ Սարմենի «Հայոս և Քարթլուր», որից բերում ենք միայն մի բանի քառյակ.

Եվ Հայոսն ասաց.— Քարթլուս իմ տեղին,
Քեզ ինչպե՞ս հայտնեմ նրախոսքս մեծ,
Որ մեր տալովոր ազատի պահին
Զբա՛ն հման պաշտպան եղար մեզ:
— Քն բշար ու բազում կյանք տենեալի,
Քեզ կասի ևս մեկ-մեկ, միասին,
Եղբայր իմ աչելիվ, եղբայր իմ բարի,—
Սասց Քարթլուրը, զրկեց Հայոսին:
Ու համբուրվեցին աչելուս սիրավառ,
Որ ձյունը հայվեց լեռնաշառերին,
Սրբը կարծես երկնից իջավ վար,
Որ մտաղե տանի եղբայր քույրերն
Եվ Հայոսն ասաց.— Քարթլուս, արի մեք
Նյո ծովի ասաց մեր երդումը տանք,
Քանի աշխարհում կանք ու պարուն ենք,
Մերենք մեր հողը՝ մեր մորից էլ Բանկ:
Վտակի ժամին հասնեք սգոսթյան,
Վիշառ ու միծաղը կրակնք իբրև հետ.

Քն զրմենք ուխտը մեր եղբայրության,
Քոզ անիմի մեր ցեղը տահալուս
— Երգում եմ, երգում, — Քարթլուր ասաց,—
Երգում եմ կապույտ այս ծովի ասաց,
— Երգում եմ, — կրկնեց Հայոսը հուզված,—
Մեր երգման վկան Բոզ լինի աստված:

Առկեսական հասարակության բարոյա-քաղաքական միասնության, ժողովուրդների բարեկամության ուժն իր ողջ հմայքով դրսևողեց Հայրենական Մեծ պատերազմի տարիներին: Այդ արհամարիքի օրերին զերմանական Ֆաշիստները հույս ունեին ստանալ Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական բարեկամությունը որս ժողովրդի հետ և հող սանզծել Անդրկովկասին տիրապետելու համար:

«Գերիկզի կանաչ Բղթադանակը», — գրել է «Պրավդան», — կոչ էր արել Ֆաշիստ զորավարներին, որ «հակասությունները տեղացիների (վրացիների, հայեր, թաթարներ և այլն) և որսանների միջև պետք է օգտագործել մեր օգտին»¹: Սակայն Ֆաշիստների հույսերը չարդարացան: Ամենաժանր փորձությունների ժամանակ, 1942 թվականի օգոստոսի 23-ին, Քրիխիում կայացավ Վրաստանի, Ագրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների հակաֆաշիստական միությունը, որտեղ ընդունված դիմումի մեջ ասված էր.

«Զկա՛ այնպիսի ուժ, որը կարողանար միմյանցից բաժանել Անդրկովկասի ժողովուրդներին, նրանց անշտանի որս մեծ ժողովրդից՝ ՍՍՍՄ ժողովուրդների բնասանիում՝ մեր ավազ եղբորից... Ագրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողովուրդները երբեք ոչ սքի չեն տս պատմական այդ մեծ նվաճումները:

Քշեմախն կշարք իր ժանիքները՝ դարնվելով Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների անխորտակելի համախմբվածության պողպատե պարսպին...»²:

1 Սարմեն, Բանաստեղծի ստեղծուրք, Երևան, 1961, էջ 253—254:
2 «Պրավդա», 1942, 6 սեպտեմբերի
3 Տոս. Մ. Կալաբալա, Առկեսական Վրաստան, Երևան, 1961, էջ 163:

Սովետահայ գրականության մեջ նոր ուժով հնկեցին ժողովուրդների եղբայրական համագործակցության և սովետական հայրենասիրության գաղափարները, «Վարդանանք» պատմավեպում Գևորգյանը ցույց տվեց, որ պարսկական բռնակալության դեմ հայ ժողովրդի մղած պայքարին մասնակցել են նաև վրացիները և աղվանները:

Հայրենական պատերազմի տարիներին Հր. Քոչարը գրեց իր «Տարեկի որդին» պատմվածքը, որտեղ հնկեակեր անկեղծորեն հպարտանում է Տարեկի զորմիջ սերմած բազալն գնեներս: Բավարձբերիաձևի հոյակապ կերպարով: Բայց Քոչարի՝ պատերազմական թեմայով գրած լավագույն ստեղծագործությունը «Մեծ տան գավախները» վեպն է. դա ժողովուրդների եղբայրության և բարեկամության մի սրանշնչի հիմն է: Վեպի մեջ մեր մեծ, բազմազգ Հայրենիքի ժողովուրդների հետ առաջին պլանի վրա են դրվում Միկարբեիձև եղբայրները՝ բաղրաբանական լավագույն հասկումովյաններ կրող, գեղի կամիսար Շալվան ու խելախ շարապյան Իրակլին:

Գրականության համագործակցության տեսակետից ուշագրավ է նաև այն փաստը, որ, օրինակ, հայ ընթերցողը այսօր հնարավորություն ունի իր մայրենի լեզվով կարդալու ոչ միայն արևմտակարգական և ուսական գրականության կրթականներին ու ժամանակակից գրողներին, այլև կարող է կարգավ լրացական և աղբյուրական սովետական գրողների ստեղծագործությունները:

Տ. Տարեկանն ղեկու 1936 թվականին գտնում էր, որ այնչի շատ պետք է թարգմանել միլիանց. օրինակ, կանգ առնելով հայ գրականության վրա, նա գրել է. «...նս կատմ նախահոյանները: յան գրականության սրանշնչի վարդեռ Ավ. Իսահակյանի սևուր, որին թարգմանել է Բրյուսովը: Ես կհիշեմ Նելլե Չարենցի, այդ նշանավոր բանաստեղծի և արձակագրի, վարպետի և նորարարի անունը: Ես կարող եմ ապա նախի Ջարյանի, Գուրգեն Մահարու, Ալազանի, Ազատ Վշտունու, Գ. Սարգսյանի, Նարեցի և մյուսների անունները: Մենք պետք է հանձն առնենք նրանց բանաստեղծությունները Միության բուր ժողովուրդների լայն ընթերցող մասսաների սեփական

ությունը դարձնելու աշխատանքը: Այժմ արդեն Տ. Տարեկանի այս ցանկությունը իրականություն է դարձել:

Աղբյուրական ժողովուրդների գրականությունների արժեքների փոխանակման գործում մեծ դեր է խաղացել նրանց թարգմանումը և հրատարակումը հայերեն, վրացերեն և աղբյուրականներն, որոնք անգնահատելի գործունենք են մեր ժողովուրդների կուլտուրական մեթոդներ համար: Նախքան աղբյուրական գրականությանը անցնելը ասենք, որ վերջին 25-ամյակում Հայաստանի և Վրաստանի հրատարակչական կազմակերպությունները լույս են բնծայել փոխադարձաբար թարգմանված հայ և վրաց գրողների ղեղարկեսական ստեղծագործությունները: Այսպես, օրինակ, հայերեն թարգմանվել և հրատարակվել են Ա. Ղազարյանի, Է. Նինոշվիլու, Վաթա Փշավաչի ստեղծագործությունները: Շոթա Թուսթավելու հորեյանի առթիվ 1937 թվականին հայերեն լույս ածած «Վազրենավորը», նույն թվականին՝ Իլյա Ճավճավաձեի բոտրի նրկերի ժողովածուն, այնուհետև Ակակի Մերթելու բանաստեղծությունների ժողովածուն, 1945 թվականին Ն. Բարաթաշվիլու «Հատընտիրը» և այլն: Իսկ հայերենից վրացերենի են թարգմանվել և լույս բնծայվել Հ. Թումանյանի «Ընտիր երկերը», «Փմկարերի առումը», «Հեթիսթները», Գ. Գոգոսյանի երկերի առաջին հատորը, 1000-ամյակի առթիվ՝ Սասունցի Գալիթի՝ էպոսը, Ավ. Իսահակյանի բանաստեղծությունները, Եփրատագրի «Նամուսը» և «Քառուսը», Մերուն Թորգոմյանի «Հատընտիրը» և այլն:

Այս առնելը իրավացիորեն անբավարար համարելով, 1945 թվականին Ավելիի ամբաստանը Հայաստանի և Վրաստանի դրական կապերը՝ հողվածով հանդես են գալիս Գ. Լեոնիձեն, Ստ. Զորյանը, Գ. Սարգսյանը և Բ. Փրենտին, որտեղ նրանք գրում են. «Մեր երկու ժողովուրդների բարեկամության և փոխադարձ ճանաչողության լավագույն և գործուն միջոցներից մեկն էլ հանդիսանում է ղեղարկեսական գրականությունը, և այս ցանկություն են հայտնում, որ անհրաժեշտ է, որ մեր երկու ժողովուրդների գրողները կատարեն փորձի փոխանակություն, համատեղ նիստերում դրադվեն սովետական գրա-

կանոնային ակտուալ պրոբլեմների ընծայմամբ, մտքերի փոխանակությամբ օժանդակելն միմյանց գրական այս կամ այն խնդրի լուծման գործում և որ զլիսավորն է՝ հնարավորություն ստեղծելն, որ մեր երկու ժողովուրդները իրենց մայրենի լեզուներով ծանոթանան երկու երբայրական գրականությունների թե՛ կլասիկ և թե՛ ժամանակակից հեղինակների լավագույն երկերին¹, եվ իսկպսակս, սկսած 1950-ական թվականներից Հայաստանի և Վրաստանի հրատարակչական կազմակերպությունները ավելի հաճախ են լույս բնծայում հայ և վրաց գրողների գործերը:

Վերջին տարիներին հայերեն հրատարակվել են՝ Ի. Աբաշիձեի բանաստեղծությունները, Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունների երկու ժողովածուները, Ի. Նոնիշվիլու «Հայաստանում» բանաստեղծությունների շարքը, Ս. Զիրովանիի «Եղբայրության ճամփաները» դեղբը, Սուլիան-Սարա Օրբելիանիի «Հնարանքի իմաստությունը» և այլն: Իսկ Վրաստանում լույս են բնծայվել՝ Ե. Չարենցի և Հակոբ Հակոբյանի գործերը, Վ. Անանյանի «Անանի սպին», Մ. Ասլանյանի «Պատմվածքները», Ա. Իսահայանի «Հատրեպերը», Գ. Բորյանի «Ալք և ոլջ», Գ. Սևուցի «Քեհերանը», Բ. Սևրանյանի «Էկոնեքում գառն է», Հ. Քումանյանի գործերի նոր ժողովածուն, Ա. Երվանդացիի պատմվածքները և ուրիշ գործեր: Հատկապես ուշագրավ էր 1960 թվականին Պետհրատի կողմից լույս բնծայված վրաց ակադեմիոս արձակագիր Կ. Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աքը» վեպը: Հայերեն հրատարակության առթիվ դրած նրա առաջարկների խոսքերն այժմ անցնում են ամեն մի հայի հոգու խորքերը, ցնցում և զմայլում է նրա սիրտը. «Ես,— գրել է Կ. Գամսախուրդիան,— մեծ հուզմունքով եմ գրիչ վերցնում ձեռքս այս մի քանի խոսքը գրելու համար, ինձ համար իսկպսակս որ ուրախալի է, որ իմ վեպը հնչիլու է եղբայրական հայերի սրանշնչի և հնագույն լեզվով...»

Մենք՝ վրացիներս, ձեզ՝ հայերիդ, սիրում ենք նաև նրա համար, որ մենք Երկվորյակների պես եման ենք իրար:

Մեր ժողովուրդների ողբերգական պատմությունները եր-

ձան են: Մեր լեռները, մեր գետերը, վերջպսիս մեր լեզուներն ու ճարտարպետություններն ապացուցում են այդ բարեկամության նմանությունը... Հայաստանում ևս ունեմ դարձյալ մի պանծալի և մեծ բարեկամ, որի հանդեպ ունեցած սերը միշտ վառ է իմ մեջ, դա իր կուտուրայով, իր բազմադարյան առնչանքներով ու իր արիությունը հանրահայտ հայ ժողովուրդն է²:

Վրաստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակի առթիվ Հայպետհրատը լույս բնծայեց մի շարք գրքերի, այդ թվում նաև Վրաց գրականության բնախի էջեր ծավալուն գիրքը, ուր տեղ են գտել վրաց գրողների արձամած և արձակ գործերի թարգմանությունները: Այնտեղ ներկայացված էին վրաց գրականության լավագույն գործերը՝ սկսած Կ. Գարբի մինչև մեր ժամանակակիցը: Բացի դրանից, հրատարակվեցին նաև Վրացական ՍՍԹ-ի և Վրաստանի լոմենայակում» գրքերը, որոնք պատմում են Վրացական ՍՍԹ-ի սովետական տարիներին ձեռք բերած հաջողությունների և ստաշիկա հույակալ խնդիրների մասին, որ վրաց ժողովուրդը գրել է իր առջև: Հայ և վրաց գրական կապերի ամրապնդման և աշխուժացման գործում զգալի դեր են կատարել նաև Հայաստանի և Վրաստանի բանասերները: Նրանց պրոպանդները վեր են հանել մեզ մինչև վերջերս անհայտ շատ ուշագրավ փաստեր, որոնք պատմում են հայերի և վրացիների եղբայրական բազմակողմանի փոխհարաբերությունների մասին: Երիտանկ, ուշագրավ է Հայաստանի պետական մատենադարանի աշխատողների գիտահետազոտական աշխատանքները, որոնք շարունակ երեսն են հանում նորանոր ձեռագրեր, փաստաթղթեր վրաց և հայ ժողովուրդների գաղափար բարեկամության, օտար զավթիչների դեմ մղած նրանց համատեղ պայքարի մասին: Այսպես, գիտական աշխատող Ս. Լալաֆարյանը կազմել է հայերեն այն ձեռագրերի ցուցակը, որոնք գտնվում են Վրացական ՍՍԹ-ի Գիտությունների ակադեմիայի ձեռա-

1 Կ. Գամսախուրդիա, Վարպետաց վարպետի աքը, Հայպետհրատ, 1960, էջ 6-7:

¹ «Վրական թերթ», 1948, N 20:
174

գրերի ինստիտուտում: Մոտ 300-ի չափ ձեռագրեր պատմում են Հայաստանի, Վրաստանի և Երանց ժողովուրդների կյանքի մասին: Բացի այդ, Հայաստանում և տարրեր վայրերում գտնվող 25 հազար հայկական ձեռագրերից ավելի բան 20 հազարի մեջ կան գտնադրան տեղեկություններ Վրաստանի մասին:

Վրաց և հայ ժողովուրդների կուլտուրական սերտ կապերը վկայություն են նաև հայ-վրացերեն և վրաց-հայերեն հին բառարանները, որոնք գտնվում են Քրիլիսիում և Երևանում: Սովետական իշխանության տարիներին ավելի զարգացավ հայագիտությունը՝ Վրաստանում և վրացագիտությունը՝ Հայաստանում: Քրիլիսի Պետական համալսարանում նրա հիմնադրման օրից գործում է հայագիտական ամբիոնը, պրոֆեսոր Լեոն Մելիքսեթ-Քեկի ղեկավարությամբ: Երևանի Պետական համալսարանում ևս դասավանդում են վրացագիտական դիսցիպլիններ. այս կարևոր գործում մեծ ծառայություններ ունեն բանասեր Գեորգ Ասատուրը, որը միաժամանակ մեծ թվով հոդվածներ ու ուսումնասիրություններ է գրել հայ-վրացական գրական կապերի մասին, պրոֆեսոր Գուրգեն Սևակը, որը ղեկավարել է Երևանի համալսարանի վրացագիտական կարիները և բազմաթիվ հոդվածներ է գրել վրաց գրականության և վրաց լեզվի գնահատան հարցերի շուրջը: Վրացագիտական արժեքավոր գործեր են ավել նաև հանրահայտ գիտնականներ Հրաչյա Աճառյանը և Գրիգոր Ասիսյանը: Է. Աճառյանը հիսուս նախասովետական շրջանում հատկապես զբաղվել է հայ և վրաց լեզուների փոխազդեցությունների հարցով: 1926—1932 թվականներին հրատարակած «Հայերեն արմատական բառարան» բազմաշատոր աշխատության մեջ նա ապլի է նաև հայերի և վրացիների մեջ եղած ընդհանուր բառեր, այն բառերը, որոնք գտնվում են վրաց և հայ բառարանային ֆոնդի մեջ: Պրոֆեսոր Մելիքսեթ-Քեկը բազմաթիվ աշխատություններ է գրել ինչպես հայագիտության, այնպես էլ վրացագիտության, հայ ու վրաց ժողովուրդների գրական-կուլտուրական կապերի վերաբերյալ և մեծ վաստակ ունի այդ բնագավառում: Հայ-վրացական փոխհա-

րաբերությունների ուսումնասիրման բնագավառում մեծ վաստակ ունի նաև Իվ. Զավաթիշվիլին: Նա ոչ միայն վրացագիտ էր, այլև հայտնի հայագետ: Նրա թողած ժառանգության մեջ կարևոր տեղ են զբաղում հայագիտական գործերը: Վրաց ժողովուրդի ակնառավոր գիտնականը մեծ հետաքրքրությամբ է ուսումնասիրել հայ ժողովուրդի անցյալը և գրել է բազմաթիվ աշխատություններ այդ մասին: Նա մեծ հարգանք է վայելել հայ ժողովուրդի, նրա գիտնականների կողմից: Ժողովուրդների կուլտուրական համագործակցության բնագավառում նրա կատարած բեղմնավոր գործունեության հետևանքով էր, որ նա քննովից Հայաստանի մատենադարանի, ինչպես նաև պատմության, լեզվի և գրականության ինստիտուտի գիտական խորհուրդների անդամ կազմի անդամ:

Նշենք նաև Պետհամալսարանի զոցեկոս Վ. Նալբանդյանի «Քրիլիսի Վրաց մատենադրության մեջ» և Մ. Զավաթյանի «Ռեյզովգներ հայ-վրացական գրական-կուլտուրական կապերի պատմության» արժեքավոր գրքերը, որոնք բազմականալից լրացնում են վրացագիտության և վրաց ու հայ ժողովուրդների կուլտուրական համագործակցության ուսումնասիրման բնագավառում գոյություն ունեցող բացը: Այս առումով հետաքրքրական է նաև դեռևս 1957 թվականի Քրիլիսիի համալսարանի հրատարակությամբ լույս տեսած Ի. Վ. Շիրյանի «Հին հայերենի քերականությունը քրեստոմատիայով և բառարանով» գիրքը, որը մի կարևոր ներդրում էր հայ և վրաց ժողովուրդների կուլտուրական կապերի ասպարեզում: Հեղինակը նշել է, որ վրաց լեզվի հայերենի հնագույն շրջանի քերականության գրքի լույս բեմադրումը վաղուց ի վեր զարակ էր անհրաժեշտություն, որը և իրականացրել է ինքը¹:

1 Տե՛ս «Սովետ. գրականություն», 1957, № 6, Մ. Բազդասարյանի գրախոսականը:

Սովետական իշխանության տարիներին ավելի են ծավալվում և ընդարձակվում հայ և ազրբեջանական ժողովուրդների կապուղարական, զրահան կապերը և համագործակցությունը, որը երկու ժողովուրդների զարգամյա բարեկամության էլ ավելի ամրապնդման արդյունք էր: Հ. Հակոբյանը, Ե. Չարենցը, Ա. Վշտունին, Զ. Զարարեյին, Ս. Վուրդուրը, Ս. Ռուստամը, Ս. Ախունդովը և շատ ուրիշներ իրենց ստեղծագործություններում սկսեցին դավերգել Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի մեծագործությունները՝ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում, իրենց գործունեությամբ օժանդակեցին մշակութային արժեքների փոխանակությանը: Այսպես, որհանի, Ս. Ա. Ախունդովը, Անդրբեյկովիստում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո, զրեց իր «Ենթան» պիեսը, որտեղ ցույց տվեց, որ անդրբեյկովիստյան ժողովուրդները իրենց կրքանկությունը, իրենց անխորտակելի բարեկամական փոխհարաբերությունները ստեղծել են շնորհիվ Սովետական իշխանության: Եստիսորոշ են պիեսի գործող անձերից մեկի՝ Սաղբա Քիշիի խոսքերը: Այ, դիմելով երիտասարդներին, ասում է. «Ջամակներս, ես հասել եմ այս տարիների, բայց այսպիսի կորսություն, բնկերության աշխարհ չեմ տեսել, որտեղ մարդիկ հավատար են» ասողներ շատ են կղել, բայց մինչև այժմ այդ բանը, բացի բուլղիկներից, ոչ ոք չի իրականացրել»:

Ոգևորված այդ «կորսություններ»-ով, Եղիշ Չարենցը գրում է «եռո՛հրդային Ազրբեջան» իր ողբշունչ ձև-բանաստեղծությունը.

Ողջ՛յն, ողջ՛յն ժողովուրդին կորսության,
 Եղիշ արե՛մ անձամ մեզ հետ և Եղիշ հացով.
 Մեզ հետ մեկտեղ կրած կույանքը ցարական,
 Մեզ հետ մեկտեղ հանձան կյանքը արևազած.—
 Հանձն՛ե՛ հում կրած անձուս տառապանքի,
 Հանձն՛ե՛ այստղ կոփվող կյանքի լիահնչյուն.—
 Հանձն՛ե՛ անձան մեր գաղիքի և հառ կյանքի.—
 Եղարտական ժողովուրդին ողջ՛յն, ողջ՛յն...

Ազատ Վշտունին նույնպես զերմաշունչ բանաստեղծություն է նվիրում ազրբեջանական ժողովրդին, որը Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության շնորհիվ «բյուրավոր շահեր վառած» և ջահելացած՝ կիրտում է իր լուսավոր սպազանս:

Չարենցի «Կայսրիկ Բամաշան» ազրբեջանցիների, հայերի և վրացիների՝ իրենց իշխանների դեմ մղվող համատեղ պայքարի, նրանց սեռայնացիոն ընդդիման մի հիանալի գովք է:

Այսպես հայ և ազրբեջանցի գրողներն ու բանաստեղծները իրենց ստեղծագործություններում արտացոլել են երկու ժողովուրդների սերտ բարեկամությունը, նրանց հույսակալ, կատարողական պաթոսով լի կյանքը: Սովյետական Ռուստամը, որհանի, «Գյանջան» բանաստեղծության մեջ գրել է.

Ես գրիկ մեջ տես թուրքին ու հային,
 Իր մեկտեղ են ապրում, իրար տում զրան...

Նույն ոգով են գրված Ս. Վուրդուրի «Գիլիշանի ձորում», Մ. Օրդուրագի «Գիլիշանի ձամփին», Ս. Ռուստամի «Սևանա լճում», «Մի՛ բե քիշ է», Ռ. Ռզայի «Ծաղկած այգի», Ռ. Նիգարի «Այաղազ» և ուրիշների բանաստեղծությունները: Ռ. Նիգարն իր «Այաղազ» բանաստեղծության մեջ գրել է.

Եմ սրտի մեջ կմտ սերդ վառ,
 Տե՛մ մտածես ժողովրդին քո ազատ,
 Իր քո դիմք վանեց թե՛ ամպ, թե՛ խավար,
 Եվ Այաղազ, մեր ամենրին հարգապատ:

Ասանդ Վուրդուրը «Գիլիշանի ձորում» բանաստեղծության մեջ շերտորեն կրկնով Հայաստանի բնության գեղեցիկ անկյուններից մեկը, այնուհետև գրում է.

Գույր ձորից սալերն են խոտում,
 Համքերի կրքը աշխարհն է յսում,
 Կրք էր, բարբից այլուն էր հասում,
 Հի՛սա մարգարիտ չրեք են գույս:

Հայ և աղբրեշանական ժողովուրդների բարեկամությունն է գովերգվում նաև Ա. Գրաշու «Աղբրեշան», Ս. Վուրդուրի «Ճուղաշ, բնկեր, ամխանագո», «Կովկաս», «Երջանկության երգը», Ս. Ռուսասանի «Եմ երկիր» գործերում: Գ. Սարչյանի «Երգ հաղթանակի» բանաստեղծությունը, որը նվիրված է Անդրկովկասյան Ֆեդերացիայի 10-ամյակին, իր ժամանակին մեծ արձագանք զգավ երեք զբից անսպորիկաներում:

Նշենք նաև, որ Ն. Զարչյանը իր «Ռուսների քարափը» պոեմում կերտել է նաև աղբրեշանցի նովյուրի կերպարը, պատկերել է նրա և Ալեքսանի մտերմությունը: Այնուհետև, Գ. Սարչյանի «Կրկ Կայսրի», Ս. Տարնեցու «Պուշի արտարակը», Հմ. Սիրաբի «Լավիճին», Գ. Գեմիհճյանի «Նիդյաբը» և «Նարգիզը», Վահան Քոթվանցի «Քարու» պատմա-ուսույույոյոյոն նուսաստոր վեպը, «Քարու-Լանդոն» ստեղծագործությունը, Ա. Գրաշու «Քուլլադ մի աղբրեշանուհու մասին», Գ. Քեհի «Չաղբաշի թագավորությունը» և «Չաղբան» պատմվածքները, Ազավնու «Ճաթմա» պոեմը և ուրիշների գործերը նվիրված են Սովետական Աղբրեշանին, նրա զավակներին, մեր ժողովուրդների բարեկամությունը: Օրինակ, Ա. Արուստանը իր «Աշխարհը բանդվում է» (1930) գործում վեր է հանել Հայ և աղբրեշանական ժողովուրդների բազմադարյան բարեկամությունը, ինչպես նաև նկարագրել երկու ազգի գրողներին հասանելի աշխատանքը Սովետական իշխանության առաջին տարիներին: Հեղինակը պատկերում է, թե ինչպես աղբրեշանցիները գծում են հայերի մաս շարաթույլակի, իսկ հայերը՝ աղբրեշանցիներին մաս:

«Նիդյաբ» վիպակում Գ. Գեմիհճյանը պատկերում է երիտասարդ աղբրեշանուհու վերաբերմամբ, աղբրեշանուհի, որը հաղթանարում է քստանկան հին սովորությունները, սկսում է սովորել և դառնալ սովետական կյանքի ակտիվ կատարող: Աղբրեշանական և հայ ժողովուրդների Սովետական իշխանության համար մղվող պայքարն իր արտացոլումն է գը-

տել Վ. Վաղարշյանի «Օղակում» պիեսում: Նույն թեմային է նվիրված Ա. Գրաշու «Երբ բացվում են մանուշակները» պիեսը: Մ. Գավթյանի «Մեր քաղաքում» երկը նվիրված է Բարվի բանվորների կյանքին, նրանց հերոսական գործերին: Հետագայում հայ գրողների գործերում պատկերվում է հայ, վրաց և աղբրեշանցի մարտիկների բարեկամությունը, ինչպես, օրինակ, Սարսենի «Երեքը», Ալազուրի «Քարազատ հուղը», Հր. Քոչարի պատմվածքները, նրա «Մեծ տան զավակները» և այլն:

Մ. Իրախիմովի «Կգա օրը» վեպում, որը նվիրված է հարավային Աղբրեշանի ժողովուրդների ազատագրական պայքարին, հերոսներ Ֆրիզոնան, բելիշ Սիմոն Սիմոնյանը և Ռոյա Կահրամանին համակցված են միասնական մեկ նպատակով՝ պայքարել ժողովուրդների ազատության և երջանիկ օրվա համար:

Այնպես, ինչպես Գ. Սևունցը իր «Թեհրան» վեպում եկարագրում է նաև աղբրեշանցի հերոսներին, Հրաչյա Քոչարը «Մեծ տան զավակներում» ստեղծում է աղբրեշանցու և այլ ազգերի ներկայացուցիչների կերպարներ, այդպես էլ աղբրեշանական գրողների գործերում աղբրեշանցի հերոսների հետ միասին գործում են նաև հայերը: Միրզա Իրախիմովը ևս իր «Կգա օրը» վեպում աղբրեշանցի հերոսների հետ միասին քստեղծում է նաև հայ հերոս բելիշ Սիմոն Սիմոնյանի կերպարը, որը վաշխում է իրեն շրջապատող հայերի, աղբրեշանցիների և պարսիկների թմամկրեսող:

Հայ և աղբրեշանական ժողովուրդների բարեկամությունն է արտացոլվել նաև Սուլեյման Ռահիմովի «Մտնո», Միր Զալի «Մի իրիտասարդի մանիճիտը», Արուստանի «Աշխարհը բանդվում է» վեպերում:

Հայ և աղբրեշանական գրողների ստեղծագործություններում արտացոլվել են նաև երկու ժողովուրդների ձեռք բերած հաջողությունները սցիտալիստական շինարարության տարրեր բացազատներում:

Հայրենական Մեծ պատերազմի տարիներին մեր գրողները իրենց ներկրում արտացոլում են անդրկովկասյան ազգերի

1 Տե՛ս Ա. Սևակի, Հայ և աղբրեշանական ժողովուրդների բարեկամության արտացոլումը գրականության մեջ, Երևան, 1955, էջ 87:

զերմանական ֆաշիզմի դեմ մղվող համերաշխ և միասնական պայքարը:

Իր էլույթներից մեկում աղբրեչանական գրող Սամեղ Վուրդունք հայտարարել է. «...Թող մեր մեծ նախնիների անմահ կերպարները՝ Տարիկի, Սասունցի Գավթի, Բարբեի և Քյոս-օղլու, զարձյալ կանգնեն մեր հայացքների առաջ: Թող կովկասյան անառիկ լեռների անտառի անդունդները զերեզման դասնան զերմանական զավթիչների համար»:

Ահա այդ օրերին Մահմեդ Ռահիմը գրում է «Նրեք եղբայր» բանաստեղծությունը, որը անցնում է ձեռքից-ձեռք և ոգևորում մարտիկներին նորանոր սխիստագրություններին:

Խոր լիրիզմով հաղեցված այդ բանաստեղծության մեջ հեղինակը խոսքն ուղղելով կովկասյան լեռների մասուլցներում մարտնչող աղբրեչանցի, հայ և վրացի մարտիչներին՝ կոչ էր անում չախչախիս գազազած թշնամուն, որը ձգտում էր արյունով լցնել նրեք եղբայրների նրկիրը, խափանել նրանց ձեռք ընթած երջանկությունն ու հաղթանակները:

Հեուց ի վեր եղբայր են վես
Գազրիկ, Կյուպաս և Այգաջազ,
Օտար միեր չեն խմի, չէ
Հորդ զեռերից չուրե, իմ Կովկաս
Ճողովուրդներն են ձեռք բերել
Եզրայութեան ու հաղթանակի
Եվ փառք անմեղ կաշառապանն՝
Ռոզլու անպարտի թանակի
... Ելան, որպես մի ընտանիք,
Ելան, երեք եղբայրն արի,
Որ սճանկեր բուշեչեն
Եվ մոխրտես ջո թշնամին:
Երեք եղբայր ուներն են շատ,
Երեքն էլ՝ շուտագոր, փառքով,
Երանք հիմի մեկ են սիրով,
Մեկ են հոգով և օրենքով
Երանք ավուրե ունեն հեուց՝
Իննասել շար թշնաման.
Հեուց ի վեր կալում են, տես,
Եզրայութար և միասուլ:

Իս, ով աչք է տեկել անկուտ
Մեր բարբրին, տանն ու այգուն՝
Հող ու մոխիր պիտի գտնաս
Երեք զարկով մեր գլուխը
Ռոզլու անպարտ կորեղբորի
Կովկաս անկող ստիկներին
Չեն գտնել իրենց տան ուղին
ու հեռու իրենց ուղիներին
... Այս գոռ ժամին, ով եզրայրեր,
ամուր, մայրի պես, կորովով իր,
Կրկին օրերն են բարձրացրել
Արան, Գավթի ու Քյոս-օղլու:

Խոսելով հայ-աղբրեչանական զրական կապերի և համագործակցության մասին, չի կարելի թեկուզ թուօցիկ շեշել այն զերը, որ խաղացել է Բաքուն հայ գրականության և ընդհանրապես կուլտուրայի զարգացման բնագավառում:

Պրոլետարական Բաքուն միշտ էլ կարևոր դեր է խաղացել հայ կուլտուրայի և գրականության զարգացման օջախներից մեկը: Բաքվում է հանդես եկել հայ գրամատուրգիայի խոշոր ներկայացուցիչներից մեկը՝ Ալ. Երոզյանը, Բաքվում իր մկրտությունն է ստացել հայ պրոլետարական գրականության հիմնադիր, ուսուցիչների Լակոբ Լակոբյանը: Բաքվում վրաց, աղբրեչանցի, ոտս և ուրիշ ազգերի գործիչների հետ միասին իրենց ուսուցիչները զործունեությունն են ծավալել պրոլետարական գործի անկուռ մարտիչներ Սահփան Շահամյանը և Սուրեն Սպանդուրյանը, որոնք խոշոր գործ են կատարել նաև հայ կուլտուրայի զարգացման և արարքի ժողովուրդների կուլտուրական կապերի բնագավառում:

Սովետական իշխանության հաստատվելուց հետո 1921 թվականի մայիսին Բաքվում սկսում է լույս տեսնել «Կոմսուխաս օրաթերթը, 1924—1925 թվականների լույս են տեսնում «Հայաստան» և «Իշխա» գրական-զեղարվեստական շանդեսները, կազմակերպվում է գրողների հայկական անկցիա: 1930 թվականին լույս է տեսնում գրական երկու մոզրվածու՝ «Շատրվանք» և «Արիսյան շեփոք», որոնք բավա-

կանաչափ նպաստում են հայ կուլտուրայի և գրականության զարգացմանը, նոր նորասարգ գրական սերնդի դաստիարակմանը: Բարձրում լույս է տեսնում նաև «Խորհրդային շրջ» հանդեսը, որի շուրջը համախմբված սովետահայ գրողները լրենց ստեղծագործություններում արտացոլում են սցիտափետական շինարարության համար պայքարող սովետության մարդկանց խիզախումները:

Գրական-կուլտուրական համագործակցությանը մեծապես նպաստել են նաև մի շարք համատեղ միջոցառումներ: Սովետական իշխանության հենց առաջին տարիներին հայ և ադրբեջանցի գրողները կազմակերպել են հաճախակի հանդիպումներ: Այսպես, 1929 թվականին Հայաստանի գրողների հրավերով Հայաստան են գալիս ադրբեջանական մի շարք գրողներ՝ Զ. Մամեդ Կուլիզադեն, Ա. Հախվերդիկը, Ա. Շախբ., Ս. Ս. Ախունդովը, Զ. Զարարյին, Մ. Ռուստամը, Մ. Ռահիկը, Հ. Զավիդը, իսկ ադրբեջանական գրողների և աշխատալուծության հետ հանդիպելու նպատակով Ադրբեջան են մեկուսում հայ գրողներ Ա. Եիրվանդադեն, Ն. Զարենցը, Ստ. Զոբյունը, Արաբը, Ս. Տարոնցին, Մ. Սարյանը: Արդուլա Շախբ Երևանում տեղի ունեցած հանդիպումների մասին նշել է. «Երեք հարևան եզրը միջև այն ժամանակ ստեղծված գրական կուլտուրայի վառ հիշողության և ազդեցության տակ վերադարձել ենք Բաքու»:


Այդ հանդիպման հաջորդ տարիներին ստեղծվում են Զ. Զարարյու «1905 թվականին» պիեսը, Հ. Հախբյանի «Քաղաքը», Ն. Զարյանի «Քաքու», «Բարձրում մերոնց մոտ» պոեմները, Ա. Հախվերդիկի «Շատ լավ» պիեսը, Գ. Գեմիբեյանի «Ռաշիդ» և «Նիզար» վիպակները, Գ. Սարյանի «Կըզ Կալափ» բալլադը, Մ. Օրդուբադիի, Հ. Մեհդիի, Արուստանի վիպերը, որոնք նվիրված են հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամությանը¹:

1938 թվականի դեկտեմբերին Սովետական Հայաստանի

¹ Տե՛ս Ա. Նրևանցի, Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության արտացոլումը գրականության մեջ, Երևան, 1955, էջ 83—84:



Վոյաջ կատարող գրեկները դեմոստրացիա ներկայացնում



Վեյալ Գրովեր և կուլտուրայի գործիչներ պանթեոնում

աշխատավորները նշում են ազրբեջանական ժողովրդի խոշորագույն գրող, դեմոկրատ-լուսավորիչ Խ. Աբովյանի մահրիմ բարեկամ Միրզա Ֆաթալի Ախունդովի ծննդյան 125-ամյակը, իսկ 1953 թվականին՝ նրա մահվան 75-ամյակը:

1939 թվականին Բարձրում նշվում է Հովհ. Քումանյանի ծննդյան 70-ամյակը: Այդ նույն թվականին և՛ Ազրբեջանում, և՛ Վրաստանում լայնորեն նշվում է «Մասունցի Գավթ» էպոսի 1000-ամյակը: 1942 թվականին, Հայրենական պատերազմի թե՛ օրերին, Բարձրում հանդիպում են ունենում հայ և ազրբեջանական զորղները: Ազրբեջանական «էդարիյաթ գաղեթին» այդ հանդիպման մասին գրեց. «Այս պատմական հանդիպումը պարզապես գրական հանդիպում չէ, այլ սիրտ, մյասնոսթյան, եղբայրության հանդիպում, բնդանուր թշնամու դեմ մեր մղած արյունալի մարտերի օրերի հետ զուգակցցվող բազաբական համագործակցության հանդիպում»: 1945 թվականին Ազրբեջանում նշվում է Սայաթ-Նովայի մահվան 150-ամյակը: 1947 թվականին բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը ևս լայնորեն նշում է Նիգամի Գյանչևի ծննդյան 500-ամյակը: 1948 թվականին ազրբեջանական ժողովուրդը նշում է Խ. Աբովյանի մահվան 100-ամյակը:

Երկու ժողովուրդների կուլտուրաների համագործակցությանը միշտ էլ նպաստել է գրողների լավագույն գործերի փոխադարձ հրատարակությունը: Սովետական Հայաստանում լույս են տեսել ինչպես ազրբեջանական կլասիկ, այնպես էլ սովետական շրջանի շատ գրողների գործերը:

Դեռևս 1928 թվականին հաշրեն ապագրվել են Մ. Ֆ. Ախունդովի «Խարված աստղերը» պատմվածքը, «Հաջի Կարա» կատակերգությունը և «Արևելյան պոեմը», այնուհետև հայտերի նրգթծարան Ս. Ա. Շիրվանիի բանաստեղծությունների ժողովածու և այլ գործեր: Լույս են տեսել նաև Նիգամի Գյանչևի «Աչի և Մեջնուն», «Ետարով և Շիրին» պոեմները: Հայերեն թարգմանվել և ապագրվել են ազրբեջանական ժողովրդական բանավյուսության շատ նմուշներ: Մեզ մոտ թարգմանվել և լայն տարածում են գտել Մ. Օրդուբադիի «Մշուշապատ Թավրիզը» վեպի ասաջին հատորը, Ս. Վուրդունի «Հատ-

ընտիրք», Ա. Արուստամանի «Վերելքում», Մ. Հուսեյինի «Վարարում» և «Առավոտ», Միր Զալիլի «Մի երիտասարդի մանկ-Ֆեստը», Մ. Իրաւահիմովի «Կգա օրը» վեպերը, Մ. Ռահիմի «Վենիզրադի վրաս» պոեմը, Ս. Ռուստամի «Հատընտիրը», «Պարտիզան Ալի» պոեմը, Զ. Զարբաբի «Ֆիրուզա» և «Գիւրգա» պատմվածքները, Ռ. Ռոզայի «Ներին» պոեմը, Օ. Սարիվալիի, Մ. Դիլրադիի, Ռ. Նիզամիի բանաստեղծություններն ու պոեմները, է. Մամեդանովի «Բարդի դիւնները» պատմը-վածքների ժողովածուն, Զ. Մամեդ Կուլիզադիի պատմվածք-ները, «Աղբրեջանական դարուն» ժողովածուն, Գ. Մուսանի «Մակադրություն քարի վրաս», Ղարաբաղիի «Կենարար քերէք երկերը, աղբրեջանական կլասիկ գրականության երկու անթո-լոգիաները 1936 և 1952 թվականներին և աղբրեջանական գրողների ուրիշ շատ գործերը:

Վաղուց է ինչ աղբրեջանական դասական գրականության փալտուն ներկայացուցիչների՝ Նիգամիի, Խաբանիի, Նասիմիի, Վազիֆի, Ախունզովի, Սաբիրի և մյուսների գործերը հայ ըն-թերցողների սեփականությունն են դարձել:

Այն հանդամները, որ աղբրեջանական կուլտուրայի մի շարք գործիչներ ապրել կամ գործել են Հայաստանում, իսկ հայ կուլտուրայի գործիչներն էլ Աղբրեջանում — դա անտարա-կույս էլ ավելի է ուժեղացրել ժողովուրդների կուլտուրական կապերը, նրանց համագործակցությունը Ալդուխիք են, օրի-նակ, հայանի նկարիչ Միրզա Կադիմ Իրևանին, Հնչոբար Հու-սեյինովը, Մուսաաֆա Քոփչիբաշիի, Ալի Վելիևը, բազմա-վաստակ Յունուս Սուլեյմանովը, Դադիստանլիին, Ահմեդ Զա-միլը, գրամատուղ Ն. Բ. Վեղիրովը, Յ. Քոչարլիև և ուրիշները: Սովետահայ գրողներից Գ. Սևունցը, Հ. Մահջանը, Թ. Հուր-յանը, Ա. Գրաշին, Ա. Դարբինի իրենց գրական գործունեու-թյունը սկսել են Սովետական Աղբրեջանում: Այժմ էլ Սովե-տական Աղբրեջանում են գործում հայ գրողներ Մ. Դավթյա-նը, Ս. Գրիգորյանը, Ա. Սենալը, Բ. Ուլուբաբյանը, որոնք հրատարակում են «Գրական Աղբրեջան» ամսագիրը: Այստեղ, Սովետական Հայաստանում էլ գործում են շատ աղբրեջանցի գրողներ և կուլտուրայի գործիչներ՝ Ա. Երևանլիև, Սաբիր

Ռիզանը, Հ. Հասանովը, Ս. Շարիֆովը, Այնուհետև, Հայաս-տանում կազմակերպված է աղբրեջանական գրողների սեկ-ցիա, որտեղ ընդգրկված են ավելի քան 20 գրողներ, այդ ամենին մեծապես նպաստում է Երևանում հրատարակվող «Սովետ էրմանիստան» թերթը, «Էդիբի էրմենիստան» («Գրա-կան Հայաստան») ժողովածուն:

Մի քանի օրինակներ նաև վրաց և աղբրեջանական կուլ-տուրական կապերի և համագործակցության պատմությունից: Վրաց և աղբրեջանական գրականության լավագույն նմուշ-ները թարգմանարար վաղուց է ինչ դարձել են երկու ժողո-վուրդների սեփականությունը: Սամեդ Վուրդուևի թարգմանու-թյամբ լույս են տեսել Ռուսթավելու «Ապրենավորք» պոեմը, իսկ Գրիշաշվիլին թարգմանել և հրատարակել է Միրզա Ֆա-խայի Ախունզովի «Պուշկինի մահվան աղթիլ» պոեմը: Կրաց և աղբրեջանական պոետները փոխադարձաբար երգել են նր-կու եղբայրական ժողովուրդներին: Այսպես, օրինակ, դեռևս Վազիֆը իր «Քիֆլիսի գովը» և ուրիշ սանդղագործություն-նեում զովելրդել է Վրաստանի մայրաքաղաքը և նրա գեղեց-կուհիներին: Մեհմեթ Հուսեյինը իր «Դաշգըն» («Վարարում») անդամագործության մեջ նկատարել է աղբրեջանական, վրաց և հայ ժողովուրդների համատեղ պայքարը Վրաստանում սո-վետական կարգի հաստատելու համար:

Վրաց և աղբրեջանցի գրողները և կուլտուրայի գործի-չները սովետական տարիներին համախառն այնչիլ էլ են միմյանց և հաղորդակից են դարձել երեք սեսպուրյիկաների կուլտու-րայի, արվեստի, գրականության ասպարեղներում ձեռք բեր-ված հաջողություններին:

Փ Ա Տ Բ Ո Ն

Վրաստանում սովետական կարգերի հաստատման հնց առաջին տարին, Վրաստանի կառավարության որոշմամբ, 1921 թվականի վերջերին կազմակերպվում է Քրիլիսիի հայ-կական պետական գրամատիկ թատրոնը, որը կարևոր նշա-

նակի վրան է ունենում ոչ միայն հայ աշխատավորությանը զատարակելու գործում, այլև խոշոր զին է խաղում վրաց և հայ սովետական թատրոնների համագործակցության ասպարեզում, ետյուր զին է խաղում նաև Քրիլևիում կառավարության օժանդակությանը ստեղծված «Հայարտուներ», որին կից դեռևս 1923 թվականին կազմակերպվում է թատերական ստուդիա: Այդ ստուդիան ավարած ուսանողներից շատերը մեկնում են Հայաստան և աշխատում հայկական թատրոնում:

Սովետական կարգին հաստատվելուց հետո Վրաստանի գանգան մասերում այդպիսի շաղիք ակտիվորեն մասնակցում են Սովետական Վրաստանի անասական և կուլտուրական շինարարությանը: Երկու ժողովուրդների եղբայրական ընտանիքում զարգանում է նաև հայ արվեստը: Քրիլևիում, բայց Հայկական դրամատիկական թատրոնից կազմակերպվում են նաև կուլտուրական ուրիշ ձեռնարկություններ, լույս է տեսնում «Սովետական Վրաստան» հայերեն թերթը, զորում է հայ գրողների միավորումը:

Քրիլևիում 1958 թվականի հունիսին նշվեց հայկական թատրոնի զոյության 100-ամյակը: Հայկական թատրոնում, որ հեռնս գրվել էր 1850-ական թվականներին, իրենց մկրտությունն են ստացել և ստեղծագործական մեծ հաջողություններ են ձեռք բերել հայկական թատրոնի շատ զործիչներ: Բայց հետագայում անբարենպաստ պայմանների հետևանքով թատրոնը քայքայվել է: Սակայն, ինչպես արդեն ասվեց, սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո կազմակերպվում է նոր թատրոնը, որը դառնում է նախառնություն հայկական թատրոնի լավագույն արտիստների ժառանգործը: Սովետական Վրաստանի կառավարության հոգատարության պայմաններում թատրոնը աճում և զանազան է հայ թատերական կուլտուրայի կարևոր օջախներից մեկը:

ՍՍՄԲ ժողովրդական զինաստանճի Վերիկո Անջափարիձնի հանդես գալով հայ թատրոնի 100-ամյակին նվիրված հուշարձանական երեկոյին, նշել է, որ «...հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի: Գարների խորրից եկած այդ բարեկամությունը իրենց ունեի վրա են

տարել նաև հայկական ու վրացական կուլտուրայի գործիչներ... Քրիլևիի հանդիսատեսը սիրում և բարձր է գնահատում Սո. Շահումյանի անվան հայկական դրամատիկական թատրոնի կոլեկտիվի հայերենով շախատանքը: Հայ թատրոնում բեմադրվում են հայկական, վրացական և զասական դրամատուրգների լավագույն ստեղծագործությունները: Մեծ հաջողությամբ են ընդունվում Շալվա Գաղաթանու, Շանշիաշվիլու և այլոց պիեսները: Վրացական թատրոնները մեծ հարգանք են տածում դեպի հայ թատրոնի հիասուլի կոլեկտիվը: Ամբողջ հողով ցանկանում են նրան հետագա ստեղծագործական հաջողությունները:

Սովետական իշխանության առաջին տարիներից Արխաղյայում նույնպես գործում են հայկական երաժշտախմբեր, ինքնագործ թատերախմբեր, իսկ 1927 թվականին Սուխուձում բացվում է հայկական դրամատիկական թատրոնը, որը գործում է մոտ 10 տարի: Սուխուձի ժողովրդական ստեղծագործության տանը կից այժմ էլ գործում են հայկական թատերական կոլեկտիվը և երգի-պարի անսամբլը: Ժողատեղծագործության տան արխաղական, Վրաստան, հայկական, ուստական և մյուս խմբերը հաճախակի համատեղ ելույթներ են ունենում: Հայկական երգի-պարի անսամբլը՝ Բ. Եուրիկյանի ղեկավարությամբ, կառառում է կոլիսայան ժողովուրդների երգերն ու պարերը:

Նշանակալից է հայ-վրացական թատերական կապերի զերը: Թե՛ դրամատիկ և թե՛ օպերային թատրոնները հաճախ մեծ հանելով հարևան ժողովրդի կյանքը արտացոլող ստեղծագործություններ, խոշոր ծառայություն են մատուցել ժողովուրդներին միմյանց հետ ծանոթացնելու գործում: Այսպես, հայկական թատրոններում բեմականացվել են վրաց գործերի՝ Գ. Մոզիլանու «Հայրենիք» («Պատիվ»), «Ով է մեզ սպառնում», «Հայր և որդի», «Նոր այգին», «Բերին» («Թատրոնը գեղում է արևմուտք» պիեսից), Մանգրո Շանշիաշվիլու «Արևն», «Չորի նահապետ Գոշան», Կարլո Կալաձնի «Ժառանգ», ըստ որում «Ժառանգ» պիեսը Երևանի պետական թատրոնում բեմադրել է ակտայր Վ. Արաշիձնի, նկարիչ՝ Արա-

կելիս, երամշտություն՝ Ա. Բալանշիվաձեի, սեփխորի արհեստնա՝ Գ. Գարբրիլյան: Այնուհետև Սերգո Կլշիաշվիլու «Հերոսուհիների սերունդը», Բերձենիշվիլու «Եօորատույզ սուկի», Փալաքբիանի «Արժանի պարզե», Իլո Մուսաշվիլու «Ջրասույզ բարեր», Կիտա Բուլաձեի «Նուրբ ապրումներ», Գ. Ազիանու «Դեղերտերական» (Բարձի և Թրիլիսի հայկական թատրոններում), Լևան Գոթուայի «Էրեկի արքա», Միլարիձեի «Սուրամի ամոցը», Ջուլար Անտոնովի «Արևի խավարումը Վրաստանում», Ակակի Սերժևիլի «Կինո», Ալբրանտի Ցագարխա «Ինչ տեսի ես, էլ չես տեսի», «Եստուժաս» (Նրևանի, Թրիլիսի, Նախիչևանի, Սուխումիի, Գոնի Ռուստայի հայկական թատրոններում), «Քաղաչ» պիեսները: Հասակայես ամելի շատ է բեմադրվել Մ. Շանշիաշվիլու «Արևն» պիեսը, որի բեման XIX դարում Վրաստանում բեկված գյուղացիական ապստամբությունն է: Այն բեմադրվել է Նրևանի, Կիրովականի, Թրիլիսիի և Բարձի հայկական պետական թատրոններում:

Սովետական իշխանության բոլոր տարիներին բացի վերը նշվածներից, հայկական տարբեր թատրոնների կողմից բեմադրվել են նաև վրացական մի շարք այլ գործեր՝ օրինակ, «Արսեն Մարարզեցին» (Թրիլիսի պատանի հանդիսատեսի հայկական թատրոն, Բարձի և Կիրովականի հայկական թատրոնները), «Իցկա Ռիմինաշվիլի» (Լենինականի թատրոն), «Աջարիայի լեռներում» (Թրիլիսի հայկական թատրոն), «Նացարբերխ» (Թրիլիսի պատանի հանդիսատեսի հայկական թատրոն) և այլն:

Գ. Սունգուլյանի անվան թատրոնը հաճախ էլույթներ է ունեցել Թրիլիսիում: Օրինակ, 1932 թվականին թատրոնը Թրիլիսիում հանդես է կելլ «Պաղատան արքա», «Պեպո», «Քաթարալա» և «Եստրիչա» ներկայացումներով: Պեսը է տեսել, որ վրացական թատրոնում ամենից հաճախ բեմադրվել են Սունգուլյանի պիեսները: Այսպես, Ռուսթավիլու անվան դրամատիկ թատրոնը բեմադրել է «Պեպո»: Այդ բեմադրություն մեջ հանդես են կելլ թատրոնի ամենահայտնի ուժերը:

Պեպոյի դերը կատարել է ՍՍՍՐ ժողովրդական դերասան

Ա. Խորազան, Չիմզիմովի դերում հանդես է կելլ ՍՍՍՐ ժողովրդական արտիստ Ա. Վասաձե: Անցել են տարիներ, բայց «Պեպոն» այսօր էլ շարունակում է մեյլ վրացական թատրոնի խաղացանկում և թատերասեր հասարակությունում միշտ էլ մեծ հետաքրքրություն է հանդես բերում զեպի այդ ներկայացումը: Վրացական թատրոնների կողմից բեմադրվել են նաև Շիրվանզադի «Պատվի համարը», Քամանյանի «Գիթորը», Կուլիվի Միրալյանի «Գոռը», Միլիթ Քոչարյանի «Կույր երաժիշտը», «Տիաս Տարասովա», Ալ. Արաքմանյանի «Անասաները շարժվում են», Մկրտիչ Կորյունի «Զարիկ Քաղաքիկը» և շատ ուրիշ գրողների ստեղծագործությունները: Վրաց նշանավոր դերասաններից Վ. Արաշիձե, Ն. Ազոմիձե, Ն. Գոցիբիձե Սունգուլյանի պիեսներում հաճախակի հանդես են կելլ նաև հայերեն դերակատարմամբ: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ կթև վրացական թատրոնը հաճախ բեմադրել է Գ. Սունգուլյանի պիեսները, այդ աղբյուրանկան թատրոնը հիմնականում անգրադորձել է Ա. Շիրվանզադի գործերին: Այդ երևույթը թերևս պետք է բացատրել ամլայ ժողովրդի կյանքի տարբեր կողմերի զեպարվեստական արտացումներ, որն ստիկ է այդ դրամատուրգների գործերում:

Քատերական կապերի աշխուժացմանը օժանդակել են նաև Հայաստանի և Վրաստանի օպերային թատրոնները: Օրինակ, Հայաստանի օպերային թատրոնի սեպիտատարում պատվաբար տեղ են զբաղվել նաև վրացական օպերայի լավագույն նմուշները: Հայ-վրացական ժողովուրդների թատերական կապերի համադրձակցության տեսակետից նշանակալի էր Ձ. Փալաշվիլու «Դախի» օպերայի, Գոլիձի «Բեթո և Կոտե» կոմիկական օպերայի բեմադրությունները Ալ. Սպենդիարյանի անվան պետական օպերայի և րալեսի թատրոնում: Այդ ներկայացումների հաջողության տեսակետից գործում իրենց վաստակն ունեն նաև վրաց սեփախորները: Իսկ վրացական օպերային թատրոնը 1932 թվականին բեմադրել է Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան, որի զեպարվեստական ձևավորումը կատարել են Գ. Շարբաշյանը և Ի. Կոտուլյանը: Բեմադրվել են նաև ուրիշ գործեր: Վրացական օպերայում հանդես են կելլ

Հ. Գանիկյանը, Պ. Կոստյանը, Է. Իսեցիկին և ուրիշները: Ընդհանրապես բազմաթիվ՝ օրինակներ կարելի է բերել հայ և վրաց զինասանների փոխադարձ հելալթներից: Ըստ որում, յուրաքանչյուր այդպիսի հելալթը խթան է հանդիսացել հայ և վրաց ժողովուրդների թատերական կապերի զարգացման համար:

Հայ բնու մեծաճուն վարպետ, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Վ. Փափազյանը նույնպես բեղմնավոր աշխատանք է կատարել անզրկովիպացան թատրոնների փոխադարձ շփման և փոխօգնության բնագավառում: Ըստ հանդիսանում է Վրաստանի, Հայաստանի և Ադրբեյջանի ժողովրդական զերասանները: Ընտաղարձ հայացք գրքի մեջ Վ. Փափազյանը անդրադարձնում է հայ զինասանների մտա փոխհարաբերություններին, գրել է. «Թուրքն էլ մտա ընկերներ էին հայ զինասանական ընտանիքին, բարբոլ է կենցաղով այնքան իրար հարազատ, որ եթե չլիներ լեզվական տարբերությունը, ես չէի զանազանի հային վրացուց, ոչ էլ վրացուն հայից»:

Հաճախ հայկական թատրոնում հանդես են եկել վրաց զինասաններ և երգիչներ: Թրքիան, ՍՍՌՄ Անիկն շքանշանակիր սկազեմիական մեծ թատրոնի սուլիստ Դիմիտրի Մեմլենովիչ Մեհզիմեն 1942 թվականի ապրիլի 24-ին Երևանի պետօպերայի թատրոնում հանդես է եկել «Կարմեն», «Հավերժահարս», «Անգա» օպերաներում, Անիկցոսոյի շքանշանակիր Կիրովի անվան օպերայի և բալետի թատրոնի սուլիստ (պարսոհի) Նիկոն Գեորգենյան Չիբուրիմեն 1942 թվականի մայիսի 10-ին Երևանի օպերայի թատրոնում Չակովանով «Կարապի լիճ» բալետում կատարել է Օդետտայի և Օրիփյանի դերերը, Վասիլենյո Չարոբրտնին 1950 թվականի ապրիլի 9-ին Երևանում «Կարապի լիճ» բալետում հանդես է եկել Զիգֆրիդի դերով: Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Վերա Ցիգոնան Երևանի օպերայի և բալետի պետական թատրոնում 1950 թվականի ապրիլի 9-ին և 1952 թվականի զեկտեմբերի 17-ին պարել է «Կարապի լիճ», «Բախչիսարայի շարվանք», «Կարմիր կակա» բալետներում: Վրացական ՍՍՌ վաստակավոր արտիստ Հուրար Կիկալեշվիլին 1952 թվականի զեկտեմբերի 17-ին

Երևանում հանդես է եկել «Բախչիսարայի շարվանք», «Կարմիր կակա» և «Կարապի լիճ» բալետներում, Պ. Ամիրանիշվիլին 1952 թվականի հունիսի 20-ին և 22-ին Երևանի պետական օպերայի և բալետի թատրոնում կատարել է Ռիզովիտայի և Ամոնասրոյի դերերը:

1957 թվականի հուլիսին Երևանի երաժշտական կոնզերվատորիա թատրոնը բեմադրեց «Օդնեթից Մայան»: Սովետահայ թատրոնում իրենց բեմադրություններով հանդես են եկել նաև վրացի ռեժիսորները: Այսպես, օրինակ, Վ. Մաքանաշվիլի թատրոնի ռեժիսոր Վ. Արաշիմեն 1931—1932 թվականների թատերաշրջանում Գ. Սուճուկյանի անվան թատրոնում բեմադրել է զբոսատուրգ Կարո Կալաձին «Խառնի» պիեսը:

1946 թվականի նոյեմբերին Թրքիսիի հայկական թատրոնում Ժուրյույի Գեորգին բեմադրել է Ս. Ծանիշվիլու «Արսենը»: Ալ. Սպեղիարյանի անվան Երևանի օպերայի և բալետի Անիկի շքանշանակիր թատրոնում Ա. Սուճուկյանը 1948 թվականի նոյեմբերին բեմադրել է «Քեթո և Կոտե» կոմիկական օպերան:

Խոշոր իրադարձություն հանդիսացան Երևանի Պետական օպերայի և բալետի սկազեմիական թատրոնի հելալթները Թրքիսիում, 1958 թվականի մարտ-ապրիլ ամիսներին: Նշարայական Վրաստանի հասարակայնությանը ջերմությամբ բեղունաց թատրոնի ներկայացումները, սովետահայ արվեստի ներկայացուցիչներին: Թատրոնի բոլոր ներկայացումները՝ «Գավթ-Քեկ», «Արշակ Երկրորդ», «Անուշ», «Աթմարբղ», «Աևան», բնզումվում էին ներկաների բուռն ծախահարություններով: Թրքիսիի Պետական կոնսերվատորիայի զերեկատոր Պավել Խուճուան հանդես եկավ «Հայ ժողովրդի կուսուրայի պարծանք» հողվածով, որտեղ զրեց. «Թրքիսիի հանգրասուներ երկար ժամանակ կհիշի տաղանավոր երգիչ-երգչուհիներին... որոնք կերտեցին օպերայի զիսավոր հերոսների լիարժեք կերպարներ: Զերմորեն ուղունելով թանկագին հյուրերին, մենք ի սրտե ցանկանում ենք հետագա հաջողություններ, որոնք կնպաստեն հայ և վրաց ժողովուրդների հետագա մերձեցմանը և բազմադարյան բարեկամական ստեղծագոր-

ծական կայրերի էլ ավելի խորացմանն ու ամրապնդմանը:

Հայ և վրաց ժողովուրդների թե՛ անցյալի և թե՛ ներկայիս կուլտուրական սերտ համագործակցությունը նկատի ունենալով՝ Վրացական ՍՍԻՄ Մեխատրոնների Սովետի նախագահ՝ քնկ. Ջավախիշվիլին, երբ Սովետական Հայաստանին Անիին շքանշան հանձնելու հանդիսավոր նիստին արտասանած իր հռոտմ առաջ, «Մեր ժողովուրդներին հարազատ է գարձնում հոգևոր մերձավորությունը: Մեր կուլտուրաները սերտորեն կապված են միմյանց հետ: Վրաստանի հողը հարազատ է դարձել Հայ գրականության և արվեստի ականավոր շատ գործիչների համար և վրաց ժողովուրդը սրբությունը հարգում է Հայ ժողովրդի մեծ դավանների՝ Խաչատուր Աբովյանի և Հովհաննես Թումանյանի, Բաժճուսի և Սայաթ-Նովայի, Գարբիշ Սունդուկյանի և շատ ուրիշների հիշատակը: Նրանք շատ մտա են եղել վրաց կուլտուրային, վրաց առաջավոր գործիչների հետ նրանց կապել է իսկական եղբայրական բարեկամությունը»:

Սերտ համագործակցության մեջ են եղել նաև վրաց և ազրբեջանական թատրոնները: 1922 թվականի փետրվարին ազրբեջանական թատրոնը բեմադրում է Մեծղեշվիլու «Ավագակ Քերիմը»: Մինչև 1927 թվականի այդ ներկայացումը երեք անգամ վերահանդեմում և անցնում է մեծ հաջողությանը: Իսկ 1926 թվականին ազրբեջանական թատրոնը գաստրոլային ներկայացումների է մեկնում Վրաստան և Հաստան՝ իր խաղացանկում ունենալով նաև «Ավագակ Քերիմը»: Թատրոնի ելույթները կարևոր նշանակություն են ունենում Անդրկովկասի երեք ժողովուրդների թատերական կապիթի ամրապնդման գործում:

1933 թվականին Նախիջևանի ազրբեջանական թատրոնը բեմադրում է վրաց դրամատուրգ Սանդրո Շանշիաշվիլու «Անդրո» պիեսը. այն բեմադրվում է նաև 1935—36 թվականի թատերաշրջանում և լավ ընդունելության է արժանանում հանդիսականների կողմից:

1935 թվականին Քրիլիսիի Ռուսթավելու անվան դրամատիկ թատրոնը գաստրոլային ներկայացումներով մեկնում է

Բարու Այնտեղ հանդես են գալիս վրաց թատրոնի խոշորագույն ներկայացուցիչներ Ա. Խորովան, Ա. Վասսանն և Գալիթաշվիլին: Իրենց ներկայացումների առթիվ «Բակինակի ուրշու» թերթում Ա. Խորովան գրում է. «Բարու ժամանելով, մենք հետապնդում ենք երկու նպատակ. մենք ուզում ենք մեր աշխատանքը ստույգի նրանով, թե ինչպես է մեր ներկայացումները բնկալում աշխատավոր հանդիսատեսը և ստանալ լիցք, անմոլ և աշխատանքային ուրիշ, որ հասուկ է նախիջևաններին: Սովեզագործական շփումը եղբայրական ազրբեջանական արվեստի հետ փորձի փոխանակության և սեպարատիկաների աշխատավորների միջև կապի ամրապնդման հնարավորություն է ապխա, աշխատավորների, որոնք Միության՝ Անդրկովկասյան Ֆեդերացիայի մարզարխան են կազմում»:

«Մեր աշխատանքի ցուցադրումը Բաքուում— գրում է Ա. Վասսանն,— մենք դիտում ենք որպես պատասխանատու ընկույթուն: Թատրոնի գաստրոլները անցան բարձր մակարդակով և հանդիսականների բերկրալից խանդավառության պայմաններում»:

Ազրբեջանական թատրոնը հետագայում ևս, ռուսական դրամատուրգիայի լավագույն գործերի հետ մխային, լայն տեղ է տալիս Հայ և վրաց դրամատուրգների գործերին: 1937—38 թատերաշրջանում ազրբեջանական թատրոնը բեմադրում է Գ. Մոլիյանու «Հայրենիքի պատիվը», 1949—50 թատերաշրջանում՝ Նույն հեղինակի «Ով է մեղավորը» պիեսը: 1938 թվականի ապրիլին Բարվի Պատանի հանդիսատեսի թատրոնը բեմադրում է Գ. Գամբեկելու «Բաջ Կիկել» կոմեդիան: 1942 թվականին թատրոնը բեմադրում է Կախուցիշվիլու «Կոմերի» պիեսը: Ազրբեջանական երաժշտական կոմեդիայի թատրոնը Հայրենական պատերազմի տարիներին բեմադրում է Գուլնեի «Քեթև և Կոստ» կոմիկական օպերան:



Սովետական իշխանության հաստատումը Ազրբեջանում ավելի լայն հնարավորություններ ստեղծեց նաև Հայ-ազրբեջանական թատերական կուլտուրայի համագործակցության

Համար: Դեռևս մինչև սովետական իշխանութիւն հաղթանակը, Բարձրի ազգրեշնակական և հայկական Բատրոնները երկար ժամանակ աշխատել են մինևույն շննքում, մինևույն բեմի վրա: Աշտեղ հանդես են եկել երկու Բատրոնների նշանավոր դերասաններ Ս. Շարիֆղազան, Ս. Ռուֆուլյան, Ռ. Բաճմասիբը, Արիւյանը, Փասմենը, Ոսկանյանը և ուրիշներ, իսկ Վ. Փափաղայանը միաժամանակ խաղացել է երկու Բատրոններում:

Նախահայրերին շրջանում երկու ժողովուրդների Բատրոնների առաջադեմ գործիչները մեծ ջանքեր են Թափել Բատրոնը լայն ժողովրդական մասաներին ծանայեցնելու համար: Ազգրեշնակական Բատրոնը անցյալում ունեցել է տաղանդավոր արժեքիսի դերասանական ուժեր. ինչպիսիք էին Ջաճնկերի Զեյնալուրը, Հուսեյին Արարիճնսկին և ուրիշներ, որոնք հանդիսացել են ինչպես ազգային, այնպես էլ ռուսական, արեւմտա-Ալթրսական, հայ և վրաց դրամատուրգների ստեղծած կերպարների լավագույն մարմնավորողները ազգրեշնակական նախասովետական Բատրոնում: Օրինակ, Արարիճնսկու մասին հայ Բատրոնական կուլտուրայի կարկառուն ղեմքերից մեկը՝ Լ. Ա. Քալանթարը, գրել է. «Նա անշարի հետաքրքրի դերասան էր, նրա դերակատարումը միշտ նպատակաւայաց էր, միշտ ոգիշնչված առաջավոր գաղափարով...»:

Սովետական շրջանում նոր, աննախընթաց ծաղկման է հասնում ազգրեշնակական Բատրոնական արվեստը: Հանդես են գալիս նոր, ապաւնտրվոր ուժեր, առաջին կին դերասանուհի՝ ՍՄԻՄ ժողովրդական արտիստուհի Մարիգա Գալուզովան, զրամատուրգներ՝ Ջաֆար Ջաբարլին և ուրիշներ: Փատրոնին աշխատակցում են Սամեղ Վարդանը, Միրզա Իբրահիմովը, Սուլեյման Ռուստամը, Սարիթ Ռահմանը, Մեհաբ Հուսեյինը, որոնց գործերը բեմադրվել և այժմ էլ բեմադրվում են Սովետական Ազգրեշնակի սահմաններից դուրս, ինչպես նաև հայկական բեմերում: Ներկայումս Ազգրեշնակում գործում են շատ պեանական Բատրոններ, որոնց մեջ իր պատմավոր տեղն ունի Մ. Աղիզրեկովի անվան Պետական Ակադեմիական դրամա-

տիկ Բատրոնը՝ ռեսպուբլիկայի ազգային Բատրոնական արվեստի իսկական օջախներից մեկը:

Սովետական տարիներին ազգրեշնակական Բատրոնների կողմից բեմ հանված պիեսների մի զգալի մասը ներթմուժած են եղել ժողովուրդների բարեկամութիւնն ոգով: Այդպես էր, օրինակ, Ս. Ս. Ախունզովի «Մասանա» պիեսը, որը 1922 թվականին բեմադրվում է ադրաբատրոնում, ներկայացման մեջ մերկացվում էին ժողովուրդների բարեկամութիւնն թշնամիները՝ մուսավաթականները, գաշնակցականները, կուլակները և գովերգվում էր նոր կյանքը, ազատագրված աշխատանքը: Դրամատուրգ Հախաթիյերը դրում է «Շատ լավ» պիեսը, որի հիմքում դեռում է ժողովուրդների կարայրութիւնն գաղափարը: Այդ պիեսում Ամիրսայանին զմբախտութիւնից աղատում է նրա զարգացման բնկերը՝ հայ Սիմսեր, Այդ զեպրից հետո ամբողջապես փոխվում են Ամիրսայանի հոր՝ Քերիկ Ռուջարալիի ազգայնական հայացքները մյուս ազգերի նկատմամբ: Ազգերի բարեկամութիւնն գաղափարին է նվիրված նաև Ջ. Ջաբարլու «1905 թվականին» պիեսը, որտեղ ռուս, ազգրեշնակի և հայ բանվորները միասնաբար պայքարում են ցարական միսպետութիւնն դեմ:

Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամութիւնն է արտացոլվել Ս. Վարդանի «Ըլադիֆ» պիեսում: Հեղինակը իր դրամատիկական երկում պատկերել է հայերի, վրացիների և ազգրեշնակների համատեղ պայքարն ընդդեմ ընդհանուր թշնամու: Այդ դրամայի հերոսներն են ազգրեշնակի էլզարը, գրացիներ Շալիկն ու Քամարան և հայ Աբշակը:

Ազգրեշնակ և Հայաստանի դրամատուրգների ստեղծած գործերը մեր Բատրոնական արվեստների համագործակցութիւնն հիմք են կազմում: Սովետական իշխանութիւնն տարիներին հայկական Բատրոնները հաճախակի են անդրադարձել ազգրեշնակական դրամատուրգների գործերին: Հայ բեմում ուղադրվում էր նույնպէս էր Ջաբար Ջաբարլու «Սևիլ» պիեսը, որի մեջ արտացոլված էր ազգրեշնակուհու աղատագրման ուղին: Ջաբարլու այդ գործը միաժամանակ բեմադրվում էր Բարձրի հայկական ու ազգրեշնակական Բատրոններում: Ազգրեշնակական

ժողովրդական արտասուհի ժամանի վկայությամբ այդ պիեսի Բարձի հայկական թատրոնի ներկայացման պրեմիերային ներկա գտնվող հեղինակը՝ Զ. Զարարին, արտահույզ խոսքերով իր խորին զուսուսակությունն է հայտնել հայ բեմում այդ պիեսը բեմադրելու համար: Հետագայում Գ. Գեմիրճյանը անզրպագանալով «Սևիկեն»՝ բարձր է գնահատել այն և նշել է, որ «ներկայացումն սկսվեց խելույն, կարծես շարունակությունը լինեք բանախոսության: Բեմում պատկերելով թուրք կինը, բռնակալ ամուսնուր, կնոջ փախուստը, վերածնությունը, ամուսնու զզրումն ու տանջանքը:

— Իմ օրին է նա էլ,— մրմնջաց Ասողը՝ դեմելով խնդոտ, բռնակալ ամուսնու զզացումները:

Իսկ երբ ներս թափ Մոսկվայից վերադարձած կինը, վերածնված, ուսում առած, ազատ կինը՝ սրահը պայթեց ժափերից»:

Հայ բեմում բեմադրվել են նաև Զ. Զարարու «1905 թվականին», «Ալյըն», «Ալմաստ», «Հրո հարսը», «Յաշար», «Քառամած ծաղիկներ», Միլլա Իբրահիմովի «Հայաթ» պիեսները: Սամեղ Վուրդունի «Վաղիֆ» պիեսը միաժամանակ բեմադրվել է Կիրովականի, Արտաշատի և Քրիլյուխի հայկական թատրոններում: Հայկական թատրոններում բեմադրվել են նաև Քամմասի «Արսևի բուժք» դրաման, Մ. Ֆ. Ախունջովի «Հաջի Կարան», Սարիթ Թամանի «Հարսանիք» կոմեդիան: Ստեփանակերտի հայկական թատրոնը բեմադրել է Է. Մամեղյանյի «Արևելի ատալոս» պատմա-ակադեմիոն պիեսը և Ի. էֆենդիևի արդևական կյանքից վերցրած «Գարնանային ջրերը»:

Գ. Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրված «1905 թվական» պիեսը, անկասկած, հետաքրքրեց ոչ միայն թատրոնի խմբին, այլև հայ թատերասեր հասարակությունները: Ազդեցնական դրամատուրգիան կլասիկ Զարարու պիեսը ոչ միայն պատմում է արդյունաբերական Բարձի ակադեմիոն խորումների մասին, այլև յուրահատուկ ձևով արտացոլում է ժողովուրդների բարեկամության պատմությունը: Պիեսում հանդես են գալիս ուռա, հայ, ազդեցնացի, վրացի բանվոր-

ներ, որոնց միավորում է ակադեմիոնի հոգր գաղափարը: Նրա «Սևիկ» պիեսը շուրջ երեք տասնամյակ չի իջնում հայ բեմից: Այն բեմադրվել է հայկական բազմաթիվ թատրոններում՝ Բարձի հայկական թատրոնում, Քրիլյուխի, Սուխումի, Գիլյուսի, Երևանի, Ստեփանավանի, Խարկովի, Տաշքենդի, Մեկրու, Արտաշատի, Գորլյու, Միլոյուսի շրջանի, Արթիկի, Կիրովականի, Բաթումի և ուրիշ հայկական պետական թատրոնների և թատերական խմբերի կողմից: «Սևիկ» պիեսի հեղուսահին՝ Սևիլը հանդիսացել է անձնագրահույսան, անձնվիրություն օրինակ մեք երիտասարդության համար: Հայ բեմում այն կերպարի լավագույն կերտողները եղել են Արուս Ոսկանյանը և ժամաները:

1940 թվականի վերջերին Երևանում բեմադրվում է Ս. Վուրդունի «Տանկար» պիեսը և բարձր գնահատականի է արժանանում մամուլում: «Սովետական արվեստ» ամսագրում տպագրված Գարեգին Քեսի այդ ներկայացման մասին գրած ուղեկցությամբ կարդում ենք հետևյալը. «Պիեսը ին է սրամիտ և բովանդակալից արտահայտություններով, գուտ ազգային պատկերով, արևելյան երանգներով ու խորամիտ գասողություններով: Հաճախ հանդիսականին թվում է, թե ինքը ոչ թե գրամատերական մի գործի բեմադրություն է դիտում, այլ արվեստով գրված մի պոեմ է հանույթով ունկեղորում: Եվ այնուհետև. «Ս. Վուրդունի «Տանկար» պիեսը հենց Խանլարի գեղեցիկ կյանքն է գեղարվեստորեն վերարտագրում, մի կյանք, որը լի էր ակադեմիոն ամլունով, սխրով դեպի իր ժողովուրդը, դեպի իր հայրենիքը...»:

Քե որքան լայն տեղ են գտել ազդեցնական դրամատուրգների և կոմպոզիտորների գործերը հայկական բեմերում, կարելի է ներկայացնել հետևյալ մի քանի տեղեկություններից: Այսպես, Աերջին մալ-այանը արտամասնակ բեմադրվել է Քրիլյուխի, Տաշքենդի, Երևանի, Ղափանի թատրոններում, «Լեյլի և Մեհնանը»՝ Բարձի, Տաշքենդի, Քրիլյուխի թատրոններում, «Հայաթը»՝ Բարձի, Կիրովականի, Ստեփանավանի թատրոններում: Հայկական թատրոններում բեմադրվել են նաև «Մաֆար և Գուլիպար», «Շահ Խամալի», «Շեկթան», «Ա-

շուր Ղարիբ», «Քյուլնարա», «Շախսեյ-Վախսեյ», «Ալի և Քյարամ», «Արյունոտ օրերը», «Նավթ» և ուրիշ գործեր:

Դեռևս 1930 թվականի հունիսին կազմակերպվում են Բարձի ազդրեջանական թատրոնի դաստրոլները Երևանում և Լենինականում: 1938 թվականի օգոստոսին Լենինականում տեղի է ունենում Ազիդրեկովի անվան թատրոնի դաստրոլները¹:

Ազդրեջանական թատրոններն էլ փոխադարձաբար բն են հանել հայ դրամատուրգների գործերը: Այսպես, 1953 թվականին Բարձում կայացած Անդրիովիտի թատերական ընկերությունների միացյալ սեսիայում կարգացած ղեկուցման մեջ Ա. Ալիևան բերեց մի շարք փաստեր անդրիովիտյան ժողովուրդների, հատկապես սովետական շրջանի, թատերական կապերից: Ահա դրանցից մի քանիսը: 1921 թվականին Ազիդրեկովի անվան ազդրեջանական դրամատիկ թատրոնի առաջին բեմադրություններից մեկը լինում է Ք. Սունդուկյանի «Պեպոն» (բեմադրություն՝ Սեդիկ Ռուխուլլայի): Այդ բեմադրության համար օգտագործվում են հայկական թատրոնի «Պեպոյի» բեմադրության ղեկավարները՝ ներկայացմանը մասնակցում են թատրոնի լավագույն ուժերը: Պեպոյի գերում հանդես է գալիս Սեդիկ Ռուխուլլան, Կակուլիի՝ Սուխելյան, Շուշանի՝ Մաֆրազյանը: «Պեպոյի» բեմադրությունը ազդրեջանական թատրոնի ստեղծագործական հաջողություններից մեկն էր Այնտահանե, 1929—1930 թատերաշրջանում, հրք Ազիդրեկովի անվան թատրոնը պատրաստվել է ՍՍՌՄ ժողովուրդների թատրոնների օլիմպիադային, նրա ռեպրտուարի մեջ եղել է նաև Այ. Երիվանդազեի «Նամուսը», որը մեծ հաջողություն է ունեցել և հետագայում երկար ժամանակ չի իջել ազդրեջանական բեմից: Այդ նույն թատերաշրջանում ազդրեջանական թատրոնը բեմադրել է նաև «Մորգանի խնամիչ»: Օլիմպիադայից հետո ազդրեջանական թատրոնները իրենց ռեպրտուարում շարունակում են լայն տեղ հատկացնել հայ և վրաց դրամատուրգների՝ Երիվանդազեի, Քումանյանի,



Ռ. Ալիյանը և Միլոս Ալո-Ալիևը

¹ Տե՛ս Բ. Հատարյանյան, Սովետահայ թատրոնի ստեղծություն, զերթ տասնին (1917—1940), Երևան, 1961:

իր սեպտեմբեր ամիսը զեղարվեստական լիարժեք գործերով¹։ Մի հանգամանք էս, որ օժանդակել է ազրբեջանական թատրոնի զարգացմանը։ Դա հայ և ազրբեջանցի դրամատուրգների սերտ, ստեղծագործական բարեկամությունն է։ Որպես այդ բանի օրինակ, բերենք մի այսպիսի փաստ։ Ինչպես արդեն ասվեց, դրամատուրգ Արզումանյանը Հախվերդիներ սովետական ասպին տարիներին գրում է իր «Շատ լավ» պիեսը, որ ուղղված էր նախկինովի մի և կրեական մուսուլմանության դեմ։ Հեղինակը մեղիացնելով ազրբեջանցիի և հայ կղերականությանը՝ նրանց մարտադաշտությանը հակադրում է սրբուստարական ինտերնացիոնալիզմի գաղափարը։ Ուշագրավ է, որ «Շատ լավ» պիեսի ստեղծմանը նպաստել է Երիվանդագանի կողմից Հախվերդիներին արված մի դիտողությունը, որի մասին իր հիշողությունների մեջ պատմում է զորո Շահիր. «1929 թվականին Վրաստանի և Հայաստանի բանաստեղծների հետ հանդիպման էինք զնայցի։ Մեր ղեկավարը Ա. Հախվերդին էր, Երիվանդագանն էլ մեզ հետ էր... Երանք հայ դերասանների բեմում ցուցադրված ազգային պոբրերի և այս երկու ժողովուրդների կյանքի, սովորության, երաժշտության և պարերի իրար անչափ մոտիկության մասին էին խոսում։ Երիվանդագանն ասաց. ես ազրբեջանական կյանքից գրել եմ։ Գուր է հայկական կյանքից պիեսը է գրեմ։ Հախվերդիներ խոսք տվեց գրել մի նոր երկ հայկական կյանքից։ Նա իր աված խոստովանմանացավ, զրեց ազրբեջանական և հայ ժողովուրդների կյանքը արտացոլող «Շատ լավ» (1931) վերնագրով պիեսը»²։ Պետք է ասել, որ Ա. Երիվանդագանին առանձնապես ուրախացրել է ազրբեջանական ժողովրդի սովետական կարգերի օրոք ծաղկած կուլտուրան, այդ ասպարեզում ձևաք բերված հաջողությունները։ Բարձրի թատրոնի կուլեկտիվին գրած նամակում հայ մեծատաղանդ վիպասանը նշել է. «Ձեզ հայտնի է, որ ես որպես ազրբեջանական քաղաքացի, միշտ հետաքրքրվել եմ իմ

¹ Գրականության և արվեստի թանգարանի անտիզ կոլեկցիոն

² Ալգեբե Երևանի, Հայ և ազրբեջանական ժողովուրդների բարեկամության արտացոլումը գրականության մեջ, Երևան, 1955, էջ 103—106:

նախնական հայրենիքի կուլտուրական խնդիրներով և առաջին հերթին ազրբեջանական թատրոնի և զրահանության վիճակով... Ինձ առավելագույն ուրախությամբ զարմացնում է աստարակ ազրբեջանական թատրոնի բացառիկ աստաղդիությունը։ Հավաստացնում եմ Ձեզ, բնիկներ, որ այդ ամենը ինձ ուրախացնում է լաց լինելու չափս։ Եշենք նաև, որ ազրբեջանական բանվորական թատրոնը բեմադրել է Բաղդասարյանի «Արյունոտ անասպատ» պիեսը, որը մինչ այդ հաջողությանը ներկայացվում էր հայկական թատրոններում։ Այնուհետև 1936 թվականին Աղիզբեկովի անվան դրամատիկ թատրոնը ներկայացնում է Ջանանի «Շահնամն» պիեսը, որի բեմադրողը անվանի ռեժիսոր Իսմայիլ Հիգատպագանն էր։

Հայ և ազրբեջանական թատրոնների փոխազդած կապերին մեծապես նպաստել է նաև դեռևս 1929 թվականին Երևանում կազմակերպված Զարար Զարարիի անվան ազրբեջանական թատրոնը, որը բեմադրել է նաև Սուեդուկյանի «Պեպոն», «Սաբարալուն», Երիվանդագանի «Նամուսը», «Զար ոգին» և սովետահայ դրամատուրգների գործերը։ Թատրոնի ճանաչված գործիչները՝ Յունուս Սուեյմանովը, Գազատանլին, Ջեյնալովը, Բախչի Քալանթարյանը, Եսաթարախյան և մյուսները սերտ համագործակցություն մեջ են եղել հայկական թատրոնների գործիչների հետ։ Յունուս Սուեյմանովը հանդես է եկել հայկական բեմադրություններում և կինոնկարներում։

Հայ և ազրբեջանական թատրոնական գործիչների սերտ բարեկամական փոխհարաբերությունների տեսակետից հետաքրքրական է նաև հետևյալ փաստը. 1932 թվականին Բարձրի Բունիաթ զադեի անվան ազրբեջանական թատրոնում կայացավ հայ թատրոնի գործիչներից մեկի՝ Ասոն Ավազյանի բեմական գործունեության 25-ամյակը։ Այդ երեկոյին ներկայացվեցին հատվածներ «Սևիլը», «Պիպո» և «Պատվի արծաթ» պիեսներից. հորիչարը այդ պիեսներում հանդես է եկել Արզույ Այի Բեկի, Ջիմգիմովի և Մոխովի դերերում։

Ազրբեջանական թատրոնում իրենց բեմադրություններով հանդես են եկել մի քանի հայ ռեժիսորներ։ Գրանցից հիշենք 1929 թվականի փետրվարին Բարձրի պետական բանվորական

Քատրոնում «Մարզանի խնամին» կամեղիայի բեմադրությունը, որ իրականացրել էր Լ. Փալանթարը, ձևավորումը կատարել էր Ռուստամ Մուսատյանը: Հետագայում, 1934 թվականին, Քաղես Սարյանը Բաբվի Աղիգրեհովի անվան պետական քատրոնում բեմադրում է Շիրվանդադեի «Նամուս» դրաման, իսկ 1936 թվականի վերջերին՝ Շիրվերի «Սեր և խաղաղվանք» պիեսը: Բաբվի ադրբեջանական բանվորական քատրոնում Թ. Սարյանը բեմադրում է Զարիսի «Նեղություն փողոցը»: Նույնի սեմադրությունը 1939 թվականին կիրովարադի ադրբեջանական քատրոնը բեմադրում է Ա. Օստրովսկու «Մեծնոց մեղավորները»:

Հայանի սեմիսյոր Արշակ Բուրջայանը նույնպես մեծ օգնություն է ցույց տվել ադրբեջանական քատրոնին և՛ Բաբվում, և՛ Փրիլսիում: Հիշատակության արժանի է նաև այն հանդամանքը, որ այժմ էլ Աղիգրեհում հիշում և սիրում են հայ նշանավոր արտիստներին՝ Հովհ. Արևիլյանին, Վ. Փափաջյանին, Փասմենին և շատ ուրիշներին: Իր սերը, օրինակ, Փասմենին նկատմամբ ադրբեջանական ժողովուրդը արտահայտեց նրանով, որ 1935 թվականին մեծ հանդիսավորությամբ նշեց հայ զերասանուհու բեմական գործունեության 25-ամյակը:

Ադրբեջանցի սեմիսյորները ևս իրենց բեմադրություններով բավուցեց հանրես ևն եկել հայկական բեմում: Ռեմիսյոր Աղի Իսկենդարովը Բաբվի հայկական քատրոնում բեմադրել է (1937) Մ. Իբրահիմովի «Հայաթը» և Զ. Զարարու «1905 թվականին» պիեսները: Բզա Քամաաիրը բեմադրել է «Հայի Կարա» պիեսը, իսկ Զ. Զարարյուն հայկական քատրոնում բեմադրել է իր «1905 թվականին» պիեսը: Ադրբեջանական շատ արտիստներ, ինչպես, օրինակ, ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Բյուլ-բուլը և ուրիշներ հանդես են եկել հայկական օպերայի «Քյոն-օղլի», «Անուշ» ներկայացումների մեջ:

Ի զեպ նշենք, որ երբ նույն թվականին Բաբվի Ախունդովի անվան օպերայի և բալետի քատրոնը բեմադրում է Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան, Անուշի զերերգում հանդես են գալիս ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Շ. Մամեդովան և

վաստակավոր արտիստուհի Քնարիկ Գրիգորյանը: ՍՍՌՄ ժողովրդական արտիստ Բյուլ-բուլը կատարում է Մարոյի զերերգը, իսկ Բունիսթազանը՝ Մոսիի զերերգը: «Քալիսիակի ուսուցիչն» այդ առթիվ նշեց, որ Ա. Տիգրանյանի «Անուշի» բեմադրությունը սկիզբ դրեց Բաբվի և Երևանի օպերային քատրոնների ամուր ստեղծագործական կապերին: «Անուշի» առաջին բեմադրությանը ներկա զանազան հեղինակը՝ Արմեն Տիգրանյանը, բարձր է գնահատել ադրբեջանական օպերային քատրոնի այդ բեմադրությունը:

«Անուշի» առաջին բեմադրությանը ներկա էլ լինում նաև ադրբեջանական կուսիկ երաժշտության ներկայացուցիչ Ուլ. Հաջիրեհովը, որը այդ առթիվ գրում է հետևյալը. «Անուշ» օպերայի բեմադրությունը Մովսեսյան Ազրբեջանի մայրաքաղաք Բաբվում և ադրբեջանական «Քյոն-օղլի» օպերայի բեմադրությունը Մովսեսյան Հայաստանի մայրաքաղաք Երևանում ցայտուն կերպով վկայում են մեր ստեղծարարական մեծ հայրենիքի ժողովուրդների անխախտ բարեկամությունը:

...և՛ այսօր ու նորախ հեռու պարծենում եմ, որ Երևանում իմ «Քյոն-օղլի» օպերայի բեմադրությունը հանգիստնում է անդրկովկասյան երկու ժողովուրդների կուլտուրական մերձեցման վկայությունը: «Անուշ» օպերան ներկայացվում է նաև 1956 թվականին՝ Հայաստանում Մովսեսյան իշխանության հաստատման 36-րդ տարեդարի սունկատրոնության նախօրյակին: Բաբվի հասարակայնությունը չէր սրբեն էլ ընդունում Անուշի զերակատարներին՝ Ֆ. Ահմեդովային և Ֆ. Մուրադովային, Մարոյի զերակատար՝ Ռ. Աթաբեյլիսին և Մոսիի զերակատարներին՝ Ա. Բունիսթազանին և Զ. Կաթարովին:

1957 թվականի սկզբներին Բաբվի օպերային քատրոնը նորից էլ բեմադրում Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան: Մի փոքր ուշ այդ քատրոնում Անուշի զերում հանդես է գալիս ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Գոհար Գասպարյանը, իսկ Մարոյի զերում՝ Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Ավագ Պետրոսյանը: Երևանի Մպենդիարյանի անվան օպերայի և բալետի քատրոնի հրավերով Անուշի զերում հանդես է

գալիս Ադրբեջանական ՍՍՌ Ժողովրդական արտիստուհի Ծ. ԱճՆեղովան, իսկ Մսուրի դերում՝ Ադրբեջանական ՍՍՌ Ժողովրդական արտիստ Ա. Բունիաթլագան: Ծպերային այս երկու թատրոնների արտիստների փոխադարձ կուլմիները հանդիսացան երկու եղբայրական ժողովուրդների կուլտուրայի և արվեստի իսկական տունը:

Քուտցիկ կերպով շեշտե՛նա՛ն, որ հայ և ադրբեջանական թատերական համագործակցության ասպարեզում քիչ զեր չեն կատարել նաև երաժշտական կոմիդիայի թատրոնները: Այսպես, Երևանի երաժշտական կոմիդիայի թատրոնը հաճախ է անդրադարձել ադրբեջանական երաժշտական կոմիկական ստեղծագործություններին: Նա բեմադրել է «Արշին մալալան», «Ուլդուզ» և ուրիշ գործեր, իսկ Բաքվի երաժշտական կոմիդիայի թատրոնը բեմադրել է Վ. Տիգրանյանի «Մեծ հարսանիք», Ա. Ալվաչյանի «Երջանիկ օրը» ստեղծագործությունները:

Այս ուղղությամբ զգալի դործ է կատարել նաև Բաքվում սովետական կարգեր հաստատվելուց անմիջապես հետո կազմակերպված Պետական հայկական դրամատիկ թատրոնը, որը իր հիմնադրման սկզբնական շրջանում տեղ է օվել նաև օպերաներին ու երաժշտական դրամաներին: Այդ թատրոնում բեմադրվել են «Առուլ Ղարիբ», «Ասլի և Քյարամ», «Շահ Իսմաիլ», «Պըլը Պուլի», «Ուշ լինի, նուշ լինի» և այլ գործեր:

Հայ և ադրբեջանական երրայրական ժողովուրդները սերտանց ուրախանում են միմյանց կուլտուրաների հաջողություններով: Երբ 1938 թվականի արդիլին Մոսկվայում տեղի ունեցավ Ադրբեջանի արվեստի առաջին տասնօրյակը, Հայաստանի արվեստի աշխատողներ շեմոսրեն ողջունեցին եղբայրական Ադրբեջանի արվեստի հաջողությունները: «Սովետական Հայաստան» թերթը գրեց, որ Հայաստանի գրողները, երաժշտագետները, դերասանները, ողջ հասարակայնությունը հրճվանքով են զիմամորում եղբայրական Ադրբեջանի արվեստի փայլուն հաղթանակը Միության մայրաքաղաքում: Մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահանյանը գրեց. «Երկար դարերի ընթացքում ադրբեջանական ժողովուրդը և հայ ժողո-

վուրդը ապրել են իրար հյուսված, միևնույն հողի վրա, միևնույն արևի տակ: Ադրբեջանի ժողովրդի դարավոր ստեղծագործությունը՝ առսաները, հեքիաթները, երգերն ու միևնուր միշտ հարազատ են եղել հայ ժողովրդին: Էպիկական հերոս Քյոռ-օղլին, որը պայքարել է ժողովրդի թշնամիների դեմ, խաների և բեգերի, նույն ուժով սղեռել է մեր հայերին: Մեր աշուղները նույն սպի վրա դարերով երգել են ադրբեջանական լեզվով, որն անչափ հարազատ է մեր: Ըստ իմ մանուսկրիցից մեր ժողովրդի հետ ադրբեջանական երգի մեջ ինձ զգացել եմ իմ հորիկան հայրենիքում: Այսօր անհուն հրճվանքով ողջունում եմ Ադրբեջանի ստեղծագործական ասանօրյակի փայլուն հաղթանակը Միության հոյակապ մայրաքաղաքում: Ադրբեջանի երգի հաղթանակը նաև մեր հաղթանակն է: Ետը սրտով ցանկանում եմ հայ և ադրբեջանական ժողովուրդների ավելի սերտ ընկերակցությունը մեր հայրենիքի ավելի քան բարգավաճման համար, սոցիալիզմի վերջնական հաղթանակի համար»¹:

Միմյանց կուլտուրայի առաջընթացով ուրախանալու լավագույն աղացույցն են հարեան ռեսպուբլիկայում թատերական կուլեկտիվների զասարույային ներկայացումների հաջողությունները: Հըրեք այդպիսիներից մի քանիսը: Այսպես, 1954 թվականի հուլիսին Երևանի Սովետականի անվան պետական թատրոնը զասարույային ուղևորության մեկնեց Բաքու, իսկ Բաքվի Ադրբեյկոյի անվան պետական թատրոնը կուլմիներ ունեցավ Երևանում: Երևանցիներն ու բարձիցիներն ի սրան ողջունեցին ադրբեջանական ու հայ թատրոնների հաջողությունները:

Գ. Սովետականի անվան պետական թատրոնի շենքում Ս. Վուրդունի «Վաղիթ» պիեսով սկսվեց Ադրբեյկոյի անվան թատրոնի ներկայացումները: Քատրոնը Երևանի աշխատանքառությանը ցույց ավելց նաև Ս. Վուրդունի «Խանյարը», «Փահրաղ ու Երբին» սերիալնուց, Ս. Ռահմանի սովետական Ադրբեջանի երիտասարդության կյանքը արտացոլող «ԵՆան»-ում աղջիկը կատակերգությունը և Մ. Բարտահմոյի «Հայրթ»

¹ «Սովետական Հայաստան», 1938, 20 ապրիլ:

պիեսը: Բարձի թատրոնի խաղացանկի մեջ տեղ էին գտել նաև Ն. Գուդի «Վերսքանիչը», Վ. Եկրսպիրի «Տաներկունբորդ դիշերը» և Ա. Եիրվանզադեի «Ճամառ»: Պետք է նշել, որ եղբայրական Աղբրեշանի դրամատիկ թատրոնի ներկայացումները Երևանում սեզան քաղաոիկ հաջողությամբ: Հանգիստանները գիտեցին մի շարք ներկայացումներ հայրենասիրական վառ դրացումների և ժողովուրդների բարեկամության մասին:

Նրվու տարի անց, Մոսկվայում հայ արվեստի և զբաղմունքային տանտորային անցկացումից հետո, Մունդուկյանի անվան թատրոնը նորից է հանդես գալիս Աղբրեշանի մայրաքաղաքում: Մունդուկյանցիները Բաքվում ցույց են տալիս իրենց լավագույն ներկայացումները. Վրթանես Փափայանի «Ժայռը», Հ. Պարոնյանի «Պառտառար ասպարը», Երվանդազեի «Ճամառ», Գ. Մունդուկյանի «Էլի մեկ զոհը», Մ. Գորկու «Ներք Բուրլուշովը» և այլ պիեսներ: Նույն օրերին բաքվեցիները Երևանում տալիս են հետևյալ ներկայացումները. Հ. Զափիգի «Եկիս Մանամը», Զ. Զարարու «1905 թվականը», Մ. Վուրդունի «Վազիֆը», Ա. Հախվերդի «Փերի շաղուն»:

Հետևյալ տարին, 1957 թվականի հունիս և հուլիս ամիսներին Մունդուկյանի անվան թատրոնը նորից է հանդես գալիս Բաքվում, իսկ Բաքվի դրամատիկ թատրոնը՝ Երևանում: Երկու մայրաքաղաքների հասարակայնությունը մեծ խանգարումներով զրկվածից այդ թատրոնների կուլյաները:

Բաքվում, Մունդուկյանի թատրոնի 1957 թվականի գաստրոլային այդ ներկայացումների մասին Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստուհի Օլգա Գուլազյանը գրեց. «Ի՞նչ զեպեցիկ սովորություն են դասնում բարեկամական այն փոխայցերը, որոնք ձեռնարկում են Երևանի Գ. Մունդուկյանի անվան և Բաքվի Մ. Աղիզբեկովի անվան դրամատիկական թատրոնների կուլկտիվները:

Անշուշտ դրանք սակ փոխայցելություններ չեն, նրանցում դրսևորվում է երկու հարևան ժողովուրդների անխախտ բարեկամությունը, իսկ հայ և աղբրեշանցի ժողովուրդների բարեկամությունը դարերի պատմություն ունի, հին է և անուր

այսօր, սովետական կարգերի օրով, այդ բարեկամությունն ավելի է ամրացել, չերմ հարազատություն է ստեղծվել մեր երկու ժողովուրդների միջև...», իսկ ՍՍՌԺ ժողովրդական արտիստ Վ. Վաղարշյանը գրեց. «...Միթիլ բարեկամներ, մեր սրտերում կենդանի են Ձեր հետ ունեցած չերմ հանդիպումները, կենդանի հիշողությունները... դարձյալ ամբողջ սրտով ողջունում ենք Մեշեղի Աղիզբեկովի անվան թատրոնի դալուսար Երևանը:

Բաքվում գաստրոլային ներկայացումներով հանդես է եկել նաև Երևանի Ա. Սպենդիարյանի անվան օպերային և բալետի թատրոնը: Հիշենք 1959 թվականը, երբ Երևանի օպերային և բալետի թատրոնը հանդես եկավ Բաքվի աշխատավորության առջև Զնայած եղանակների (շոգ) անկաստ փինկոն, օպերան ապահովեց իր հաջողություններ և վայելեց Բաքվի հիանալի աշխատավորության սերն ու համակրանքը: Թատրոնը կազմակերպեց բազմաթիվ կուլյաներ ոչ միայն քաղաքում, այլև բանվորական ավաններում, մինչև իսկ ծովակղզում աշխատող բանվորների մոտ: Բաքվի թերթերը նշեցին թատրոնի կուլյաների կուլտուրական խոշոր նշանակությունը:

Ահա թե ինչ են գրել Ֆ. Մամեդովան և Ն. Նեկզովը «Բակինակի ասարչի» թերթի 1959 թվականի հուլիսի 17-ի համարում.

«...Հայկական օպերայի բեմի վարպետները ուրախացրին մեզ իրենց արվեստի ղեկավար, ստեղծագործական նշանակուի հաջողություններով... Օպերային բեմադրությունների երաժշտական կուլտուրայի բարձր մակարդակը, անփայտական հնարների համարձակությունը, արտիստների վարպետությունը— ահա թե ինչն է բերորդ այդ թատրոնի բեմադրությունների համար: Բաքվի հանդիսատեսների չերմ համակրանքը վայելող արտիստներին ուղում ենք անկեղծորեն շնորհակալ լինել արժանի հաջողությունների համար և ցանկանալ նրանց ստեղծագործական մեծ հաջողությունները:

Իսկ Ա. Բաղարշյանի գրել է. «Մենք վաղուց գիտենք Երևանի օպերային թատրոնի տաղանդավոր կուլկտիվին, առանձնապես մենակատարները՝ Գ. Գասպարյանի, Տ. Սազան-

գարյանի, Ա. Պետրոսյանի, Ն. Հովհաննիսյանի, Ա. Քոստանշ-
յանի և ուրիշների կատարողական արվեստի մասին... Մենք
մեր գուները հյուսիսկալոսիան բացում ենք և ասում մեր ասուր
ձեր ասուն է, թող ձեր երգը հնչի մեր քաղաքում, որպես եղ-
բայություն լավագույն զորանքը»:

Երևանի օպերային թատրոնի արտիստները 1959 թվակա-
նի հունիսի 8-ին եղան Կարազադի բանվորների, ինժեներնե-
րի և ծառայողների մոտ: Նրանք շատ չեմո ընդունեցին ար-
տիստների կուլմբները: Հարազատի շրջանի քարտուղար
չեթոսին ողջունեց հյուրերին և ասաց. «Այսօր մենք շատ ու-
րախ ենք, որ մեր հյուրերը այցելեցին մեզ: Հայ ժողովրդի
յուրաքանչյուր նվագումը անշաղ օրախաջնում է մեզ: Հայ-
կական երգն ու պարը հիացմունք են պատճառում մեզ»:

Հատկանշական է, որ այդ օրերին, երբ Երևանի օպերայի
և բալետի թատրոնը ներկայացումներ էր առլիս Բաբվում, Մոսկվայում
տեղի էր ունենում ադրբեջանական արվեստի և
զբաղանցության տասնյուրյակը: Դա ադրբեջանական և հայ ժո-
ղովուրդների կուլտուրական կապերի և համագործակցության
փայլուն դրսևորումներից մեկն էր:

1962 թվականին նորից տեղի ունեցան Բաբվի օպերայի և
բալետի թատրոնի կուլմբները Երևանում և Երևանի Պետական
օպերայի և բալետի թատրոնի կուլմբները Բաբվում:

Այս անգամ բաբվեցիները երևանցիներին, բացի արդեն
հայանի գործերից, ջուջարիցին մի շարք նոր ստեղծագոր-
ծություններ, ինչպես, օրինակ, Կ. Կարախի «Անպրոպի արա-
հետով» բալետը և Ս. Այեբսկերովի «Բա՛հադուր և Մոնա» օպե-
րան, որի հիմքում ընկած է հայ և ադրբեջանական ժողո-
վուրդների բարեկամության գաղափարը: Ներկայացվեց նաև
Ի. Չերժինսկու «Մարզու ճակատադիրը», որը զրված է Շոյու-
խովի համանուն պատմվածքի մոտիվով: Երևանցիները բաբ-
վեցիներին ասալին անգամ ջուջարիցին Արմեն Տիգրանյանի
«Դավիթ-Քեկ» օպերան, Արամ Խաչատրյանի «Սպարտակ»,
Ալ. Սպենդիարյանի «Սուսանով», Սաքելյարու «Մոյ գաղիք» բա-
լետները և ուրիշ ստեղծագործություններ:

Ադրբեջանի օպերային թատրոնը իր գասարովները դարձ-

յալ սկսեց «Քյոո-օլլի» օպերայով, իսկ Երևանինը՝ «Դավիթ-
Քեկ» օպերայով:

Այ. Հաջերկովի «Քյոո-օլլին» վաղուց է ինչ դարձել է
ինչպես Անդրկովկասի մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ
ժողովրդի սիրելի հերոսներից մեկը: Այդ հասանալի է, քանի
որ օպերայում ներկայացված ադրբեջանական ժողովրդի հե-
րոսը իր ազնիվ գաղափարներով, ժողովրդի ազատության և
երաշխայության համար պայքարելու իր ձգտումներով, սրտա-
տույ կրած ջանքերով հարազատ է ինչպես ադրբեջանցուն,
այնպես էլ հային, վրացուն և ազատասունը բոլոր ժողովուրդ-
ներին: Ահա թե ինչու «Քյոո-օլլին» միշտ էլ հնչում է թատր ու
համոզիչ և արժանանում է մեր հանդիսատեսների ջերմ ընդու-
նելությունը:

Երբ թատրոնը Երևան ժամանկուց առաջ կատարեց «Քյոո-
օլլու» ասալին բեմադրության 25-ամյակը, ներկայացմանը
մասնակցում էին ոչ միայն Ադրբեջանի արվեստի վարպետ-
ները, այլև եղբայրական մյուս անաղորդիկանների արտիստ-
ները, որոնք տարբեր ժամանակներում մասնակցել են այդ
օպերայի բեմադրություններին:

Ինչպես պետք էր սպասել, բաբվեցիները բացառիկ չեթ-
մություններ ընդունեցին Արմեն Տիգրանյանի «Դավիթ-Քեկ»
օպերան, որը հանդիսանում է հայկական օպերային արվեստի
կայուն ստեղծագործություններից մեկը: Նրանում շոշափ-
ված գաղափարները հովասարայես մոտիվ են ինչպես ադր-
բեջանական, այնպես էլ մյուս ժողովուրդների:

Երկու եղբայրական ժողովուրդների արտերում այդ համա-
տեղ գասարովների ասալացքում խանգավատությունը լավա-
գույն կերպով արտահայտեցին հայ և ադրբեջանական ար-
վեստի գործիչները:

Այսպես, Բաբվի թատրոնի զեղարվեստական ղեկավար,
ՍՍՄԲ ժողովրդական արտիստ Նիսադին ասաց. «Անշաղ ուրախ
եմ և զո՛ւ մեր՝ Երևան կատարած այս այցելությունից: Նման
փոխադարձ ուղեորությունները մենք վերածում ենք երկու
հարևան ժողովուրդների կուլտուրական արժեքների ստեղծա-
գործական յուրահասուկ ջուջարության: Մենք շարունակում

ներ այն մեծ բարեկամությունը, որն ստեղծվել է հաղթավոր արի ու աշխատասեր մարդկանց համառ պայքարի և արյան դեով...»:

ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մ. Սարյանը գրեց. «...Ես ուրախ եմ, որ հատկապես մայիսին, զարնանային այս ծաղկուն ամսին է կայանալու մեր երկու աշխատասեր ժողովուրդների՝ Ազրբեջանի և Հայաստանի օպերային Քառորոնների փոխադարձ այցը միմյանց տուն: Ես համոզված եմ, որ մեզ մոտ, երևանում, գրկաբաց կընդունվեն մեր բարեկամ ժողովուրդի արվեստի պատվիրակները, չեմ կասկածում նաև, որ մեր օպերայի և բալետի Քառորոնը ամենայն սիրով կհնչուրենկալվի Քառփում: Վաղուց հայտնի է, որ Անդրկովկասի ժողովուրդների համար հյուր ընդունելը արտակարգ տոն է, օգրախություն: Առավել ևս քերիբայի է հյուր ընդունել Հարազատ եղբորը, լավ բարեկամին: Այդ օրերին մեր պատվիրակները, մարդկություն համար ամենահասականայի լեզվով, արվեստի լեզվով, կպատմեն իրենց հույզները, իրենց կյանքի և կրթչտական մշակույթի ձևերը և հաջողությունների մասին...»:

ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհի Քոհար Գասպարյանը նշեց, որ առաջին անգամը չէ, որ այցելում է Քաթու... «Քաթուն ինձ համար դարձել է մտերիմ և հարազատ բազար: Ես վստահ եմ, որ այս անգամ ևս մեր զասարուները Քաթուի կրթչտասեր հասարակաշունթյան կողմից կզնահատվեն քստ արժանիություն և իխնն կծառարին հետագա առավել համախալկի հանդիպումների համարը: Բակ Ազրբեջանական ՍՍՌ վասակավոր արտիստուհի Մրանդիդ Ահմեդովան, ասես ի պատասխան Քոհար Գասպարյանին, գրեց. «Ամեն անգամ, երբ առիթ է լինում հանդիպել Քոհար Գասպարյանի, Տաթևիկ Սահանդարյանի կամ հայ ժողովուրդի արվեստի կին այլ ներկայացուցիչների հետ, սիրտս ուրախությունից այնպես է բարախում, ասես գտել եմ ամենատանկաղին մարդուն»:

Միբում եմ նրանց շրթերից կարկաչող հայկական երգը, սիրում եմ ինչպես իմ ժողովուրդի երգը: Ոչ միայն սիրում եմ, այն կատարում եմ մեծ հուզմունքով, պատասխանատվության մեծ զգացումով: Անուշը իմ սրբած զերերից է, և երբ հան-

ցես եմ դաշին այդ զերում, ես ինձ պատկերացնում եմ որպես մի խեղճական Անուշ... հաջողություն եմ ցանկանում ձեզ, երգի թենթով շերտ ողջույններն եմ հղում Ձեզ և համբուրում թույթական շրթերով»:

Հայ և ազրբեջանական ժողովուրդների արվեստը հիանալի է ընդունվում երկու ազգերի կողմից: Վաղուց արդեն հայտնի է, որ հայկական ժողովրդական երգերը և կրթչտական օրիշ ստեղծագործություններ սիրով են լավում ազրբեջանցու կողմից, ճիշտ այնպես, ինչպես ազրբեջանական կրթչտությունը սիրով են ունկնգրվում հայերի կողմից: Քնութաղբիլով Հայ և ազրբեջանական ժողովուրդների փոխհարաբերություններն ընդհանրապես, և կույտուրականը, մասնավորապես, Ազրբեջանի կոմունիստական պարտիայի առաջին քարտուղար ընկեր Ախունջովը ճիշտ կերպով նշել է. «...Մեր ժողովուրդների եղբայրական բարեկամությունը արժանաներ զնում են դարերի խորքը: Այդ բարեկամությունը ծնունդ է տուել և ամբարպիղվել օտարերկրյա զավթիչների զեմ մեր համասոնը մարտերում, ինքնակառություն և բուրժուազիայի զեմ մղած դասակարգային մարտերի բոցում, մեր սոցիալիստական հայրենիքի բարօրության համար անձվեր աշխատանքում»:

Ազրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամությունը զուգորդվել է նաչատուր Աբովյանի, Միրզա Ճախալի Ախունջովի, Միրզայի Նարայնյանի, Հովհաննես Քումանյանի, Նարիման Նարիմանովի, Ալեքսանդր Երիվանզաղբի, Զաֆար Զարբաբու և Հայաստանի ու Ազրբեջանի շատ ուրիշ պանծալի որդիների անմահ ստեղծագործություններում: Այս խոսքերից հետո ընկեր Ախունջովը բերում է Ս. Վուրդուխի բանաստեղծությունն հետևյալ ստղերը.

Թո՞ղ միտույվեն Ղազար, Գիլիշան,
Թո՞ղ արխախանվեն ինչպես մի հոգի՝
Հեկեր Հայաստան, յուշե՞ք Ազրբեջան,
Սեկ էլ Վրաստան, ամխախազ զան՝

1 «Մովսեսական Հայաստանը լենինի շքանշանակիր», փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1960, էջ 107:

Քառերական արվեստին զուգընթաց զարգացել և ամրապնդվել են անդրհովիտայան ռևուպորիթիաների Քառերական նկարչիների ստեղծագործական կապերը: Հատկապես բնօժանվոր է եղել վրաց նկարիչների գործունեությունը հայկական թատրոններում: Քրիլիսի հայկական թատրոնում բեմադրած «Վենետիկի վաճառականի» և 1930 թվականին բեմադրած Եկ. Թաճավորի «Իրվան» պիեսի նկարչական ձևավորումները կատարել է Գամբրելիլին: Նրան է պատկանում նաև Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում բեմադրած Շանշիուշվիլու «Արտեն» ներկայացման նկարչական ձևավորումը: նկարչուհի Քամարա Արախելիան 1931—1932 Քառերաջրանում Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետքատրոնում ձևավորել է «Տատիչ» ներկայացման ղեկորներն ու կոստյումները: Արախելիային ևս պատկանում նաև «Սասունցի Գավիթ» վրացական հրատարակություն հիանալի իլյուստրացիաները: Այնուհետև. 1931 թվականին Քրիլիսիի հայկական թատրոնում բեմադրած «Սասնաճաճ» պիեսի նկարչական ձևավորումը կատարել է Ախվիզդանին, 1932 թվականին նույն թատրոնում բեմադրած Հարյը Վաֆայի «Բոմբեյ» ներկայացումը ձևավորել է Պ. Օջիսիլին, իսկ «Իմ որդին» (1939) ներկայացման ղեկորները պատրաստվել են Վերմիշև-Վելյուսանիների ղեկավարությամբ: նկարիչ Մ. Գոցիբրիձեն Քրիլիսիի հայկական թատրոնում ձևավորել է 1942 թվականին ներկայացված «Ինժեներ Սերգեևը» և այլն:

Սակայն հայ և վրաց նկարիչների ստեղծագործական կապերը, հոգեհարազատությունը չեն սահմանափակվում միայն Քառերական նկարչությամբ: Բարեկամական փոխհարաբերությունների արտահայտություններից է նաև այն, որ, օրի նաև, վրաց կերպարվեստի լավագույն ներկայացուցիչներն իրենց ստեղծագործությունները նվիրել են հայ արվեստի և զբաղանդության ակնառվոր զինվորին: Վրաց ժողովրդական նկարիչ, քանդակագործ Ցա. Նիկոլաձեն կերտել է Ա. Եիրվանզազեի և Հովհ. Քումանյանի զիմաքանդակները, իսկ ժո-

ղովրդական նկարիչ, քանդակագործ Կ. Մերարիշվիլին ստեղծել է ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մ. Սարյանի զիմաքանդակը: նա մեծ հաջողությամբ քանդակել է նաև ազրիեյական գրողականության կրասիկ Միրզա Ֆաթալի Ախունդովի և ուրիշների կերպարները: Ավիզոր չի լինի այստեղ նշել, որ Հովհ. Քումանյանը բարձր է գնահատել Ցաի. Նիկոլաձեի արվեստը: Վրաց նկարիչ 25-ամյա Նորիյանի ստիվով, գեևա 1922 թվականին, Հովհ. Քումանյանը գրել է. «Քեզ, արժանավոր զավակիդ Վրաստանի, հողով բերուչ ու վեհ Վրաստանի, որ էր համար ընտրել է «շքեաղ» մակդերը և այդ շքեաղության մեջ գրել ողջ համամարդկայինը և ստավասույնը, բեզ, որ լցված մեծ մօր ողով, բնարելով գեղեցիկին ծառայելը՝ դարձանալիորեն կենդանի ձևեր ավիր անձեին և անկանք բարերի մեջ անմահություն գրիր, Վրաստանի համար այս եղանակդ օրը հովսեմ իմ սրտագին ողջույնը և եղբայրական համարուրբ...»:

Գնալով ավելի են ընդարձակվում հայ և վրաց կերպարվեստի գործիչների ստեղծագործական կապերը: Այդ բնազավատի համագործակցություն լավագույն օրինակը այն է, որ հայ ակադեմիկոս նկարիչ Եղիշ Քաղեսույանը 1920-ական թվականների սկզբներին հրավիրվում է վրացական գեղարվեստի ակադեմիա, որպես պրոֆեսոր: Այնտեղ ավելի քան տասը տարի դասավանդելով, Ե. Քաղեսույանը պատրաստել է շատ վրացի նկարիչներ, որոնցից շատերն այսօր անվանի արվեստագետներ են: Եղիշ Քաղեսույանի մոտ են սովորել Քիթնվան Մաղալաշվիլին, Քամարա Արախելիան և շատ ուրիշներ: Այդ Ակադեմիայում են սովորել նաև հայ նկարիչներ Մտեհիան Քարյանը, Գմ. Նուրբաղյանը, էդ. Խաթրեկյանը: Բացի մասնավորական գործունեությունից, Ե. Քաղեսույանը սպերելով Քրիլիսիան, միաժամանակ նկարել է Վրաստանի բուսության զբաղմանիվ տեսարաններ, մասնավորապես, Քրիլիսիի, Բախումիի, Բորժոմի, Քուռ գետի տեսարանները (մեծ մասամբ էտուզներ), ստեղծել է նաև վրացիների մի շարք զիմանկարներ (Ե. Կ. Մաղալաշիլիձեի, Ն. Տ. Ասաթիանիի և ուրիշների): Ե. Քաղեսույանը 1927 թվականին Քրիլիսիի օպերային և բալետ-

տի Թաւրոնի համար նկարում է Սեն-Սանսի «Սամսոն և Գալիլա» օպերայի դեկորացիաների էսքիզները:

Նշենք նաև, որ մի շարք հայ նկարիչներ էլ աշակերտել են վրացական արվեստի ականավոր դեմքերին: Օրինակ, Քորուլաձեին և Ուշա Զափարիձեին աշակերտել է է. Իսաբեկյանը: Այնուհետև Գեղարվեստական ակադեմիային կից Նիկոլաձեի արվեստանոցն է ավարտել Հո. Սիմոնյանը: Մայսուբուձեի ուսանողն է եղել Հմ. Բդեյանը: Այդ նույն ակադեմիայումն են սովորել նաև Կարապետ Մեծատուրյանը, էրա Աբրահամյանը, Արիենիկ Նարանդյանը և ուրիշներ: Վրաց նկարիչներից շատերը ձևավորել են Հայաստանի և Ազրբեջանի արվեստի և զրականության ստեղծագործությունները, կինոյի և Թաւրոնի բազմաթիվ բեմադրությունները:

Այժմ Վրաստանում է ապրում և ստեղծագործում հայ նկարիչ Գևորգ Գրիգորյանը, որի ստեղծագործությունները բարձր են գնահատվում վրաց մամուլի և հասարակայնության կողմից: Նա ստեղծել է մի շարք գործեր վրացական կյանքից («Լազո Գուդիաշվիլու դիմանկարը», «Նեկիի դիմանկարը», «Եմբանկար» և այլն):

Իր հերթին վրաց կերպարվեստի Նշանավոր վարպետ Լազո Գուդիաշվիլին կերտել է մի շարք գործեր հարևան ժողովուրդների կյանքից («Հալուհի Աշխենը», «Թրբուհի Ֆերիդան»):

Հայ նկարիչները բազմաթիվ կտավներում արտացոլել են Սովետական Վրաստանի գեղեցիկ բնությունը, նրա մարդկանց առօրյան: Իր ժամանակին, ինչպես արդեն ասվել է, բազմաթիվ գործեր է ստեղծել Փ. Բաշինջաղյանը: Ի նշան նրա նկատմամբ ունեցած երախտագիտության, վրաց բանաստեղծ Այրո Աղամիրան գրել է «Բաշինջաղյանի նկարի առաջ» բանաստեղծությունը, որտեղ հեղինակը հայ նկարչի կտավներից ասացած տպավորությունը արտահայտել է հետևյալ ձևով.

Միրամի նման սենտան է ցայում,
Մշուռն է հովտում լաշի Այաղանի,
Լուսալուզ գույնով երկինքն է շողում,
Վրձինն է գոլում Բաշինջաղյանի:



Մ. Բաշինջաղյանը և վրաց կապուստայի կոմիտեիները Երևանում:



Մ. Վ. Փրկիստանովի գլխավորումով

Անա արտերը, իտալացի աշխե,
 Գույներ, երանգներ իրար միացած,
 Անթիվ ծագիկներ, վառ ու բերշաղին,
 Հարգեաի Անորով կենդանի գարաւած...

Այսպէս, հայ և վրաց նկարիչները իրենց ստեղծագործութիւններում արտացոլելով հարեան ռեսպոնսիվայի առօրյան՝ իրականացնում են այն ցանկութիւնը, որ արտահայտել է Փ. Քերլեմեղյանը Վրաստանի սովետականացման 15-ամյակի կապակցութեամբ: Եւ գրել է.

«Հայաստանի կերպարվեստագետների անկեղծ ցանկութիւնն է Վրաստանի և Ադրբեջանի արվեստի մարդկանց հետ միասին ձեռք-ձեռքի տված ներկայացնել մեր այսօրվա բախտավոր և արեւոտ կյանքը, ցոլացնել մեր ստեղծագործութիւններում սոցիալիզմի հաղթարշաւը, շինարարութեան տիտանական դեմքը»¹:

Սովետական շրջանում արագիցիւ է դառնում հայ, վրաց և Ադրբեջանի նկարիչների, բանդակագործների ու արվեստագետների համատեղ կոնֆերանսները, ցուցահանդեսները երևանում, Քրիլիստիւմ և Բաքվում: Այսպէս, օրինակ, 1957 թվականին Երևանում կազմակերպվում են Վրացական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ, նկարչուհի և բանդակագործուհի Քամարտ Արակելիայի և ապա վրացի նշանավոր նկարիչ Գ. Գարաշվիլու ստեղծագործութիւնների ցուցահանդեսները, իսկ Քրիլիստիւմ վերջին տարիներին կազմակերպվում են հայ ականավոր նկարիչներ Մ. Սարյանի, Հ. Կոռոյանի, Գ. Բաշինջաղյանի, Ծ. Քաղեսայանի և ուրիշների ստեղծագործութիւնների ցուցահանդեսները: Այդ ցուցահանդեսները և ընկերական-բարեկամական շնորհ միջնորոտում անցկացված նրանց ցինարիւմները նպաստել են ոչ միայն Երկու ժողովուրդների արվեստի ճանաչմանը, այլև նրանց փոխադարձ հարատւացմանն ու զարգացմանը: ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մ. Սարյանի ծննդյան 75-ամյակի առթիւ Քրիլիստիւմ

¹ «Գրական թերթ», 1936, N 5:

կազմակերպված ցուցահանդեսի բացման կապակցությամբ Վրաստանի ժողովրդական նկարիչ Ուլա Զախարիձեն սան է. «Այս ցուցահանդեսը նշանակալից երևույթ է մեր մայրաքաղաքի կուլտուրական կյանքում: Ցուցահանդեսն ավելի է ամբաստանում մեր երկու ներաշխարհյան ռեալիստիկաների նկարիչների տրոպիցյոն կապով, Վրձինի այդ մեծ վարպետի աշխատանքների հետ ծանոթանալը հարստացնում է մեր արվեստը, ոգևորում է մեր արվեստագետներին»:

Քանդակագործ Վ. Կանդելիանի ավելացրել է. «Զեր գալուստը և Ձեր կենսախիղ արվեստը մեզ շատ է ուրախացնում: Գուր ձեր մեծ ամբողջացրել եք հայ ժողովրդի լավագույն գծերը: Ձեր վրձինով դուք բացել եք մեր այնքան անկեղծ, մաքուր ու մեծ սիրտը: Թող մեր տաղանդավոր երիտասարդությունը ձեզանից սովորի տեսնել կյանքի մարգարիտները և արվեստում լինել այնպես անկեղծ, ինչպես Գուր»¹:

Մի ուշադրավ երևույթ է: Այդ այն է, որ, օրինակ, հայ արվեստագետների միության ցուցահանդեսներում հանդես է եկել նաև վրացական ժողովրդական նկարիչ Մոսե Քոթիձեն, իսկ նրա որդին՝ Իրակլի Քոթիձեն, առաջին անգամ իր գործերը ցուցադրել է այդ Միության ցուցահանդեսներում, իսկ Վրաստանի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսներին պարբերաբար մասնակցել են հայ նկարիչներ Գ. Շարբաբյանը, Մ. Բաշբեուկ-Մելիքյանը, Հմ. Հակոբյանը և շատ ուրիշներ:

Նույնպիսի սերտ ստեղծագործական կապեր գոյություն ունին նաև ազրբեջանցի և հայ ու վրաց նկարիչների միջև: Նախ մի երկու օրինակ թատերական նկարչության բնագավառից. Ադիմզադեն ձևավորել է «Նամուսը», Ֆաթուլան Նուրաբբե Բարբի «Հայկական թատրոնի» «Հայթաթ», «Հաջի Կարա» ներկայացումները, իսկ 1943 թվականին էլ՝ «Հարսանիքը», Մուսուֆան Ռուստամը ձևավորել է «Արյան ձայն» և Ա. Շիրվանզադեի «Մորզանի խնամիրն» ներկայացումները և այլն:

¹ «Գրական քննարկ», 1955, № 25:

1936—1937 թվականներին Սովետական Ազրբեջանի կառավարության հրավերով հայ մեծանուն նկարիչ Մոսեֆան Աղաջանյանը Բարբում ստեղծում է Ազրբեջանի դրականության և արվեստի ներկայացուցիչների դիմանկարների շարքը: Արա Սարգսյանը 1938 թվականին Նյու-Յորքի համաշխարհային ցուցահանդեսի սովետական պալատի տնօրեն համար քանդակում է «Սովետական Ազրբեջան» մոնումենտալ բարձրաքանդակը, իսկ Ս. Թարյանը Բարբի կառանց ակումբի շենքի համար պատրաստում է ազրբեջանուհու ծանր անցյալը և երբանիչ ներկան պատկերող բարձրաքանդակներ և աշտտագրված ազրբեջանուհու դիմաքանդակը, իսկ ազրբեջանցի քանդակագործ Զալալ Կարադղին իր զեղարվեստական կրթությունն ստանալով վրաց քանդակագործ Նիկոլաձեի արվեստանոցում, հետպատերազմյան տարիներին ստեղծում է Հայրենական Մեծ պատերազմի մի շարք «հերոսների» Հ. Ասլանովի, օզալու Ն. Մոսեֆանյանի, ինչպես նաև Սա. Շահումյանի և ուրիշների դիմաքանդակները:

Ազրբեջանական կերպարվեստագետ-դեմոկրատ Ադիմզադեն Սովետական իշխանության առաջին տարիներին իր գործերում արտացոլում է իր ժողովրդի պայքարը նոր կյանքի համար: Նրա գործերի ցուցահանդեսը կազմակերպվեց Երևանում 1940 թվականին:

Բեխրուզ Կենզրեկի գործունեությունը համընկել է այն ժամանակվա հետ, երբ մուսավաթականները, մենչեիկներն ու դաշնակները (1917—1920) մեծ վնաս հասցրին ժողովրդին: Նա «Մոլոտ-Նասրեդդին» հանդեսում մեթոդաբան էր նրանց: Կենզրեկին մի շարք գործեր ավելց սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին:

Նա նկարել է ոչ միայն ազրբեջանական ժողովրդի, այլև հարևան ժողովուրդների կյանքից: Թրիտակ, Կենզրեկին ստեղծել է «Հայկական եկեղեցին (ակվարել)», «Ռուսական եկեղեցին» գործերը, Լենինի և Մարքսի պորտրետները և այլն:

Սովետական իշխանության տարիներին բուռն կերպով զարգացավ Ազրբեջանի կերպարվեստը: Սովետական շրջանում Ազրբեջանի նկարիչները բազմաթիվ գործեր են ավել հայ և

վրաց կյանքից: Առաջ եկան աչքի ընկնող գործիչներ, կազմակերպվեց զեղարվեստական դասախարակության գործը: Այստեղ ազդրեչանական անվանի կերպարվեստագետների հետ միասին իրենց լուսման են մտցրել նաև հայ կերպարվեստագետները՝ Վ. Տեր-Պողոսովը, Մ. Սաղյանը, Ա. Մամբախյանը, Ի. Խաչատուրովը:

Ինչպես արվեստի մյուս բնագավառները, այնպես էլ կերպարվեստի վարպետները իրենց գործերում արտացոլում են ոչ միայն սովետական Ազդրեչանի անցյալն ու նրա ներկան, այլև մյուս եղբայրական սևասպուրիկաների կյանքը, նրանց անվանի մարդկանց: Այսպես, օրինակ, Ազդրեչանում կազմակերպվեց հասուն կ ցուցահանդես նվիրված Շոթա Ռուսթավելու հոբելյանին: Տ. Քաչիեր նկարել է Լադո Կեյխովելու պոստրեն, Ս. Սամոռազեն՝ «Միրզա Շաիֆ և Արովյան» կոմպոզիցիոն աշխատանքը, Ա. Ազիմզադին է Վ. Տեր-Պողոսովի համագործակցությամբ սանդղծել է 26 կոմիտաների դիմանկարները: Ազիմզազեն իր նկարները սպաղարում է նաև հայկական «Կոմունիստ» թերթում, քանդակագործ Սարգսյուր զեռես 1928 թվականին քանդակագործ Պ. Մինայուր հետ ստեղծել է Ս. Շահումյանի, Մ. Ազիզբեկովի, Ա. Զափարիձեի մոնումենտալ կիրանդրիները: Քանդակագործ Գ. Կարիազին, աշխատելով վրացական Գեղարվեստների ակադեմիայի Յա. Նիկոլաձեի արվեստանոցում, քանդակել է Շ. Ռուսթավելու պորտրետ-քարեիՖը, Հնվեր Մամեդովը պատկերել է Կիրովի և Օրջոնիկիձեի զինավորությունում 12-րդ բանակի մուսաբը Ազդրեչան: Հայրենական պատերազմի տարիներին Ազդրեչանի կերպարվեստագետները իրենց ստեղծագործությունները նվիրելով սովետական ժողովրդի պայքարին ու հաղթանակին, կերտել են նաև մյուս ժողովուրդների մարդկանց կերպարներ:

1942 թվականի վերջերին Թբիլիսիում կազմակերպված միջ-սևասպուրիկական ցուցահանդեսին Հայաստանի, Վրաստանի, Մոսկվայի, Ուկրաինայի և Կրասնոդարի նկարիչների հետ միասին մասնակցել են նաև Ազդրեչանի 9 կերպարվեստագետներ (Ա. Ազիզազև, Ի. Ախուզովի, Գ. Խալիկով և ուրիշներ): Գ. Խալիկովը ստեղծում է «Սովետի ժողովուրդները ֆա-

շիստական սևասպուրիկների զեմ ժողովրդ պայքարում» գործը, Գ. Գարյազդին և Գ. Ախմեդովը կերտում են կրկնակի հերոս Նելսոն Մտեֆանյանի պորտրեն, Գ. Ռուսամովը և Ի. Խաչատուրովը նկարում են «Սեղազույթյուն ժողովուրդներին» պլակատը՝:

Մեր կերպարվեստագետները շեն պարփակվում իրենց սևասպուրիկաների շրջանակներում: Նրանք ամենասերտ կապերի մեջ են: Միայն վերջին մի քանի տարիների ընթացքում Բարբում կազմակերպվել են ՌՄՅՍՄ-ի, Հայաստանի, Վրաստանի, Լատվիայի, Լիտվայի և ուրիշ սևասպուրիկաների կերպարվեստագետների գործերի ցուցահանդեսները: Իրենց հերթին Ազդրեչանի կերպարվեստագետների գործերը ցուցադրվել են Հայաստանում, Վրաստանում:

Անցած տարիների ընթացքում նրանում կազմակերպվել են ազդրեչանական աչքի ընկնող կերպարվեստագետների գործերի ցուցահանդեսներ, որոնք պատշաճ քննունելություն են գտել հասարակայնության կողմից:

Միտեմատիկարար կազմակերպվող Անզդրովկասի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդեսներում կարելի է տեսնել, թե ինչպես վրացի նկարիչը ստեղծում է նաև գործեր հայկական և ազդրեչանական կյանքից, իսկ ազդրեչանցիները՝ հայկական և վրացական կյանքից: Այս հանգամանքը նույնպես երբե ժողովուրդների բարեկամության արտահայտությունն է:

Նրանում, Թբիլիսիում, Բաբում սևաստեղծակարար տեղի են ունենում համասեղ ստեղծագործական կոնֆերանսներ և դիսկուսիաներ, որոնց նպատակն է խթան հանդիսանալ սովետական կերպարվեստի առաջ ծառայած խնդիրների լուծման, վարպետության բարձրացման, սոցիալիստական սեռականի էլ ազիելի ամբազնուման, հաստատման համար վերստին վրաց, ազդրեչանական և հայ ժողովուրդների կերպարվեստագետների գործերում:

Կարելի է բերել նաև ճարտարապետական կապերի և համագործակցության բազմաթիվ օրինակներ:

1 Տճ՝ «Известия Азербайджана», изд АН Аз. ССР, 1954, стр. 84.

Սովետական կարգերի հաղթանակից հետո մեր ճարտարապետները ավել են սոցիալիստական հասարակության էությունը համապատասխանող նոր ճարտարապետական կոնցեպտը:

Հայաստանի, Արաստանի և Ազրբեջանի ճարտարապետներին ստեղծագործության մեջ կարելի է տեսնել ձևով ազդային և բովանդակությամբ սոցիալիստական ճարտարապետության հաջողված շատ օրինակներ: Այս շրջանում ևս նկատվում է որոշակի ստեղծագործական համազործակցություն Անդրկովկասի ճարտարապետների միջև, և դա միանգամայն հասկանալի է, քանի որ ընդհանրությունը թվադրող մի շարք գործաների (աշխարհագրական պայմաններ, տեղական շինանյութ և այլն) հետ միասին սոցիալիստական հասարակության համայնապարփակ զազափարեներն ավելի մեծ հիմք են ստեղծում այդպիսի ընդհանրություն համար:

Տարիներ առաջ ճարտարապետների միացյալ շանքերով մշակվեցին և կիրառվեցին բնակարանների տիպային մի շարք նախագծեր, որոնք առավել լավով են համապատասխանում երեք սեսպուրիկանների կլիմայական և կենցաղային պայմաններին:

Սովորական են դարձել Անդրկովկասի ճարտարապետների համատեղ ստեղծագործական խորհրդակցությունները, որոնք հաջողությամբ կազմակերպվում են երեք սեսպուրիկանների մայրաքաղաքներում: Այդ խորհրդակցությունների ժամանակ քննության են առնվում այնպիսի հարցեր, որոնք հավասարապես բխում են այդ սեսպուրիկաններում կատարվող քաղաքաշինությունից, լուծվում են պրոբլեմներ, որոնք ընդհանուր են Ազրբեջանի, Հայաստանի և Արաստանի բնակլիմայական պայմաններին համար:

ճարտարապետ Ռուբեն Աղաբաջյանի գործունեությունը, նրա «Արաստանի և Հայաստանի գմբեթավոր շենքերի հորինվածքը» աշխատությունը այդ համագործակցության օրինակներից մեկն է հանդիսանում: Այդ գիրքը, ինչպես վկայում է ՎՍՍՄ արվեստի վասնակավոր գործիչ, ճարտարապետ Գեորգի Լեծելյան, մեր հարևան ժողովուրդների ճարտարապետու-

թյունների զուգահեռ ուսումնասիրության լավագույն օրինակն է հանդիսանում, որի համար նրան 1949 թվականին ճարտարապետության դոկտորի գիտական աստիճան է շնորհվել: Իսկ սկադնմիկոս Եավլա Ամիրաշվիլին զրն է, որ այդ աշխատության մեջ «Արաստանի և Հայաստանի ճարտարապետական ձևերի ծագման ու զարգացման հարցերը դռն են օրինկ-տիվ գնահատական, իսկ ընդհանուր ճարտարապետության պատմության մեջ գմբեթային կառուցվածքների վերաբերող մի շարք մտթ և խճճված հարցերը՝ նոր և պարզորոշ լուսաբանություն:

Ռ. Աղաբաջյանի ղեկավարությամբ Քրիլիսիի, Բարվի, Երեվանի և Մոսկվայի բազմաթիվ մասնագետներ պաշտպանել են ինտեգրացիոնական և զոկտրակոնական զինապետների (Վասիլևի և Քերիճի, Պարմեն Զաբարյան, Արդուլա Սալամ-Զադե, Գոմեստի Մշիվենիերիճ և այլն): Երևանում կառուցվող ունիվերսալ խանութի նոր շենքի հեղինակներն են՝ նրա հետ միասին, նաև Փոցիխիշվիլին, Գ. Գրիցայր և Ս. Զուրաբյանը՝:

Ներկայումս, երբ սովետական ճարտարապետության առաջ գրված են նոր խնդիրներ՝ շինարարության ասպարեզում ինդուստրիալ մեթոդների լայն կիրառության, տեղական շինանյութերի ավելի ազդեցուն օգտագործման, նոր կոնստրուկցիաների ստեղծման ուղղությամբ և այլն, Անդրկովկասի ճարտարապետների միջև ստեղծագործական համագործակցության համար ավելի լայն հեռանկարներ են բացվում:

Ի Ր Ա Շ Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Անդրկովկասյան ժողովուրդների մտոիկ հարևանությունը, պատմական միևնույն ճակատագրեր և ասպրիակնելայի նմանությունները նրանց մեջ պատվաստել են միմյանց նկատմամբ սիրո և հարգանքի ամենաազնիվ զգացմունքներ, որոնք արտահայտվել են ինչպես քաղաքական-տնտեսական, այնպես

1 Տե՛ս «Սովետական արվեստ», 1961, № 12, Գ. Լեծելյան, «ճարտարապետների ցատաբարակ ճարտարապետ», էջ 51—52:

էլ կուտուրական համագործակցութեան բնագաւառում: Անգղերկովկասյան ժողովուրդների կուլտուրայի մի շանի ճշուգիւրի փոխադարձ կապերի մասին արդեն խոսվեց: Պակաս ուշագրավ չեն երաժշտական կապերը: Նախ ասենք, որ մեր ժողովուրդների երաժշտութեան մեջ ինչ-որ բնդհանրություն, նմանություն կա, որը գալիս է նրանց կյանքի շատ կողմերի միատեսակ լինելուց: Աչդ է պատճառը, որ հայր, վրացին և ադրբեջանցին սիրով են ունկնդրում իր հարեան ժողովրդի երաժշտությունը: Բ՛ր հայի և ադրբեջանցու սիրտը չեն գերում վրացական «Նասրանը» «Սուլիոն», «Քրիխոն» և այլ երգերը: Կա՞ արդո՞ր Վրաստանում և Ադրբեջանում մի մարդ, որին չճուղեն Սոյաթ-Նովայի երգերը, «Անուշ» օպերայի գեղեցիկ մեղեցիկները:

Չէ՞ որ հայն ու վրացին էլ անասճման սիրում են ադրբեջանական շիրյաստիները և կամ ժողովրդական շատ զոդտրիկ երգերը: Պետք է ներկա լինել համերգներին՝ տեսնելու համար, թե ինչպիսի մեծ խանդավաասութեամբ են ընդունում վրացական, հայկական և ադրբեջանական երգի-օպերի անսամբլների էլույթները երեք ժողովուրդների կողմից:

Գրեթե սխառեմատիկաբար Հայաստանի երաժշտական կոլեկտիվները՝ հայկական ժողովրդական երգի և օպերի վաստակավոր անսամբլը, էստրադային նվագախումբը, սիմֆոնիկ նվագախումբը, Կոմիտասի անվան կվարտետը, Սոյաթ-Նովայի անվան պրասանական անսամբլը, Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնի մենակատարները՝ ՍՍՌՄ ժողովրդական արտիստուհիներ Գոհար Գասպարյանը, Տաթևիկ Սաղանդարյանը և ուրիշներ մեծ հաջողությամբ հանդես են գալիս Սովետական Վրաստանում:

Դեռևս 1936 թվականի օգոստոսին Քրիխոնում ակադում է Հայաստանի ժողովրդական արվեստի ներկայացուցիչների էլույթների հնգօրյակը: Հետագայում Քրիխոնում մեծ հաջողությամբ կույթներ են ունենում Երևանի Պետական կոնսերվատորիայի երգիչիկ խումբը՝ Ք. Ալթունյանի ղեկավարությամբ, սիմֆոնիկ նվագախումբը՝ Գ. Բուդաղյանի ղեկավարությամբ, Երևանի Պետական օպերայի և բալետի թատրոնի



Ադրբեջանական օպերայի և թատրոնի կոլեկտիվի ղեկավարներ Երևանի կայսերական



Հայ և վրաց պետականների համալսարանի կենդանի

մենակատարները՝ Ե. Տալանը, Գ. Մելքոնյանը, ժողովրդական երգերի կատարող Ե. Մկրտչյանը և ուրիշները Հայ կոմպոզիտորներից Վրաստանում հնդինականի համերգներով հանդես են եկել Ա. Սպենդիարյանը, Ա. Տեր-Ղևնդյանը, իսկ մեզ մոտ համերգներ է տվել Զ. Փալիաշվիլին:

Վրացական երաժշտության կրտսիկ՝ Փալիաշվիլու ստեղծագործությունները լայնորեն կատարվում են երրայրական ռեսպուբլիկաներում, մեծ հաճույքով լսվում բազմազգ ունկրնդիրների կողմից: Ինքը իր ժամանակին մեծ հետաքրքրություն է հանդես բերել անդրկովկասյան ժողովուրդների երաժշտական կուլտուրաների նկատմամբ: Դրա ապացույցներից մեկն է, որ նա բարեկամական սերտ կապերի, մեղ է եղել հայ և մյուս ժողովուրդների կոմպոզիտորների հետ: Ա. Սպենդիարյանը, Ա. Տիրապետյանը, Ա. Տեր-Ղևնդյանը, Ուզ. Հաջրիկովը և շատ ուրիշներ նրա ամենամտերիմ բարեկամներն են եղել: Ազվիլն, Զ. Փալիաշվիլին զաստիարակել է շատ հայ երաժիշտներ, որոնք այժմ աշխատում են Հայաստանում և մյուս ռեսպուբլիկաներում:

Ա. Տեր-Ղևնդյանը պատմում է այն սրտատուչ վերաբերմունքի մասին, որ ցուցարհել է Զ. Փալիաշվիլին եզրայրական ժողովուրդների երաժշտության գործիչների նկատմամբ: «1926 թվականի օգոստոսին Հայաստանի Լուսժողովատն ինձ առաջարկեց Պետական կոնսերվատորիայի դիրիժորի պաշտոնը: Իմանալով այդ, Զախարի Պետրովիչը ինձ նվիրաբերեց մի ամբողջ շտաբ իր ապագրած աշխատություններից, նույնը արեցի՝ և ես, ու մենք որոշեցինք մեր բարեկամությունը պահպանել նամակագրությամբ:

Երևանում 1929 թվականի սկզբին կուլտուրայի տանը կազմակերպվում է Զ. Փալիաշվիլու սիմֆոնիկ ստեղծագործությունների համերգը: Այդ համերգը «...անցավ բացառիկ հաջողությամբ և մի օրից հետո, նորից լեփ-լեցուն դահլիճում, կրկնվեց: Երկրորդ համերգից հետո մեր երաժշտական հասարակությունը շեղմորեն մեծարեց երրայրական վրաց ժողովրդի տաղանդավոր զավակին: Եստ շեքմ, շատ անհեղձ խոսքեր ասվեցին ոչ միայն Զախարի Պետրովիչի, ոչ միայն բա-

ցառիկ տաղանդի տեր Փալիաշվիլինների ընտանիքի, այլև ողջ վրաց ժողովրդի հասցեին, որի երաժշտական ստեղծագործությունն աչքի է ընկնում մեղոգիական բազմազանությամբ ու ռիթմական հարստությամբ... Նա 1931 թվականի օգոստոսին նորից հրավիրվեց Երևան: Նրա համերգները, Կոմսունարների այդուհի, անցան բացառիկ հաջողությամբ...

Փալիաշվիլին մեծ հարգանք էր տաճում զեսի հայ երաժշտության նշանավոր ներկայացուցիչները: Մի անգամ, երբ Սահեղիարյանը Քիֆլիսի կոնսերվատորիայի համերգային օպերլեճում փորձ էր անում նվագախմբի հետ, ներկա էր նաև Փալիաշվիլին: Վերջինս մտնում է Ա. Տեր-Ղևոնդյանի և Սպենդիարյանի կողմը ցույց տալով աւուժ. «Պահպանեցեք նրան, նա ոչ միայն ձեզ է պետք, այլ բոլորիս: Պետք է այնպես անել, որպեսզի Սպենդիարյանը իր համերգներով որքան հնարավոր է համախոս դա՛ Վրաստանն»¹:

Գնեա 1920 թվականին կենդանացրում անդի է ունենում համաժիտֆենական երաժշտական կոնֆերանս. այնտեղ կոնսերվատորիայի շենքում բացվում է երաժշտության նվաճումների ցուցահանդես: Ա. Տեր-Ղևոնդյանը և Զ. Փալիաշվիլին կազմում են ինֆորմացիա Հայաստանի և Վրաստանի երաժշտական կյանքի մասին և մի ընդհանուր ցուցափեղկի վրա ցուցադրում երկու եղբայրական ժողովուրդների հաջողությունները:

Հայ և վրաց երաժշտական կուլտուրայի գործիչների համագործակցության վրա օրինակ է նաև այն, որ Վրաստանի կոնսերվատորիայի հիմնադիրների թվում, վրաց նշանավոր երաժշտական գործիչներ Սալիանիչի և Միլանդուրիսի անունների կողքին մենք տեսնում ենք Կոստանդին Ալիսանյանի և Վաղի Ղարզանյանի անունները: Բայց այդ, Քրիլիսի կոնսերվատորիայում զաստիանդիլ են զայնպեհահարուհի Քամարա Տեր-Ստեփանյանը, Անուշավան Տեր-Ղևոնդյանը: Մինչև այսօր էլ այնտեղ աշխատում է Սարգիս Բարխուդարյանը, որի աշակերտներից հասկապես պետք է նշել Օթար Տակտակիշվիլուն,

Ե. Ազմայարաշվիլուն, Ա. Մաճավարիանուն, Ե. Մշվելիձեին և Գ. Կիլանձեին: Քրիլիսի կոնսերվատորիայում իրենց կրթությունն են ստացել Կ. Զաքարյանը, Վ. Տալյանը, Մ. Միրզոյանը, Կ. Մալխասյանը, Բ. Անդրիասյանը և ուրիշներ: Քրիլիսիի մասնաշաղկան զարգանում երկար տարիներ երաժշտական-մտնկալածական աշխատանք են տարել հայ կոմպոզիտորները՝ Ազատ Մանուկյանը, Բ. Մելիքյանը, Ապ. Մելիքյանը, Մ. Միրզոյանը, Ումբ. Շատրև և ուրիշներ:

Փոխադարձ ստեղծագործական կապ է գոյություն ունեցել հայկական թատրոնների և վրաց կոմպոզիտորների միջև: Եսա հաճախ հայկական թատրոնում բնակազմված պրիսի երաժշտությունը զրել են վրաց կոմպոզիտորները: Այսպես, Քրիլիսիի հայկական թատրոնում բնակազմված Ազիսուս «Դեզերտերիկա» պիեսի երաժշտությունը զրել է Վախվախիշվիլին: Նույն թատրոնի համար 1931 թվականին Վախվախիշվիլին զրել է նաև «Բամբուկ» ներկայացման երաժշտությունը: Այնուհետև, Քրիլիսիի հայկական թատրոնում և հետո էլ Երևանի Մուսկոուկյանի անվան թատրոնում բնակազմված Ծանշիաշվիլու «Արսեն» և Երիլիսի «Մեր և խարդակներ» պիեսների բնակազմության երաժշտությունը զրել է Մեղվիձեև-Ուխուցեսին:

Թվեք մի բանի փաստեր ևս. Քրիլիսիի հայկական թատրոնում բնակազմված Կիզիաշվիլու «Հեղոսուհիների սերունդ» ներկայացման երաժշտությունը զրել է Անդրաշվիլին (բնակազմություն Գ. Շուբալու), իսկ Բալանիշվիլանն զրել է Գ. Մունդուկյանի անվան թատրոնում բնակազմված «Ստարիչի» երաժշտությունը: Այնուհետև, Քրիլիսիի հայկական թատրոնում բնակազմված Պաղտիսի «Արխատերաստեր» և «Սենյո մեղաժորներ» ներկայացումների երաժշտությունը նույնպես զրել է Բալանիշվիլանն: Նույն թատրոնում բնակազմված Վ. Վիշնևկու «Արևմտացում կոիվ է» և Օսկար Ուալդի «Սալոմե» պիեսների երաժշտական ձևազմերը կատարել է Գ. Գվելեսիանի:

Նույնպիսի շեղմ, բարեկամական փոխհարաբերություններ են գոյություն ունեցել և ունեն հայ և ադրբեջանական երաժշտական կուլտուրայի բնագավառում: Այս տունով թավահանալափ բնորոշ է Մովսեսական Ազրբեջանի հասարակայնու-

1 «Մովսեսական արվեստ», 1961, № 2, էջ 45:

Քլան ան խանդավառ ընդունելությունը, որ ցույց է տրվել զին-
և 1939 թվականին՝ հայկական արվեստի և գրականության
ստալինյան տասնօրյակից հետո Բաբու ժամանած հայկական
ֆիլահարմոնիայի կուլեկտիվներին։ Մի քանի օրվա ընթացքում
հայկական երգի-պարի անսամբլը, սիմֆոնիկ նվագախումբը,
երգչախումբը, ժողովրդական գործիքների անսամբլը և ուրիշ
կուլեկտիվներ աղբրեանական հասարակության բոլոր ծափա-
հարությունների ու նրանց հղաքայական զուգորարների պայ-
մաններում էլույթներ են ունեցել Բաբվի օպերայի շենքում,
ինչպես նաև բանվորական տեղումներում։

Լենինենթա տրեսայ 17-րդ հանրատոյի բանվորները, Հայ-
ֆիլահարմոնիայի կուլեկտիվները հիշյալ էլույթները դիտելուց
հետո, հետևյալ սրտաբույժի խոսքերն են ասել.

«Մեր երջանկությունը մեծ է, մեղանից ամեն մեկը, ով լսել
է հայ արտիստների համերգները Բաբվում, հպարտություն
զգաց հայ ժողովրդի համար։ Նրանց արվեստը խորապես ժո-
ղովրդական է, մոտ է, հասկանալի յուրաքանչյուր ժողովրդի.
և՛ հային, և՛ աղբրեանցուն, և՛ ուսմին։ Նրանց արվեստը իսկա-
պես մերն է, սովետական է... հայ ժողովրդի արվեստը կեն-
սախիտ է, հիանալի է։ Հայֆիլահարմոնիայի արտիստների կող-
մից կատարված ամեն մի երգ, պար— զա հուղիշ պատմվածք
է հայ ժողովրդի կյանքի մասին, նրա հաղթանակների, նրա
երջանիկ և ուրախ կյանքի մասին...»

Սրտաբաց ընդունելություն են զանում և մեծ հաջողություն
են ունենում Հայաստանում Աղբրեջանի կոտարողական կո-
լեկտիվները։ 1957 թվականի հունիսին Երևանում չորս համա-
ղով հանդես եկավ Աղբրեջանի Պետական սիմֆոնիկ նվագա-
խումբը, որը ՍՍՄԿ ժողովրդական արտիստ, դիրիժոր Նիպոլի
հմուտ ղեկավարությամբ Սովետական Հայաստանի մալա-
բազարի երաժշտասեր հասարակչությունը լայնորեն ծա-
նոթացրեց եղբայրական Աղբրեջանի սիմֆոնիկ երաժշտության
լավագույն նմուշներին։

Այդ գաստրոլների առթիվ երաժշտագետ Ալ. Բաղևաշյանը
իր հոդվածում նշեց, որ «Աղբրեջանական պետական սիմֆո-
նիկ նվագախումբը կատարողական միաձույլ և երկար տարի-

ների փորձ ունեցող կուլեկտիվ է, որի ծրագրերը անընդհատ
հարստանում և թարմանում են։ Համերգներում աղբրեջանա-
կան երաժշտությունը ներկայացված էր Ուլիկի Հաչիրեկովի,
Կարս Կաբակի, Ֆիրբեև Ամբրովի, Ջիվզիժ Հաչիկի, Աղիր
Ուլաևի ստեղծագործություններով։ Ունկեդիրների կատից չե-
մտրեն ընդունվեց աղբրեջանական երաժշտական կրասիկ Ու-
լիկի Հաչիրեկովի «Մյուս-օլլիս օպերայի» նախերգանքը, որը
զբավում է ազգային զեղեցիկ կուլտրտով, բազմիրանց զոր-
ծիբավորմամբ և այսպահայից երգչախումբայմբ... Աղբրեջանի
պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգները Երևանում մեծ
հաջողությամբ անցան։ Մենք ուրախությամբ ենք նշում եղբայ-
րական Աղբրեջանի սիմֆոնիկ կատարողական արվեստի խո-
շոր նվաճումները և նոր հաջողություններ ենք ցանկանում
աղբրեջանական պետական սիմֆոնիկ նվագախմբին»¹։

Վերջերս Երևանում էլույթներ ունեցավ Աղբրեջանական
երգի-պարի անսամբլը, որն այդ կուլեկտիվի ստալին էլույթը
չէր Հայաստանի մայրաքաղաքում։ Ենպես միշտ, համերգ-
ներն անցան լիպի-լիցցուն դահլիճներում և արժանացան ուն-
կեդիրների շքեղ ընդունելությունը։ «Երևանիստ» թերթում
սպալովեց հողովում, որտեղ սոված է. «Անսամբլի հաջողու-
թյունը նրա օրգանական կապի մեջ է ժողովրդական արվես-
տի հետ. անսամբլը վարպետորեն հանդիսատեսին է հասցը-
նում հարազատ ժողովրդի բազմազան երգային-պարային ար-
վեստի հմարտ։ Համերգում Սովետական Աղբրեջանի երջանիկ
առօրյալի մասին է պատմում անսամբլը՝ ժողովրդական ար-
վեստի ստղանբազար պտույտաբանիցաբ։ Անսամբլը հաջո-
րությամբ է կատարում Ք. Խանամիրովայի «Մյուստան նավ-
թագործների մասին», և այսպես են ծրագրի շատ և շատ հա-
մարները։ Դահլիճում նստած հանդիսատեսի ամեն մի սրտա-
բույս ծափահարությունը նրկու ժողովուրդների ներալա-
կան քարեկամության զգացմունքի արտահայտությունն է օ։

Հայկական և աղբրեջանական երաժշտական կատարողա-
կան կուլեկտիվները, մենակատարները, երաժշտական գործիչ-

¹ «Սովետական Հայաստան», 1957, 5 հուլիսի

ներքին փոխադարձաբար հանդես են գալիս Ազգրբեջանում և Հայաստանում: Ո՛վ չի հիշում Ազգրբեջանական երգի ու պարի անամբրին, նրա նշանակությունը լարպետների՝ Շեվքեթ Ալեբպեքովայի, Գյուլզաա Մահմեդովի և մյուսների կուլմները ներանում և այլ քաղաքներում:

Հայկական երգի և պարի վուստակավոր անամբրի կողմից հաջողությամբ կատարվում են ազգրբեջանական ժողովրդի երգերը և պարերը: Իսկ ազգրբեջանական կատարողական կոլեկտիվների սեպարատուրում ամուր տեղ են զբաղվել հայկական երաժշտության լավագույն նմուշները:

Հայ և ազգրբեջանական կուլտուրայի գործիչների համագործակցության և փոխադարձ կապերի արտահայտություններն են նաև հետևյալ փաստերը: Սովետական Ազգրբեջանի 15-ամյակի կապակցությամբ Տեր-Ղևոնդյանը, որը 1931—1938 թվականներին եղել է Բարձրի կոմսերվատորիայի ղեկավարը, գրել է «Ռուսպոդիա-Ռասսո» ստեղծագործությունը, այն մինչև հիմա էլ մեծ հաջողությամբ կատարվում է Բարձրում: Ա. Տեր-Ղևոնդյանը Ջ. Ջարարլիի սյուեմուվ ստեղծել է նաև «Հրո հարսնացուն» բալետը: Կայն ժողովրդականություն է վայելում նրա «Ջան Ազգրբեջան» երգը Այնուհետև. Երևանի կոնսերվատորիայում են սովորել նշանավոր կոմպոզիտոր և դիրիժոր Նիսիյան, չուֆապեհար Ազատ Ալիևը: Հայ սկանավոր երգիչ Տիգրան Նալբանդյանը երկար ժամանակ եղել է կենտրոնի երաժշտական ուսումնարանի ղեկավարը, Բարձրի ուսիցի մենեդժեր, վոկալի դասատու հայ երգչուհի Փնարիկ Գրիգորյանը խոշոր վաստակ ունի Բարձրի օպերայում: Ազգրբեջանում են աշխատել նշանավոր հայ բյամանչիտ Սաշա Օդասկանզվիլին, Բադետ Քալա Մելիքյանը և ուրիշներ: Ազգրբեջանի ժողովրդական գործիքների հայանի անամբրի հիմնադիրն է եղել բմիշև և կոմպոզիտոր Հովհաննիսյանը: Բարձրում են իրենց մասնագիտական կրթությունը ստացել և ստեղծագործել շնորհալի հայ կոմպոզիտորներ Պարսաբյանը, Փանյանը և ուրիշները:

Հայ-ազգրբեջանական երաժշտական կապերի առումով շատ բնորոշ է կամպոզիտոր Ա. Մալիլյանի գործունեությունը: Ահա

մի բանի փաստերը 1920 թվականին, Ազգրբեջանում սովետական իշխանության հաստատումից հետո, Մալիլյանը տեղափոխվում է Բարսի և ընդգրկվում սեպարտիկայի երաժշտական-հասարակական կյանքի մեջ: Շուտով Ազգրբեջանի Կուսակցության հանձնարարությամբ նա կնդմեղիքում է մանկական թատերական-երաժշտական ստուդիա՝ ազգրբեջանական և հայկական սեկտորներով: 1925 թվականից նա ղեկավարում է Բարձրի նորարար Հայարտան երաժշտական սեկցիան, աշխատում է երաժշտական զբաղանդության հրատարակության, ժողովրդական երգերի հավաքման ուղղությամբ, նշանակալից մանկավարժական աշխատանք է անում:

1930 թվականին Ա. Մալիլյանի երաժշտական-մանկավարժական և զբաղանդ գործունեություն 25-ամյակի կապակցությամբ, ելելով նրա նշանակալից ծառայությունների՝ Ազգրբեջանի կատարությունը նրան շնորհում է Արվեստի վաստակավոր գործչի պատվոգրը կտրում: 1938 թվականին Մալիլյանը մասնակցում է Մոսկվայում կայացած ազգրբեջանական արվեստի տասնօրյակին և պարզևատրվում է շքանշանով:

Նա հանդեսում է ազգրբեջանական և հայկական մասսայական երգերի առաջին հեղինակներից մեկը, Բարձրի ազգրբեջանական և հայկական զբամարիկ թատրոնների շատ բնագործությունների համար զրում է երաժշտության և, վերջապես, ստեղծում է օպերա, սիմֆոնիա, վոկալ-սիմֆոնիկ ու կոմերսիան-գործիքային մի շարք այլ ստեղծագործություններ:

Մալիլյանի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ է զբաղում «Սաֆա» օպերան (1933), զրված իր իսկ լիրիկոսով: Իր բնույթով լիրիկական այդ օպերան նվիրված է Ֆրոնտների դեմ ուղղված հայ և ազգրբեջանցի զյուլապիների համանդ պայքարին: Օպերայի առանձին սուպրվամ հասվածները («Աշուղի երգը», «Յալին») իրենց հիմնալի մեղեդիներով, բարձր, կենսահաստատ տրամագրությամբ՝ բա արժանվույն մեծ ժողովրդականություն են վայելում: Օպերան ամ-

բողջացուեալ ընծայուի էլ 1939 թվականին, Բարձի Ախուճղովի անվան օպերայի և բալետի թատրոնում:

Համարյա մշտապէս ապրելով Բարձում, Ա. Մայիլյանը իր երաժշտական-հասարակական գործունեութեամբ և ստեղծագործութեամբ մեծապէս օժանդակել է հայկական և ազգրբեջանական երաժշտական կուլտուրաների աճին ու զարգացմանը, նպաստել երկու եղբայրական երաժշտական կուլտուրաների մերձեցմանը:

Կ Ի Ն Ո

Երբ ժողովուրդները կենտրոնացած սովետական կարգերի ծնունդ է: Մինչև Սովետական իշխանութեան հաստատումը ո՛չ հայերը, ո՛չ վրացիները և ո՛չ էլ ադրբեջանցիները երազել անգամ չէին կարող սեփական կինեմատոգրաֆիայի ստեղծման և զարգացման մասին: Բայց Սովետական իշխանութեան կուլտուրայի ֆրոնտի մի շարք բնագավառների զարգացման հետ միասին, ուսական սովետական կինեմատոգրաֆիստների սգնութեամբ, հիմնադրվում են նաև անզբնովկայան ժողովուրդների ազգային կինոստուդիաները:

Անդրկովկասի կինոարվեստը գործիչները հենց սկզբից կազմակերպչական և ստեղծագործական փոխազդած կապեր են հաստատում միմյանց հետ:

Սովետական կինոյի վարպետներից մեկը՝ Համո Բեկ-Նազարյանը, իր «Հայկինոյի պատմութեանց» հիշողութուններում իրավացիորեն նշում է, որ «...Ռուսական կինեմատոգրաֆիայի փորձը... անգնահատելի ծառայութիւն մատուցեց ազգային կինոաշխատողներին, նրանց ետ պահելով շատ հնարավոր սխալներից և վրիպումներից: Սովետական կինոյի մեծ բնատնիքում, ներծծելով ռուս ժողովուրդի կինոարվեստի լավագույն արտիստներին, ազգային, ազգային, այդ թվում և Հայաստանի, կինոաշխատողները՝ ձեռնամուխ եղան առաջին ինքնուրույն ֆիլմերի ստեղծմանը... Հայ կինեմատոգրաֆիստները (ինչպէս նաև վրաց և ադրբեջանական կինեմատոգրաֆիստները—Ա. Ե.)

միտածամանակ ուսական կինոյից փոխ առան նրա ընտելիքը, արտահայտչական միջոցների բազմազանութիւնը, գաղափարական նպատակալացութիւնը»:

Հայկական կինոարվեստը հենց իր ծագման արշալույսին փոխազդած կազ է հաստատում վրացական կինոստուդիայի հետ: Գ. Գլենտին իր «Ուրվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմութեան աշխատութեան մեջ բերում է նման կապերի և համադրմանկցութեան բազմաթիվ փաստերու Ալապեա, օրինակ, սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին Երևանի կինոստուդիան սեփական պավիլիոն չունենալու պատճառով զեղարվեստական ֆիլմ արտադրելու հնարավորութիւնները չի ունեցել: Այդ իսկ պատճառով օգտագործել է Սովետական Վրաստանի Գոսկինոպրոմի առեկին՝ պավիլիոնային տնտեսարաններ նկարահանելու համար:

Այնուհետև, Սովետական Հայաստանի առանձին ղերասաններ և ուժիւրները առաջին անգամ հանգես են կելլ Վրաստանի կինոյում: Արուս Ոսկանյանը, օրինակ, առաջին անգամ հանդես է եկել Թբիլիսիում նկարահանված «Կրակապաշտներ» կինոնկարում: «Զար ոգու» նկարահանման համար հրավիրվում է Գոսկինոպրոմում որպէս ռեժիսորի ախտանն աշխատող Մ. Բարխուդարյանը, որը ստեղծագործական փորձ էր ձեռք բերել կինոռեժիսոր Բ. Պերխարևտ մտաՌեժիսորական աշխատանքի համար Վրաստանից հրավիրվում է նաև Մ. Գելովանին: Գ. Գլենտին գրում է, որ «Դեռևս Հայկինոյի առաջին՝ «Ճամուռ» ֆիլմից ստեղծվեցին ստեղծագործական փոխազդեցութեան հարաբերութիւններ Վրաստանի Գոսկինոպրոմի և Հայկինոյի միջև: Վրացական թատրոնի և կինոարվեստի շատ զերասանական ուժեր հանդես են կելլ Հայկինոյի ֆիլմերում և ստեղծել են բազմաթիվ կերպարներ: Գրանք են՝ Գ. Բերիշվիլին, Չ. Շարժուխանին, Վ. Տակալշվիլին, Չ. Գուրամիշվիլին, Մ. Գելովանին, Կ. Կարալաշվիլին, Գ. Կիպիանին, Ն. Մամուլաշվիլին, Մ. Չախալան, Վ. Փրիցխուլյան, Մ. Թրիլին, Ա. Կվանտախանին և ուրիշներ: Մ. Գելովանին կարողացավ հարազատորեն կերտել Գիժ Դանիելի հուգիւրանական բարդ կերպար և կրանի վրա անմահացնել հայ

կլապիկ գրականության հանրահայտ պերսոնաժներից մեկը»¹։
 Գեռն 1928 թվականի մարտի 17-ին վրացական «Կոմունիստ» թերթը տպագրում է մի հոդված հայկական «նաստիւշ» կինոկարի մասին, որանը սամվա է. «Այստեղ է կրանի վրա մենք ստաշին անգամ տեսնում ենք իսկական Արևելյոր։ Թե՛ միտր Բեկնազարյանը զխաղձոր ուշադրությունը կենտրոնացրել է սոցիալական խմբակցությունների փոխհարաբերությունների, կենցաղային մանրամասնությունների և շարժան գործընթացների վրա»։ Պետք է սահել, որ Համա Բեկնազարյանը մեծ ծառայություններ ունի Անդրկովկասի կինոարվեստի զարգացման գործում։ Նա եղել է Վրաստանի Գոսկինոպրոմի տեսուչ-անօրենը և ևե՛միտրներից մեկը (1922—1925)։ Այնուհետև Համա Բեկնազարյանը «Աղբրկինոյում» բեմադրել է (1931—1934) «Սևիլ», «Մարտին», «Բյանդիլյար» ֆիլմերը։ 1928 թվականին Հ. Բեկնազարյանի ևե՛միտրությունը իրականացվել է Հայկինոյի և Աղբրկինոյի համատեղ ջանքերով ստեղծված «Տունը հրաբուխի վրա» ֆիլմը։ Ֆիլմի նկարահանումները կատարվել են Թաբլում և Աղբրկինոյի ստեյնիում, մասնակցել են Հայ և աղբրեշանցի ղեկավարները։

Ինչպես արդեն նշվեց, ստաշին հայկական ղեկավարվածական ֆիլմը՝ «Նամուր» նկարահանվել է Գոսկինոպրոմի օգնությամբ։ Այստեղ աշխատեցին նաև, որ Գոսկինոպրոմը տրամադրել է իր ստեյնին, իսկ ֆիլմի ղեկորները, զգեստները, սեփական ու բուտաֆորիան պատասխանվել են Գոսկինոպրոմի զխաղձոր նկարիչ Վ. Էրիսթավիչի էսքիզներից։ Այդ ֆիլմում նկարահանվել են վրաց ղեկասաններ Գ. Բերիշվիլին և Զ. Ժորժոխանին։ Հետագա ամիսներին ևս հայկական ղեկասան ֆիլմերում շարունակել են հանդես գալ վրաց ղեկասաններ Զ. Գուրամիշվիլին՝ պրիստավ («Զարե»), Ն. Մամուլաշվիլին՝ սպա («Զամալու»), Մ. Քրիլեյին՝ Ռոզալիա («Պատվի համար»), Գոհար («Մոր սիրտը»), Մ. Զախալան՝

Մեղես («Անձամբ ճանաչում եմ»), Վ. Փրիցիուլայան՝ Գիլի («Անձամբ ճանաչում եմ»), Ս. Կվանապիանին՝ պանդոկապետ («Անձամբ ճանաչում եմ») և այլն։

Տարբեր տարիներում հայկական մի շարք ֆիլմերում նկարահանվել են նաև աղբրեշանցի ղեկասանները։ Այսպես, Տունուս Սուկեյմանովը նկարահանվել է «Նաստիւշ» ֆիլմում՝ զտուրացու ղեկում։ Այնուհետև նա խաղացել է պարտիզան («Զանգեզուր»), Հասան («Անուային արշավ») ֆիլմերում, իսկ Ս. Ալեքսանդրովը խաղացել է Հասան («Տունը հրաբուխի վրա»), Լ. Աշաֆովան՝ Ցայնտուս («Ամպրոպի արահետով»), Ս. Մամեդովը՝ Ռեկվալ («Անձամբ ճանաչում եմ»), Ա. Կուրբանովը՝ Կոմիսար («Ինչու է ազմկում գնաք») և այլն։

Անդրկովկասի կինոարվեստի գործիչների համագործակցության մի երկու փաստ ևս, «Զամալու» պատմա-հեղուցյուն ֆիլմի նկարահանումը հանձնարարվում է Վրաստանից հրավիրված Ի. Պերիստիանին։ «Պեպո» ֆիլմի նկարչական ձևավորման համար հայ նկարիչների հետ միասին ներդրվում է նաև Վրաստանի Գոսկինոպրոմի զխաղձոր նկարիչ Վ. Միզանոն-Էրիսթավիչին։

Հատկանշական է, որ վրաց բանաստեղծ Ի. Գրիշաշվիլին գրեց «Չկեսորի երգը» «Պեպո» կինոֆիլմի համար, որից բաղկած բարբար բերում են հետևյալ ստեղծը։

...երբ ուղանա շուրե իմ նետում,
 Կարծես նոր եմ աշխարհ գոյիս,
 Վերջ լուսնն է իմ ժպտում,
 Չկեսոր լուսնդ եմ ստախ։
 Տերերի պես սեղործ չիմ ես,
 Թե՛ ամեն սեղ բաց է ճամփաս,
 Կերած հացը հալմի է մեզ,
 Փայքը է, արքայ տ սեղնասու,
 Գե՛, իմ ուղան, փոփր պագաս,
 Ծավրդ տանիմ, Ի՛մ հարգասու...¹

¹ Գ. Դզնունի, Որվագիծ Հայաստանի կինոնստորագրության պատմության, Երևան, 1961, էջ 50։

¹ «Վրաց գրականության ընտիր էջեր», Հայպետհրատ, 1961, էջ 111։

Նրեր ռեսպուբլիկաների կինստուդիաները տարբեր ժամանակներում արտադրել են ֆիլմեր, որտեղ արտացոլվել են անդրկովկասյան աշխատավորության համասեղ պայքարը, աշխատանքային հերոսիկան:

Հայ և ադրբեջանական աշխատավորների համերաշխությանն է նվիրվել «Կերչին շատրվանը» կինո-լիբրետոն, որի մասին Երիվանադահեն իր ժամանակին գրել է, որ այդտեղ պատկերվել է ադրբեջանցի և հայ աշխատավորության համասեղ պայքարը բուժօժանդիայի և ցարական կարգերի դեմ: 1939 թվականին Հայկինոն նկարահանում է «Լեւանյին հեղեղ» ֆիլմը, որը նվիրված է հայ և ադրբեջանական կոլտնտեսականների կյանքին ու գործունեությանը:

Ստեղծվում են նաև մի քանի ֆիլմեր, որտեղ արտացոլվում են հայ և վրաց ժողովուրդների կյանքի առանձին գերվագներ: Օրինակ, «Անձամբ ճանաչում եմ» ֆիլմը հայ և վրաց ժողովուրդների բարեկամության, ցարական կարգերի դեմ ուղղված համասեղ պայքարի մարմնավորման մի հաջող փորձ է: «Անձամբ ճանաչում եմ» ֆիլմի մասին Զավահիր Տեր-Պետրոսյան-Խուսուշվիլին գրել է. ««Կամո» կինոնկարը դիտելիս,— գրում է նա,— մի անգամ ես արցունքն աչքերիս վերհիշեցի Գորիի և Քրիլյուխի զնայերը, Կամոյի կրիտասարդության տարիները, Նրա մարտական ընկերներին, որոնք պայքարել են ցարական ինքնակառվության, ոստիկանության, սաի ու կեղծիքի, ճնշման ու հարստահարման դեմ»: «Անձամբ ճանաչում եմ» ֆիլմի մասին գրվածական խոսքեր են ասել նաև ադրբեջանական կինոարվեստի գործիչները: Այսպես, «Սովետական Հայաստան» թերթի 1958 թվականի մարտի 23-ի համարում տպագրվում է կինոռեժիսոր Գ. Սևիդ-Ջաղիի «Ստեղծագործական խոշոր նվաճում» հոդվածը, որտեղ ասված է. «Հատկապես Կամոյի հրապուրիչ կերպարը կազմողների մեր աճող սերնդին լինել կունենիզմի անձնվեր մարանչողներ, կողմնակի շարունակելու և ալարտելու այն մեծ, հույսալից գործը, որին առանց մնացորդի իր զեղեցիկ կյանքը նվիրարենց պրոլետարական ռևոլյուցիայի արժույթն ժամապահը»:

ժողովուրդների եղբայրության ջատագով՝ մեր անմոռանալի Կամոն»:

Ադրբեջանական կինոգործիչների ուշադրությանն է արժանացել նաև Հայկինոյի արտադրած «Ուրվականները թողնում են լեռնագագաթները» ֆիլմը, որի մասին «Բակինսկի ուսուցչի» թերթի 1955 թվականի օգոստոսի 11-ի համարում հանդես է գալիս Ալի Մամեդովը և գրում, որ այդ ֆիլմը ընչ-չա՞մ իր թերություններին՝ վկայում է Հայաստանի կինեմատոգրաֆիստների իսպական վարպետության մասին:

Այսպիսով Սովետական Միության բոլոր ժողովուրդները, այդ թվում նաև հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդները, զարգացնելով ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական իրենց կուլտուրան, գրանով իսկ հաջորդակից են լինում համամարդկային առուղաշին կուլտուրային, որի հիման վրա զարգանում են նաև մեր ժողովուրդների կուլտուրական համագործակցությունն ու փոխհարաբերությունները:



Սովետական իշխանության բոլոր և հատկապես հեռուստատեսության տարիներին կուլտուրական համագործակցության գծով բազմաթիվ համասեղ միջոցառումներ են կենսագործվել հայ, վրաց և ադրբեջանական արվեստի ու կուլտուրայի ստեղծագործական կազմակերպությունների կողմից: Դեռևս 1929 թվականին թրեյխսում հրապարակում է ազգային թատրոնների հարցերին վերաբերող խորհրդակցություն, որտեղ խնդր է դրվում ստեղծել և բնագրել սոցիալիստական շինարարությունը արտացոլող պիեսներ:

Անդրկովկասյան ռեսպուբլիկաների կուլտուրական համագործակցության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցան Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի թատերական ընկերություններին համասեղ սեսիաները՝ նվիրված թատերական արվեստի զարգացման հարցերին: 1938 թվականի օգոստոս ամսին Երևանում տեղի են ունենում անդր-

կովկասյան երեք ժողովուրդների աշուղական անսամբլների համասեղ համերգները:

Կազմակերպվում են Անդրկովկասի եղբայրական ևնպուրիկանների թատրոնների, երաժշտական կատարողական կոլեկտիվների, կերպարվեստի և արվեստի մյուս ճյուղերի ներկայացուցիչներին լայն փոխալցեկություններ:

Գեոևս 1944 թվականին Քրիլխսիում անդի է ունենում անդրկովկասյան ժողովուրդների երաժշտական կուլտուրայի նվաճումների ցուցադրման ասանորյակը, որի ընթացքում կատարվում են երեք ազգությունների սյուֆոնիկ և կամերային ստեղծագործությունները: Տասնօրյակը ամփոփում է Հայրենական Մեծ պատերազմի ընթացքում կոմպոզիտորների ձեռք բերած ստեղծագործական նվաճումները և նշում սովետական երաժշտության զարգացման հետագա ուղիները:

Քրիլխսիում անդի ունեցած անդրկովկասյան ևնպուրիկանների երաժշտական նվաճումների ցուցադրման այդ ասանորյակում կատարվում են նաև երեք ժողովուրդների ինքնագործ խմբերի և հատկապես գուսանների կողմից պատերազմի ժամանակաշրջանում ստեղծած գործերը:

1953 թվականի փետրվարին Բարվի Ախունդովի անվան ազդրեշանական օպերայի և բալետի թատրոնում անդի է ունենում ազդրեշանական և հայկական ժողովրդական երգիչ-պարի անսամբլների միացյալ համերգը, որը մեծ հաջողությամբ է ընդունվում բազմալիցների կողմից:

Նույն թվականի հունիսի 8-ին Երևանում բացվում է երեք անպուրիկանների թատերական ընդերուբյուրոնների համասեղ սեփական: Սեփային ներկա էին Եալվա Գաղսանին, ազդրեշանական թատերական ընկերության նախագահ Ռասուլ Բահմալլը, Վ. Վարդանյանը, Վ. Փափազյանը, Քամարա Յիջինուճեն, Կամար Արմատա-զաղեն, Մարիկա Բարաթաշվիլին, Վազարշ Վազարշյանը, Ռուզաննա Վարդանյանը, Գավիթ Մալյանը և ուրիշներ:

Այս սեփան սկսվեց Երևանում, շարունակվեց Բարվում և ալվարովեց Քրիլխսիում:

Սեփան քննարկեց անդրկովկասյան ժողովուրդների թա-

տերական կապերի պատմության ուսումնասիրության հարցը: Այդ առթիվ զեկուցումներով հանդես եկան Գ. Բուխնիկաշվիլին, Ա. Ալիևան և Ս. Հարությունյանը: Բուխնիկաշվիլին իր զեկուցման մեջ ցույց տվեց, թե ինչպես դեռևս անցյալ դարի կեսերից հայ, վրացի և ազդրեշանցի դերասաններն ու դրամատուրգները ստեղծագործական կապերով կապված են եղել միմյանց հետ, միացյալ ուժերով պահել պահպանել են ազգային թատրոնը ցարիզմի հալածանքներից: Ալիևան ցույց տվեց, թե ինչպես հայկական, վրացական և ազդրեշանական պիեսները հաճախ բեմադրվել են երեք ժողովուրդների թատերական կոլեկտիվների կողմից: Այդ տարալիցյան ավելի լայն կերպով շարունակվել է սովետական կարգերի օրոք: Ս. Հարությունյանը իր կույթում ընդգծեց վրացական, հայկական ու ազդրեշանական թատրոնների և նրանց առաջավոր ուժերի մեջ գոյություն ունեցող սերտ կապն ու համագործակցությունը: Նա նշեց այն հանգամանքը, որ Սուեզուկյանի, Ախունդովի, Ցաղարեյու և ուրիշների օրինակով մեր ժողովուրդների հետագա սերունդները դաստիարակվել են կերպարության և հոգևորապատմության ոգով:

Քրիլխսիում Ի. Գրիշաշվիլին, իր կույթը նվիրելով ժողովուրդների բարեկամությանը, բազմաթիվ օրինակներ բերեց և ցույց տվեց, թե ինչպես ազդրեշանցիները օգնության են հասնել վրացիներին, վրացիները՝ հայերին և ընդհակառակը:

Սեփայի ժամանակիցները հետաքրքրություն ունեցան լայնորեն ծանոթանալու երեք անպուրիկանների թատերական կյանքին: Սեփան վերածվեց ժողովուրդների բարեկամության մեծ ցույթի:

1954 թվականի մայիսի վերջերին Բարվում բացվեց անդրկովկասյան երեք անպուրիկանների կերպարվեստի համասեղ ցուցահանդեսը: Ցուցահանդեսում ներկայացված էին Ազդրեշանի, Հայաստանի և Վրաստանի կերպարվեստագետների մոտ 700 ստեղծագործություն՝ յուզանկար, քանդակ, զբաֆիկա, պլակատ, որոնք հանդիսանում էին հետպատերազմյան վերջին տարիների գործերը: Բարվում միասնական տեղի ունեցավ Անդրկովկասի նկարչների կոնֆերանս, որ-

անդ անդրկովկասյան ռեսպուբլիկաների կերպարվեստագիտ-
ների ստեղծագործությունների վիճակի մասին զեկուցումներով
Հանդես կկան Ս. Արուստյանը, Մ. Փառյանովը և Ա. Քուլթա-
սաձանը: Կանֆերանսում նշվեց Ազդերջանի, Վրաստանի և Հա-
յաստանի կերպարվեստագիտների ստեղծագործական աճը
և միտժամանակ քննադատության ենթարկվեցին ցուցահան-
դեսում ներկայացված որոշ գործեր:

Վերջին տարիներին ավելի հաճախակի են դարձել էրեք
ռեսպուբլիկաների ստեղծագործական կուլեկտիվների էլույթ-
ները Բաքվում, Քրիլխուրում և Նրևանում: Կազմակերպվում են
Նրևանի Ստանիսլավսկու անվան թատրոնի էլույթները Քրի-
լխուրում և Սուխումիում: Միմֆունիկ նվագախումբը, Հայկա-
կան երգի-պարի ամստակազմը անսամբլը, Հայկական պարե-
րի երիտասարդ անսամբլը, Հայկական էստրադային նվագա-
խումբը և այլն հանդես են գալիս Վրաստանի և Ազդերջանի
մի շարք քաղաքներում: Այդ նույն ժամանակամիջոցում Սո-
վետական Հայաստանի աշխատավորությունը դիտում է Վրա-
ցական երգի-պարի անսամբլի, էստրադային նվագախմբի,
մենակատարների, Ազդերջանի սիմֆունիկ նվագախմբի, Նրգի
և պարի անսամբլի և մենակատարների էլույթները:

Այսպես, զնալով անդրկովկասյան ռեսպուբլիկաների կուլ-
տուրական կապերը, նրանց համագործակցությունը նորանոր
ձևեր են քնդռուում:

Ինչպես արդեն տեսանք, Անդրկովկասի թատերական գոր-
ծիչները Հետեւով իրենց նախնիների լավագույն արտադրի-
աներին, միշտ էլ փոխադարձաբար զոգրել են միմյանց և օժան-
գակել նորանոր կազմերի անկմանը:

Անդրկովկասի ժողովուրդները սիրում են ոչ միայն մի-
մյանց դրականությունը, կերպարվեստ, մեղեդիները, սիմ-
ֆունիաները, այլև թատերական արվեստի լավագույն նմուշ-
ները: Եվ ահա 1957 թվականի Հունիսին Քրիլխուրում Նրևանի
Գ. Սունդուկյանի անվան պետական թատրոնի էլույթով
բազմիմ է առաջին «Անդրկովկասյան թատերական գարունը»,
որին մասնակցում էին Անդրկովկասի դրամատիկական առա-
ջավոր թատրոնները, ղեկասանական լավագույն ուժերը:

Քատրոնները մեծ ոգևորությամբ էին պատրաստվել եզ-
բայրական երեք կոլեկտիվների հանդիսմանը: Դա հասկա-
նալի էր: «Անդրկովկասյան թատերական գարունը» դիտվում
էր արգես ստեղծագործական հանդիպումների, փորձի փո-
խանակման, փոխադրած այցելությունների հին արտադրի-
աների շարունակություն, մի բան, որը մեր ժողովուրդների
բարեկամության ամրապնդման ազդակներինց մեկն է կղել:

Սունդուկյանի անվան թատրոնը «Քատերական գարունը»
ներկայացրեց Ս. Զարյանի «Փորձադաշտ» պիեսը (ռեժիսոր
Հայկական ՍՍՌ ժողովրդական արտիստ Վ. Աճեմյան): Ներ-
կայացմանը մասնակցեցին Հայկական ՍՍՌ ժողովրդական
արտիստներ Ա. Ասրյանը, Ավետ Ավետիսյանը, Գ. Զանիրեկ-
յանը, Հ. Հարությունյանը, Դ. Մալյանը և որիչները Ազդեր-
ջանի Ազիդերկովի անվան թատրոնը ներկայացրեց «Շրվանի
զեղեցիկուհին» կոմեդիան, իսկ Ռուսաստանի անվան վրացա-
կան թատրոնը՝ Կ. Բուաշիձեի «Բակում կման շուն կա» կո-
մեդիան:

«Անդրկովկասյան թատերական գարունը» հայ, վրաց և
ազդերջանական ժողովուրդների միջև զույնություն ունեցող
կուլտուրական սերտ կապերի վրա զրևերումներից մեկն էր:
Մեծ էր այդ ստուգատեսի նշանակությունը, այն մեկ անգամ
ու վերածվեց էրեք հորհարադատ ժողովուրդների եղբայրա-
կան փոխհարաբերությունների ցույցի:

Ռուսաստանի անվան համերգային զահլիճում երեք թատ-
րոնների ղեկասանների, նկարիչների, քանդակագործների,
ժուռնալիստների, ինչպես նաև բազմաթիվ հանդիսականների
մասնակցությամբ քննարկվեցին արված ներկայացումները,
քննարկում, որը կրում էր զորձնական բնույթ և անցնում մտքի-
չի փոխանակության անկեղծ ու անկաշահեղ միտուրտում:

Կասկածից վեր է, որ «Անդրկովկասյան թատերական գա-
րունը» մեծ շափով նպաստեց նաև երեք թատրոնների ստեղ-
ծագործական աճին: Պատահական չէր, որ երեք թատրոնների
հանդիպման ժամանակ բեմադրվեցին միայն օրիգինալ, սովե-
տական ժամանակակից կյանքի արտացոլող պիեսներ: Այդ
հանգամանքն էլ ավելի բարձրացրեց ստեղծագործական հա-

մագործակցութեան նշանակութիւնը, այն խթան հանդիսացաւ սովետական թատերական արվեստի զարգացման համար:

«Անդրդիվասի թատերական զարնան» ներկայացումները, ինչպէս նաև նրա մասնակիցները՝ հայ և աղբրեշանական թատերական արվեստի ներկայացուցիչները ջերմ ընդունելութիւն գտան Քրիլիսիի թատերասեր հասարակութեան կողմէից: Վրաստանի թատերական գործիչներից՝ Ա. Գունիան, ղիմելյով հանդիսակցաներին, ասաց. «Քուլլ տվեր Վրաստանի կուլտուրայի բոլոր աշխատողներին անուից չբերեմ և սրտայայտող Ձեզ, այնքան հարազատ, հայ և աղբրեշանցի եզրայրական ժողովուրդների կուլտուրայի աշխատողների ներկայացուցիչներին» Գ. Սունդուկյանի և Մ. Աղիզրեկոյի անվան առաջատար թատրոնների բեմի վարպետներին, կոլեկտիվներին բոլոր անդամներին Այսօր նշանավոր օր է երեք անսպորտիկաների թատերական աշխատողներին համար: Թատերական գաբունները ավելի կամրացնեն Հայաստանի, Աղբրեշանի և Վրաստանի թատրոնների աշխատողների կապերը, կրեզարձակեն, ստեղծագործական մրցութեան բնույթ կան զրանց»:

«Սովետական Հայաստան» թերթի թղթակից Գ. Զարիսյանը զրել էր, թե շի կարելի չնշել այն ոգևորութիւնը, որ պատմել էր զերականարներին, այն անմարմունները, որով խաղում էին նրանք: Հանդիսատեսները ներկայացումը բազմիցս ընդհատում էին բուն ծափահարութիւններով»:

Այդ թատերական զարնանը կազմկոմիտեի ժողովի որոշմամբ պարզկատրվեցին լավագոյն կատարողներն ու բեմադրողները: Այսպէս, Գ. Սունդուկյանի անվան թատրոնից պարզկատրվեցին «Փորձադաշտ» ներկայացման ռեժիսոր Վ. Անձեմյանը, դերասաններ՝ Գ. Զանիրեկյանը (Գրանակերյան), Ա. Ավետիսյանը (Բայաբեկ), Ա. Ասրյանը (Զուլիետա), Գ. Մալանը (Կարսեցյան), Ե. Լուսինեանը (Մորզո) և բեմի ավազ մեքենայալը՝ Ա. Էլազյանը: Թուսթափելու անվան թատրոնից պարզկատրվեցին «Բակում կծան շուն կա» ներ-

կայացման նկարչի Պ. Կալիաշվիլին, զերասաններ՝ Ն. Չիսիճեն (Չիկուսով), Մ. Զախալան (Սաթթէ), Վ. Գոլիճեն (Մեղեկով), Լ. Գաբաշվիլին (Պուպի), Ե. Սակվարիսիճեն (Յացան), բեմի զլխավոր մեքենայալը Մ. Կալան և բեմադրական մասի վարիչ Ն. Կրավիշվիլին: Աղիզրեկոյի անվան թատրոնից պարզկատրվեցին «Շիրակի զեզեցիտին» ներկայացման զերականարները՝ Մ. Լաշեան (Նիսա խանում), Ս. Սուլթանովան (Յիզգա խանում), Ա. Լուսինուկան (Քելլի), Գ. Սալար (Շեշա), Ալի Կուրբանովը (Զաբիրով), Ա. Մամեդովան (Յուզգուլ) և բեմի մեքենայալը Ալա Քերիմ Քեշիճե: Բացի վերոհիշյալներից պարզկատրվեցին նաև ուրիշներ:

Այս «Թատերական զարնան» օրինակով հետագայում Քրիլիսիում Գ. Սունդուկյանի և Կ. Մարջանաշվիլու թատրոնների կրթասարք զերասանների կատարմամբ կազմակերպում է «Նամուս» պիեսի ցուցադրումը, որը խթան հանդիսացաւ կրթասարք ստեղծագործողների աճին: Այնուհետև, Երևանի երաժշտական կոնզերվատի թատրոնը և Քրիլիսիի Կ. Մարջանաշվիլու թատրոնը կազմակերպում են «Սզնեթի Մալայի» միջ՝ Մալայի դերակատարների փոխադարձ գատարուիներ, որոնք մեծ խանդավառութեամբ են ընդունում հասարակայնութեան կազմից:

Նշենք նաև, որ «Թատերական զարնանից» հետո ՍՍՏՄ ժողովրդական արտիստներ Գոհար Գասպարյանը, Տաթևիկ Սալանդարյանը և Վահրամ Փափաղյանը հանդես են գալիս Քրիլիսիում և Բաքում, իսկ Քրիլիսիի և Բաքվի մենակատարները մեծ հաջողութեամբ փոխադարձաբար հանդես են գալիս Երևանում:

1955 թվականի մայիսին Անդրդիվասի երաժշտական հասարակայնութիւնը տունական օրեր էր սպարում: Մայիսի 11-ին Բաքում՝ Վրաստանի, Հայաստանի և կրայրական մյուս ժողովուրդների երաժշտագետների ներկայութեամբ՝ Յ. Ամիրովի «Սելի» օպերայի ցուցադրումով սկսիլից «Երաժշտական զարնան» առաջին օրը: «Երաժշտական զարնան» մայիսի 16-ից մինչև 19-ը շարունակիլից Երևանում և ապա սեղափոխիլից Քրիլիսի:

1 «Սովետական Հայաստան», 1957, 3 հունիսի:

«Երաժշտական դարուներ» անդրկովկասյան ժողովուրդների երաժշտական կուլտուրայի ծաղկման անվիճելի աճի ապացույցն էր: Երաժշտական դարանք ընթացքում Հայաստանի երաժիշտները ավելցին երկու սիմֆոնիկ և մեկ կամերային համերգ: Յուցադրվեցին «Պավլի-Քեկ» և «Արժվարեզ» օպերաները, «Սևան» և «Մարմար» բալետները: Ելույթ ունեցավ երգի-պարի վաստակավոր անսամբլը: Սովետահայ կոմպոզիտորներ Ա. Հարությունյանի և Ջոն Տեր-Քաղեսյանի նոր սիմֆոնիկ ստեղծագործությունները բարձր գնահատականի արժանացան Սոփյալի և Եգրաթական սեսսորիլիաների երաժշտագետների կողմից: Երաժշտական դարանք ընթացքում վրացական արվեստի աշխատողները ցուցադրեցին Ա. Մանալարինու «Յիկլո» բալետը՝ ՍՍՄԸ ժողովրդական արվեստ ճարտարական հիանալի բնագործվածք, Ա. Տուկիայի «Անկոչ Նյուրբը» և Գ. Քորաձեի «Հյուսիսի հարթ» օպերաները: Վրաստանի երաժիշտները ևս ավելցին երկու սիմֆոնիկ և մեկ կամերային համերգ, կատարվեցին վրացական հիասքանչ ժողովրդական երգեր: Աղբրեշանական երաժշտական արվեստը ներկայացվեց Ֆ. Ամիրովի «Սևիչ» և Ու. Հաչիբեկովի «Բյուր-օլլի» օպերաներով ու Կ. Կարանի հանրահայտ «Յոթ զեղեցկուհիներ» բալետով: Աղբրեշանցիները նույնպես հանդես եկան սիմֆոնիկ և կամերային համերգներով:

Անդրկովկասի երաժշտանքի հասարակայնությունը խանդավառությամբ ընդունեց մեր ժողովուրդների երաժշտական կուլտուրայի նվաճումների ցուցադրումը: Այն, անշուշտ, նոր խթան հանդիսացավ մեր երաժշտական, ստեղծագործական կարգերի աճման համար: Ինչպես «Քատերական դարուներ», այնպես էլ «Երաժշտական դարուներ» վեր էին ամփել հայ, աղբրեշանական և վրաց ժողովուրդների արվեստի տունակատարության: Համերգային զանգվածները միշտ լեվի-լեցուն էին հանդիսականներով, որոնք բուռն ծափահարություններով էին ընդունում յուրաքանչյուր կատարում:

Արդեն տրագիքիս է դարձել անդրկովկասյան երեք սես-

սորիլիաների կինոստուդիաների կողմից արտադրված կինոֆիլմերի ֆեեստիվալները Քրիլիսիում, Բաքվում և Սրևանում: Օրինակ, Սովետական Հայաստանի մշակութադարձ կազմակերպվել է վրացական ֆիլմերի ֆեեստիվալ՝ «Վրացֆիլմ» կինոստուդիան այդ օրերին ցուցադրեց «Նեանկան ատամը», «Պղնձեթի Մայան», «Մամլուկ», «Երկու ընտանիք», «Մադիկների դարուներ» և «Քրիլիսի 1500 տարին» ֆիլմերը, իսկ Քրիլիսիում և Բաքվում կազմակերպվել են հայկական ֆիլմերի ֆեեստիվալները: Յուցադրվել են «Պեպո», «Սևանի ձեկերաններ», «Ջուզեպպո», «Քոնչո անդունդի վրայից», «Փուրզում», «Կարո», «Բաջ նազար» և այլ ֆիլմեր:

Բացի կինոֆեեստիվալներից Անդրկովկասի կինոարվեստի գործիչների կողմից կազմակերպվել են հանդիպումներ, ինչպես նաև կոնֆերանսներ: Հիշենք դրանցից 1957 թվականի հունիսին Սոփյալի կինոստուդիայում տեղի ունեցած հանդիպումը՝ Վրաստանի կինոարվեստի ներկայացուցիչների հետ: Այդ ժամանակամիջոցում հանդիպում կազմակերպվում է նաև «Մոսկվա» կինոնստարումում, որտեղ ցուցադրվում են «Վրացֆիլմ» ստուդիայի մի շարք նկարները: Սովետական Հայաստան» թերթը այդ առթիվ տպագրեց հոդված, որտեղ սպասվում է, «Երևանում կազմակերպված վրացական կինոնկարների ֆեեստիվալում ցուցադրվող ֆիլմերի հաջողությունը խոսում է այն մասին, որ վրացական կինոարվեստի արտադրյալները ոչ միայն չեն կորցրել իրենց օժի, այլև նոր զարգացում են ստացել... Մյս ֆիլմում ամենից շատ ուրախացնողը այն համարակի որոնումներն են, որոնք սովետական կինոնստուդիաֆիլան ընդհանուր վերերի ներկա շրջանում բնորոշ են «Վրացֆիլմ» կինոստուդիայի համար»:

Այնուհետև, նույն թվականին Քրիլիսիում տեղի ունեցավ Անդրկովկասի կինոնստուդիաֆիլանների առաջին կոնֆերանսը: Ավելի քան 35 տարի էր արդեն, որ կյանք էր առել անդրկովկասյան ժողովուրդների կինոարվեստը, որն այդ տարիների ընթացքում աճել ու զարգացել էր և իր պատվավոր տեղը գրավել ողջ Սովետական Միության կինոնստուդիաֆիլան-

սխառեմում: Անցած տարիների ընթացքում երեք կինոստուդիաները և նրանք աշխատողները միշտ էլ ստեղծագործական փոխադարձ կապի մեջ են եղել: Հիշյալ կոնֆերանսին մասնակցում էին ավելի քան 50 հոգի: Մի քանի օրվա ընթացքում նրանք դիտեցին Բաբվի, Երևանի և Քրիլիսիի կինոստուդիաների արտադրած ֆիլմերը: Այդ կոնֆերանսում առանձին սրուբյումք բննարկվեցին ազգային կինոարվեստի հետագա զարգացման ուղիները: Ցուցադրվեցին մի շարք ֆիլմեր. Վրաստանից՝ «Էֆերիի երգը», «Ստվերը ճանապարհի վրա», «Մեր բակը», «Բաշի Աշուկի» և «Արարիշտը», Ազրբեջանից՝ «Սալիխի, նա լինի», «Երևուստ էլ մի թաղից», «Սև ժայռեր», Հայաստանից՝ «Պատվի համար», «Սեպրուպի արահետով», «Միտր երգում է»: Այդ կոնֆերանսի որոշմամբ էլ կինոֆեստիվներ անցկացվեցին Բաբվում և Երևանում:

Անտարակույս է, որ երեք սեսյուարիկաների ստուդիաների արտադրած ֆիլմերի լայն քննարկումը, ցուցադրումը հարևանացնում է բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային սովետական կինոարվեստ, լայնացնում է կինեմատոգրաֆիայի հնարավորությունները և էլ ավելի աշխուժացնում փոխադարձ կապերը և ստեղծագործական համագործակցությունը:

Անդրկովկասյան սեսյուարիկաների կուլտուրական համագործակցությունը լայնորեն առկա է ունենում նաև ուսդին և հեռուստագիտության հաղորդումների գծով: Որպես կանոն յուրաքանչյուր սեսյուարիկայի տարեգարծի օրը մյուս սեսյուարիկաները հաղորդումներ են կազմակերպում՝ նվիրված տվյալ սեսյուարիկայի նվաճումներին: Կազմակերպված է հատուկ «ՍՍՌՄ ժողովուրդների երաժշտությունը» ցիկլը և սխառեմատիկաբար հաղորդվում է Սովետական Վրաստանի և Ազրբեջանի երաժշտությունը: Երբ սեսյուարիկաների հեռուստատեսության ստուդիաները միմյանց ցուցադրում են իրենց ծրագրերը: Կազմակերպվում են համատեղ խորհրդակցություններ, այցելություններ: Հայկական հեռուստատեսության ստեղծած «Սալավ-նուպ» ֆիլմը ցուցադրվել է նաև մյուս

սեսյուարիկաներում: Միասնամտիկաբար կազմակերպվում են կատարողական կոլեկտիվների ելույթների հաղորդումներ:

Վերջին տարիներին երեք սեսյուարիկաների սաղիսյի սխառեմում կազմակերպվել է փոխադարձ հաղորդումների խմբադրություն՝ «Քբիլիսի-Բարու-Երևան»: Այդ սաղիս-ժուռնալներում պատմվում է անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության, աշխատանքային ետույնի, սոցիալիստական մրցության, առաջավոր փորձի, բանվորների, կուլտուրական կանոնների, գիտության, ասիականի, կուլտուրայի գործիչների ստեղծագործական մասնագացումների մասին և այլն: Ցուրաքանչյուր կիրակի օր ժամը 3-ին կարելի է լսել սաղիս-հաղորդում՝ «Միլիսի սաղիսյուցներ. սկսում ենք մեր հաղորդումը կշրայտական սեսյուարիկաների աշխատավորության համար»: Այդ փոխադարձ հաղորդումների միջոցով սաղիսյուցները ծանոթանում են Վրաստանի, Հայաստանի և Ազրբեջանի կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունների, Անդրկովկասի երաժշտական կյանքի կարևոր իրադարձությունների հետ: Հատուկ համերգ-ոչույններ են կազմակերպվում յուրաքանչյուր տարեգարծի և տոնական օրերին: Վերջիս Բաբվում տեղի ունեցավ Անդրկովկասի երիտասարդ սաղիս-կատարողների կոնկուրս: Վրաստանի և Հայաստանի կոմպոզիտորների համագումարների կապակցությամբ կազմակերպվեց լավագույն գործերի սաղիս-հաղորդումներ: Ցուրաքանչյուր ամիս սեսյուարիկաների սաղիսների կողմից սրվում են 10-ական համերգ՝ մրացական, ազրբեջանական և հայկական երաժշտությունից: Վրացական և հայկական սաղիս-գիտնականների նախաձեռնությամբ ղեկն են երեք տարի առաջ Վրաստանի Գուրջևանի շրջանի Վաղխուրանի կուլտուրասականների և Հայաստանի Աշտարակի շրջանի Օշականի կուլտուրասականների միջև սկիզբ դրվեց սոցիալիստական մրցության. երկու սեսյուարիկաների սաղիսները կազմակերպում են «Բարեկամություն» հաղորդումներ այդ դյուղերի կուլտուրասականների մասին:

Սաղիս-հաղորդումներ են կազմակերպվում այն շրջանների

գյուղերի, արդյունաբերական ձեռնարկությունների մասին, որոնք մրցում են միմյանց հետ, իսկ Անդրկովկասի երեք սեպտորիկանների 40-ամյակի տոնակատարության նախապատրաստության և անցկացման օրերին ազդիոնները լայնորեն լուսարձակում էին նրանց հաջողությունները էկոնոմիկայի և կուլտուրայի ասպարեզում: Նրանք միմյանց մատակարարում էին համապատասխան նյութեր:

Այսպես, օրինակ, միայն վերին երկու տարվա ընթացքում Հայաստանի փոխադարձ հաղորդումների խմբագրությունը կազմակերպել և Վրաստանին ու Ադրբեջանին է հանձնել ավելի քան 50 հասարակական-քաղաքական, արդյունաբերական, գյուղատնտեսական, գրական, երաժշտական հաղորդումներ: Իր հերթին Հայաստանի ազդիոն Ադրբեջանից և Վրաստանից ստացել և օգտագործել է ավելի քան 40 զանազան հաղորդումներ:

Պ Ա Ր Բ Ե Ր Ա Կ Ա Ն Մ Ա Ր Ա Ռ Ի Լ

Սովետական կարգերի հաղթանակից հետո վրաց, ադրբեջանական և հայ ժողովուրդների անտեսական և կուլտուրական շինարարության ամենատեսչո մամազործակցությունը կոչել և կօփելու հարցում խոշոր դեր է կատարել Սովետական Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բազմահարուստ մամուլը: Թազմաթիվ անուններով և միլիոնավոր տպաքանակներով, ինչպես մայրենի, այնպես էլ ուսանելի լեզվով հրատարակվող թերթերը, ամսագրերը, հանդեսները և այլն դարձել են իսկական բարեկամություն դարբնող և կուլտուրական համագործակցությունը ամրապնդող օրգաններ:

Սովետական իշխանության տարիներին երեք սեպտորիկանների էկոնոմիկայի, կուլտուրայի ընազավառում հաղթի են նշմարվի մի դեպք, իրադարձություն, որը արձագանք դրստած չլինի թերթերի և ամսագրերի էջերում: Անդրկովկասյան երեք ժողովուրդների պարբերական մամուլը միշտ էլ լուսարանել է արդյունաբերական ձեռնարկությունների, բանվո-

րական կոլեկտիվների, կուլտնտեսականների միջև կնքված սոցիալիստական պարտավորությունների կատարման ընթացքը, վերջնական արդյունքները, արդյունաբերության և գյուղատնտեսության առաջավորների աշխատանքի փորձը, լայնորեն արձագանքել է փոխադարձ այցելություններին, խոսել համատեղ խորհրդակցությունների ընթացքի մասին. Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի թերթերն ու ամսագրերը հատուկ համարներ և էջեր են նվիրել այդ սեպտորիկաններում նշվող հորեյանական տարեթվերին, գիտության, գրականության և կուլտուրայի աչքի ընկնող գործիչների գործունեությանը, նրանց հորեյաններին: Անցած տարիների ընթացքում Հայաստանում հրատարակվող «Սովետական գրականություն», «Սովետական արվեստ» և ուրիշ ամսագրեր, «Դրական թերթ», «Սովետական Հայաստան», «Կոմունիստ» և «Երևան» օրաթերթերը, Վրաստանում հրատարակվող «Մնաթոր», «Լիտերատուրայի զազեթի», «Կոմունիստ», «Սովետական Վրաստան», «Զարյա Վոստոկա» և այլ պարբերականներ, Ադրբեջանում հրատարակվող «Կոմունիստ», «Էդաբիյաթ զազեթի», «Բակինսկի ուրուչի» և այլ թերթեր ու ամսագրեր փոխադարձ հատուկ համարներ են նվիրել եղբայրական ժողովուրդների գրականության, կուլտուրայի և արվեստի նվաճումների լուսարձակմանը:

Պետք է ասել, որ պարբերական մամուլում հատկապես լայնորեն նշվել են եղբայրական սեպտորիկաներում սովետական կարգերի հաստատման տարեդարձերը և խոշոր դրողների հորեյանական տարեթվերը: Եվ դա հակասանյալ է, որովհետև, ինչպես գրել է Ե. Գադիանին, «հորեյանները բացի մեծ մարզիկանց հիշատակը պատվելու իրենց հատուկ նշանակությունից, խթան են հանդիսանում նաև Սովետական Միության եղբայրական հանրակրթությունների, նրանց կյանքի, ստեղծագործության խորին ուսումնասիրության համար... Այստեղից էլ առաջ է զարկ առնում փոխանակությունը և բարեկամության հաստատումը եղբայրական սեպտորիկանների

և նրանց առանձին ներկայացուցիչների՝ գրողների հետ¹։ Այս սուղերը վրաց ականավոր գրողը գրել է և՛ Արտվյանի ծննդյան 130-ամյակի կապակցությամբ։ Իսկ իրեն՝ և՛ Արտվյանի մասին իր «Հունանիստ մեծ գրողը» հոդվածում Գաղիանին գրել է. «Ենաչափուր Արտվյանը եղել է համամարդկային զազափարենների համար մարտնչող, եղել է ականավոր հունանիստ, որի գործունեություն մի մասն ընթացել է մեզ մոտ՝ Քիջիլիսում։ Խաչատուր Արտվյանը հայ ժողովրդի հանդեպ ունի նույն ծառայությունները, ինչ ծառայություններ ունի Բլյա ճավազանին վրաց ժողովրդի հանդեպ»²։

Շալվա Գաղիանին հայ մեծ յուսավորիչի մասին խոսել է նաև 1948 թվականին, երբ հայ ժողովուրդը նշել է նրա մահվան 100-ամյակը։ «Ենաչափուր Արտվյանը պատկանում է այն պայծառ անձնավորությունների թվին,— գրել է Շ. Գաղիանին,— որոնք իր ժամանակին հանդիսացել են մարդկության լավագույն և առաջավոր գաղափարների կրողները։ Այս տոնք ոչ միայն հայ ժողովրդի տոնն է, այլև մեր մեծ Սոցիալական Միության մեջ մտնող բոլոր ժողովուրդների տոնն է ու հաղթանակը։

Մենք դիտենք XIX դարի մեր մարդկանց բարեկամությունը... և մենք անկեղծորեն ուրախանում ենք այդ բարեկամությանը»³։ Իսկ Ս. Վուրդունը այդ նույն օրերին գրել է. «Մեզ, ազդրջանական ինտելիգենցիայի ներկայացուցիչներին և մեր ամբողջ ժողովրդի համար Արտվյանի անունը թանկ է նաև այն պատճառով, որ նա եղել է արբերջանական ռեալիստական գրականության հայր, զրամատուրդ և փրկիստիա Միրզա Յաֆաի Ախունզովի ժամանակակիցի ու գրչակիցը»⁴։ Այնուհետև Ս. Վուրդունը նշում է, որ նրանց համատեղ ստեղծագործական ու հասարակական գործունեությունը նպաստել է ազգային կրկու կուլտուրաների զարգացմանը։

Ճույց տալու համար, որ հորիչանների նշումը իսկապես ստիթ է հանդիսացել նաև ժողովուրդների բարեկամության գաղափարը պրոպագանդելու համար, բերենք ևս երկու մեղքերում նույն գրողին⁵։

«Մենք՝ վրացի գրողների ներկայացուցիչներ,— սակ է Շ. Գաղիանին,— մեծարում ենք մեծ գրող և հայրենասեր Խաչատուր Արտվյանի հիշատակը և բերել ենք մեր անկեղծ սերն ու սրտագին ողբույնը ամբողջ հայ ժողովրդին... Մեզ, հայերի մեծավորագույն հարևան Վրաստանի ներկայացուցիչների համար այդ պանծայի տոնը հուզիչ է այն պատճառով, որ մենք հիանալի կերպով հասկանում ենք մեր ժողովուրդների պատմական բախար, երբ դարերի խորքում մենք ընթանում և ստեղծում էինք կուլտուրական արժեքներ»¹։ Եվ այնուհետև. «Մենք դիտենք նաև XIX դարի մեր առաջավոր մարդկանց բարեկամությունը, ինչպես, օրինակ՝ մեր գրականության երկու հիշանների՝ Գաբրիել Սունդուկյանի և Ակակի Մերթելու մասին, ինչպես նաև մեր արտիստներ Չմշկյանի, Ազամյանի, Աբուլյանի, Արսեֆիևի, Ալեքսի Մեսիխիշվիլիի և յուրաների սիրո և բարեկամության մասին։ Մենք հիշում ենք պանծայի ականավոր բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որը վրացական ինտելիգենցիայի շարքերում մեծ սեր էր վայելում»²։

Իսկ Ս. Վուրդունը, անդրադառնալով հայ-ազդրբջանական գրական փոխհարաբերություններին, իր ելույթում ասել է. «...Արտվյանի, Ախունզովի և Միրզա Շաֆիի բարեկամությունը, նրանց համատեղ ստեղծագործական ու հասարակական գործունեությունը նպաստեցին եղբայրական ազգային կուլտուրաների զարգացմանը...»

Ախունզովը, շախտախելով մուսուլմանական շարիաթի բոլոր խղճնողաները, իր «Շաջի Կարա» պիեսում պատկերել է հայ աշխատավոր դուրդացու կերպարը, զա եղել է զժրախ-

1 «Սոցիալական Վրաստան», 1940, № 243։

2 Նույն տեղում։

3 «Գրական թերթ», 1948, № 36։

4 Նույն տեղում։

1 «Գրական թերթ», 1948, № 36։

2 Նույն տեղում։

տության և հրջանկության մեջ իր դարավոր բարեկամ Հայ ժողովրդի նկատմամբ և աղբրեանական աշխատավոր ժողովրդի սիրո զեղարվեստական արտահայտությունը:

Իր հերթին եռալատուր Արսլվյանը գրել է՝ ասես պատասխան Ախունզովին, «Քուրբի աշխիլը» պատմվածքը, որի մեջ Հայ զինվորապետ հեղբոր ու բարեկամի սիրով ողբացել է աղբրեանական կանանց աղետալ բախտը, իրավազուրկ կյանքը:

Մեր սովետական կուլտուրայի գանձարանում պատմվածք տեղերից մեկն է գրավում վերածնված Հայ ժողովրդի կուլտուրայի անմահ եռալատուր Արսլվյանի կերպարը»¹:

Պարբերական մամուլը հորեյլանների նշումը ժողայեցրել է նաև հարևան ժողովրդի գրականության հետ ծանոթացնելու համար: Դրանք օրինակներն է ժողովրդային Վրաստանը՝ Ակակի Մերեթելու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ իր մի համարի նրկու էջը և առաջնորդող նվիրել է վրաց մեծ բանաստեղծին: Մեզ հետաքրքրող հարցի տեսակետից հատկապես ուշագրավ է Ս. Ավլյանի «Հայ մամուլը Ակակի Մերեթելու մասին» հոդվածը, որտեղ հեղինակը նշելով, որ Ակակի Մերեթելուն վայելել է ոչ միայն վրաց, այլև բոլոր ժողովուրդների սերն ու համակրանքը և որ նրա գրվածքները մոտ են եղել և են բոլոր ժողովուրդներին, ավելացնում է. «Ե՛վ Ակակի Մերեթելին, և՛ Հովհ. Քումանյանը միաստեօակ երգեցին Հայաստանի և Վրաստանի վիշառը, նրանց անցյալը, ներկան և ապագան: Ժողովուրդների միմյանց նկատմամբ սերն ու բարեկամությունը հանդիսանում է նրանց գրական ստեղծարժույթյան վճիռ սկզբունքը:

Հայերը մեծ սեր ու հարգանք էին տածում դեպի Մերեթելին, ինչպես վրացիք՝ դեպի Հովհ. Քումանյանը»²: Այդպես հոդվածագիրը բերում է Հայ պարբերականներից բազմաթիվ հարց փաստեր: Դրանցից է, օրինակ, «Մշակի» 1908 թվականի № 27-ից մեղքերված հետևյալ տպերը, որ Հայ պարբեր-

ականը տպագրել է Ա. Մերեթելու գրական գործունեության 50-ամյակի առթիվ:

«...Այսօր, երբ տազանգավոր բանաստեղծի գործունեության հանրագումարն է դրված մեր առաջ, երբ նրա երկարամյա, ամբողջ 50 տարի շարունակվող ստեղծագործական հորեյլանն է կատարվում, վրաց և ընդհանրապես կովկասյան հասարակության համար, թանկ է այն մեծագույն գրական գանձը, զնահատել, որ նա տվել է ժողովրդին, նվիրելով նրան իր ամբողջ հոգևորական էությունը և իր բոլոր մտածողություններն ու զգացմունքները...»

Ե՛վ մենք չենք կերպով ողջունում ենք նշանավոր քննադատի բեղմնավոր հորեյլանը: Այնուհետև, հոդվածագիրն ավելացնում է, որ այդ համարում տպագրված ինչպես այս, այնպես էլ մյուս հոդվածները, ճառերը ներթմված են ջերմ երաշխական սիրով դեպի մեծ երգիչն ու նրա ժողովուրդը: Հետաքրքրական է նաև հոդվածում բերված հետևյալ փաստը: 1915 թվականին Մերեթելու մահվան առթիվ «Մշակի» 1915 թվականի № 22-ում տպագրվում է Հայ պոետ Ալեքսանդր Մատուրյանի հոդվածը, որտեղ ասված է. «Վշտացած եմ դրշ վաստակավոր եղբայր Ակակի Մերեթելու մահվամբ, այս խորապես նշանակալից, պատմական ծանր փորձությունների, պայծառ հույսերի և ակնկալությունների օրերին մեռավ նա. որի ողբերված հոգը ձայնը հող է անում զեղի լույսի և ազատության հաղթանակը: Լո՜ց վրաց ժողովրդական ոգու մեծ երգիչը, ասպետական Վրաստանի լավագույն ավանդությունների պայծառ իրենների պաշտպանն ու պահապանը: Անմահ է ստեղծագործական ուղին»: Մի բանի որ հետո այդ նույն թիվի № 28-ում տպագրվում է հետևյալը. «Վրաստանը, վրաց ժողովուրդը այսօր սգի մեջ է: Նա կորցրել է իր մեծագույն զավակներից մեկը. նա կորցրել է ժողովրդական ստեղծագործական մտքի հանձարի ներկայացուցիչներից մեկը կամ, այլևիչ հիշան սասած՝ երկրորդ փայլուն ներկայացուցիչը Եթե մուսթավելուց հետո... Նա աղբարև ժողովրդական մեծ բանաստեղծ է, վրաց ազգային մեծ բայան և աշուղ, մեծ երգիչ վրաց ժողովրդի վշտերի, իղձերի, հույզերի և հույսերի...»:

1 «Գրական թերթ», 1948, № 36.
2 «Քուրբային Վրաստան», 1940, № 142:

Ս. Ավյանը խոսում է նաև «Տարազ» գրական հանդեսի մասին, որը մի ամբողջ համար է նվիրել Ակակիի հիշատակին, և այս կերակացնում է, որ այս ամենը ցույց են առաջ հայ ժողովրդի սերը զեպի վրաց մեծ բանաստեղծը:

Այդ սիրտ արտահայտությունն պետք է համարել նաև «Քրական թերթի» Ա. Ներսիսյան ծննդյան 100-ամյակին նվիրված համարը, որտեղ տպագրվել էին Վահան Տերյանի «Նուշերը»՝ «Ակակի Ներսիսյանի Մոսկվայում», Եւզլա Դադիանու, Ավան Ասաթիանի, Գևորգի Աբրիանիձեի և ուրիշների հոդվածներն ու բանաստեղծությունները Ակակի Ներսիսյանի ոտանավորները Ավ. Իսահակյանի, Գ. Բորյանի, Վ. Գրիգորյանի, Գևղամ Սարյանի, Հո. Պողոսյանի թարգմանությունները՝:

Սխալված չներ լինի, եթե ասենք, որ մինչ Յակոբ Գոգեբաշվիլու ծննդյան 100-ամյակի նշումը վրաց մեծ մանկավարժ-գրողը հայտնի չէր հայ հասարակայնության լայն շրջաններին. Այս առումով սովետահայ պարբերական մամուլը խոշոր զեք կատարեց՝ հայ ժողովրդին ծանոթացնելով Յակոբ Գոգեբաշվիլու կյանքի և գործունեության հետ: Տանկատարության օրերին «Սովետական Վրաստան» թերթը երկու էջ նվիրեց Գոգեբաշվիլուն: Այդ համարում բացի «Յակոբ Գոգեբաշվիլի» առաջնորդողից տպագրվել էին Եւզլա Դադիանու, ակադեմիկոս Զավարձիլու, Վ. Ինճգաձեի, պրոֆ. Մելիքսեթիբեկի, պրոֆ. Գ. Թեղիշվիլու հոդվածները: Վերջինս իր «Վրաց մանկավարժության մեծ կյանքը» վերնագրով հոդվածում նշել է, որ Յո. Գոգեբաշվիլին վրացական խոշորագույն մանկավարժ էր, հրապարակախոս, մանկացի դրու և XIX դարի երկրորդ կեսերի ազգային-ազատագրական շարժման ամենամասնավորական ղեկավարներից մեկը: Այնուհետև, նույն հոդվածում խոսվում է այն կապի մասին, որ 60-ական թվականներին զոչովյան է ունեցել Գոգեբաշվիլու և Գերցեյնի, Ստանկևիչի, Չերնիշևսկու, Գորբույովսկու և ուրիշների միջև. Իր գործունեության վաղ շրջանում Գոգեբաշվիլին ծանոթանում է Ուլինսկու հետ, իսկ Թրիլիսիում մտանում է Ի. Ծավ-

ճավաձեին և դառնում ազգային-ազատագրական շարժման ղեկավարներից մեկը:

Գ. Թեղիշվիլին ընդդոմ է, որ Գոգեբաշվիլին պայքարել է ազգային կուլտուրայի՝ լեզվի, գրականության, թատրոնի, դպրոցի ազատ զարգացման համար: Այդ նպատակով, նրա նախածնունդով և ղեկավարությամբ, 1879 թվականին Վրաստանում կազմակերպվում է բանվորական մեծ ընկերություն՝ «Վրացիների մեջ գրագիտություն տարածող ընկերություն» անունով: Այնուհետև, նրա ակտիվ մասնակցությամբ հիմնվում են 1883 թվականին՝ «Նորաթի», իսկ 1889 թվականին՝ «Զեյնի» մանկական հանդեսները: Նա կազմում է վրաց լեզվի մի շարք դասագրքեր:

1905 թվականին Գոգեբաշվիլին անցնում է ռևոլյուցիայի կողմը:

Նա խիստ ընկալատելիով բուրժուական-դեմոկրատական ժողովրդական լուսավորության սխեմեր, ասել է. «Ժողովուրդը կարիք ունի բուլտովին այլ դաստիարակության, նրան հարկավոր են միանշամայն այլ դիտելիքներ, որոնք նրան մի կողմից կպատրաստեն բռնության զեմ կողմու համար, իսկ մյուս կողմից ցանկալի սոցիալական փոփոխությունների համար»:

Մեծ մանկավարժը պրոպագանդել է դպրոցների ժողովրդացնության անդրումը. Գոգեբաշվիլին կազմել է առաջ լեզվի «Ռուսակոյն սյովո» դասագիրքը՝ այլ ազգի երեխաներին առաջ լեզու սովորեցնելու համար: Այդ դասագիրքը արժանացել է բնօրնուր զովասանքի, այդ թվում նաև հայկական մամուլի՝ «Մուրճի» և «Հոսանքի» էջերում:

Գոգեբաշվիլին մի շարք պատմվածքներ է նվիրել տարբեր ազգերի և ժողովուրդների միջև ինտերնացիոնալ կապերն ամբաստանելու հարցին:

Յակ. Գոգեբաշվիլու ծննդյան 100-ամյակի կապակցությամբ իր էջերում ուղազրավ նյութեր էր զետեղել նաև «Քրական թերթը»: Տպագրված նյութերից մեկում հոդվածագիրք,

1 Տե՛ս «Քրական թերթ», 1940, № 17:

1 «Սովետական Վրաստան», 1940, № 251:

խոսելով Գոգերաշվիլու «Ինչ էինք երևի» գրքույկի մասին, գրել է. «Այդ գովածքում Գոգերաշվիլին շոշափում է այն ցավոտ խնդիրը, որը հարևան, եղբայրակից ազգերի համար մասնագրության ապարհա էր դարձել: Դա ցարկովի նեկզ քաղաքականության հետևանքով հայերի և վրացիների միջև երբեմն տեղի ունեցող պառակալումները վերացնելու խնդիրն էր»:

Նա խոսելով հայ-վրացական փոխհարաբերությունների մասին՝ շափազանց լավ և զբաղան կարծիք է հայտնել հայերի վերաբերյալ և համերաշխության գիծ անցկացրել¹: Այնուհետև, հողվածագիրը հայտնում է, որ այդ վեհանձն ժողովուրդների եղբայրության շատագույն մասը խոր ցավ է պատճառել Անդրկովկասի ժողովուրդներին: Նրա մասժվան առթիվ նեկրոլոգներ են գրվել նաև «Մշակույթ», «Հովիտում», «Տարադում» և այլն:

Գրողների հորեյանական տարեթվերից հիշատակենք նաև Ալեքսանդր Դադրեզիի ծննդյան 100-ամյակը, որի կապակցությամբ «Գրական թերթը» տպագրում է Գ. Դեմիրճյանի «Ալեքսանդր Դադրեզի» հողվածք, որտեղ հայ մեծանուն վիպասանը Ղազրեզիին համարելով վրացական առաջավոր գրողներից մեկը, գրում է. «Առհասարակ Ղազրեզիի հերոսները բնության զավակներ են և ժողովրդի մարդիկ: Նրանք ապակառական դժբ ունեն, հաննեն ևն զայն իրեն աղատության, բարեկամության և սիրո ձգտող ուժեղ կամրի տեր, պայքարող մարդիկ»²:

«Գրական թերթի» 1935 թվականի փետրվարի 28-ի № 5-ում գեղեկվել են խմբագրական՝ «եղբայրական վրաստանի հողթական ուղի» և Գ. Դեմիրճյանի հողվածք՝ «Երկրի երգիչները» վերնագրով:

Խմբագրականում նշված է. «Չկա այլևս նախկին վայրենի ազգային թշնամությունը, որ սերմանել էին մենչևիկները, զաշնակներն ու մուսավաթականները — աշխատավորության այդ զահիճները: Այլևս մեր ստեղծագործողները քցավ և ա-

մոթ» չեն զգում եղբայրական ժողովուրդների հիշելիս, չէ՞ որ այդպես էր գրում մեր մեծագույն բանաստեղծ Հովհ. Քումանյանը զեռ 1917 թվականների գրած «Վրաստանի համար» իր բանաստեղծության մեջ:

Երբ խոսում են վրաստանի
Քշնամներից արյունոտ,
Չարմաք է ինն պատում հայուն,
Նվ խորին ցավ, և անթի:

«Պրոչետար» թերթի 1938 թվականի № 67-ի նրկու էջը նվիրված է Հովհ. Քումանյանի մասժվան 15-ամյակին: Հայ գրողների և մատվորականների հետ միասին հողվածներ են գրել նաև Բ. Գրիշաշվիլին՝ «Հիշողությանների մի էջ», Նիկո Փաշայիշվիլին՝ «Ազգերի եղբայրության զրոշակակիրը» և Յա. Նիկոլյանն՝ «Մեծ մարդու մասին»:

Փաշայիշվիլին որակելով Քումանյանին որպես քսաներորդ դարի հայ գրականության գագաթը, հիշելով Քումանյանի կյանքի տարրեր էջը, գրում է. «Հայ և վրաց գրողների մեջ կուտակա տեղի ունեցավ Հովհաննես Քումանյանի նախածնունդյամբ և անմիջական զեկավարությամբ, զեռես համաշխարհային պատերազմի վերջերում... Խորհրդային իշխանությունը հաստատվելուց հետո Հովհաննես Քումանյանը սքանչելի նախածնունդյամբ ցույց տվեց հայ և վրաց գրողների մերձեցման զործում՝ նա կազմակերպում էր երեկոներ և թրագվում էր վրաց գրողների: Նույն ձևով պատասխանեցին Քումանյանի նախածնունդյանը նաև վրաց գրողները. Քումանյանը շատ անզամ համոզես է եկել վրաց գրական երեկոներին իր զրվածքներով ու ժողովուրդը նրան վերաբերվում էր մեծ սիրով ու հարգանքով»:

Չկարողանալով ներկա լինել վրաց գրողների մի երեկոյին, Քումանյանը Փաշայիշվիլուն գրած նամակում ներողություն է խնդրում և գրում. «Սեղմում եմ Ձեր ձեռքը և հավաստիացնում եմ Ձեզ, որ ինչքան թանկ են ինձ վրաստանը և սքանչելի վրացական հողին, նույնքան թանկ են և այն մարդիկ, որոնք հաղիսանում են այդ հողու կրողներն ու մեկնարանները:

1 «Գրական թերթ», 1940, № 30:

2 «Գրական թերթ», 1948, № 37:

Վրացին— դա արգեն բանաստեղծ է. իսկ վրացական բանաստեղծը դա կրկնակի բանաստեղծ է»:

Յա. Նիկոլաձեն գրել է այն չեքով վերաբերմունքի մասին, որ դեպի իրեն տածել է Հովհ. Քումանյանը: Երբ կատարել են Նիկոլաձենի, որպես քանդակագործի, գործունեության 25-ամյակը (1922 թվականի դեկտեմբերի 6-ին), Հովհ. Քումանյանը շնորհակալությամբ ներկա լինելի, Հետևյալ նամակն է գրել Նիկոլաձենին. «Քեզ, որ քնտրելով գեղեցիկին ծառայելու ուղին, անձեին տվել է զարմանալի կենդանի ձևեր և անմահություն է ներդրել անկենդան քարերի մեջ, Վրաստանի համար այդ հանդիսավոր օրը հույսով եմ սրտանց ողջունք և եղբայրական համբույրը»:

Սովետահայ պարբերական մամուլը՝ ժողովուրդների բարեկամության զազգիսարը պրոպագանդելու և գրական-կուլտուրական կապերն ու համագործակցությունը զարգացնելու համար, մեծ նշանակություն է տվել այն ոչևերություններ, որ առաջացել է գրողների մեջ հայ ժողովրդի հանճարեղ ստեղծագործության՝ «Սասունցի Գավթի» էպոսի 1000-ամյակի տոնակատարության կապակցությամբ: Խանդավառվածների թվում է եղել վրաց անվանի բանաստեղծ Սիմոն Չիքովաձեն, որը «Սասունցի Գավթի» էպոսը վրացերեն թարգմանելու առիթով գրել է. «Համաշխարհային կուլտուրայի մի գլուխ-գործոց» խորագրով հոդվածը, ուր ասվում է. «...Այս երկը հազցված է զարմանալիորեն ուժեղ հերոսության ոգով, անսպաս հայրենասիրությամբ, կերպարների բնորոշ հույաներությամբ: Այս անկեր վեպը դարձնում են համաշխարհային գրականության պատմությանը մեկը»¹: «Քրական թերթի» այդ նույն համարում տպագրվել են նաև Միքայել Փատարիձեի «Վրաց ժողովրդական երգիչները պիտի երգեն «Սասունցի Գավթի»», Բիմինա Արուսեանի «Ինչպես եմ ես թարգմանում «Սասունցի Գավթի»» հոդվածները: Հետագայում «Քրական թերթի» տպագրել է հատվածներ նաև Ե. Դադիանու և Ս. Վուրգունի արտասանած ճառերից: Դադիանին ասել է. «Սասունցի

1 «Քրական թերթ», 1939, № 21:

Գավթի» մեջ ամբողջապես սրտահայտված է նա (հայ ժողովուրդը— Ա. Ե.), նրա խիզախությունը, նրա մարդկայնությունը: Այս անական զոհերն եմ հասցրել է մինչև մեր երջանիկ օրերը...»²: Իսկ Սամեղ Վուրգունը Հետևյալ կերպ է արտահայտվել «Սասունցի Գավթի» մասին. «...էպոսը վիպային է եղբայրական հայ ժողովրդի, մեր էլրայի հնագույն ժողովուրդներից մեկի բանաստեղծական խոշոր ստեղծագործություն...»:

Ո՛ր Գավթիթը, ո՛ր Քյոտ-օղլին նեղ ազգային մարդիկ չեն եղել: Այդ մասին է վկայում այն դրուբյունը, որ մեր հերոսների ստեղծները շատ հնուր ևն տարածվում իրենց ժողովուրդների շրջանակներից, նրանց փառաբանում են արևելքի շատ ժողովուրդներ:

Մեր էպոսների անվիճելի նմանությունը բացատրվում է նրանով, որ մեր ժողովուրդներն ապրել են պատմական միևնույն պայմաններում, ունեցել են միատեսակ տանջանքներ, միատեսակ թշնամիներ ու բարեկամներ, որ հայ և աղբրեջանցի ժողովուրդների է հոգեբանությունը, և ստեղծագործական ընդունակությունները ձևավորվեցին ֆեոդալական Անդրկովկասի պատմական միասնան պայմաններում: Այդ նմանությունը բացատրվում է նաև այդ ժողովուրդների գրական փոխհարաբերություններով: Չէ՛ որ մեկ անգամ չէ, որ աղբրեջանական և հայկական էպոսները հաղորդվել են մեր պանծալի աշուղների՝ աշուղ Դաբրի, Այնկերի, Սայաթ-Նովայի և ուրիշների կողմից:

Այս էպոսներում դանում ենք շատ ասացվածքներ, առածներ, ժողովրդական աֆորիզմներ, որոնք գործածվում են և՛ աղբրեջանցի, և՛ հայ, և՛ վրացի ժողովուրդների կողմից»³:

«Քատուն» ենթագլխում հենվելով պարբերական մամուլից քաղված տեղեկությունների վրա, արդեն խոսվել է այն խառնազանության մասին, որով դիմավորել են Անդրկովկասի կուլտուրայի գործիչները հարևան անապոլիականներին ձևով:

1 «Քրական թերթ», 1939, № 27:

2 Նույն տեղում:

քերած հաջողություններն արվեստի և գրականության բնագավառում: Ընդգծելով այդ հանգամանքը, ավելորդ չէր լինի այստեղ ևս խոսել մի երկու փաստի մասին: Մեր խոսքը վերաբերում է 1941 թվականին Մոսկվայում կայացած հայ գրականության և արվեստի ասանօրյակի հաջողությունների նկատմամբ ունեցած մեր զրկից անսպորիլիկաների գրողների վերաբերմունքին: Այսպես. Շալվա Գաղիսեու համար հայ կուլտուրայի հաջողությունները Մոսկվայում առիթ են դառնում խոսելու հայկական հնազույն կուլտուրայի մասին ընդհանրապես և անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրական համագործակցության մասին մասնավորապես: Ե. Գաղիսեին զրկ է. «Գարեհի բնաջրում, հերոսարար պայքարելով իր անթիվ կեղերիչների դեմ, հայ ժողովուրդը ստեղծել է իր կուլտուրան, ժողովրդական ստեղծագործության լավագույն նմուշները, իր հրաշալի պոեզիայի զոհարները... Վրաստանի և Ադրբեջանի եղբայրական ժողովուրդների գրականությունների հետ միասին հայ գրականությունը իր մեծ լուսման մացրնց ժողովուրդների բարեկամության գործում:

Մերո, անխղիչ բարեկամության կապերը վաղուց ի վեր կապում են հայ գրողներին Վրաստանի գրողների հետ: Օրինակ՝ ևս անձամբ բարեկամ եմ եղել Հովհաննես Թումանյանի, Երվանդազեի, Գ. Մուսղուկյանի հետ: Հայ գրողների լավագույն երկերը թարգմանվել են վրացերեն: Մեր թատրոններում բեմադրվել են հայ դրամատուրգների պիեսները... Մըշտակն փոխադարձ շփումը, համառոտ գրական ելույթները, փոխադարձ ուղևորությունները Հայաստան և Վրաստան, սովորական երևույթ են գարձել¹ և Այդ նույն առիթով ադրբեջանական գրող Ալիդ Եարիֆը գրում է «Դեպի նոր հաջողություններ» հոդվածը, որտեղ սոված է. «Հայկական գրականության տանօրյակի հաջողությունը, որը նկարագրվում է ասանօրյակի առաջին խակ օրերից, կրկնապատիկ ուրախացնում է մեզ, ադրբեջանական գրողներին, որոնք հրաշալի կեր-

պով գիտեն պատմական և օրգանական այն կապը, որ վաղուց ի վեր գոյություն ունի Հայաստանի և Ադրբեջանի եղբայրական ժողովուրդների գրականությունների միջև:

Մայաթ-նովա: Այս մեծ անունը այդ ժողովուրդների եղբայրության խորհրդանշանն է, որովհետև նա միատեսակ ստեղծագործել է և՛ հայկական, և՛ ադրբեջանական պոեզիա:

Միրզաշան Մազաթովը և առջու Գարին XIX դարում մոտ բարեկամներ լինելով, իրենց նամակները գրում էին ադրբեջանական լեզվով...

Ավանիչ Իսահակյանի, Գերենիկ Դեմիրճյանի, Արազու, Նաիրի Զարյանի, Ստեփան Զորյանի և Մովսեսական Հայաստանի մյուս բանաստեղծների ու գրողների անունները նույնպես թանկ են ադրբեջանական ժողովրդի համար, որքան և նրա սեփական գրողների անունները²:

Անդրկովկասի սովետական պարբերական մամուլը, սկսած իր հիմնադրման առաջին տարիներից, ինչպես արդեն ասվեց, միշտ էլ, պարբերաբար, լայնորեն նշել է սովետական կարգերի հաստատման տարեթվերը անդրկովկասյան ռեսպուբլիկաներում, Օրինակ, «Գրական թերթը» բավականաչափ ուշադրավ կերպով է նշել Մովսեսական Վրաստանի 15-ամյակը: Այդ առթիվ թերթը տպագրել է Էնթ Կենականի, Կենտգործկանի և Փողկոմխորհի ողջունի խոսքը, որի մեջ ասված է. «Ադրաբայից Վրաստանի մեծ նվաճումների առնք, միևնույն ժամանակ նաև Անդրկովկասի բոլոր աշխատավորների, Հայաստանի բոլոր աշխատավորների, տոնն էն²: նույն համառոտ տպագրվել են հոդվածներ Մովսեսական Վրաստանի գրականության, նրա մարդկանց մասին: Թերթի այդ համարում զետեղվել են նաև Փ. Քերյիմեդյանի «Շուրյակայ 15-ամյակը» հոդվածը, Ն. Չարենցի «Տաղ սրտառու է եղբայրական Վրաստանին» ձոն-բանաստեղծությունը և բազմաթիվ այլ նյութեր:

¹ «Մովսեսական Վրաստան», 1941, № 112:

¹ «Մովսեսական Վրաստան», 1941, № 112:

² «Գրական թերթ», 1936, № 5:

«Գրական թերթ» հանդամանորեն է նշել նաև Սովետական Հայաստանի 20-ամյակը: Այդ առթիվ թերթում մի շարք ալլ նյութերի հետ միասին ապագրվել է «Փսան հերոս տարիներ» վերնագրով Ի. Գրիշաշվիլու խոսքը, որտեղ վրացի բանաստեղծն ասում է. «...Մասնա բաշերի երջանիկ հեանորդները հազիվական կերպով կամենիլով անադիկ ամրոցն են կոտուցում վերածնված հայ աշխարհում: Հայաստանի բազմազգայան և խիստ հարուստ կուլտուրան ձեռք բերեց լրիվ ու ազատ զարգացման բոլոր պայմանները և շողողում է նոր փայլով ու վեհությամբ...»

Դարերի ընթացքում հայ և վրաց ժողովուրդների լավագույն որդիները միասին են պաշտպանել իրենց հայրենիքի անապատությունն ու պատիվը, երանք ժառանգել են փոքրագրված բարեկամության ու սիրո հիանալի արագեցիաները¹:

Անդրեղովկասի պարբերական մամուլը ամենից ավելի բազմակողմանիորեն է նշել Ադրբեջանում, Հայաստանում և Արևստանում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը, որի մասին կխոսվի հատկապես այդ հարցին նվիրված զիտում: Սակայն թող այն ապավորությունը շատեղծվի, որ պարբերական մամուլը հարևան ուսուցիչականների կյանքի և կուլտուրայի հարցերին անզրպարձել է միայն հորելլանական տարեթվերին: Ընդհակառակը, թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական և թե՛ վրացական պարբերականներում միշտ էլ լուսարանվել են, օրինակ, հարևան ուսուցիչականների գրականության և կուլտուրայի հարցերը: Այսպես, սովետահայ մամուլում հաճախ է խոսվել հայ և վրաց կուլտուրայի գործիչների մասին: Օրինակ, «Գրու» ամսագրում ապագրվել է հոդված Զ. Փալիաշվիլու մասին: Հոդվածի հեղինակն ասում է, որ Փալիաշվիլին իր վրացական ինքնուրույն օպերաներով մեծ տեղ է գրավել վրաց նորագույն երաժշտության պատմության մեջ:

«Նա հանդես է եկել որպես եվրոպական, ուսուսական երաժշտության լավ գիտակ և դիմաված դրանցով ու գիտակցելով,

որ ազգային երաժշտության զարգացումը կապված է ժողովրդական երգի ու երաժշտության հմուտ օգտագործման հետ, Փալիաշվիլին վրաց ժողովրդական երգն ու երաժշտությունը՝ իր ուրույն մեղոցիկայով ու հարմոնիկայով, դարձրել է իր ստեղծագործության հիմքը»²:

Բազմաթիվ ուշագրավ հոդվածներ են ապագրվել «Գրական թերթի» էջերում՝ նվիրված վրաց գրականությանը: Օրինակ, բավականաչափ հետաքրքրական նորություն էր հայ ընթերցողի համար Միխ. Խելթուբնելիի «Ն. Բարաթաշվիլին Հայաստանում»³, Թ. Վարդապետյանի «Վրաց ժողովրդի մեծ գրականությունը», Բեռն ժեղնախի «Վրաց գրականությունը լիբերում»³ և այլ շատ ու շատ հոդվածներ, որոնք մեծ դեր են կատարում ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում:

Գովելի նախաձեռնություն հանդես բերեց «Զարյա Առտուկա» թերթի խմբագրությունը: 1961 թվականի հունվարի 31-ից սկսած թերթի էջերում սկսվեց ապագրվել «Բարեկամության տարեգրությունը», որտեղ սխտեմատիկարար բերված էին վրաց և մյուս ժողովուրդների բարեկամության ցայտուն, հետաքրքիր փաստեր: «Բարեկամության տարեգրության» մեջ շատ փաստեր կային նաև Անդրեղովկասի երեք եղբայրական ժողովուրդների կուլտուրական սերու կայսրի և համագործակցություն մասին: Հենց առաջին համարում զեանազովել էր Հովհ. Փումանյանի նամակը և Վրացական համալսարանի ընկերության պատասխանը այդ նամակին:

Արդեն նշվել է, որ թարգմանական գրականություն հրատարակելու միջոցով հնարարություն է ստեղծվել ժողովրդական լայն մասսաների սեփականություն դարձնել բոլոր ժողովուրդների գրականության և արվեստի լավագույն գործերը: Այս սեսակետից քիչ դեր չի կատարում պարբերական մամուլը: Բացի սեսաների հոդվածներից և թարգմանություն-

1 «Գրու», 1933, № 7, էջ 1:

2 Տե՛ս «Գրական թերթ», 1940, № 25:

3 Տե՛ս «Գրական թերթ», 1941, № 7:

1 «Գրական թերթ», 1940, № 22:

ներքից, մեղանում արդեն տրադիցիա է դարձել քերթի կամ ամսագրի ամբողջ համարի նվիրումը հարևան ժողովրդի գրականությանը: Հիշենք 1953 թվականի «Սովետական գրականություն» ամսագրի 8-րդ համարը, որ ամբողջապես նվիրված էր սովետական վրաց գրականությանը: Այդ համարում տպագրվել էին Գևորգի Լեոնիձեի, Իսախր Գրիշաշվիլու, Եալվա Գաղիսնու, Ալիո Միրջելուլազաի, Իրակլի Աբաշիձեի, Կոնստանտին Լորթքիթանիձեի, Խոսաա Բերուլազաի, Գրիգուր Աբաշիձեի, Իսսեն Խոնեշվիլու, Լեո Քիաշելիի, Կարո Կալաձիի, Սերգո Կրիշաշվիլու, Ասկաի Բելիաշվիլու, Անդրո Լամիձեի, Պետր Բախտուրիձեի և շատ ուրիշների գործերը: Սիմոն Զիբովանին հանդես էր եկել «Ղվարկիում», «Մեանի ձանապարհին», «Մեանի վրա», «Հայաստանի լեռներում» գործերով, Մազվալու Մրելվիշվիլին՝ «Հյուրերն ու տանուերերը» բանաստեղծությամբ, Ալիո Աղամիան՝ «Հայուհու տեսլում» և «Բաշինջալայանի նկարի առաջ» գործերով և այլն:

Նույն թվականին վրացական «Մեաթորի» («Լուսարաց») ամսագրի օգոստոս ամսվա ամբողջ համարը նվիրվում է սովետահայ գրականությանը: Երկու ամսագրերն էլ իրենց հետագա համարներում լայնորեն անդրադառնում են նաև Սովետական Ազդերների գրականությանը, իսկ ազդերչեանական ամսագիրն իր էջերում զետեղում է վրաց ու հայ սովետական գրականության լավագույն նմուշները:

Նշենք նաև, որ սխտանատիկաբար սեղի են ունենում Անդրկովկասի մամուլի աշխատողների խորհրդակցություններ, որտեղ բնութիան են առևելում երեք սեպտեմբրյանների պարբերական մամուլի խնդիրները: Օրինակ, 1961 թվականի մարտ ամսին Բարվում սեղի ունեցավ Անդրկովկասի մամուլի, ուղիտի և հեռուստատեսության աշխատողների խորհրդակցություն, որտեղ բնեարկվեցին մամուլի, ուղիտի, ուղիտի և հեռուստատեսության խնդիրները՝ ՍՄԿՊ Կենտկոմի Հոսովարյան պիետումի որոշումները կենսագործելու և ՍՄԿՊ XXII համագումարը ինչպես հարկն է դիմավորելու կապակցությամբ:

Անդրկովկասի ժողովուրդների կուլտուրական կապերն ու համագործակցությունը արտահայտվել է նաև գյուրոցական գործի ասպարեզում:

Նախապես սակեր, որ այս հարցն ինչպես հարկն է լինուստանասիրված, սակայն, այնուհանդերձ, անդրկովկասյան ժողովուրդների գյուրոցական գործին նվիրված ուսումնասիրություններում, գրականության մեջ, ինչպես և գրողների, հասարակական գործիչների հիշողություններում հանդիպում են Անդրկովկասի ժողովուրդների միջև եղած գյուրոցական կապերի վերաբերյալ առանձին փաստեր:

Ա. Մովսիսյանը իր «Ուրվագծեր հայ գյուրոցի և մանկավարժության պատմության» աշխատության մեջ խոսելով XI—XII և հետագա դարերի ընթացքում գյուրոցական ասպարեզում խոշոր դեր խաղացած Սանահինի և Հողպատի մասին, նշում է, որ ամեն կողմերից մարդիկ են եկել Հայաստան Սանահինի գյուրոցում սովորելու համար: Այստեղ գրչության խոշոր կենտրոն է եղել, գրվել ու արտագրվել են բազմաթիվ գրքեր, շատ տեղերից՝ Սյունիքից, Վասպուրականից և նույնիսկ հեռավոր Կիբիկայից մարդիկ են եկել, արտագրել ու տարի են այստեղից բազմաթիվ գրքերի արտագրություններ: Ուսման գործի շատ համարվաժող մարդկանցից հատկապես Բարսեղը խիստ հովանավորվել է վրաց Քամարա թագուհու կողմից¹: Այս հանդեսները պետք է բացատրել նրանով, որ այդ գյուրոցներում հայերի հետ միասին սովորել են նաև վրաց ժողովրդի գավակները:

Հեռավոր անցյալից հայանի է մի այսպիսի փաստ ևս: վրաց թագավոր Գալիթ Երևարարի պատմիչը, խոսելով 1123—1125 թվականներին Քիթիսում գումարված հայ-վրացական եկեղեցական ժողովրդի մասին, գրականորեն է դիտահատում նաև Սանահինի և Հողպատի գյուրոցների գործունեու-

¹ Տե՛ս Ա. Կ. Մովսիսյան, Ուրվագծեր հայ գյուրոցի և մանկավարժության պատմության, Հայկոստանանկերպ, 1958, էջ 215—216:

Յունքը: Դեռևս այն ժամանակի հայ զորացի շատ զործիչներ փախվախել են հայ և վրաց ժողովուրդների բարեկամության գաղափարը, որի համար էլ վրաց թագավորը հարգել է հայերին:

Նշենք նաև, որ ինչպես հայերից շատ-շատերն են սովորել իրենց մերձավոր երկրների զորացնելու, այնպես էլ դրիկց երկրներից աշակերտներ են եկել սովորելու հայոց զորացնելու, ինչպես վրացիներ, աղվաններ, ասորիներ և այլն Այսպես, օրինակ, հա իջառասովյուն, որ դեռևս VI դարում հայոց կաթողիկական զորացում, Մովսես Եղվարդեցուն աշակերտել է վրացի Կյուրիոսը. նա շատ բնութանակ ու դիտուն մարդ է եղել և լավ տիրապետել է հունարեն, հայերեն և պարսկերեն լեզուներին¹:

Հինց թեկուզ այս մասար ցույց է տալիս, որ ժողովուրդների բարեկամությունը կոպիլել ու ամրապնդել է ոչ միայն դրականության ու կուլտուրայի մյուս բնագավառների, այլև զորացական զործի միջոցով նա:

Սակայն հին դարերում զոչովյուն ունեցող առաջին զրուրացները, որոնք կազմակերպվել են եկեղեցիներին կից, շէին կարող լուծել ժողովուրդների զավակների դաստիարակության հարցը: Ժողովրդական լայն կանգնվածների մեջ տիրապետել է ադիտությունը, նույնիսկ Վրաստանը Թուսաստանին միանալուց հետո, իշխ. Տիցիստովի օրոք, Քիչիխում բացվում է միայն մի զրուրց և այն էլ բարձր ակնվականների որդիների համար, իսկ հասարակ ժողովուրդը խարխափել է ադիտության խավարում: Այդ է վկայում Ա. Նրիցյանը, «Քե՛ վրացիք, թե՛ հայք ո՛չ մի զրուրց չունեին: Հոգևորականները զրել կարգալ չդիտեին և ժամասացությունը սովորել էին բերանացի միմյանցից լսելով... Ամբողջ բարբախ մեջ հայերենի բաց խմացոցի համբավ ուներ միայն նորաշեն եկեղեցիս ժամկոչ Եղիազար Գալատյանը...»²:

¹ Տե՛ս Ա. Ե. Մովսիսյան, Ուրվագծեր հայ զորացի և մանկավարժության պատմության, էջ 236:

² Տե՛ս Ա. Գ. Նրիցյան, Պատմության 75-ամյա զոչովյան ներսխյան հայոց հոգևոր զրուրցի (1824—1899), Քիչիխ, 1898, էջ 20:

XIX դարում բացվում են տարրեր ժողովուրդների զրուրացները, որոնք սովորում են նաև հարևան ազգի զավակները: Այդ ժամանակաշրջանից հոչայն է Մ. Ախանզովի և Ե. Արովյանի սերս համադրածակցությունը զրուրցական բնագավատում:

Նրանք լավ դիտակցել են, որ ժողովրդի հոգևոր կյանքի արթնացման և կազմակերպման համար մեծ է նաև զրուրցի դերը: Նրանք աշխատել են զրուրցը ծառայցնել ժողովուրդների բարեկամության և համադրածակցության նպատակին: Հնուագալում հանդես եկած հայ և վրաց ժողովուրդների մեծ մանկավարժները՝ Յակ. Գոգերաշվիլին և Ղ. Աղալյանը հետեւել են իրենց առաջադեմ նախնիներին: Իրենց հայացքներով և գործունեությամբ նպատակադրությունը Յակ. Գոգերաշվիլին և Ղ. Աղալյանը մոտ են եղել իրար: Երկուսն էլ իրենց պերագույն նպատակն են համարել լայնացնել զրուրցների ցանցը, զուրս բերել այն կղերս-պահպանողական ազդեցությունցը: Ե. Արովյանի նման Յակ. Գոգերաշվիլին ևս բարձր է գնահատել ուսաց լեզվի դերը մեր ժողովուրդների համար և անհրաժեշտ է համարել ուսաց լեզվին տիրապետելը:

Դեռևս այն ժամանակ Յակ. Գոգերաշվիլին և Ղ. Աղալյանը գտել են, որ տարրական ուսացումը այն հիմնականն է, որի վրս պետք է կառուցվի ժողովրդական կրթությունը: Այդ են սպացուցում Ղ. Աղալյանի հետևյալ խոսքերը. «Մտուն արմտից կղալարի, կամի, ուսումնարանն էլ չուր նախակրթարտնից»:

Նախատվետական շրջանի հայկական զրուրցի դատմությունից պահպանվել է մի աշուպիս ուշադրավ փաստ: «Մըշակ» թերթը իր բնթերթոցներին տեղեկացնում է, որ Քրիլիսիսի ներսխյան զրուրցի հոգարարությունը որոշել է վրաց լեզուն գործնել պարտադիր առարկա զրուրցում: Այնուհետև թերթում առլած է. «Հիրավի, ինչ կնշանակե ապրել Վրաստանում և բնիկ ժողովրդի լեզուն չիմանալ, շատումնատիրել նրս դատմությունը և դրականությունը»: Հազվածի հեղինակը ցանկություն է հայտնում, որպեսզի վրաց լեզվի դասավանդումը

մտցիի նաև ծխական գպրոցներում՝ Սա մի փաստ է, որ գալիս է հաստատելու այն միտքը, քն գպրոցը ևս օժանդակել է ժողովուրդների մերձեցման գործին:

Բանվոր դասակարգի սեռչլուցիտն շարժման կազմակերպուման, նրա վերելքի տարիներին Անդրկովկասի ժողովուրդների առաջադեմ գործիչները, բուլշեիկները պայքարել են գպրոցական դրոժի բնագավառում ևս միասնական կապ ստեղծելու համար, որը հնարավորություն կստեղծի ժողովուրդների կրթության հետ կապված բնդհանուր հարցերը լուծելու ուղղությամբ: Վառվառու լենինյան Ս. Սպանդարյանը, օրինակ, իր ՔՊրոցական հարցը և սոցիալ-դեմոկրատիան հողվածում պրոպագանդել է գպրոցը եկեղեցաց անջատելու, կրոնի ուսուցումը գպրոցից խլալու վերացնելու հարցը: Դեռ 1910 թվականին գրած ՔՊրոցական սոցիալ հողվածում նա գարծալ առաջ է քաշել համաժողովրդական, ձրի և պարտադիր ուսման պահանջը: Սպանդարյանը միաժամանակ մերկացրել է ցարիզմը, սրի օրոք միլիտնավոր երիտաներ գրկված են ուսում ստանալու հնարավորությունից: նա կոչ է արել Անդրկովկասի բոլոր աղզերի բանվորներին, իրենց ձևորք վերցնելու բանվորական լայն մասսաների լուսավորության գործը:

Ստեղծելով աշխարհում առաջին դեմոկրատական հիմունքներով կառուցված գպրոցը, սովետական նորաստեղծ իշխանությունը ամեն շանր գործադրեց գպրոցը համաժողովրդական լայն սեփականություն գարձնելու համար: Դեռևս 1921 թվականի ապրիլի 19-ին հանդես գալով Նրևնաի պարտիական, սովետական և պրոֆմիտիսեական ակաիվի ժողովում, բուլշեիկյան ականավոր գործիչ Ս. Օրբնիկիձեն նշեց. «Մեր թշնամիները ձգնում էին համոզել ժողդներին, որ բուլշեիկները խլում են նրանց մանուկներին և ժողը նետում: Նքն այդ այդպես է, սպա ուրբի պետք է լրենի մեր ժառանգները, մեր պտուղներից օգտվողները, մեր պայքարը շարունակողները: Այն ժամանակ, երբ Ռուսաստանը քաղցի էր մատնված և նրա

պետական պահեստների պաշարը դգալի շափով նվազել էր, Ռուսաստանն այնուամենայնիվ իր ամենալավ միջոցները սրամադրեց մանուկներին: Մենք հանցավորներ կլինեինք. եքն մանուկներին շօքեհինք: էլ ո՞վ պետք է տանի մեր կարմիր դրոշը, եքն ոչ ապաղա սերունդը»:

Չնայած բոլոր տեսակի խոշորոտներին, վրաց, հայ ու ազրբեջանական բրոժտական աղջակականների պրովոկացիոն մերենաչալություններին, Անդրկովկասի ժողովուրդների երեխաների համար ստեղծվում է գպրոցական լայն ցանց: Լուսավորության գործիչների միջև նախկինում եղած փոխարարներությունները շարունակվում են բնդհույ միևնև սովետական իշխանության հաստատումը և այնուհետև վրաց, ազրբեջանական և հայկական գպրոցների կապերը նոր թափ, նոր բովանդակություն են ստանում:

Սովետական իշխանության տարիներին ինչպես սովետական մյուս սեպուրյիկաներում, այնպես էլ անդրկովկասյան սեպուրյիկաներում ժողովրդի բարեկեցության աքաջ աճի շնորհիվ բնդաչնվում է նաև ժողովրդական կրթության ցանցը, նախասովետական շրջանում, 1914 թվականին գոյություն ունեցող 1800 գպրոցների փոխարեն այժմ Սովետական Վրչաաստանում գործում են 4664 բարեկարգ գպրոցներ, որտեղ աշխատում են 56600 ուսուցիչ, Սովետական Ազրբեջանում 376-ի փոխարեն 3900 գպրոչը 46300 ուսուցիչներով, իսկ Սովետական Հալաստանում նախկինում գոյություն ունեցող 120 գպրոցի զիմաց 1960 թվականին գործում էին 1175 գպրոցներ, 20500 ուսուցիչներով:

Տարբեր աղզերի երեխաների համար մայրենի լեզվով բոլոր սեպուրյիկաներում էլ գործում են գպրոցներ, պատասատում են մանկավարժական կազմեր. նրանք ամենասերտ կապ են պահպանում միմյանց հետ: Սովետական սեպուրյիկաներում ժողովրդական կրթությունը ինտերնացիոնալ բրնույթ ունի: Սովետական գպրոցի ներկայացուցիչները առաջ-

1 Ս. Օրբնիկիձեն, հատեր և հողվածներ (ժողովածու) կամ Վեմուկնուտ, 1921, № 70:

նորզվելով պլուտսարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ամբողջովան սկզբունքով, մըշտապես համադրժակցում են միմյանց հետ, կազմակերպում են փոխադարձ այցելություններ և փորձի փոխանակում: Սովետական սեպարտիկաները օգնում են միմյանց՝ զոչրոցական զործր կազմակերպելու բնազովառում: Նշենք միայն մի փաստ: Երբ սովետական նորաստեղծ պետությունը շաերեր էր թափում ժողովրդական կրթության զործր Հայաստանում ընդարժակելու համար, ի թիվս այլ սեպարտիկաների, խմբերով ետե Հայաստան են դալխ մանկավարժական ուժեր Սովետական Վրաստանի, Ազրբեջանի և մի շարք քաղաքներից, Հատկապես Բարվից ու Կոնձակից: Այդ կապակցությունը վերանայվում են զարդաների ծրարերը, զրտեր հազեցվում են ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ անզրկովկասյան ժողովուրդների անխախտ բարեկամության գաղափարով: Այդ ժամանակից սկսած սերտ կապեր են ստեղծվում մյուս սեպարտիկաների զարդաների հետ, ուսումնասիրության նյութ է դարձվում մյուս ժողովուրդների պատմությունը, զրականությունն ու կուլտուրան: Հայաստանի շատ զարդաներ և տեխնիկոմներ հենց սովետական իշխանության առաջին տարիներից սերտ կապ են պահպանում Բարվի, Թրիխտի զարդաների հետ, կազմակերպում են միացյալ կոնֆերանսներ, զրականության փոխանակումներ և այլն:

Այսպես, օրինակ, Թրիխտի 89-րդ վրադական միջնակարգ զարդար և Երևանի Խաչատուր Արովյանի անվան միջնակարգ զարդար սերտ կապերի մեջ են: Գյուրդաներ կազմակերպել են փոխադարձ այցելություններ, որտեղ ընթացքում ուսումնասիրել են ինչպես զարդական կյանքը, այնպես էլ պատմական հուշարձանները, կազմակերպել են համատեղ կույթներ և այլն: Թրիխտի № 95 հայկական միջնակարգ զարդար սերտորեն կապված է վրադական 99-րդ և ազրբեջանական 73-րդ միջնակարգ զարդաների հետ: Այդ զարդաների աշակերտները հաճախ կազմակերպում են Անզրկովկասի ժողովուրդների բարեկամության երեկոներ: Այդպիսի սերտ կապ զույթյուն ունի նաև Երևանի և Թրիխտի Ա. Ս. Պուշկինի անվան մանկավարժ-

ժական ինստիտուտների միջև: Այդ ինստիտուտների կույկտիվները սխասնատիկարք կազմակերպում են զիտական կոնֆերանսներ, ինտերնացիոնալ երեկոներ, էրսպուրտաներ, զաստիտություններ, զեկուցումներ, փոխադարձ այցելություններ և այլն, որտեղ մեծապես նպաստում են նրանց բարեկամական կապերի ամրապնդմանը:

Երախտակի նախաձեռնություն հանդես ընրեց «Սովետական զարդ» հայկական թերթի խմբազույթյունը, որն իր թերթի 1961 թվականի ապրիլ ամսվա № 17-ի երկու էջերը նվիրեց Սովետական Վրաստանի 40-ամյա հոբելյանին: Այդ համարում զետեղված բազմաթիվ նյութերի հետ միասին կան նաև տեղեկություններ Հայաստանի և Վրաստանի զարդաների բարեկամական սերտ կապերի մասին: Թարեկամության սկիզբը վերանազիրը նրոց իր հոգովածում է Տուցիկիրձեն պատմում է, որ բոլորովին վերջերս հիմք զրվեց Թրիխտի և Երևանի № 58 զարդաների բարեկամությանը: Երևանցի զարդականները հյուր եղան վրադ զարդականների մոտ: Թրիխտի № 58 զարդարի մուտքը զարդարված էր հայերեն և վրադերեն լեզուներով զրված «Բարի զարուստ» լոզուևզով: Գյուրդականներն անկեղծ բարեկամական բաքականություններով են զիմալտել հյուրերին: 10-րդ զասարանցի Մ. Ղեղզիկիձեն հյուրերը հայկան լեզվով ողջունելով, ասել է. «Մեր զարդը տրադիցիոն, բարեկամական կապեր ունի Վրի զարդականների հետ... Բայց որբան շատ բարեկամներ ունենանք, այնքան ուժեղ կիլնենք: Մենք շատ Եւրպ եներ, որ ի զեմ Ղեղ, ունեցքք նոր բարեկամներք: Նուր հյուրերին զեմորեն ողջունում են նաև է. Քութաթիկիձեն, Տ. Չուլուկովան և ուսուցիչ Կ. Եւլենկոն: Իր պատասխան խոքքում Երևանի № 58 զարդարի ումնասվար է. Գեորդիզովն ասում է. «Ընթացիկ տարում վրադ և հայ ժողովուրդները ստնում են իրենց սեպարտիկաներում սովետական կարգերի հաստատման 40-ամյակը: Այդ մեծ տարեթիվ կապակցությունը էլ մենք եկել ենք կարաքական Վրաստանի մալարադադարը: Մենք ծանոթացանք քաղաքի սեպարժան մալարերի, սեպուրդիոն և պատմական հուշար-

ձաններին և, որ ամենակարևորն է, ձեռք բերեցինք նոր բանկամները:

Հանդիպումը ավարտվում է համերգով, որ կազմակերպել էին վրաց աշակերտները:

Քարեկամության ամուր կապեր գոյություն ունեն նաև Երևանի Ա. Սպենդիարյանի երաժշտական դպրոցի և Քրի- լիսիի Իդյուլիա-Իվանովի երաժշտական դպրոցի միջև նրանք հաճախակի են կազմակերպում սահգծագործական հանդի- պումներ: Վերջերս դարձյալ երևանցիների մոտ էին եկել թրի- լիսցի բարեկամները: Հայֆիլհարմոնիայի փոքր զահլիճում սեպի ունեցավ համերգ, որտեղ մեծ հաջողությամբ հանդես եկան երկու դպրոցի սաները՝ Ն. Կավալաշվիլին, Գ. Գոցիաշ- վիլին, Մ. Օղիխաձեն և մյուսները. իսկ Երևանի դպրոցից՝ Ա. Հախոջյանը, Ա. Մինայանը, Ա. Կարապետյանը, Գ. Մհ- րաբյանը, Ա. Մարգարյանը և ուրիշներ:

Քարեկամական սերտ կապեր գոյություն ունեն Սովետա- կան Հայաստանի Շամշադինի դպրոցների և մյուս ռեսուր- լիկաների դպրոցների միջև: Այսպես, օրինակ, շրջկենտրոնի ութամյա դպրոցը սերտ կապի մեջ է գտնվում Քոմուզի ութ- ամյա դպրոցի հետ: Այդ դպրոցները ուսուցիչները հաճախակի են հավաքվում, լսում միմյանց դասեր և համատեղ քննարկում աղջույնները: Այդ և մյուս դպրոցներում փոխադարձաբար կազմակերպվում են միմյանց աշխատանքի փորձի փոխանա- կում, ինչպես նաև դպրոցական ինքնագործ խմբերի կազմները:

Սրկալու տարիների քննաքննում սերտ կապ է ստեղծված Բաթի N 12 և Երևանի Մալաթ-նովայի անվան երաժշտական դպրոցների միջև նրանք հաճախ են կատարում փոխալյե- իություններ, փոխադարձ կուլմիներ: 1961 թվականի մարտին Բաթիում այդ երկու դպրոցների պատանի երաժիշտները հա- մատեղ համերգ կազմակերպեցին, որը մեծապես նպաստեց երաժշտական դպրոցների աշակերտների բարեկամական և ստեղծագործական կապերի ամրապնդմանը:

Արդեն մի քանի տարի է Երևանի Արմեն Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցը սերտ կապերի մեջ է Քբիլիսիի 10-րդ երաժշտական դպրոցի հետ: Այդ կերպ դպրոցների դա-

տարանները նամակագրությունների միջոցով փորձի փոխա- նակություն են կատարում, իսկ դպրոցների կողմիցվաների ներկայացուցիչները հաճախակի այցելություններ են կատա- րում միմյանց, համատեղ համերգներ են կազմակերպում ինչ- պես Երևանում, այնպես էլ Քբիլիսիում:

Ին որքան սրտատուր և հուզիչ է մեր ռեսուրսիկաների դպրոցականների կապը և բարեկամությունը, կարևոր է ցույց տալ նաև Քբիլիսիի N 4 և Երևանի Մալաթ-նովայի անվան երաժշտական դպրոցների համադրոծակցության օրինակով, որը սկսվել է դեռևս 1954 թվականից: Ապրիլ ամսին սալաթ- նովայցիները Երևան էին հրավիրել Քբիլիսիի մանկական երա- ժրշտական դպրոցի մի խումբ աշակերտների և դասատունե- րի: Հայֆիլհարմոնիայի փոքր զահլիճում սեպի ունեցավ հան- դիպման շատ հուզիչ երեկու: Երևանցիները ի պատիվ իրենց բարեկամների երեկոն բացեցին վրաց կոմպոզիտոր Լազիձեի հանրածանոթ «Քբիլիսու» երգի կատարմամբ: Այնուհետև սկես- վեց համերգ, որը բազկացած էր երկու բաժնից՝ առաջին բա- ժինը Քբիլիսցիների կատարմամբ, մյուսը՝ երևանցիների:

Ուրախայի էր նաև այն, որ երանը կատարում էին ոչ միայն իրենց ժողովրդի, այլև եզրայրական ժողովրդի կոմպոզիտոր- ների գործերը: Այսպես, օրինակ, 5-րդ դասարանի աշակեր- տուհի Սասնաշվիլին հաջողությամբ կատարեց Արամ Խա- ռաբյանի «Կարիսցիաները», Չիկոևանի՝ Բարաջանյանի «Եսպարտոսը», Կլասովի՝ Սպենդիարյանի «Չալաթուման», Իսկ երևանցիներից՝ երկրորդ դասարանի աշակերտուհի Բա- րայանի կատարեց Քաթաբեցիվու «Պարբ», Բեշանյանը՝ Գուչիաշվիլու «Պրիլուպները», Տեր-Սարգսյանը՝ Շավիրաշ- վիլու «Նոկալուները», Մուրադյանը՝ Լազիձեի «Երաժշտական ակնթարթը», Մկրտչյանը՝ Ցինցաձեի «Նովիվը» և այլն:

Եթե նախատվետական շրջանում որոշ կապ գոյություն է ունեցել անդրկովկասյան ժողովուրդների դպրոցների միջև, սպա այդպիսին չէր կարող լինել բարձրագույն ուսումնական հիմնարկների միջև, քանի որ այդպիսիք գոյություն չունեին: Ինտերպոլայն ուսումնական հիմնարկները սովետական կար- գերի ծնունդ են:

Սովետական իշխանության բոլոր տարիներին սերտ համագործակցել են նաև Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բուհերը: Երևանի պետական համալսարանը, Պոլիտեխնիկական ինստիտուտը, Բժշկական, Գյուղատնտեսական, Մանկավարժական, Գեղարվեստ-Քսենոփան, Ֆիզիկոլոգիայի և այլ ինստիտուտները սերտ կապի մեջ են եղել ինչպես Սովետական Միության մյուս ուսուցչությունների, այնպես էլ և հատկապես Վրաստանի ու Ադրբեջանի համալսարանական ինստիտուտների հետ: Այսպես, օրինակ, Երևանի պետական համալսարանը, նրա ուսանողները, դասախոսական կազմը սերտորեն կապված են ինչպես Բարձի Ս. Մ. կիրոսի անվան պետական համալսարանի, այնպես էլ Քրիլիսիի պետական համալսարանի դասախոսների և ուսանողների հետ: Նրանք համակերպում են համառոտ գիտական միջոցառումներ: Զեկուցումներով հանդես են գալիս երեք համալսարանների դասախոսները, ուսանողները, կատարվում են փոթի փոխանակումներ ուսումնական զործի կազմակերպման և այլ նպատակներով: Հաճախ է պատահում, երբ այդ համալսարանների ուսանողների առանձին խմբեր լինում են Երևանում, Բարձում և Քրիլիսիում: Կարելի է հիշատակել 1957 թվականի փետրվար ամիսը, երբ, օրինակ, Բարձի համալսարանից մոտ 150 հոգի ժամանեցին Երևան և մի քանի օր Էդան պետական համալսարանում, ծանոթացան նրա գործունեության հետ, նրանց բարեկեցությունը, վաշխությունը խմբերը, երգախումբը, Հատրազային նվագախումբը, ժողովրդական երգի և պարի անսամբլը և այլն կուլմանը: Ընկալան համալսարանի ուսանողների համար, հանդիպեցին քաղաքի աշխատավորուհիներին: Հայֆիլմարժուհիայի համերգային մեծ զահլիճում տեղի ունեցավ համալսարանների բարեկամության մեծ երեկո:

Այժմ էլ այլևի են ամրապնդվում երեք ուսուցչությունների համալսարանների գիտական կապերը: Իրագործվում են համառոտ ժողովածուների հրատարակություններ, Քարգանդում և հրատարակվում առանձին գործեր: Անդրկովկասյան երեք ուսուցչությունների 40-ամյակների առթիվ դեռևս 1961 թվականին Երևանի պետական համալսարանը հրատարակեց

«Անդրկովկասյան ժողովուրդների գրականության պատմությունից» ժողովածու: Այդ ժողովածուի մյուս հատորները հրատարակվում են Վրաստանում և Ադրբեջանում: Երևանի պետական համալսարանում դասավանդվում են վաղ և ադրբեջանական ժողովուրդների գրականություն և պատմություն, իսկ Բարձի և Քրիլիսիի համալսարաններում ուսանողները ծանոթանում են Հայ ժողովրդի պատմությանը, գրականությանը և կերպարանային վաղուց էլ ինչ Քրիլիսիի համալսարանին կից գործում է Հայագիտական ամբիոն:

Հայ տառերի հիմնադիր Մեսրոպ Մաշտոցի 1600-ամյակին նվիրված մեր համալսարանի գիտական սեմինարի մասնակցեցին Վրաստանի, Ադրբեջանի և Սովետական Միության շատ ուսուցչությունների համալսարանների ներկայացուցիչները:

Արդեն 1962—1963 ուսումնական տարվանից Երևանի գեղարվեստ-Քսենոփան ինստիտուտի ծրագրում նախատեսվել է ՍՍՄԿ ժողովուրդների խառնուրդի պատմության առարկան, այդ թվում նաև ադրբեջանական և վրացական թատրոնների պատմությունը: Կատարվում է դասախոսների փոխանակություն: Քրիլիսիի, Բարձի և Երևանի ինստիտուտների միջև: Բարձի և Քրիլիսիի զեկուպլեստական ինստիտուտներում Երևանի ինստիտուտի կողմից կարգադրվում են շատախոսություններ՝ «Գ. Սունդուկյանի դարաշրջանը», «Ազոսյանը և Շեքսպիրը»: Արվեստների ինստիտուտի ամբիոնը Քրիլիսիում և Բարձում կազմակերպում է դասախոսություն՝ «Կուսմուխթը և թատրոն» թեմայով: Ուսանողական ներկայացումներ են ցուցադրվում երեք ուսուցչությունների մայրաքաղաքներում: Կատարվում է ցուցահանդեսների փոխանակում Քրիլիսիի զեկուպլեստական ինստիտուտի հետ:

Կերպարվեստի պատմության հարցերի վերաբերյալ կատարվում են դասախոսների փոխանակություններ, փոխադարձ այցելություններ: Խ. Արոլյանի անվան մանկավարժական ինստիտուտը բարեկամական կապեր է հաստատել Քրիլիսիի, Քուլմախիի և Բարձի մանկավարժական ինստիտուտների հետ: Արդեն տասը տարի է, ինչ որպիսիս է զարձեց ինստիտուտների կազմակերպությունների նամակագրական կապե-

ըր և պատվիրակութիւններէ փոխազարձ այցելութիւնները: Վրացական հոգեբանութեան սովետական շրջանի խոշորագոյն ներկայացուցիչ, ակադեմիկոս Գ. Ն. Ուշնաձեն սերտորեն կապված է եղել Հայ հոգեբանների հետ: Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտներից և հոգեբանութեան ֆակուլտետի ուսանողներից շատերը ունիլընդրել են նրա բովանդակային դասախոսութիւնները, մասնակցել էր սովորեմաններին: Հայ ասպիրանտներից նրկուար նրա զեկավարութեամբ են պաշտպանել իրենց դիսերտացիաները:

Մեր եղբայրական երկք ուսուցիչիկանների հոգեբանները բազ տեղյակ են Քրիլիսիում, Բարվում և Երևանում կատարվող դիսա-հետազոտական աշխատանքներին և միասին բարձրաց ըննարկել են աշխատանքների պլանները, ընթացքը և արդունքները:

Հայ հոգեբանների աշխատութիւնները տպազրկել են Բարվում և Քրիլիսիում, իսկ վրացի և աղբրեշանցի հոգեբանների աշխատութիւնները՝ Երևանում:

Անդրկովկասյան ուսուցիչիկանների մայրաքաղաքներում կազմակերպվել են գիտական միացյալ կոնֆերանսներ. 1958 թվականին՝ Քրիլիսիում, 1960 թվականին՝ Երևանում և 1962 թվականին՝ Բարվում: Այդ կոնֆերանսներում մշակվել են միացյալ պրոբլեմային նշանակութիւն ունեցող թեմաներ. «Անգիտակցականի դերը հոգեբանութեան մեջ» պրոբլեմային թեման մշակվել է միասնաբար՝ ակադեմիկոսներ Բոճորշվիլու, Մակիլավելակու և գիտութեան վաստակավոր գործիչ Մադմանյանի կողմից:

Մերտորեն կապված են նաև Անդրկովկասի մանկավարժական ինստիտուտների ֆիլիալները և հոգեբանական ամբիոնները: Այդ ամբիոնների միացյալ անդրկովկասյան կոնֆերանսները տեղի են ունեցել երկու անգամ Բարվում, երկու անգամ Քուլիսիում, երկու անգամ Երևանում և մեկ անգամ Քրիլիսիում:

Կոմերիտական և արհմիութենական կազմակերպութիւնները, ուսանողական գիտական ընկերութիւնը անց են կացնում համատեղ գիտական սեսիաններ, սպորտային մրցումներ, ազգային ուսուցիչիկանների զբոսայգիների փոխանակումներ և այլ միջոցառումներ:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱՊՐԲԵՋԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀՕ-ԱՄՅԱԿԱՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՅԿԱՅՈՒՄԸ

1960 թվականի փետրվարի 24-ին «Կոմունիստ», «Զարյա Վաստակ» և «Բակինսկի արուշ» թերթերը տպագրեցին երկք ուսուցիչիկանների Գերագոյն սովետների նախագահութեան նախագահների «Մեր ուժը ժողովուրդների եղբայրութեան մեջ է» համատեղ հոգվածը: Այնտեղ ասված էր. «Բայթիկյան փերից միշն կազաղ օվկիանոսը, Հյուսիսային հողերի ձյուկազատ լայնարձակ տարածութիւններից միշն և Տաշիկաստանի և Քուրբանիայի հարավային սահմանները տարածվել է մեր մեծ հայրենիքը:

Անծայրածիր են նրա դաշտերը և արտերը, սնմատելի լեռնաշղթաները, հարուստ անտառները, վեհասլանձ հզոր գետերը: Մեր հիասքանչ հողի վրա սպրում են ավելի քան 100 ազգութիւնների և ժողովուրդների մարդիկ: Նրանք բոլորը ազգութիւնների և ժողովուրդների ընտանիքում: Սովետական ժողովուրդների բարեկամական ընտանիքում ապրում են Վրաստանի, Հայաստանի և Ազրբեյջանի աշխատավորները: Նրանք համատեղ պայքարել են իրենց հարազատ հոգում սովետական իշխանութեան հաստատելու համար: Բարեկամութեամբ, մեր երկրի բոլոր ժողովուրդների հետ այժմ կառուցում են կամունիզմ... Ազրբեյջանը, Հայաստանը և Վրաստանը— հավասարները միութենական եղբայրական 15 շավասար ուսուցիչիկանների մեջ— տարեցտարի դառնում են հարուստ ու

ղեզեցիկ: Մեր հիասթափ թաղամասը հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ Հայաստանի, Ազրբեջանի և Վրաստանի աշխատավորները կառուցում են կոմունիզմ:

Անդրկովկասյան երեք հրաշքակից անպուրիկանների միանություն, հոգեհարգատուլիան այդ գաղափարը շատ լավ է արտահայտել Ք. Գրիշաշվիլին իր «Թրիլիսի, Բարու, Երևան» քանասանդղության մեջ:

Բարու, Երևան ու Թրիլիսի—

Ի՞նչ լավ, ի՞նչ շքեղ քառեր արտահայտ.

Կարծես մտանում կտեժում միասին

Նույն սրբատանկի երեք պերճ ուղիւղ:

Դեռ հին սրբին մրաց աշխարհում,

Իշխում էին երբ նրդակ ու աղեղ,

Մենք անգործ չիկք նստում սովորում,

Խաչազ նշանք էինք պաշտպանում աճեղ:

Նվ հրգիչների հար Սառաթևոսան

Իր հրգիթով էր դառնում, պայքարում,

Նվ ստիկները նշան պարտության՝

Նրա դեմ գլուխ էին խնայում:

Նվ սրտերը մեր, կամքերն անկեղծ

Ծգրաբութիան ասել է կազում իրար,

Զի խախտի երբեք պաշր իմաստան,

Որ հաստատեց մեր պարտան փրկարար:

Նվ նին մեկը փորձի սասանել

Մեր հրաշքութիան ծառից մի սերն,

Պատրաստ ենք ցամաք ժեր պատասխանել,

Թնամու հույսերն անել ի զերն:

Մաշու, Երևան ու Թրիլիսի—

Ի՞նչ լավ, ի՞նչ շքեղ քառեր արտահայտ.

Կարծես մտանում կտեժում միասին

Նույն սրբատանկի երեք պերճ ուղիւղ:

1960 թվականի ապրիլին լրացավ Սովետական Ազրբեջանի 40-ամյակը: Այդ առթիվ իր էլույթի մեջ Ն. Ս. Խրուշչովը բառ արժանիույն դատահանց Անդրկովկասի բուլշևիկների փառավոր տրոյգիցիաները: Նա ասաց. «Կուզենայի ընդգծել Ազրբեջանի և ամբողջ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների հրաշքի ինտերնացիոնալիստական տրոյգիցիաները...»: Այն հանգամանքը, որ Անդրկովկասի կոմունիս-

տական կազմակերպությունները միշտ զործել են համարումբված, ընթացել են միասին, համարալլ են որ նրանք մասնաճեղների դատարանակ են ինտերնացիոնալիզմի ողով, վճարական նշանակություն ունեցավ քանվոր դատակարգի բոլոր վերջնամիներն զեմ նրանց հաղթանակի համար: Նալեցիք Բարդի 56 կոմիսարների ազգային կազմին. զա ասես սխիվորացնում է Բարդի պուրիսարբատի իմտերնացիոնալ համախմբվածությունը»:

շնորհիվ փոխադարձաբար հարստանում են ժողովուրդների կուլտուրաները:

Իրականացնելով կուլտուրայի և արվեստի վերաբերյալ պարտալից ցուցումները՝ երեք ուսպուլիկաների կուլտուրայի գործիչները ձգտել են ետ լմնալ կյանքից և դանձել զաղափարական պաաշաճ մակարդակի վրա, ստեղծել գործեր, որոնք արժանի լինեն կոմունիստական հասարակության կառուցող մեր ժողովուրդներին:

ՍՍՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԵՏԱԳԱ ԾԱՂԿՈՒՄՆ ՈՒ ՄԵՐՁԵՑՈՒՄԸ

ՍՄԿՊ XXII համագումարում ընդունված Սրագիրը հանրագումարում է այն պատմական սույին, որով անցել են ՍՍՈՒՄ ժողովուրդները Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո: Սրագիրն առաջ է քաշում կոմունիստական հասարակության կառուցման դիտականորեն հիմնավորված կոնկրետ պլանը: Մարքս-լենինյան ոգով տողորված այդ փաստաթղթում կարեւոր տեղ են հատկացվել նաև տարբեր ժողովուրդների փոխհարաբերության, ինտերնացիոնալ դաստիարակության և կուլտուրայի հետագա առավել մերձեցման խնդիրներին:

Պարտալից նոր Սրագրում իրենց խորագույն արտացոլումն են գտել նաև ազգային հարցի լենինյան զաղափարները:

Վ. Բ. Լենինը զեռուս 1913 թվականի դեկտեմբերին գրած իր «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» աշխատության մեջ նշել է. «Մարքսիստ չէ նա, անգամ դեմոկրատ չէ նա, ով չի ընդունում և չի պաշտպանում ազգերի ու լեզուների իրավահավասարությունը, ով չի պայարարում ամեն մի ազգային ճնշման կամ անիրավահավասարության դեմ»¹:

Կոմունիստական պարտիան իր ազգային քաղաքականության կենսագործման, ազգերի միջև սերտ փոխհարաբերություններ ստեղծելու քնազավատում միշտ էլ հիմնվել է մարք-

¹ Վ. Բ. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 15:

սկզմի այն կարևոր դրույթի վրա, ըստ որի շի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը բունանում է ուրիշ ժողովուրդների վրա:

Ահա թե ինչու Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, մեկընդմիջ աշխարհակազմում ազգային ճնշման տեսնական ու քաղաքական հիմքերը, նոր դարաշրջան քայքայ մարդկային հասարակության պատմության, ազգերի փոխհարաբերությունների մեջ:

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հետեվանքով նախկին ցարական Ռուսաստանի ժողովուրդների և ազգերի ազատագրումը պատմական խոշորագույն մի հաղթանակ էր: Այդ ժողովուրդների մերձեցումը՝ նոր, սոցիալիստական հիմունքներով, զարգացավ ու կոփվեց սովետական իշխանության համար մզվող պայքարում, քաղաքացիական կռիվների, Հայրենական Մեծ պատերազմի տարիներին, սոցիալիզմի կառուցման ամբողջ ժամանակաշրջանում:

Պարտիայի վարած ազգային հետևողական քաղաքականության շնորհիվ մեր երկրի ժողովուրդների միջև հաստատվեցին ոչ միայն բարեկամական հարաբերություններ, այլև սերտ համագործակցություն՝ տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր բնագավառներում: Սոցիալիստական շինարարության տարիներին, ռուս մեծ ժողովրդի կողմից անշահախնդիր օգնությամբ, ՍՍՄԿ բոլոր անպարտիկաների միջև սահմանված տնտեսական կապերը խթանեցին յուրաքանչյուր ազգի և հատկապես նախկինում հետամնաց ժողովուրդների տնտեսության զարգացմանը:

Կամունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հաջթանակի շնորհիվ մեկընդմիջում վերացավ ժողովուրդների միջև նախկինում ցարիզմի կողմից հրահրվող հակամարտությունը:

Սովետական ժողովուրդը պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների հիման վրա համախմբվեց մի միասնական, կղերական ընտանիքում, կոփեց իրավահավասար սոցիալիստական ազգերի անխախտ բարեկամությունը, որը

հանդիսացավ սովետական բազմազգ պետության ուժի և հզորության աղբյուրը:

Վ. Ի. Լենինը Սովետների համառուսաստանյան երկրորդ համագրումարում ասել է. «Մենք իշխում ենք ոչ թե բաժանելով, ըստ հին Հռոմի դաժան օրենքի, այլ միացնելով բոլոր աշխատավորներին կենդանի շահերի, դասակարգային գիտակցության անխզելի շղթաներով: Եվ մեր միությունը, մեր նոր պետության ավելի ամրակառու է, քան ընտաղատական իշխանությունը, որը սրով ու երկաթով միավորում է իմպերիալիստների համար հարկավոր արհեստական պետական կազմավորումները»¹:

Ազգային հարցի լուծման գործում պարտիան միշտ էլ ելակետ է ունեցել ազգերի առաջացման և զարգացման օրչեկտիվ օրինաչափությունները: Վ. Ի. Լենինը նշել է. «Չարագացող կապիտալիզմը զիտե երկու պատմական տենդենց ազգային հարցում: Առաջինը՝ ազգային կյանքի և ազգային շարժումների զարթոնքն է, պայքարն ամեն տեսակ ազգային ճնշման դեմ, ազգային պետությունների ստեղծումը: Երկրորդը՝ ամեն տեսակ հարաբերությունների զարգացումն ու համախացումն է ազգերի միջև, ազգային միջնորմների քանդումը, կապիտալի, առհասարակ տնտեսական կյանքի, քաղաքականության, դիտության և այլնի ինտերնացիոնալ միասնության ստեղծումը:

Երկու տենդենցն էլ կապիտալիզմի համաշխարհային օրենքն են: Առաջինը զերակշռում է նրա զարգացման սկզբում, երկրորդը բնորոշում է հասուն կապիտալիզմը, որը բնթանում է զեպի փոխարկումը սոցիալիստական հասարակության»²:

Եվ Լենինի այս դրույթի իրականացման ճանապարհով էլ, որ Սովետական իշխանության բոլոր տարիներին աննախընթաց ծաղկման է հասել սոցիալիստական ազգերի թիվը՝ կհանդիսանա, թե՛ կուլտուրան, տեղի են ունեցել փոխհարաբերումներ:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 558:

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 14:

փոխօգնության և մերձեցման բուռն պրոցեսներ նրանց կյանքի բոլոր բնագավառներում: Կոմունիզմի նյութատեխնիկական ծաղիլուն կառուցման ժամանակաշրջանում ՍՍՍՄ ժողովուրդների տնտեսական և կուլտուրական կայելքը, նրանց փոխհարստացումը, մերձեցումը կ'անսնի մի նոր ու ազնի բարձր աստիճանի, կաճի նրանց,— ինչպես զա ասված է պարտիայի նոր Մրագրում,— տնտեսական և գաղափարական ընդհանրությունը, կըզարգանան նրանց հոգեոր կերպարի կոմունիստական ընդհանուր գծերը:

Պարտիան ամեն կերպ պաշտպանում է յուրաքանչյուր սոցիալիստական ազգի լավագույն տրադիցիաները, նրա կուլտուրայի, դրահանության, արվեստի առանձնահատկությունները, որոնք իրենց սոցիալիստական բովանդակությամբ ներգաշնակում են մյուս բոլոր ազգերի կուլտուրական մղուններին:

«Պաշտպանելով յուրաքանչյուր ժողովրդի առաջադիմական տրադիցիաները,— ասված է Մրագրում,— դրանք դարձնելով սովետական բոլոր մարդկանց սեփականությունը, պարտիան բստ ամենայնի կդարգացնի կոմունիզմի կառուցողների նոր, բոլոր ազգերի համար միասնական ռևոլյուցիոն տրադիցիաները»:

Մրագիրը չի անտեսում ազգային տրադիցիաների զարգացումը, նրանում պաշտպանվում են յուրաքանչյուր ազգի առաջադիմական տրադիցիաները, զրա չնա մեկտեղ պաշտպանվում են նոր, սոցիալիստական բոլոր ազգերի համար բեղուն յի միասնական տրադիցիաները:

Այսպիսով տեղի է ունենում միաժամանակ երկու պրոցես՝ սոցիալիստական ազգերի ծաղկումը, զարգացումը և նրանց մերձեցումը, ուրեմն և մերձեցում ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական կյանքի ծաղկման միջոցով:

Այժմ ՍՍՍՄ բոլոր ազգային ռեսպուբլիկաները ապրում են ոչ միայն տնտեսական, այլև կուլտուրական զարգացման աննախընթաց մի պրոցես:

Կուլտուրական ռևոլյուցիան իր շրջանակների մեջ է առել Մովետական Միության բոլոր ժողովուրդների և ազգերի ամեն

նայան խավերը: Բավական է ասել, որ այժմ մեր երկրի բանվորների 40 տոկոսը և կուլտտեսականների 23 տոկոսը ունեն միջնակարգ և բարձրագույն կրթություն: Այդ այն ժամանակ, երբ ներկայումս Խոսիայի բնակչության 12 տոկոսը գրեկարգալ շքիան Բուրբոյայի բնակչության 70, Պորտուգալիայի՝ 44, Պակիստանի՝ 80, Արևմտյան Իրանի՝ 97 տոկոսը անգրագետ են: Լատինական Ամերիկայի երկրներում անգրագետների թիվը հասնում է 86 միլիոնի:

Մեր երկրի հոյակապ 20-ամյակի կենսադարձումը հնարավորություն կտա հասարակության անդամների հիմնական մասին ստանալու լրիվ միջնակարգ, միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն կրթություն: Աշխատավորների կուլտուր և խելոնիկական մակարդակի բարձրացումը կնպաստի վերացնելու մարդկանց միջև դեռևս գոյություն ունեցող տարբերությունները կուլտուրայի, դիտության, բոլոր գիտելիքների մակարդակի տիրույթաման միջև, հենց արտադրության պրոցեսում տեղի կունենա ֆիզիկական և մտավոր աշխատանքի օրգանական միացումը: Բանվորները, կուլտտեսականները և ինտելիգենցիան կմիաձուլվեն մեկ միասնական անդասակարգ հասարակության մեջ:

Պերիֆերիա հասակացողությունը վաղուց է ինչ վերացել է սովետական մարդկանց լեքսիկոնից:

Կիարյուն կյանք է տիրում մեր մեծ Միության բոլոր անկուններում: Կուլտուրական արժեքներ են ստեղծվում և՛ Մոսկվայում, և՛ Քրիլիիում, և՛ Ուրսուում, և՛ Բարբոսում, և՛ Ղազախստանում, և՛ Տամբովում և ամենուրեք:

Լ. Սուրյուբ ՌՍՖՍՄ-ի գրողների համագումարում խսելով ՌՍՖՍՄ-ի զրահանության ծաղկման մասին, Նչկել է, որ այդ գրականությունը ներկայացնում են և՛ Մոսկվայի ու Լենինգրադի գրողների հոր շուկաները, և՛ Քաբարդայի ու Բաշկիրիայի հասունացած զրահանությունները, և՛ Ցակուտիայի ու Տուվայի, Խարբովսկի ու Սմոլենսկի, Արևմտադեպի ու Ստավրոպոլի, Սվերդլովսկի ու Դոնի Ռոստովի:

1 Տե՛ս «Սովետական Հայաստան», 1962, № 41:

Նովաբրբրակի ու Վրոտնեթի, Գորկու և Իրիտաակի գրողները: Զկան կենտրոնի և զավառի գրողներ, կան Ռուսաստանի Ֆեդերացիայի գրողներ:

Այսօր տարբեր ազգերի արվեստի ակադեմիա գործիչներին գրեմեն ամենուրեք: Այսպես, օրինակ, Մ. Սարյանը՝ այդրում և ստեղծագործում է Սովետական Հայաստանում, բայց նրա առանը Հայասնի է մեր Միութեան բոլոր ծայրամասերում, եռոյն Համբափն ունեն նաև Արամ Խաչատրյանը, Գ. Գասպարյանը և ուրիշ Հայ արվեստագետներ:

Տեղի են ունեցել խոշոր փոփոխութեաններ մեր երկրում: Սովետական Միութեան յուրաքանչյուր մարզ, ռեսպուբլիկա ստեղծում է կուլտուրական արժեքներ, որոնք մտնում են Համամիութենական ընդհանուր գանձարանը: Յուրաքանչյուր ժողովուրդ հշուտում է իր կուլտուրան, որոնք յայն ճանաչում են գանում մեր ողջ երկրում:

Այս նոր պայմաններում, ժողովուրդների փոխմերձեցման ամենագործուն միջոցներից մեկը նրանց ստեղծած կուլտուրական արժեքների փոխանակումն է՝ զրահանութեան և արվեստի բոլոր ճյուղերի փոխադարձ շփումը, գրողների ու արվեստագետների փոխալցելութեանները և այլն, որոնք գնալով ավելի յայն ծավալ են ստանում: Ոչ մի կերպ չի կարելի պատկերացնել մեր բազմազգ երկրի կուլտուրական զարգացումը, առանց ժողովրդական կուլտուրաների փոխազդեցութեան ու շփման:

Մեր ժողովուրդների կուլտուրական սերտ համագործակցութեանը նպաստում է նրանց էսթետիկական դաստիարակութեանը և ողնկոչում նոր արժեքների յայն աշխարհ զալու:

Սոցիալիզմի կառուցման անցած ամբողջ ժամանակաշրջանը ցույց տվեց, որ, հակառակ կապիտալիստական երկրներում տեղի ունեցող պրոցեսի, մեր երկրում բոլոր ազգերի անարգել զարգացումը գնում է նրանց ամենասերտ մերձեցման, կզբայրական համերաշխութեան, փոխմերձեցման ու լեներիան բարեկամութեան ուղիով: Այդ պրոցեսը տեղի է ունենում, ինչպես արդեն նշեցինք, ամենից առաջ տարբեր ազգերի ու ժողովուրդների տնտեսական անհավասարութեան վերացման ճանապարհով: Հանրաշայտ է, որ անցած բոլոր տարի-



Վ. Ալեքանյանի ևայ դերասանների խումբ



Վրաց ընտանեկանը Եւթնամյա պարբերում

ներին, ամբողջ Սովետական Միության արդյունաբերության բարձր տեմպերի զարգացմանը զուգընթաց, շատ ավելի արագ տեմպերով զարգացավ միութենական սեփականների արդյունաբերությունը: Այսպես, օրինակ, 1960 թվականին ՍՍՍՄ արդյունաբերությունը 1913 թվականի համեմատությամբ աճել է 45 անգամ, իսկ Հայաստանում աճել է մոտ 72 անգամ: Բայց սոցիալիստական հասարակությունը վերացրեց ոչ միայն ազգերի միջև եղած քաղաքական ու տնտեսական անհավասարությունը, այլև նրանց միջև եղած կուլտուրական սահմանափակվածությունն ու անհավասարությունը:

ՄՄԿՊ Մրազրի մասին ավամ իր զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը ասաց. «Սովետական հասարակարգը նոր կյանքի կոչեց ու բարգավաճման հասցրեց նախկինում ճնշված և իրավազուրկ բոլոր այն ժողովուրդներին, որոնք կանգնած էին պատմական զարգացման տարբեր աստիճանների վրա՝ նահապետական-տոհմային հասարակարգից մինչև կապիտալիստականը: Եսխակինում հետամնաց ժողովուրդները ավելի զարգացածների և ամենից առաջ ռուս մեծ ժողովրդի օգնությամբ շրջանցեցին կապիտալիստական ուղին, հասան առաջավորների մակարդակին: ՍՍՍՄ-ում ստեղծվեց բնդհանուր բնորոշ զծեր անեցող տարբեր ազգությունների մարդկանց պատմական նոր բնդհանրություն՝ սովետական ժողովուրդ: Նրանք ունեն բնդհանուր սոցիալիստական Հայրենիք՝ ՍՍՍՄ-ը, բնդհանուր տնտեսական բազա՝ սոցիալիստական տնտեսությունը, բնդհանուր սոցիալ-դասակարգային կառուցվածք, բնդհանուր աշխարհայացք՝ մարքսիզմ-լենինիզմը, բնդհանուր նպատակ՝ կոմունիզմի կառուցումը, շատ բնդհանուր զծեր՝ հողերու կիրպարում, հողբանության մեջը:

ՍՍՍՄ սեպտուբրկանների շահերը բնդհանուր ու միասնական են, նրանցից յուրաքանչյուրի զարգացումը սերտորեն կապված է ամբողջ երկրի զարգացման հետ, քանի որ կոմունիստական հասարակություն կարելի է կառուցել մեր բոլոր ժողովուրդների ու ազգերի ստեղծագործական համատեղ գործունեության հիման վրա:

Կոմունիստական հասարակություն կառուցող մարդու

կյանքի պայմանների փոփոխության հետ միասին փոփոխում են նաև ինքը մարդը, նրա կուլտուրական ու հոգևոր մղումները:

Այժմ մի ազգը մյուսից տարբերվում է իր լեզվով, սովորույթներով, կենցաղի, մշակույթի արտահայտչական ձևով և այլն: Նոր ժամանակաշրջանում ինչպես հայրենասիրական զգացմունքները, այնպես էլ շատ ուրիշ հասկանիչները ընդհանրանում են, բանի որ բոլոր ազգերի համար էլ կա մի հայրենիք՝ Սովետական մեծ երկիր: Մենք ունենք նաև միասնական հասարակարգ, որի անդամների մեջ պատվաստվում է ընդհանուր բարոյականություն—բարոյական կողերսը, նոր հասարակության էթիկական նորմաները, մարդու բարոյական պատգամները, որի էությունն է՝ «Մեկը բոլորի համար, բոլորը՝ մեկի համար», «Մարդը մարդուն բարեկամ է, ընկեր և եղբայր»: Այս սկզբունքով էլ մարդիկ պայքարում են կամուրջի վրա կառուցման համար: Ազգերի մերձեցման տեսակետից մեր մարդկանց բարոյա-քաղաքական միասնությունը նոր աստիճանի վրա է բարձրանում:

Ազգերի մերձեցումը մեղանում զա այն առիթիլլացիան չէ, ինչպես այդ տեղի է ունենում կապիտալիստական երկրներում, բանի որ մեզ մոտ բոլոր ազգերը հավասար են, չկան արտոնչալ և ոչ արտոնչալ ազգեր, նրանք նույն իրավունքներից են օգտվում: Վ. Ի. Լենինը գրել է. «Էին աշխարհին, ազգային հարստահարության աշխարհին, ազգային կոմպոզիցիոն աղ-զային առանձնացմանը բանիլլոները հակադրում են բոլոր ազգերի աշխատավորների միասնականության նոր աշխարհը, որի մեջ տեղ չկա ո՛չ մի արտոնչության, ո՛չ էլ մարդու կողմից մարդու ամենափոքր հարստահարման»: Կատարենք մի մեջ-բերում նա:

«Մենք ազգային թշնամության,— գրել է Վ. Ի. Լենինը,— ազգային պատակաման, ազգային առանձնացվածության հակառակորդներ ենք»: Եվ այնուհետև. «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպեսի միություն, որը ո՛չ մի քանու-

թյուն չլիուլլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպեսի միություն, որը հիմնված լիներ ամենալավ լատահայության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համամայնության վրա»¹:

Կոմունիզմի կառուցման պայմաններում ազգային կուլտուրաների աճը կարևոր առանձնահատկություններից մեկն է և այլ կերպ է լուծվում գրանց հետադա զարգացման հարցը: «Կոմունիստական հասարակարգի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում,— ասված է Մրազրում,— տեղի ունեցող կուլտուրական զարգացումը կհանդիսանա կուլտուրական մեծ ունյույցիայի եղբայրակիչ կատար: Այդ ձտուպում ապահովվում է բոլոր անհրաժեշտ քաղաքական ու կուլտուրական պայմանների ստեղծումը կոմունիզմի հաղթանակի համար...»:

Կոմունիզմի կուլտուրան իր մեջ կուտակելով և զարգացնելով լավագույն այն ամենը, ինչ ստեղծել է համաշխարհային կուլտուրան, կնշանավորի մարդկության կուլտուրական զարգացման նոր, բարձրագույն աստիճանը: Նա կմարմնավորի հասարակության հոգևոր կյանքի ողջ բաղմադանությունը և հարստությունը, նոր աշխարհի բարձր քաղաքադանությունը և հումանիզմը: Դա կլինի անգասակարգ հասարակության, համաժողովրդական, համամարդկային կուլտուրա:

Հայտնի է, որ իմպերիալիզմի գաղափարախոսություն մունտրիկները որդեգրել են այսպես կոչված «համամարդկային» կուլտուրայի լոզնգիզը, հակադրելով այն «ազգային» կուլտուրային, որպեսզի զրանով հող ստեղծեն տարբեր ազգերի կուլտուրաների զարգացման անհրաժեշտությունը հերքելու համար: Մինչդեռ պատմությունը սպառնացում է, որ ոչ մի համաշխարհային, համամարդկային կուլտուրա չի կարող զարգանալ առանց ազգային կուլտուրայի: Այն կարող է զարգանալ ազգային կուլտուրայի զարգացմանը զուգակցվելով: Դրա վրա ապացույցը ՄԱՄԲ ժողովուրդների և ազգերի կուլտուրաների զարգացման է, որնեջ միջոցով նրանք հարդարակից են լինում համամարդկային կուլտուրային:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 19, էջ 503:

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 367—368:

Ինչպես միշտ, կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում նույնպես սովետական կուլտուրան չի պահանջավորվում համաշխարհային համամարդկային կուլտուրայից: Պարտիան անհրաժեշտ է համարում մարդկանց համակերպել, էլ ավելի մտահեցնել համամարդկային կուլտուրային: Ենթադրելի, Վոյտերի, Բախի, Բեթհովենի, Բերլիոզի, Պուշկինի, Գլինկայի, Չայկովսկու, կապիտալիստական երկրների ժամանակակից շատ առաջգիմնական ստեղծագործողները, ինչպես նաև ռուս մեծ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ազգերի և ժողովուրդների կուլտուրայի բարձրարժեք ստեղծագործությունները միշտ էլ վատ արձագանք են գտնում սովետական մարդկանց սրտերում:

Անցած բոլոր տարիների ընթացքում հայ գասական և ժամանակակից գրողների բազմաթիվ ստեղծագործություններ թարգմանվել ու հրատարակվել են ոչ միայն վրացերեն և ադրբեջաներեն, այլև ռուսերեն ու Սովետական Միության մյուս ազգերի լեզուներով: Իրենց հերթին հայերեն թարգմանվել են ռուս և մյուս ազգերի գրողների երկերը:

Նույնպես սերտ կապ գոյություն ունի թատրոնի, երաժշտության, կինոարվեստի, կինոարվեստի և մյուս քնազավառների: Այսպեսով ստեղծվել է սովետական կուլտուրաների սերտ համագործակցություն, կուլտուրաներ, որոնք սոցիալիստական դարաշրջանում աճում և զարգանում են ստեղծագործական փորձի փոխազդեռ յուրացման, հարստացման միջոցով: Այդ պրոցեսը, նրանց մերձեցման ճանապարհին, օգնում է յուրաքանչյուրին՝ ավելի վառ կերպով դրսևորելու իր կուլտուրայի ինքնատիպությունը:

Սովետական Միության ժողովուրդների կուլտուրական համագործակցությունը և փոխազդեցությունը զարմել է ազգային կուլտուրաների առաջդիշ ուժը: Նրանց առավել մերձեցումը կոմունիզմ կառուցող մեր ժողովուրդների կարևոր հատկանիշներից մեկն է: Փոխազդեցությունը և փոխհարստացումը գրանորվում են ոչ միայն միմյանց գործերը թարգմանելու, թատրոնների, փոխայցելության, համերգային խմբերի համատեղ ելույթների, կերպարվեստի միացյալ ցուցահանդեսների,

կինոֆիլմերի համասեղ արտադրության և այլ փաստերով, այլև այն բանով, որ սոցիալիստական մի ազգի կուլտուրայի գործիչներն իրենց ստեղծագործություններում ավելի ու ավելի են արտացոլում մյուս ազգերի աշխատավորների կյանքը: ՍՍՍՄ բոլոր ազգերի և ժողովուրդների կուլտուրաները հարազատանում են միմյանց սոցիալիստական բովանդակությամբ, կոմունիզմի կառուցման վե՛հ զաղափարներով:

Ն. Ս. Խրուշչովը նշում է. «Մեր երկրի ազգերի և ազգությունների մերձեցմանը նպաստում են նաև կուլտուրական շինարարությունը, զաղափարական աշխատանքը: Ուժեղանում է Հոգևոր հարստությունների փոխանակումը նրանց միջև: Մի ազգի կուլտուրայի նվաճումները գտնում են մյուսների սեփականությունը: Իրա շնորհիվ փոխազդեցությունը հարստանում են ՍՍՍՄ ժողովուրդների կուլտուրաները, ամրապնդվում է զրանց ինտերնացիոնալ հիմքը, ձևավորվում է կոմունիստական հասարակարգի ապագա միասնական համամարդկային կուլտուրան:

Ազգային կուլտուրայի ձևերը ցարացած չեն մնում, այլ կատարելագործվում են, շքանում են հեացած, կոմունիստական շինարարության խնդիրներին համապատասխանող ձևեր, ծագում են նոր ձևեր: Գրականության և արվեստի մեջ ազգային արտոգիցիաների և տարրերի օգտագործումը միանգամայն քնական է: Բայց մենք հաճախ նաև ժայռահեղությունների ենք հանդիպում այդ քնազավառում: Այսպես, ճարտարապետության մեջ երբեմն դարերի խորքից հանվում ու գործածության ապարեղ են զուր րեկվում նաև այնպիսի սկզբունքներ, որոնք ամենին էլ չեն համապատասխանում մեր ժամանակի մարդկանց կյանքի պայմաններին ու պահանջներին: մինչդեռ ապագան պտտկանում է արվեստի միայն այն սկզբունքներին ու ձևերին, որոնք համապատասխանում են ժամանակակից զարաշրջանին»:

ՍՄԿՊ նոր Սրագրում րեուիարված է համաժողովրդական, համամարդկային կուլտուրայի ձևավորման պրոցեսը, սովետական բազմազգ կուլտուրայի զարգացման հեռանկարները: Եթե նախկինում այս կամ այն ազգի թատերական,

երաժշտական կուլտուրայի զարգացման ոճին խորթ էին համարվում ուրիշ ազգերի ոճը, սիմֆր, եղանակը, արտահայտչականները, ապա այժմ այլ սկզբունքներ են գործում: Այդ տարիներում շարժառիթն այն է, որ ՍՍՍՄ ժողովուրդները ապրում են միասնական կյանքով, մարդկային համընդհանուր շահագրգռումներով ու եղբայրական ամուր բարեկամությամբ: Նրանք մշտապես շփվում են իրար հետ ինչպես տնտեսական, այնպես էլ կուլտուրական բնագավառներում: Այժմ ստեղծվում են բոլոր պայմանները ժողովուրդների կուլտուրաների միջև եղած անընդհատ դիտարկելու և նրանց մերձեցնելու համար:

Մահայն Սովետական Միության մեջ միավորված յուրաքանչյուր ժողովրդի գրականությունը և արվեստը ունի իր ազգային ձևը, իր առանձնահատկությունները, որով նա տարբերվում է մյուս ազգերի գրականությունից և արվեստից՝ հարազատաանախով մյուսների հետ գաղափարների ընդհանրությամբ: Գրականության և արվեստի մեջ ազգային ձևը հանդիսանում է նրա սոցիալիստական բովանդակության օճայնատական գրանդամանը: Տվյալ ազգի գրողի լեզուն ու ոճը հատկանշական են այդ ազգի միջավայրի հետ և իրրև ձև տարբերվում են բովանդակությամբ նման բոլոր այլ միջավայրերից:

Ազգային կուլտուրաների փոխազդեցությունը, նրանց մերձեցումը դեռևս չի նշանակում, որ պետք է համահարման նկատմամբ տարբեր ազգերի, ասենք, երաժշտարտահայտչական միջոցները: Ազգային կուլտուրաների մերձեցումը պետք է տեղի ունենա նոր, առաջդիմական արտադրյալների հիման վրա, միաժամանակ հաղթահարելով հնացած, իրենց դարն ապրած արտադրյալները, նախապաշարումները: Բոլոր դեպքերում էլ այն ստեղծագործություններն են առավել լայն մասսայականություն գտնվելու, որոնք հասկանալի են գրողներում ոչ միայն այս, այլև մյուս ազգերի համար, միաժամանակ պահպանելով իրենց առանձնահատկությունները և ազգային հիմքը: Այսպես, օրինակ, Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները մերտորեն կապված են հայ ժողովրդի երաժշտական կուլտուրայի հետ, բայց բարձր վարդապետությամբ են գրված և արժեքավորվում են իրրև համամարդկա-

յին նշանակության գործեր և ընկալելի են նաև մյուս ժողովուրդներին: Վկայաբարձր բազմաբ, շնայած հայկական կյանքի արտացոլում, սակայն նրա մեջ օգտագործվում են հայկական մտայինը, որոնք մասնաշիկ են բուրգին: Այդպիսին են Գիմարի Շոտաևիճիլի, Կարա Կարանի, Ալեքսի Մաճախարհաևու, Շաբլև Մշվելիճիկ, Օթար Քարթաթիլիլու, Անտ Բարաշանյանի և շատ ուրիշների ստեղծագործությունները:

Սովետական բազմազգ կուլտուրաների զարգացումը տեղի է ունենում մեր ամբողջ հասարակության միասնական նպատակները արտացոլման ճանապարհով: Կոմունիստական հասարակության միասնական կուլտուրայի ձևավորումը տեղի կունենա ՍՍՍՄ բոլոր ազգերի ու ժողովուրդների կուլտուրաների փոխհարստացման ճանապարհով: Այդ կուլտուրաների ծագման հիմնական պայմանն է հանդիսանում նրանց մերձեցումն ու փոխհարստացումը:

Վաղմիր Սուրյախյան «Լիտերատուրնայա դազետա»-ում սպագրած իր «Ենչ է մեզ հարազատացնում» հոդվածում քննադատելով այն տեսակետները, ըստ որոնց ազգային կուլտուրաների մերձեցման նպատակը հենց ազգային տարբերությունների վերացումն է, նշում է, որ «զարգացումը այն չափով է հետաքրքրական նաև այլ ժողովուրդների համար, այն չափով է նա ինտերնացիոնալ ու միջազգային, ինչ չափով արտահայտում է ամենից առաջ իր ժողովրդի հոգին ու բովանդակությունը» և որ «միասնական ինտերնացիոնալ կուլտուրայի ձևավորումը... հաղթի թե քնքնանա մակահավասարեցման ուղիով, երաժշտության, լեզվի, ազգային արտադրյալների, ազգային առանձնահատկությունների, ազգային կուլտուրայի օչնազնեկու ուղիով...»:

Մարյանի և Պլաստովի նկարները նման չեն իրար, նրանք տարբերվում են իրենց ազգային առանձնահատկություններով, ազգային կուլտուրով, բայց նրանց միջև կա մի ընդհանրություն, որը հարգատեցնում է նրանց: Դա կյանքի հանդեպ այդ նկարիչների ցուցաբերած լավատեսական ու պայծառ աշխարհայեցողությունն է:

«Միասնական աշխարհայացք», — այնուհետև հիշտ ընդգը-

ձում է Սոլովյովները.— Կո՞նք թե ինչ է նշանակում միասնական կուլտուրա, մեր՝ ավիետական սոցիալիստական կուլտուրան... Ուրեմն միասնական ինտերնացիոնալ կուլտուրա կերտելու համար պետք է մտածել մարդկանց մեջ միասնական, ինտերնացիոնալ աշխարհայացք դաստիարակելու և ոչ թե ազգային կրունդը շնչելու մասին»:

Միանգամայն սխալ է ազգային գեղարվեստական կուլտուրայի առաջավոր արդիցիցիանների ժխտումը, Արվեստի և կուլտուրայի շուրջաբանչուր ստեղծագործություն ունի իր հայրենիքը: Բայց նա հասցեագրվում է ողջ մարդկությանը, ծառայում մարդկային ընդհանուր իդեալներին:

Սոցիալիզմի կատուցման բոլոր էտապներում կարևոր հարց է հանդիսացել, թե ինչ ձևով պետք է արտահայտվի սովետական բազմազգ ժողովուրդների նոր, սոցիալիստական կուլտուրան: Պարտախնդիր դրան ավել է պարզորոշ պատասխանս ելնելով լեհինյան ցուցումից այն մասին, թե ազգային առանձնահատկությունները դեռ կրկար ժամանակ կպահպանեն իրենց նշանակությունը, պարտիան անհրաժեշտ է համարել զարգացնել սոցիալիստական կուլտուրայի ազգային ճյուղերը: Կոմունիստական պարտիայի այդ քաղաքականությունը շարժախիչ հարված հասցրեց այն արամազործություններին, թե սոցիալիզմը հանգեցնում է ազգային առանձնահատկությունների ոչնչացմանը, և որ ազգային կուլտուրայի դարգացման լուզանքը բուրժուական էաջիոնալիզմի մենաշնորհ է:

Թե ինչպիսի լայն թափով են դարձանում փոքր ժողովուրդների ազգային կուլտուրաները, և ինչպիսի փոխհարաբերության մեջ են գտնվում նրանք, ակնհայտորեն կրկնում է հայ վրաց և ադրբեջանական ժողովուրդների կուլտուրական կյանքի ստորլայինը:

Երեք ժողովուրդների կուլտուրաների մերձեցման պրոցեսը այսօր բնթանում է նաև այդ ժողովուրդների կյանքի փոխազարմ արտացոլման միջոցով: Այդպես է կղել նաև անցյալում: Հայ, վրաց և ադրբեջանցի դասական գրողների ստեղծագործություններից կարելի է բերել բազմաթիվ օրինակներ, որոնք ցույց են տալիս, թե ինչպես դասական այդ գործերում

իրենց արտացոլումն են դռել հայերի, վրացիների և ադրբեջանցիների միասնական պայքարը ներքին հարստահարչների և օտարերկրյա զավթիչների դեմ, ինչպես նաև անդրկովկասյան ժողովուրդների միահամուռ պայքարը՝ նոր կյանք կառուցելու համար: Եահերի այդ ընդհանրությունը աստիճանաբար ավելի ու ավելի հոգեհարազատ է դարձրել անդրկովկասյան ժողովուրդներին:

Այսպես, ադրբեջանցի գրող Օրդուբադիի «Մուշապատ Թավրիզ» վեպում ցույց է արված, թե ինչպես են ադրբեջանցիների հեռ միասին պարսկական բռնակալության դեմ պայքարել հայ ժողովրդի ներկայացուցիչները: Միջուկ Բարսիլի մոլի «Կզա օրը» վեպում պատկերվել է նաև հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչների պայքարը՝ հանուն Հալափային Արարիայի և Բրանի աշխատավորության ազատագրման: Ս. Ալբրոունի «Վաղեֆ» ստեղծագործության մեջ արտացոլվել է ադրբեջանցիների, հայերի և վրացիների համատեղ պայքար բռնակալ շահ Ադա Մահմադ խան Կաշրիի դեմ: Սովետահայ գրող Գ. Գեմիթճյանը իր «Քաշիզ», «Նիդար» երկերում պատկերել է ադրբեջանական ժողովրդի կյանքի ու պայքարը, իսկ Վ. Քոթայկենցը իր «Բարու» պատմա-անոլյուցիան վեպում արտացոլել է Բարձի տարրեր ազգերի բանվորների միասնական պայքարը տերերի դեմ (Վասիլի Պրոկոֆյեր, Վիրաբ, Բյարիմը, Բոյոպակներ և ուրիշներ): Այսպես է կղել այդ ժողովուրդների անոլյուցիան անցյալում, այդպես է և հիմա կոմունիզմի համար նրանց մղած համատեղ պայքարում:

Բուլտոլյին վերջերս ն. նարիմանովի «Բահաուտուր և Սոնա» վեպակի ծախվելով Ա. Ալեքսիերովը գրել է «Բահաուտուր և Սոնա» օպերան, որը նվիրված է ադրբեջանցու և հայի ջերմ սիրո զովնրմանը:

Նվ ընդհանրապես, Սովետական Միության բոլոր ազգերի և ժողովուրդների կուլտուրաների մերձեցումը իրականանում է նաև ստեղծագործական փոխազդեցությունների միջոցով, մի կրկնվել, որը սակայն դեռևս բաղձակողմանի ուսումնասիրության չի ենթարկվել:

Նախատվետական շրջանի հայ-վրացական թատերական

կապերի մասին խոսելիս մենք հիշեցինք վրաց առաջավոր գործիչների մտքերն այն մասին, որ հայ մեծանուն գրամտաւոր Սունգուլյանի ստեղծագործութիւնները միշտ էլ լայն տեղ են գրավել վրացական թատրոնների սեպտորուարներում, որ Սունգուլյանի հանդես զարկ վրաց թատրոնի համար են և Կոխայի նշանակութուն է ունեցել: Կարելի է ասել, որ Սունգուլյանի գործերի բեմադրութիւնները վրաց թատրոններում հնարավոր են դարձել ամենից առաջ հայ դերասանների մշակած կատարողական արտահայտչական յուրօրինակ փոխանցման շնորհիւ: Դա պետք է բացատրել այն բանով, որ եղբայրական վրաց ժողովրդի բեմի վարպետները Սունգուլյանի պիեսները սկսել են խաղալ այն բանից հետո, երբ հայ դերասանները սունգուլյանական կերպարների կերտման որոշակի փորձ ունեին, նրանցից ոմանք, որպէս այդպիսիք՝ համբավ էին վայելում (Վեորդ Չմշկյանը՝ Պեդո և Օսկփ, Միշրգաստ Ամերիկյանը՝ Զամբախով և Զիմպիմով, Սաթնիսիկ Չմշկյանը՝ Կեկե, Վեորդ Միրազյանը՝ Գիգո և այլն): Եվ բոլորովին էլ զարմանալի չէ, որ նրանց զերակատարումները տեսած վրաց այն դերասանները, որոնց վիճակվել է խաղալ Սունգուլյանի պիեսներում, խաղի որոշ ձևեր, մեկնարանումն որոշ մոտենաներ ստեղծագործութուն փոխ են առել ու վերամշակել իրենց զերակատարումների մեջ (օրինակ, Վաստ Արաշիան, Վ. Գունեան, Իմեդաշվիլի, Կասո Ղեփիանի, Մաշարեփի, Գարունիա Ճազարեփի և այլոք): Բայց դա տեղի է ունեցել փոխադարձաբար: Այսպէս, երբ ներկայացրել են վրաց գրամտաւոր գեներլ պիեսները, հայ դերասանները որոշակի փոխառումներ են կատարել վրաց նշանավոր արտիստների խաղարվեստից: Ա. Ճազարեու հասկապես «Խանուս» և «Միրթականք» պիեսները քանիցս բեմադրվել են հայկական թատրոնների կողմից և այդ պիեսների հայ զերակատարները՝ Վարդուհի, Գեղեղն Միրազյանը, Վեորդ Փիրումյանը, Վարդուհի Մելիքյանը, Հասմիկը, Գովիթ Գուլպանը, Արշակ Հարությունյանը և ուրիշներ շատ բան են սովորել վրաց նշանավոր վարպետներից:

Հասկանալի է, որ փոխազգեցութիւն և փոխգործունեու-

թյան ընթացքում մի սերնդի կատարածը ժառանգարար տեղի է հաջորդ սերունդներին: Այդ պրոցեսը հասել է սովետական թատրոն և ուլիկի ընդլայնվել, մասնավորապէս որ սովետական շրջանում մեր ժողովուրդների կուլտուրաների շփումը, նրանց փոխհարստացումը ստացել է բոլորովին նոր խմատ, նոր բովանդակութիւն:

Սովետական արդիների հայկական թատրոններում բեմադրվել են վրաց բազմաթիւ պիեսներ: Գրանց մեջ աչքի ընկնող տեղ է գրավել Ս. Շանշիաշվիլու «Արսեն» պիեսը: Երբ այն բեմադրվելու էր Երևանի թատրոնում, նրա հիմնական զերակատարները կզան Քրիլիխով, դիտեցիս վրաց թատրոնի բեմադրութիւնը և ինչ խոսք, վրաց բեմի վարպետներից շատ բան յուրացրին:

Փոխազգեցութիւն այդ պրոցեսը տեղի է ունեցել նաև հայ և արքերեանական թատրոնական գործիչների փոխազգարձ շրփման ընթացքում: Անդրկովկասի ժողովուրդների թատրոնների պատմութիւնից հայտնի է, որ աղբրեչեանական թատրոնական կուլտուրայի հանրահաստ ներկայացուցիչը՝ Արարիկեան, Արիկեանին համարել է իր ուսուցիչը, շատ բան նրանից ուսանելով: Եվ զարմանալի չէ, որ Օթիկոյի նրա կատարումը կրել է Արիկեանի Օթիկոյի ազդեցութիւնը:

Վերջերսքս ա՛նս սովետական շրջանը: Աղբրեչեանական բեմի ստացանգավոր զերասան Գարստանլին, որ կրկար տարիներ ուշխատել է նաև Երևանի աղբրեչեանական թատրոնում, կերտել է Օթիկոյի կերպարը՝ բարերար ազդեցութիւն կրելով Վ. Փափաղյանից:

Հայ թատրոնը ի թիվս աղբրեչեանական բազմաթիւ պիեսների բեմադրել է ևս «Սեի» պիեսը: Այդ պիեսում Աղբրեչեանի հայտնի զերասանուհի Մարդիա խանում Գալուզովան կերտել էր Սեիլի սրտելիլի կերպարը: Մարդիա խանումը իր զերակատարումը աղբի էր Արտս Ոսկանյանի և Փասմենի զերակատարումների վրա: Պետք է նկատել, սակայն, որ բոլոր զեպերում էլ փոխազգեցութիւնը միակողմանի չի եղել: Ինչպէս տեսանք, մեզ մտա ՍՄՄ-ում այժմ տեղի է ունենում ոչ թե կուլտուրական արժեքների հասարակ փոխանակութիւն,

այլ խեղճան փոխառուցում և մերձեցում: Այդ պրոցեսի փայլուն օրինակներից մեկը կարող է ծառայել Բարձր Նրա-
վարական կոմեդիայի թատրոնի կողմից բեմադրված Ջրաշ-
լանի «Երազիկ» օպերետը: Թատրոնի շնորհալի կոլեկտիվը
այնպես է բեմադրել հայ հեղինակի գործը, որ այն ընդուն-
վում է ազդրեչանական հանդիսատեսի կողմից նույն խանդա-
վառությամբ, ինչպես որ այն ընդունում է հայ հանդիսա-
տեսը:

Ինչպես արդեն ասացինք, Անդրիովիասի ժողովուրդների
փոխմերձեցումը, երանց եղբայրական համագործակցություն-
ը ամրապնդվել է նաև երաժշտական մշակույթի բնագավա-
ռում:

Անդրիովիասյան ժողովուրդների երաժշտական հոգեմա-
րագատությունը արտահայտվում է նաև երանով, որ ասե՛նք
Փայիշվիլու և Հաջերիկովի ստեղծագործությունները մեծ ըն-
դունելություն են դառնում և ժողովրդայնություն են վայելում
հայ ժողովրդի մեջ. Սպենդիարյանի ստեղծագործությունները
չեմոսբեն են ընկալվում Վրաստանում, Աղբրեչանում և մյուս
վայրերում:

Ե. Ասլանաշվիլին իր «Երաժշտական ժառանգության
պորբլեմները Վրաստանում» աշխատության մեջ գրում է.
«...Արացական քաղաքային ժողովրդական երաժշտությունը
սերտ փոխհարաբերության մեջ գտնվելով Հայաստանի և
Աղբրեչանի հարևան ժողովուրդների հետ, ստեղծագործորեն
վերցրել և ինքնատիպորեն յուրացրել է այդ ժողովուրդների
երաժշտության արտահայտչական այն որոշ պրիոմները,
որոնք նպաստում են վրացական քաղաքային երգի թեմանե-
րին ու կերպարներն առավել ցայտուն արտահայտելուն...
Վրացական քաղաքային ժողովրդական երգի պատմական
զարգացման բուրբ շեշտերից պետք է առանձնապես նշել այն
երգերը, որոնք մեջ երևան են դալու Վրաստանի սերտ շփու-
մը Աղբրեչանի և Հայաստանի հետ: Սա կոնկրետ գրանւորում
է երեք ժողովուրդների բարեկամական այն փոխհարաբերու-

թյան, որը խոր պատմական հնութուն ունի և որն ավելի ու
ավելի ամրապնդվում է սովխական շրջանում»¹:

Մայսթ-Նովայի երգերը և հայկական շատ ուրիշ երգեր
սիրով երգվում են անդրիովիասյան բուրբ ժողովուրդների
կողմից: Վրացական երաժշտական գրականության մեջ նշվել
է, որ «Հորովչյան» և «Եմալ նանան» հայերի, վրացիների և
աղբրեչանցիների համար հարգատա մեղեդիներ են դեռևս խոր
հնութունից:

Գեռես 1850 թվականին առական «Կավիզա» թերթում
սպառնալ է մի հոդված, որտեղ հեղինակը պատմում է Ան-
դրիովիասի ժողովուրդների այն ժամանակի կայսուրական
կենցաղում երևացող ընդհանուր հակումների մասին և կանց
է ասելու նաև երգերի յուրօրինակ փոխանակման մասը: «Այդ
երգերի խառնուրդը,— գրում է հեղինակը,— այնքան սովորա-
կան է, որ շատ հաճախ վրացին կամ հայը բեֆի թունդ պա-
հին կամ մենակության րուկներին սրտի ամբողջ շեմությամբ
թուրքական (աղբրեչանական—Ա. Ե.) երգ է ասում: Հետևա-
բար, այդ փոխադարձ ինտերացիոնալ կապը մենք երեք
չպետք է անտեսենք»:

Հայտնի է, որ ժողովրդական շատ մեղեդիներ հավասա-
րապես օգտագործվում են հայ, վրաց, աղբրեչանական և մյուս
ժողովուրդների կամպոզիտորների կողմից: Օրինակ «Ենկի
ժառոչ», «Սուլիսին» և այլն:

Ինու հայտնի կոմպոզիտոր Մ. Իսպոլտովով-Իվանովը
գրել է «Կովիասյան էսթիլներ» օգտագործելով զեյթունցիներ
ի հանրահայտ քայլերը, իսկ «Հայկական ապստողայնում»
օգտագործված է «Միծենակը»: Կամպոզիտոր Կաղաչենկոն
մշակելով հայկական յուր ժողովրդական երգեր, ստեղծել է
իր սիմֆոնիկ «Հայկական սյուիտը»: Արամ Խաչատրյանը
ստեղծել է սիմֆոնիկ լեզիբիկանը՝ «Փայաննա րայետում» և
պարային սյուիտայում, իսկ իր գաշնամուրի կոլեկցիոնում
անմահացրել է Ավարայի երգը, որ Թրիլիսիի երաժշտական

¹ «Երաժշտությունը և երաժշտական քննադատությունը Անդրիովիասի
նկատարիկներում», ժողովածու, Մոսկվա, 1956, էջ 109—112:

Ֆուլիորում հավատարապես հարազատ է եղել և՛ հայերին, և՛ վրացիներին: Աղբյուրներին միանգամայն հարազատ համարելով՝ Ս. Ռուստամովը իր կազմած ժողովածուի մեջ մտցրել է նաև Սալաթ-Նովալի բժանի վուր ջան իմ՝ երգի եղանակը:

Ա. Տեր-Ղևնդյանը «Զախարի Փալիաշվիլու մասին» գրած իր հոդվածում նշել է, որ Փալիաշվիլին հայաստապետ հետաքրքրվել է և լավ տեղյակ է եղել ինչպես վրաց ժողովրդի, այնպես էլ մյուս եղբայրական ժողովուրդների հրաժշտական Ֆուլիորին, խորապես ուսումնասիրել է ժողովրդական երգերի մշակման եղանակները: Շատ երգեր վարպետորեն մշակել է ինքը և օգտագործել իր օպերային և կամերային ստեղծագործություններում¹:

Եվ դա հասկանալի է, սրովհետև անգրկովկասյան ժողովուրդների հրաժշտական ստեղծագործության մեջ ընդհանուր շատ բան կա: Օրինակ, հայիական որոշ «Հորովիկներ» իրենց հնչունայնությամբ հնչելիքում են վրացական «Արումլիները»: Այս ամենը, իհարկև, չի նշանակում, որ գոյություն չունեն և առաջիկայում նույնպես չլիցաք էլ գոյություն ունենան մեկ ժողովրդի հրաժշտությունը մյուս ժողովրդի հրաժշտությունից տարբերող առանձնահատկություններ: Քառարևի, հրաժշտություն և կերպարվեստի քննազայնում եղած փոխազդեցություններն արժանանք ունեն: Բայց ազգային կուլտուրաների տարբերման հարցը այժմ այլ կերպ է զրկում, քան սովետական կարգի հաստատվելուց առաջ: Ամեն մի ժողովուրդ ունի իր ինքնուրույն հրաժշտական լեզուն, որն այժմ դնալով էլ ավելի է զարգանում:

Ենզիբր նաև նրանումն է, որպեսզի հարևան, եղբայրական ժողովուրդների հրաժշտական հարստությունները լայնորեն օգտագործվեն, այժյալ ազգի ոճին ենթարկվին, ազգային ձևերով վերամշակվին: Գրանուսն էլ պետք է տեսնել փոխհարստացման, մերձեցման պրոցեսներից մեկը:

Երաժշտագետ Ռ. Աթայանը միանգամայն ճիշտ է նկատում,

սում, որ «հայ ժողովուրդը շատ է սիրում և հաճախ կենցաղում կատարում է աղբյուրանական ժողովրդական և պրոֆեսիոնալ երգեր: Հայաստանի քրդական դառնում կարելի է լսել հայ ժողովրդական երգեր, որոնք կատարում են քրդերեն: Մենք հաճախ ազդեցով լսում ենք հայ ժողովրդական երգերը նաև աղբյուրաններն, ընդ որում աղբյուրանական անսամբլների և մեներգիչների կատարման ազգային մասներայի հետևանքով դրանք ձևեր են բերում աղբյուրանական ժողովրդական ոճի որոշ գծեր: Այսպիսի երևույթները պետք է դիտել որպես եղբայրական ժողովուրդների կուլտուրաները փոխադարձաբար հարստացնող, միմյանց մերձեցնող գործոններ»²:

Այսպիսով, տեղի է ունենում ժողովուրդների կուլտուրաների փոխհարստացում՝ նրանց մերձեցման ընթացքում:

Այժմ կոմունիստի ժալալուն կառուցման ժամանակաշրջանում էլ ավելի լայնորեն է ընթանալու ժողովուրդների կուլտուրաների փոխհարստացումը: Այդ պրոցեսը, ինչպես տեսնեք, տեղի է ունենում երկակի ձևով՝ ազգային կուլտուրաների ծաղկումը, մի կողմից, նրանց մերձեցումը՝ մյուս կողմից: Բայց այդ պրոցեսները մեկուսացված չեն, այլ գործում են մեկ միասնությամբ:

Ինչպես Ն. Ս. Խրուշչովն է նշում, մեր երկրում տեղի է ունենում ազգերի մերձեցման պրոցես, ուժեղանում է նրանց սոցիալիստական համասեռությունը: Կոմունիստի ժալալուն կառուցման ընթացքում ձևեր կրելով ազգերի լիակատար միասնություն: «Բայց այն բանից հետո էլ, երբ կոմունիստի շնչունակում կառուցված կլինի, զեռ վազածամ կլինի ազգայնորեն ազգերի միաձուլման մասին: Լենինը, ինչպես հայտնի է, Եասաննշում էր, որ պետական ու ազգային տարբերությունները զեռ երկար գոյություն կունենան սոցիալիզմի հաղթանակից հետո բոլոր երկրներում»²:

Այդ երկու պրոցեսների զարգացումը բերում է կուլտուրա-

1 Ռ. Աթայան, Հայ ժողովրդական հրաժշտության ուսումնասիրություն մի քանի հարցեր, «Մատենադարան» հանդես, Երևան, 1961, էջ 50:
2 Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Սրբոգի մասին, 1961, էջ 112:

1 Տե՛ս «Սովետական արվեստ», 1961, № 2.

ների փոխհարստացում մատրոնի, երաժշտության, կերպար-
վեստի, կինոարվեստի և մյուս ընագավաններում: Ազգային
կուլտուրաների մերձեցումը չի նշանակում նրանց մահացում,
ընդհակառակը, մերձեցումը չի կարող տեղի ունենալ առանց
ազգային կուլտուրաների լրիակատար ծաղկման:

Ազգային ձևերը գնալով կերպարանափոխվելու են, մերձե-
նալու են, ազատվելու են աչք ամենից, ինչ հնացած է և հա-
կատում է կոմունիզմի կառուցման նոր պայմաններին: Այդ
պրոցեսը տեղի է ունենալու բոլոր ազգերի կուլտուրաների
զարգացման ընթացքում՝ կոմունիզմ կառուցող մարզկենտրոն-
տերևաշրջոնալիզմի, կոմունիստական հայրենասիրության
ոգով դաստիարակելու և նացիոնալիզմի ամեն մի գրեկորման
զեմ անաշու պայքարելու միջոցով:

Երբ կոմունիստական պարտիան վարում է ազգերի ինքնո-
րոշման և քարեկամության լինելյան քաղաքականություն, ապա այդ արվում է այն նպատակով, որպեսզի սոցիալիստա-
կան ազգերի զարգացման միջոցով նպաստի, աշակցի ազգե-
րի համերաշխությունը և զբաղով իսկ մեկ ազգին մոտեցնելով
մյուսին, էլ ավելի արագացնի նրանց մերձեցումը, ավելի շուտ
հասնի նոր, բարձր հասարակարգի կառուցմանը:

Երբդրում ասված է, «Որքան սերտ լինի ազգերի շփումը և
սրբան բարձր լինի համաժողովրդական խնդիրների ըմբռնու-
մք, այնքան հաջողությամբ կհաղթահարվեն տեղայնության և
ազգային էգոիզմի գրեկորումները»:

Ինչպես ասված է ՄՄԿՊ Երազում, պարտիան թույլ չի տա
ազգային առանձնատկուցմունքների ոչ անտեսում և ոչ էլ
գերադասահատում, քանի որ յուրաքանչյուր ազգի մարդկանց
հայրենասիրական զգացմունքները ոչ թե հակասում, այլ
երգանապես դուրակցվում են, ընդհանուր դասում մյուս
ազգերի հայրենասիրական, իմտերեսցիոնալ հաշտցեցե-
րի հետ:

Կոմունիստները չեն կոնսերվացնի և հավիժմացնի ազ-
գային տարրերությունները: Մենք կաշակցենք ազգերի և ազ-
գությունների ավելի ու ավելի սերտ մերձեցման օրբեկտիվ
պրոցեսին, որը կամավորության ու զեմոկրատիզմի բաղաչի

վրա տեղի է ունենալու կոմունիստական շինարարության պայ-
մաններում»:

Պարտիան հաստի ուշադրությունը է վերաբերվում յուրա-
քանչյուր ժողովրդի ազգային և պատմական՝ առանձնահատ-
կություններին, նա բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների վերա-
բերյալ հանգեմ է բերում հարգանք: Սովետական Միություն-
ում ամեն մի հարց լուծվում է բոլոր մեծ ու փոքր ժողովուրդ-
ների իրավահավասարության սկզբունքի հիման վրա:

Բոլոր ժողովուրդների ազգային կուլտուրաների անաղքեկ
զարգացումը պրոլետարական ռեւոլյուցիայի ստեղծած հիմ-
նական նվաճումներից մեկն է եղել: Իսկ այժմ այդ կուլտու-
րաների հիմնական նպատակն է օժանդակել կոմունիստական
հասարակարգի կառուցմանը, նրանք իրենց բովանդակու-
թյամբ սոցիալիստական, ինտերնացիոնալ կուլտուրա են ու
նրանցում արտահայտվում է սոցիալիստական բոլոր ազգերի
նյութական և հոգեոր շահերի միասնությունը, այն է՝ կուլտու-
րաների փոխօրնությունը, համադրածակցությունը, փոխհա-
րստացումը, մերձեցումը, որը կազմում է մեր հասասակար-
գի կարևոր առանձնատկուցումը: ՄՄԿՊ ժողովուրդների
կուլտուրաները իրենց ձևով միաժամանակ ազգային են, քա-
նի որ նրանք համապատասխանում են տարրեր ժողովուրդ-
ների պատմական և ազգային առաջավոր առանձնատկու-
թյաններին:

Ժամանակակից բուրժուական կուլտուրայի հոգեոր աղքա-
տության արտահայտություններն են ամեն տեսակի անար-
վեր փեսիզմը, գանգստերական ֆիլմերը, անարյուն, միմեզ-
նուդ, ռիթմիկ ջազային եղանակները, էժանագիև երաժշտու-
կան գործեր և այլն, որոնք ծառայում են ռեակցիային և
մարդատյացությանը: Տեղին է այստեղ նշել, որ ժամանակին
Մ. Գորկին իր «Հաստերի երաժշտության մասին» պամֆլի-
տում հետևյալն է գրել.

«Ուշ-մարդկային բասը անզլիական բառեր է մըմում, խը-
լացնում է ինչ-որ վայրի փող՝ կերից զրկված ուզտի մենչոց

հիշեցնելով, հանդում է բնորոշը, ճշում է գորշնի շվին, ա-
կանը խայցնելով կոնշում և անգախոսի նման շշում է սարսա-
ֆոնը: Ծննդով լազ գիտաբան, քստացնում և դսփում են հա-
զարավոր, տաննայկ հաղարավոր շաղ ոտքերս Կերտպես,
հաստերի համար երաժշտությունը կերտանում է աշնպիտի
խաղնոզ Շնդշյունով, կարծես թե երկնիքից գետին գցեցին օ-
մանկնկնով ի մի արկոզ:

Ժխտելով անցյալի մեծարժեք կուլտուրան, ժամանակակից
ամբրիկյան գործարարները ծագրի են ենթարկում արվեստի
մեծագույն հուշարձանները: Իր ժամանակին ԱՄՆ-ի նախկին
պետական քարտուղար Մարշալը մարդկանց գիտակցություն-
նը բխցնելու վերաբերյալ ասել է. «Եթե մենք բառերով չկա-
րողացանք համոզել նրանց, մենք այդ կարող ենք անել երո-
ժշուսության միջոցով»¹:

Զարմանալի չէ, երբ իմպրիսիստական շրջանները ամեն
կերպ արդեպակում են նաև որիշ ժողովուրդների կուլտուրա-
ների գոյացումը, ամեն ինչ անում են քայքայելու ազգային
կուլտուրաները, պղծում են նրանց հնագույն հուշարձանները:
Կասիտալիստական աշխարհում արվեստի, կուլտուրայի և
գրականության աշխարհը չի կարող ազատորեն զործել:
Արվեստագետի ազատության վերաբերյալ բուրժուազիայի
գաղափարախոսների կողմից հորինված թեորիան զենես
տանանյակներ ասաջ մերկացվել է Վ. Ի. Անիկի կողմից:

«Փողի իշխանության վրա հիմնված հասարակության մեջ,
այն հասարակության մեջ, որտեղ աղքատության և մատուց-
ված աշխատավորության մասսաները և պորտաբուսություն
են անում մի բուն հարուստներ, չի կարող իրական և իսկա-
կան ազատությունն իննել Արդյոք ազա՛ս ենք դուք ձեր բուր-
ժուական հրատարակչից, պարո՛ն գրող ձեր բուրժուական
հասարակությունից, որը ձեզից պտոնոդրաֆիտ է պահանջում
շրջանակներում և նկարներում, պոսնկություն՝ որպես սարքա-
զանք բեմական արվեստի սեպնելում»: Զէ՛՛ որ այդ քաջարձակ

ազատությունը բուրժուական կամ անարխիստական ֆրազ է
(քանի որ, որպես աշխարհայացք՝ անարխիզմը Քարս երեսի
վրա շուտ սոված բուրժուականություն է): Հասարակության մեջ
այդքի և հասարակությունից ազատ լինել չի կարելի: Բուր-
ժուական գրողի, գեղարվեստագետի, գերասանճու ազա-
տությունը լոկ քողարկված (կամ կեղծավորարար քողարկ-
վող) կախում է փողպարկից, կաշառումից, ոսճիկից»²:

Հեղանմանության սոցիալիստական Մեծ սոցիալիստայի հե-
տևանքով մեր ազգային կուլտուրաները զուրս են եկել նեղ
իշտանակներից, բոլոր տեսակի կաշկանդումներից և կանգնել
ինտելեկտուալիստական, հումանիստական ուղու վրա: Եվ
այսօր մեր բազմաթիվ ժողովուրդների կուլտուրաների զար-
գացումը իրենց ազգային ուրույնության հետ միասին ունեն
աշնպիտի գծեր, որոնք հասունի են ամբողջ սովետական ար-
վեստին, այն է՝ սոցիալիստական սեպիզմ, ժողովրդայնու-
թյուն, բարձր գաղափարայնություն, ժամանակակից հրատապ
խնդիրներին արձագանքելու կարողություն: Սովետական
Միության մեջ միավորված ազգերը, որոնք այժմ գտնվում են
կոմունիզմի մակայուն կատարյալ ժամանակաշրջանում, ու-
նեն իրենց շահերի ընդհանրությունը, որի հիման վրա էլ անգի
կունենա նրանց ազգային փոխհարաբերությունների վերածու-
ղը կոմունիստական փոխհարաբերության, զնայով կանի ազ-
գերի ինչպես տեսնական, այնպես էլ գաղափարական ըն-
դունակությունը, բոլոր ազգերի քաղաքացիների մեջ կարգա-
նան կոմունիստական հասարակության մարզու գծերը:

Մրազործ ասված է. «Շեխազայում ևս այգանովի ՍՍՍՏ
ժողովուրդների լեզուների ազատ զարգացումը... Քույլ չա-
յով ոչ մի արտոնություն, սահմանափակում կամ հարկադրանք
այս կամ այն լեզվի գործածության հարցում: Ժողովուրդների
ներադրական բարեկամության և փոխադարձ իստահության
պայմաններում ազգային լեզուները զարգանում են իրավա-
հավասարության և փոխհարատացման հիման վրա»:

Ազգերի մերձեցմանը մեծապես նպաստում է նաև սուս մեծ

¹ Ս. Անիկով, Բուրժուական կուլտուրան ծառայում է իմպրիսիստա-
տական սեպիցիային, Հայկահայաստան, 1954, էջ 173:

² Վ. Ի. Անիկ, Երկր, հատ. 10, Հայպետհրատ, 1949, էջ 44:

ժողովրդի լեզուն, որը վաղուց է ինչ դարձել է մեր ժողովուրդ-
ների միմյանց հետ շփվելու, հասկանալու անհրաժեշտ միջոց-
ներից մեկը:

Յ. Էնգելը, խոսելով ուսաց լեզվի մասին, ասել է, որ այդ
լեզուն բամեն կերպ արժանի է ուսումնասիրության, որով-
հետև ամենից ուժեղ և ամենից հարուստ կենդանի լեզունե-
րից մեկն է, ինչպես ինքինի, այնպես էլ ի սեր նրա բացա-
հայտած գրականությանը¹:

Վ. Ի. Լենինը 1914 թվականի հունվարին գրած «Հարկավ՞ո՞ր
է արջուր պարսապից պետական լեզու» հոդվածում, որն ու-
ղղված էր սուս լիբերալների դեմ, նշել է. «Մենք ձեզնից չավ
գիտենք, որ Տուրքմենի, Տաջուշի, Գորրույուրդի, Չերխիշ-
սկու լեզուն մեծ ու հզոր է: Մենք ձեզնից ավելի ենք ցանկա-
կում, որպեսզի Ռուսաստանում բնակվող անբարձր բոլոր ազ-
գերի հարստահարված գասակարգերի միջև ստեղծվի որքան
հնարավոր է ավելի սերտ հարգողացուցիչություն և եղբայրական
միասնություն: Եվ մենք, հասկանալի է, կողմնակից ենք
նրան, որպեսզի Ռուսաստանի յուրաքանչյուր բնակիչ հնարա-
վորություն ունենա սովորելու ուսաց մեծ լեզուն:

Մենք չենք ցանկանում միայն մի բան՝ ամիպողականու-
րյան տարրը: Մենք չենք ցանկանում զրախոր բշկի մահա-
կում²:

Ինչպես Սովետական Միության յուրաքանչյուր ժողովրդի,
այնպես էլ հայ, վրաց և աղբրեյանական ժողովուրդների
կուլտուրան զարգացել ու զարգանում է լուս մեծ ժողովրդի
կուլտուրայի բարեբար ազդեցության ներքո: Բայց այդ բարե-
բար ազդեցությունը միակողմանի չէ: Գա նույնպես տեղի է
ունենում փոխազդեցության միջոցով: Միայ կիսինք բարեբար
ազդեցությունը գիտել որպես ռուսական կուլտուրայի բնօրբի-
նակում, այդ կուլտուրայի պատանեավորում: Օրինակ, հայ
գրականությունը և արվեստը միշտ էլ եղել են ինքնուրույն և
ինքնատիպ: Մ. Նալբանդյանը գեևես իր ժամանակին նշել է.

«Քո՞ղ ամենայն ազգ պահպանե յուր ազգային կերպարանքը,
թո՞ղ ազատ և պայծառ ծագիի ամենայն ազգություն մարդ-
կային աշխարհի մեջ. դաքա միայն գորսվյուն և հոգի են աս-
լիս ազգելիի բնդհանուր աշխատությունը»:

Մեր կուլտուրայի մեջ արտացոլվել են հայ ժողովրդի կեն-
ցարք, նիստուկացք, նրա ձգտումները, պայքարը ազա-
տության համար: Հայ արվեստի և գրականության ինքնու-
րույնությունը և բարձրարվեստ լինելը բնորոշել են ռուսա-
կան ստաշավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչները՝ Վալե-
րի Բրյուսովը, Մ. Գորկին և շատ ուրիշներ: Հայ ստաշավոր
մատվորականները միշտ էլ կոչ են արել ստեղծագործարար
ուսումնասիրել ռուսական ստաշավոր կուլտուրան, որպեսզի
գրանեվ էլ ավելի հարստացնեն իրենց հարազատ ազգային
կուլտուրան:

Ինչպես Անդրկովկասի, այնպես էլ մյուս ժողովուրդները
փոխազդում են ռուսական կուլտուրայի վրա և հարստացնում
այն: Ծառ սուս գրողներ, նկարիչներ, երաժիշտներ պատկե-
րել են մյուս ազգերի կյանքը, նրանց բնությունը, կենցաղը:

Դեևես իր ժամանակին Բելինսկին գրել է. «Կովկասին
կարծես թե վիճակված է լինել մեր պրեսական սաղանջներին
օրբանը, նրանց մուսաների սեղո ու սղորոթը, նրանց պոե-
տական հայրենիքը»³:

Գ. Հովնանը իր «Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ
դարերում» աշխարհավ աշխատության մեջ նշում է, որ «Դե-
կարբիստական շարժման այնպիսի ակնանավոր դեմքեր, ինչ-
պիսիք են կյուսիսլիբերը, Յակուբովիչը, Պուշկինը, Մալյու-
սկին, Օգոևսկին և շատ ուրիշներ, իրենց բմբոստ և խոսվա-
հայն հոգու համար հանդիստ էին որոնում կովկասյան ժող-
վուրդների գրելում, նրանց ազատագրական պայքարում»⁴:

Իսկ հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Քումանյանը գրել
է. «Եվ էրը նրանք իրենց ժամանակի ռուսական կյանքի ու

¹ К. Маркс и Ф. Энгельс, т. XV, стр. 239.

² Վ. Ի. Անիև, Օրիներ, հատ. 20, էջ 73:

³ В. Г. Белинский, Сочинения, т. I, 1948, стр. 692.

⁴ Գ. Հովնան, Ռուս-հայ գրական կապերը 19—20 դարերում, գրքը 1, Երևան, էջ 30:

իրենց հիասթափության անսպասելի քշված, հալածված դիմում էին զեպի Հարավ՝ նրանց խոցված ու զազազած օրոհներին հետևել, ամպերի միջեց առաջ և պայծառ ժպտացին Կովկասի ճյուղափառ զոգաթևները՝ հուսկապ ցնորքների նման, նրանք էլ իրենց հագու ամբողջ ուժով և աշխույժով փաթափվեցին Կովկասին, որդիզբվեցին Կովկասին և ախպրացան մեզ կովկասցիներին»¹։

Գրականության և կուլտուրաների փոխադրեցության հարցը հարկավոր էր որոշվում մեծ և փոքր ժողովուրդների տեսահարար կշռով։ Զուրաբանչյուր ազգ, լինի փոքր թե մեծ, իր յուման է մտցնում կուլտուրաների և գրականությունների գարդացման քննազավառում։

